





J

1875

526

# ԱՍՏՈՒԱԾԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ

2

Յօրինեալ

Ա 94

Աղոթական

Ա 43

Երանելլոյն Պետրոսի Եպսի Նախչուանցւոյ և  
Ածարան վարդապետին Հայաստանեայց :

ԱՅՈՒԴՎՐԱ է 1861 թ.

Իսկ այժմ ՚ի ըստ ընծայեալ

Վերստին աշխատութ Մեսրովպայ Դաւթեան  
Թաղիագեանց Կարբեցւոյ, որ ՚ի միաբանուէն  
Սբ Էջմիածնի :

1827.

Դ Հայրապետութեան Տեառն Տն Եփրեմոյ  
Արքղնասթ Կաթողիկոսի ամ Հայոց :

— — —

Եւ յԱռաջնորդուե Հայոց Հնդկաստանեայց  
և այլոց և այլոց՝ Տեառն Կարապետի Արքղան  
Արհի Եպիսկոպոսի նորոյն քուղայոյ :


Բարձր Հրամանու ,


Տեառն Պօղոսի Նախչուանցւոյ Առաքելաշնորհ  
Արհի Եպիսկոպոսի :

ԿԱԼԿԱԹԱ

ՅԵպիսկոպոսական Ճեմորդունին Անդրադարձ .

PRINTED AT BISHOP'S COLLEGE PRESS,  
BY H. TOWNSEND.





ՕՐ ԶԻՑ ՊԱՀ

ԶԻՑ

ԱՄԵՆԱՓԱՏԻ ՏԵԱՌՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Արքեպսի և Ծայրագոյն Առաջնորդի

ՄՐԲՈՅ ՎԱՆԻՑՆ ԱՄԵՆԱՓՐԿԴԻ

ՈՐԴԻ ԽԱՊԱՐՄ ՍԻՐՈՅ ՆՈՇԵՐ .

Ոչ երբէք հաս ինձ ի կեանս ժամփափա-  
գելի՝ քան զայս օր ։ յորում առ ի ձենք հնու-  
թիւնք սիրոյ և գթուեց ։ և յինէն անմոռաց  
պարտիք երաւստագիտութեանս փոփոխ ար-  
ծարծեալ՝ սիրովլին մղեն զիս մատուցանել ՚ի  
փառս Փառաւորեալ Անուան Ձերում զոսկե-  
ղէն մատեան Անանմանութեան Երանելոյն  
Պետրոսի : Քանզի եթէ ածարօտ հովուեալն  
՚ի ձենք Հօտ ոչ անխայեաց զկաթն առատաշը-  
նորհ նպաստիցն ՚ի սոյն յաջողուած , ապա և  
ինձ օրէն է Ձեզ՝ իբրև հոգեորական Գլուխ

## ԳԵՐՄԱՆԻ ՀՊԱՀՅԱ ԹԱՅԹՈՅԵՐՄ

Հ առաջնորդ Ա մեծ պատուից և հայ նորմ

Նոցին և իմ, վերուղերձել զայս հոգեւոր սիրոյ  
Նուէր : Արժան համարեսթիք ուրեմն Արհի  
Ամենապատիւ ընդունիլ զսոյն ՚ի պատարագ ա-  
խորժընկալ հաճուլթեան սբ կամաց Արբու-  
թեան ձերում, որպէս զի քրտունք վաստակա-  
բեկ Հեղինակին և դուզնաքեայ աշխատանք  
իմ Շ հովանեաւ Անուան ձերոյ, միանգամայն  
և յիշատակ բարեաց Բարեհամբոյր Արբու-  
թեան ձեր ՚ի սիրն՝ առ հասարակ պայծառաս-  
ցին յապագայս յաւիտենից, և ևս :

Պատիւ անձին համարիմ մնալ պատկառելի  
ակնածութեամբ և անմահ երախտագիտութ,

Զերին Բարձր Արբազնութեան :

Ծառայ Ան էպոն

ՄԵԽՐՈՒՂ ԴԻՍ-ՌԷՏԻ ԹՐԱՋԱՐԵՐԵՆԻ

Նախագիրկուցումն .

Զայս ճապեան առեալ յարիւշի Երեց Արքական  
Տէտան Երեմայ Առեւուղիւսուն ամ Հայոց 'ի Հաղ-  
պատ յամին 1823. Գաղափարեցի հաւատաբեմ զգուշու-  
թւամբ . և ածեալ ընդ իս յաշխարհ Հնդիասան՝ յեռն-  
առւթեամբ Աճառիքայ Աղջիս 'ի ըյս ընծայեցի յաւել-  
մամբ յանօրութեանց 'ի պեղիս պեղիս :

Զրի ընդունել աղավեմ Ընթերցողս , երև հայելի  
և առաջնորդ հոգւոց յերոց , զմբութել զիւղ առառժինու-  
թար գործող բարութեան , որով և եղեալ Ասպուածա-  
նմանս ըստ յուսոյն իմոյ վերասցիս 'ի վայելս Երանախոն  
վեճաչին ուր հաղորդե ԱՃ եսիահան Բարին Տեր Տերով  
ըստ 'ի Տեր բնութիւնն : Թուրիս և ինչ ընդ յեղ մասն  
լիցի ժան պոր բաղյալի ւեր իմ նորոպակ ընդ բազմահոգ  
աշխատան :

Ս-Ապուծոց Նմանիշոց է , որ ապօբախովին Երախ-  
տառոր լինի . որ է զերուածակն գտնել , զգակալն պա-  
հել ընդ եւրով Խշանութեամբն , և ջանիաւ նմանին  
Որդոյն Ապուծոց որ Էա զոնչն իւր զառն մէր ||

Յաճախառապ , Ճառ 20. էջ 217.

Յատաշոբքն .

Արարածապատում մարդարէն Մովսէս ՚ի ճառելն զստեղծմանէ մարդոյն ասէ , \* արար ածզմարդն ՛ը պատկերի իւրում և ՛ը նմանութեան : Եւ զայս վկայէ ած ասացեալ գոլ յասելն , ասաց ած արասցուք մարդ ՛ը պատկերի մերում և ՛ը նմանութեան : Յիրաւի ճառ մեծ և զարմացման արժանի . ՛ը որ հիացեալ Գրիգորի նարեկացւոյ ասէ , և որքան մարդ է զմարդն այ նմանեցուցանել : Աստուստ անհաւատք ՚ի լսել զայս քան , այնքան քստմին , որքան զանուն որդւոյ ՚ի ած . ասելով՝ զիարդ Շար է այ ունիլ որդի , կամ մարդոյ նմանիլ այ : Աստուստ ևս ՚ի սահմանելն Պղատօնի զիմաստասիրութիւնն նմանութիւն այ ՛ը կարողութեան մարդկան , ըմպահկեալ նախնի քերթողաց կատակէին յասելն , ոչ է նման ցեղ աց անմահից գետնակոխաց մարդկան . որպէս վկայէ անյաղթն Դաւիթ ՚ի գիրս սահմանաց : ՚Ի կողմն սոցա և միանգամայն Ռդէմ յառաջակըռուես երեկի որ ՚ի

յԵսայեայ ասէ ԱԾ \* ումնանեցուցիք զիս և .  
բայց ոչ է , զի անդանօր յանդիմանէ զհեթա-  
նոսս , որք զած ՚ի կուռս կերպարանէին , վայ  
ասէ † միթէ<sup>○</sup> պատկեր կոփեաց զիս հիւմն :  
Բայց արդ՝ ՛լ իրաւանց խօսելով , որովհետեւ ՚ի  
միոյ կողմանէ նկատելով է անհուն տարակա-  
ցուն ՚ի մէջ ԱՅ և մարդոյ , թէ ՛լ էութեան ,  
և թէ ՛լ կատարելութեան . յորմէ բազումք  
շարժեալ բացասեն զնմանութիւնն ՚ի մէջ եր-  
կոցուն : Իսկ ՚ի միւս կողմանէ ածայինգիրք վը-  
կայեն որպէս յառաջեղեալս բան . նաև ՚ի բա-  
զումտեղիս ՚ի սոյն զմեզ յորդորեն . ՛լ այնմ յօ-  
րէնան , ♫ եղերուք սբ զի ես սբ եմ : Եւ Տէրն  
յաւետարանին , || եղերուք նման հօրն ձերոյ :  
Ստիպեալ ուրեմն ՚ի սիրոյ , յանձին կալսյ  
պարզաբանել զեղանակն , որով մարթ իցէ ըդ-  
մարդն նմանեցուցանել այ : Եւ առ այս պա-  
հանջի ՚ի մէջ բերել զամ ստորոգութիւնն այ  
և տեսանել թէ որո՞վ եղանակաւ կարէ մարդն  
նմանիլ նոցունց ՛լ իւրում կարողուե . քան զոր  
ոչ ինչ օգտակարագոյն է մարդկան ՚ի կեանս :

\* Եսայ 40, 18. 25, 47. † Եսայ 40, 19,

‡ Ղեղ. 11, 44. 19, 2.

|| Ստիպեռ 5, 45.

**Վ**ասն որոյ աղերսեմ տիրով ընդունել զսա , և  
անձանձիր լինիլ ՚ի յընթերցման սորին . զի թե-  
րես զվայելչութեն Ստեղծողին ծանեալ՝ ըղձա-  
կերտիցիք նմանիլ նմին . որով Քար լիցի հպիլ և  
հաղըրդիլ երջանկութեան նորին : Որում փառք  
եգոհուեն յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ծառայ ձերում Ազնուութեան  
Պետրոս վարդապետ Նախչուանցի  
Աղասմալեան :



## ԱՍՏՈՒԱԾԱՆՄԱՆՈՒԹԵԱՆ

Հատոր առաջին .

Գլուխ . Ա :

Յաղագո ծանօթութեանն Ասպուծոյ :

---

ՃԱՆԱՉՈՒՄՆ Աստուծոյ այնքան մէծէ ,  
որքան է ինքն . և այնքան է հարկաւոր , որքան  
է հոգին մարմնոյ : Զե որպէս մարմին առանց  
հոգւոյ մեռեալ է , նոյնպէս և հոգին առանց  
ծանօթուեն Աստուծոյ : Ուստի ասէ աւետա-  
րանին ,\* և կեանքն յայտնեցան : Եւ որքան  
քաղցը է և բարի աչաց տեսանել զարեգակն ,  
( ըստ իմաստնոյն բանի թէ՝ † քաղցը է լցո և  
բարի աչաց տեսանել զարեգակն , ) սյնքան  
ըղձալի է մոտաց ճանաչելն զած : Աստուստ հե-  
թանոսք ասին նստիլ ՚ի խաւարի որքան առ եր-  
կրորդն . և ՚ի ստուերս մահու՝ որքան առ առա-  
ջինն . զի ոչ ունեին զլցոյ անձգիտուեն : Վասն-  
որոյ ասէ եսայի . ♫ որք նստէին ՚ի խաւարի և ՚ի  
ստուերս մահու տեսին զլցոյ մէծ + որ է անձգի-  
տութիւնն Փրիստոսիւծ յայտնեալ : Աստուստ

---

\* 1 Յոհ . 1 . 2 . † Ժող . 11 . 7 . ♫ Էսայ . 9 . 2 :

յիրաւի՛ հաւասարէ՛ ածային գիրն ոչընչից և ու-  
նայնուեց զայնոսիկ՝ որք ոչ ունին զածգիտու-  
թիւն . ըստ այսմ՝ \* զի ընդունայն էին բնակութ-  
մարդիկ՝ յորս ոչ գոյր ածային գիտութիւնն :  
Քանզի՝ որ ոչ գիտիցէ զածային գոյն , կեանքն  
իւր է առանց հիման և իբր ՚ի վերայ դատար-  
կութե՛ , և զի այնպիսին ՚ի միտս իւր համարի ,  
թէ յետ մեռանելոյն անկանելոց է յանդունդու-  
չարուե՛ . վասն այն յիրաւի՛ ասաց , թէ ընդու-  
նայն է այնպիսի մարդն : Եսայի մարդարէ՛ ե-  
րանէ զազգն իւր վասն գոլայն ծանօթ հաճոյիցն  
այ՝ յասելն , † երանի է մեղ խարայէլզի հաճոյքն  
այ ծանօթք մեր են : Արդ՝ եթէ հաճոյիցն այ  
ծանօթ գոյն է երանութիւն , ապա եօթնպա-  
տիկ է երանութիւն նոցա՝ որք են ծանօթ այ :  
Փիլիսոփայքն՝ զպատճառս էից ճանաչելն երա-  
նութիւն վարկան , ուստի ասաց ոմն ՚ի նոցա-  
նէ , թէ՝ երանի՛ , որ ծանեաւ զպատճառս էից :  
Արդ՝ եթէ զպատճառս էից ճանաչօղն երա-  
նելի է , քանի օն ևս եթէ նախկին պատճա-  
ռին ամ էից ծանօթ գտանիցի ոք : Այն զի՝  
ծանօթութիւն նախկին պատճառուին է պատ-  
ճառ ճանաչելոյ զերկրորդ պատճառս , ուստի  
եթէ ոք ՚ի ծանօթութենէ նախկին պատճա-  
ռին վերջացեալ գտանիցի , և ոչ երկրորդաց

\* Էմաս . 13. 1:

† Էմբուռք . 4. 4:

† Հետերդաս , տեղու . էլավանոց . հասա . առ . էջը :

պատճառացն կարասցէ հասու լինիլ, և այսպէս  
անկցի յիմաստասիրութենէ, որ է գիտութիւն  
պատճառաց էակաց : Ուստի տաէ պրոկլ, եթէ  
ոչ իցէ էակացն պատճառ, և ոչ ճանաչումն և  
հանձար ինչյումեք էակացն : տես ուրեմն թէ  
որքան հարկաւոր է ծանօթութիւն նախկին  
պատճառին՝ որ է ած : Զայս պրակ եղաք առ  
՚ի ըղձակերտս առնել զընթերցօղսդ ՚ի քննու-  
թիւն առաջիկայ մատենիս, որ ճառէ զնախկին  
պատճառէն, առ բարոյականութիւն համեմա-  
տելով, ուղղի ճանաչիցէք ըստ ձեր կարի զաղ-  
նուութիւն նախկին պատճառին, և շարժիցիք  
՚ի սէր նմանութեան նորին, զի ոչ ինչէ սիրե-  
ցեալ, եթէ ոչ նախ ծանուցեալ :

### Գլուխ Երիբոր :

Յաղագս նմանութեան բաժանեալ յէլիուս որակս :

Պրակ Առաջն :

Յաղագս զանազանութեանց նմանութեանցն :

Նմանութիւնն է ընդ սեռիւ որակութեան :  
Ուստի Դակիթ անյաղթն ՚ի գիրս սահմանաց,  
ըստ զանազան հայեցուածոյ որակուեն, զըորս  
զանազանութիւն նմանութեն դնէ, նախ՝ յորժամ  
նոյն որակութիւն ՚ի բոլոր տեսակում գտանիցի :  
Եւ այսպէս բոլոր եթովպիացիք ըստ սեռութեն  
նմանք են միմեանց : Երկրորդ՝ եթէ նոյն որա-

կութիւն ՚ի զանազան տեսակս գտանիցի, և այս  
 պէս սեաւ և սպիտակ պղպեղն ըստ ջերմութեն  
 նմանք են միմեանց, թէ պէտ սեն առաւել ջերմ  
 է քան զսպիտակն : Երրորդ՝ եթէ զանազան  
 որակութիւնք ՚ի զանազան տեսակս գտանիցին,  
 Եւ այսպէս հօբալն և աղաւնին նման գոլ մի-  
 մեանց ասին, զի երկուքն ևս ունին զնոյն զանա-  
 զանութիւնս . այսինքն, զսպիտակ, զսեաւ և ըդ-  
 խարտեաշ որակութիւնս : Չորրորդ՝ նման ասի  
 պատկերն յարացուցին . զի ունի զնոյն որակու-  
 թիւն, այսինքն զձև և զգծագրութիւն : Յարա-  
 ցոյցն է նախատիպն, որպէս սոկրատէս է յարա-  
 ցոյց պատկերին իւրոյ : Արդ՝ ըստ առաջին ե-  
 ղանակին ՚ի պարզ տեսակ ածութեն ՚ի յերիս  
 յանձննսն՝ է բոլորովին նոյնութիւն և նմանութեն  
 որպէս ասէ չնորհալին՝ զհոգւոյն, \*նոյն և նման  
 հօր և որդւոյ : Այլ տեսակ յիշեցաք յած, բայց  
 դու իմա անյատկապէս, զի յատկապէս տեսակն  
 արամաբանօրէն առեալ, է՝ որ ՚ի ձեռն սեռի և  
 տարբերութեան ամփոփի յանձուկ կոպար էակի,  
 իսկ ած է ինքն ընդարձակ գոյն . և ոչ ամփոփին  
 ՚ի սահմանաւոր կոպար էակի, զի բան սեռի և  
 տարբերութեան պատկանիցի նմա : Վկա ասի յածա-  
 բանութեն, ոչ ամսկանի յած բան սեռի և տար-  
 բերութեան, զի ոչ է տեսակ : Իսկ ըստ երկրոր-  
 դին՝ հոգին մարդոյ նմանի այ ըստ անմարմին

\* շարակ . հոգւոյ գուշափեան , 2 պատիեր :

գոլոյն : Այլըստ երրորդին՝ կատարեալ իմաս-  
 տահերն նմանի այ , զի նովիմբ կերպարանի , ո-  
 րով և ած . այսինքն բարեաւն , գիտնականաւն  
 և կարողականաւն : Բայց ըստ չորրորդին՝ հոգին  
 մարդոյ տիրապէս նմանի հօր Աստուծոյ , իմա-  
 ցականաւն ծնանելով զբան՝ և կամօքն բղխելով  
 զսէր : Դարձել յերիս բաժանի նմանութիւնն .  
 ՚ի բնականն . ՚ի բաղտատականն , և ՚ի բարոյա-  
 կանն : Բնականաբար հոգին մարդոյ է նման այ ,  
 զի ոպ ած է անմարմին իմացական , ռւնօղբանի  
 և աձնիշխան , այսպէս և հոգին ռւնի զայսոսիկ  
 առաւելութիւնն : առ այս հանգամանս հայե-  
 լով՝ տիրապէս ասի հոգին արարեալ\* ըստ պատ-  
 կերի և ըստ նմանութիւնն է՝ որ հաւաքի ՚ի տարբեր  
 տեսակաց , որգո՞ն , որպէս առիւծն է թագաւոր  
 գաղանաց , նոյնպէս և արծիւծն է թագաւոր  
 թուչնոց . ըստայսմբաղտատօրէն բազում գտա-  
 նի նմանութիւն մարդոյ ընդ այ . ՚ի՞կէն , ոպ ած է  
 իշխան երկնից պարունակապ , նոյնպէս և մարդն  
 է իշխան երկրի ձեռակերտացն այ : Երկրորդ  
 որպէս ած է բոլորն ՚ի բոլոր աշխարհի , և բոլոր  
 յիւրաքանչիւր մասին նոր , նոյնպէս և հոգին է  
 բոլորն ՚ի բոլոր մարմնի , և բոլորն յիւրաքանչիւր  
 մասին նորա : Իսկ բարոյականապէս նմանին այ  
 նախ՝ դատաւորք արդարութե և իրաւամբ դա-

տելով, վայ և զածական պատիճ ընկալնուն ՚ի  
գրոց, ըստ այսմ\* իս ասացի թէ դուք ածք ի-  
ցէք, զդատաւորաց Երկրի Ե բանն: Երկրորդ՝ նրք  
և արդարք, որք ենթարկեն զինքեանս կամացն  
այ՝ որէ քանոն ուղղուե՛, և այնու նմանին նմա :  
Արդ մեք աստանօր ՚ի բաց թողումք զբնա-  
կան և զբաղտատական նմանութիւնն, և միայն  
բռնուն հարկանեմք խօսիլ զբարոյական նմա  
նութենէն, որով և եթ ֆարէ ածուեն գտա  
նիլ հաճոյ, զի բարոյական առաքինութիւնք  
միայն հպեցուցանեն զմարդն Աստուծոյ . և  
նմանօղ առնեն նմա . ըստ որում ասէ իմաս-  
տունն, թէ † ՚ի հպիլնը առ նա՝ նմանօղ լինի  
նմա : որում փառք յաւիտեանս, ամէն :

### ՊՐԻՒ ԵՐԵՐԵՐ :

Թէ՝ պարա է որ չամէ նմանէլ Աստուծոյ, ունէլ զԱստ-  
ուած ինչքան առաջաց :

Զի նպ ածաբանուե՛ առարկայէ նոյն ինքն  
ած, զորմէ մտածէ և զորով գեգերի միշտ ածա-  
բանն առ ՚ի ճառել զնմանէ . այսպէս և ածա-  
նմանութե՛ առարկայ և յառաջեղեալ է ինքն  
արդարե ին փափագելի, յորումէ բոլոր լինե-  
լութիւն, ամի գեղեցկութիւն և ազնուութիւն.

\* ստղ. 81. 9 : Էլեց, 3. 6 : 22. 28 :

† իմաստ, 4. 2 :

զոր պարտի ունիլցանկացօղն նմանուենք հանդէպ աշաց մտաց իւրոց՝ որպէս զհայելի ։ զի ընկալւալզագումն անարատ վայելչուեց նորաօր ըստ օրէ ՚ի նոյն պատկեր կերպարանեսցի ։  
 Այսպէսի էր երանելի առաքեալն պօղոս ։ միշտ հանդէպ աշաց իւրոց ունելով զփառմն տեառն,  
 վեյ ասէր ։ \* այլ մեք զփառմն տեառն իբրև ընդհայելի տեսեն՝ օր ըստ օրէ ՚ի նոյն պատկեր կերպարանիմք, որպէս և ՚ի տեառն հոգւոյ ։  
 Աստուատ որպէս վարկանիմ՝ ՚ի գեղեցիկ նմանութիւն քնի փոխակերպեցաւ, որպէս ասէր անպարծ իւր բերան, † նմանօղք ինձ եղերուք որպէս և ես քնի ։ Նմին իրի յորդորէ զմեզ առարկայ մտաց ունիլզյն հանդերձ ավ, յասելն ‡ զվերինն խորհեցարուք, ուր քննստի ընդհամեն այ ։ զսյս և օրինակաւ մաղթէ հաւատարմացուցանել, զի զոր օրինակ աշակերտք զգիր գաղափարի վարդապետին իւրեանց մակագրեն ՚ի ճակատ տախտակին հանդէպ աշաց իւրեանց ունելով զփծուն գրածս իւրեանց օրինակաւն նպաստեալ օր ըստ օրէ ՚ի նոյն պատկեր կերպարանեն, այսպէս եթէ ոք ՚ի ճակատ յիշողութեն իւրոյ իւր տպագրեալ ունիցի զնածային մեծվայելչութիւնն, օր ըստ օրէ զնոյն խոկալով՝ ՚ի նոյն պատկեր կերպարանի, զի չիք այն

\* 2 Հոբել 3+ 18:      † 1 Հոբել 11+ 1:

‡ Հողոս, 3+ 2 :

Քան զօրեղապէս զբիծ և զարատ հոգւոյ յայտ  
 յանդիման առնօղ աշաց , քան զաստուածային  
 կամաց վճիտ հայելին , որ արտափայլի ՚ի պատ-  
 ումիրանս նորա . ՚ի յոր եթէ յառել հայիցուք  
 զբիծս մեր տեսել փոյթ յանձին կալնումք մաք-  
 րելզմեզ , և ՚ի նոյն տիպ համակերպիլ , քանզի  
 և կանայք զբիծս դիմաց իւրեանց հայելեաւ  
 մաքրեն : Կազի՞ և ածային իմաստութիւնն  
 կատարելագործուեն աբրահամու զայս յառա-  
 ջադրեաց՝ յասեն , համոյ լեր առաջի իմ և լեր  
 անարատ : առաջի իմ ասելով՝ հրամայէ առաջի  
 աշաց իւր ունել զինքն . որով գիւրապէս կա-  
 րասցէ կատարերելագործիլ և լինիլ անարատ .  
 Աստուստ Ենովք ՚ի պատկեր այ կերպարանեալ  
 փոխեցաւ , զի ուներ զած ներկայ աշաց իւրոց .  
 զի որ ՚ի մեղգըի՝ \* և եղե ենովք համոյ այ , առ  
 երայեցիս ասի և շրջէր ենովք ընդ այ : Այս-  
 պէս և եղիա ուներ զած տուաջի աշաց , վայ ա-  
 սէր . † կենդանիէ տ՛ը , որոյ կացի ես այսօր առա-  
 ջի նր : Նմին իրիքերեալ յինքն զկատարել նմու-  
 թին այ , փոխեցաւ յերկինս վայելել զնա :  
 Բայց ընդդէմ սորին չարք՝ առարկայ ինքեանց  
 ունին զսատանայ և զթիւր կամն նորին ախտա-  
 կիր . Նմին իրի ՚ինա կերպարանին , զայնպիսւոյն  
 ասաց տրն , ոչ ես զձեզ երկոտասանսդ ընտրե-  
 ցի , և մինն ՚ի ձէնջ սատանայ է :

Եւ գիտելի է զի հոգին մարդոյ է տաճտը այս  
ըստ այնմ՝ \* ոչ ապաքէն դուք տնօր այ կենդա-  
նոյ էք և այլն : Արդ՝ բարիքն կանգնեն ինը-  
մա՝ զպստկերն այ . իսկ չարքն՝ զպստկերն սա-  
տանսայի և զտիպ ախտին հանգոյն մանասէի .  
զորմէ ասէ շնորհալին . † նոյնակս և ես՝ բարձ-  
րացուցի , հանդէպ աչաց՝ զտիպ ախտին :

### Գլուխ Երերութ :

Յաղագ» Աէ ո՞ր ով եղանակաւ իմանէ Առարտած , բաժա-  
նեաւ յերես պրախէն :

### Պրախ Առաջն :

Յաղագ» Աէ Առարտած յին էր ու լինն է անիմանալի՝ 'ի  
«պէղջուն» ծոց՝ «պրախափէն» :

Աստուածային էութեանն ի մէջ ամենայն  
ստեղծուածոց երկու ազգ էից են խոկման ըն-  
դունակ . այսինքն մարդիկք և հրեշտակք :  
Զիսկմանէն հրեշտակաց խօսեսցուք 'ի ճառս  
նոցա . իսկ մարդիկք երկու կերպիւ խոկման զած  
մի՝ ի կացութեն միաւորեալ հոգւոց . երկրորդ՝  
ի կացուեն անջատեալ հոգւոց : Զիսկմանէ ան-  
ջատեալ հոգւոց ասասցուք 'ի ճառս երանուեն .  
իոկ զմիաւորելոցն այժմ ասելի է :

\* 2 էոր . 6 . 16 : † Յարդէ : 4 բագ . 21 :

## Եղբակացութեան :

Մարդկային միտքն ոչ կարէ իմանալ թէ  
զի՞նչ է Աստուածային էութին ստորասապէս,  
այլ միայն բացասապէս : Ցուցանի առաջին մասն,  
Որ ոչ շօշափէ մոտք զտեսակ իրին, ոչ կարէ ի-  
մանալ զայն, սյլմիտքն ոչ կարէ շօշափել զաստ-  
ուածային տեսակն, ապա ուրեմն ոչ կարէ ի-  
մանալ զայն : Մեծագոյնն յայտ է, ցուցանի  
փոքրագոյնս : Զի միտք շօշափեն միայն զայն  
աեսակս, զորս հաւաքեն զգայութիւնքն . ոպ  
ասէ դրօշակիրն ճեմականաց արիստոտէլ, թէ  
ոչ ինչ է նաև լեալյիմացականութեան, եթէ  
ոչ նաև լեալ իցէ ՚ի զգայութեն : Գանզի միտ-  
քըն ոպ անգիր տախտակ ըստ նոյնոյ . որ ՚ի ըգ-  
գայունց ընկալեալ տեսակօք զարդարի : Այլ  
ոչ ինչ կերպիւ կարեն ամբառնալ զգալի տե-  
սակք զմիտսն առ անմատոյց բարձրութ էուն  
այ . վասն զի՞ է անհուն տարակայութ ՚ի մէջ  
զգայէաց և իմանալի էութեանն այ : վասն որոյ  
յիրաւի ասաց արիստոտէլ թէ՝ միտք մեր առ ՚ի  
ճանաչել զածային էութիւն՝ է սկարագոյն քան  
զտեսութիւն չղչիկանի առ արեգակն : Առար-  
կիցես նախ, զինչութիւն իրին ճանաչի տեսա-  
կան . այլ ան կարէ զտեսակ իւր տպաւրել  
յիմացականութեան մարդոյն որով վերասցի ՚ի  
ծանօթութիւն զինչութեան իւրոյ : Ցուցանի  
նախադասութիւն մակածութեք, զի ՚ի տեսանելն

զլոյս՝ իմանամք որակութ մարմնոյ շուսաւորի . ՚ի  
 տեսանելն զջուր՝ իմանամք զնու մարմին խոնաւ  
 և հեղեղուկ . ՚ի տեսանելն զմարդ՝ իմանամք զնա  
 կենդանի բանական : Այսպէս ուրեմն ՚ի տե-  
 սանելն զած տպաւորեալ տեսակաւ յիմացակա-  
 նութեան , կարեմք իմանալ զինչութիւն նորա :  
 Պատասխանեմ բաժանելով զնախաղասութիւն ,  
 ած կարէ տպաւորել զտեսակ իւրյիմացականուե ,  
 անջատելոյ ստորասեմ . զի ընդունիմք թէ ան-  
 ջատեալ կամ երանեալ իմացականութիւնն  
 տեսանելով զած գայ ՚ի ծանօթութիւն է ութե  
 նորին , թէպէտ հունաւորապէս . առ որ համա-  
 ձայնի և նբ գիրն յասելն թէ՝ տեսանելոց եմք  
 զնա ող և էնն : միաւորելոյ բացասեմ . զի ընդ-  
 դէմ է ածայնոյ կարգադրութեանն ՚ի մարմին  
 կապեալ իմացականուե առարկել զինքն հայե-  
 ցոլապէս . վնկ տեսանողացն միշտ զգալի պատ-  
 կերակերպութիւն ցուցանէր զինքն , զի անհաջո-  
 է միաւորեալ իմացականուե դէմ յանդիման  
 տեսանել զած , զորմէ ՚ի խնդիրս որ յաղագո-  
 տեսութեանն այ՝ ասասցուք : Պատասխանեմ  
 երկրորդ՝ առ ցուցումն նախադասութիւն ասելով .  
 թէ այդ մակածութիւն ոչ ըստ ամի եզրակա-  
 ցուցանէ , զի ահաւասիկ ՚ի տեսանելն զմագնիս  
 քարն մեծամեծ իմաստումք ևս անգիտանան ըզ-  
 բնութիւնորա՝ զի սքանչելի իմն երեխ , նմանա-  
 պէս տեսանելով զարեգակն , յայսքան դարս  
 այնքան իմաստումք չեւ ևս կարացին լաւապէս

տեղեկանալ բնութեան նորին, ոմանք հըս-  
բորբոք վէմ ասացին, և ունանք բոց, և այլք այլ  
ինչ: Արդ՝ եթէ արեգակն տեսանելով դժուա-  
րաւ գան ՚ի ծանօթութիւն բնութեան նորա,  
որչափ ևս առ ծանօթութիւն զինչութեանն  
այ, թէ և տեսանիցեն զէութիւն նորա:

Առարկիցե՞ս երկրորդ՝ զգալի պատկերօք կա-  
րեմք վերանալ ՚ի ծանօթութիւն իմանալեաց  
որպէս ասէ գիոնէսիոս յառաջին գիրս թէ՝ զի  
և ոչ կարելի է մերոցս մոտաց ձգտիլ առ ան-  
նիւթսն, եթէ ոչ նիւթական ինչ առաջա-  
դրութեամք հպեսցուք, ուրեմն զգալեօք կա-  
րեմք իմանալ զԱստուած: Պատասխանեմ բա-  
ժանելով զառաջարկութիւնդ, զգալեօքս կա-  
րեմք գալ ՚ի ծանօթութիւն այ որքան առ սոռ-  
րոգութիւնս և յատկութիւնն՝ ստորասեմ, զի  
ըստ այսմ ասէ առաքեալն. թէ \* աներեսյթքն  
այ երեւելի արարածովքս իմացել տեսանին, այս-  
ինքն մշտնջենաւորութիւն, ածութիւն և զօրութ  
նր: Եւ այս է միտն սբին գիոնէսիոսի որ յըդ-  
գալի ձեւակերպութեանցն որ ՚ի մարգարէս, ար-  
տահանէ զպէսպէսյաակութիւնս այ և հրեշտա-  
կաց: Որքան առ զինչութիւնն բացասեմ, և  
պատճառն է՝ զի ՚ի մեջ տարբեր բնութեան ոչ  
գոյ բաղադանութիւն հայեցուածոյ, այլ բնութիւն  
այ անհրապէս տարակաց է՝ ՚ի ստեղծական բնու-

թենէ : Ուստի ասէ սբն դիոնէսիոս թէ՝ ստու-  
 գեմք զնա ոչ գոլ ըստ իրիք էիցս : Առարկիցիս  
 երրորդ՝ որ ճանաչէ զյատկուէս իրին, ճանաչէ  
 և զբնութիւնն, այլ ճանաչիմք զյատկուէս այ,  
 ապա և զբնութիւնն : Ցուցանի մեծողոյնն, զի  
 որ ճանաչէ զհուրն թէ է այրեցոլ, իսկ ոյն իմա-  
 նայ թէ է մարմին ըերմ և չոր : Ե՛ւ որ ճանաչէ  
 թէ մարդն է ծիծալական, իսկոյն մակաբերէ ՚ի  
 նախկնեոյ, թէ ուրեմն է բանական : Պատաս-  
 խանեմառ ցուցումնդ մեծագումնին թէ՝ ոչ յա-  
 մենայնի եղբակացուցանէ ողպ վերագոյնդ ա-  
 սացաւ, զի եթէ զարեգական յատկուշնն ճա-  
 նաչելով՝ ոչ կարեմք լիապէս զինչութիւն  
 գիտել, ՚ի ձեռն գիտելոյ ունանց յատկութեցն  
 այ յորդորանօք ստեղծունածոց՝ զիարդ կարաս-  
 ցուք բոլորովին հասու լինիլ զինչութեան նը,  
 որ ոչ է մասնաւր իմն էակ, այլ ունի զբան ընդ-  
 հանուր էակի : Առարկիցիս չորրոդ՝ ՚ի ձեռն  
 պատճառելուաց ճանաչի պատճառն, այլ ստեղծ-  
 ունածք են պատճառելիք աստուծոյ, ուրեմն  
 ՚ի ձեռն նոցա կարեմք ճանաչել զպատճառն  
 նոցա ած : Պատասխանեմ բաժանելով զառա-  
 ջարկուելու . ՚ի ձեռն պատճառելուաց ճանաչի  
 պատճառն, թէ իցէ՝ ստորասեմ, թէ զինչուցէ,  
 բացասեմ :

## ՊՐԵՒ ԵՐԵՎԱՆ :

ԹԵԿ Աստուած ոչ է ըստ իրեք էիցս :

Աստուած ոչ է ըստ իրեք էիցս : Ցուցանի  
Եղբակացուիս . Հոմաւորն ոչ կարէ լինիլ Աստ-  
ուած . այլստեղծուածք ամենայն են Հոմաւորք  
թէ ըստ քանակութեանն՝ թէ ըստ զօրումն՝ .  
ապա ուրեմն ած ոչ կարէ լինիլ մի ՚ի սոցանէ :  
Ցուցանի Երկրորդ՝ տրոհական ձեռվ . ած եթէ  
լինէր միննյէիցս , կամ լինէր մինն ՚ի գլխաւորաց  
և կամ ՚ի յանարգաց , այլ ոչ ՚ի սոցանէ , ապա  
ուրեմն ոչ է մի ՚ի յէիցս : Ցուցանի մեծագոյնս  
մակածութ . ած ոչ է մարդ՝ ոչ արեգակն՝ ոչ  
Երկինք և ոչ հրեշտակ . զի այսոքիկ են գըշ-  
խաւորքն էից . և անդէպ է լինիլ մի ՚ի յանար-  
գացն , ապա ուրեմն վ՛ այն ասէ գիռնէսիոս ,  
թէ քանզի ստուգեմք զնա ոչ գոլ ըստ իրեք է-  
իցս . թէպէտ անգիտանամք զնորին թագում՝  
զգերագոյն և անիմացական անձառելի ած հու-  
նութիւնն : Աստուած բարւոք Եղբակացուցանէ  
թէ բացասուիքն ՚ի վր ածայնոյն ճշմարիտ են ,  
իսկ ստորասութեքն անպատշաճ թագնութե-  
տարակուսելեացն : Եւ աստանօր զօրինակ մի  
գիցուք թէպէտ խորդագոյն՝ բայց ներհմտա-  
ցուցիչ : Զի զոր օրինակ ած ոչ ճանաչէ զչարն  
յատուկ տեսակաւ , զի զյատուկ տեսակ չարին  
ոչ ումի ՚ի նախագաղափարս մտաց իւրոց , այլ

պակասութեք բարւոյն : Այսպէս և մեք ոչ կա-  
 րեմք ճանաչելզած յատուկ աեսակաւն , զի ըգ-  
 տեսակ նորա ոչ ունիմք յիմացականութեան մե-  
 րում . այլ ճանաչեմք զնա պակասութեք ստեղծ-  
 ունածոց , յորժամ ասեմք զնա ոչ գու այս ինչ  
 և այն ինչ այլ ի վեր քան զամ . ըստ որում  
 ասէ պրոկլ , նախկին բնութիւնն է ի վեր քան  
 զամնայն էութիւնս : Այսու եղանակաւ ծա-  
 նեաւ արիստոտէլ զերկնային մարմինսն , այսին-  
 քըն բացասութեք ստորայնոց՝ ասելով , երկնային  
 մարմինքն ոչ հուր են , ոչ ջուր , ոչ օդ՝ և ոչ հող .  
 այլ հինգերորդ էութիւն . այս ոճ դիւրաւ հա-  
 նէ զմեզյած . և ի յարգութեան պահէ զպա-  
 տիւն այ : Ասիցե՞ս նախ՝ երեկ թէ հոգին մեր է  
 ի գոյացութենէն այ . ապա ած է համարուն  
 հոգւոց մերոց : Ցուցանի նախադասուն , շունչն  
 այ է յէուէն այ , ողյայտ է ի հոգւոյն սբյ որ  
 է շունչ ամենակալին . այլ հոգին մեր է շունչ այ  
 ըստ այնամ\* փչեացյերեսս նր և եղև մարդն հո-  
 գի կենդանի . վասն որոյ սահմանեն ոմանք ի  
 վարդպետաց՝ զհոգին ածակերպ շունչ կենաց :  
 Պատասխանեմ առ ցուցումնդ զանազանելով .  
 շունչն այ է յէութենէն նորա , անհատ շունչն՝  
 ստորասեմ , հատեալ շունչն՝ բացասեմ . Ան-  
 հատ շունչն է հոգին սբ՝ որ է յէութենէն այ .  
 զի է և անստեղծ . հատեալ շունչն է հոգին մեր

որ է ստեղծուած և ոչ յէռւթենէն այ , զի է-  
ռւթին այ ոչ հատանի : Ապա թէ ոչ պարտ էր  
լինիլ ի մէջ մեր և այ էական կապակցութիւն ,  
որպէս ի մէջ երից անձանցն : Պատասխանեմ  
երկրորդ՝ թէ այսու ոճիւ սուրբ գիրն ցուցանել  
կամեցաւ թէ հոգին մարդոյ է արտաքուստ  
յայ յատկաբար ստեղծեալ և անմահ , նա և  
պատկեր այ : Ասից<sup>12</sup> երկրորդ՝ երկի թէ ած-  
իցէ լոյս , ըստ այսմ\* ած լոյս է և խաւար ՚ի նմա-  
չիք : Պատասխանեմ ած է լոյս իմանալի և ոչ  
զգալի , վամն որոյ ասէ սթէն դիմնէսիոս Աստ-  
ուած ոչ է լոյս՝ այլ ՚ի վերքան զլոյս : Ատիպի-  
ցէ<sup>13</sup> , քն ՚ի լեառն լուսով փայլցաւ , այլ լոյսն  
էր Աստուածութիւնն , ո՛պ ասեն վարդապետք :  
Պատասխանեմ , ած իմանալի լոյս գոլով , գե-  
րազանցանպս պարունակէ զգալի լոյսն , զոր եր-  
բեմն ՚ի ցոյց փառաց իւրոց արտափայլէ . ուս-  
տի ՚ի լեառն զգակին խառնէր ընդ իմանալոյն ,  
Առաքեալքն զգալին տեսին՝ յիմանալոյն պա-  
կեան : Պատասխանեն այլք՝ թէ այն էր քնի  
հոգւոյ օժիան , զոր և ունելոց են երանեալքն ,  
և ոչ լոյս ածութեանն կամ էութեանն Այ :

\* 1 Յոհ , 1, 5.


## ՊՐՈՒ ԵՐԵՐԵԴ :

⊕ ՅԱՂԱԳԻ ԳԵՐԱՂԱՆԻ ԷՌԵՒԵԽՆՆ ԱԿԱՓՈ ՃՐ :

102

Արիստոնէլ խոկալով զանապականութիւն  
Երկնային մարմնոցն՝ կոչեաց զնն Տինգերորդ  
Էռւթե, զի էին տարաբուն յենթալուսնեայց :  
Այսպէս և ես խոկալով զգերազանցութեն էռւ-  
թեանն այ՝ կոչեմզնա վեցերորդ էռւթեն զի  
ոչ միայն է տարաբուն յենթալուսնեայց, այլ  
և յերկնայնոցն էռւեց : Այլ թէ զինչ էռւեցէ  
ոչ ոք կարէ հասու լինիլ լրատէս, որքան և  
խոկասցէ : Ուստի՝ թագաւորն Յերօն եհարց  
ցփիլիսոփայն Սիմէնգէս թէ զինչ ած, և նա  
խնդրեաց ժամանակ երից աւուրց խոկման, յե-  
տոյ՝ զտամն, հուսկ յետոյ՝ ասաց ցթագաւորն  
որքան խոկամ զնայ այնքան նիւթ խոկման յա-  
ւելանայ : Մովսէս խմաստութեամբն եգիպ-  
տացւոց վարժեալ և ոչ հասու եղեալ զինչու-  
թեանն այ, ՚ի կոչելն յայ՝ կամեցաւ յինքէնէ այ  
տեղեկանալ. վասն որոյ ասաց՝ թէ հարցանի-  
ցեն թէ զինչ անուն էնորա, զինչ ասացից . և  
նա որքան կարելին էր մարդկային մուաց հասու  
լինիլ էռւթեանն իւրոյ, այնքան յայտնեաց  
յասելն \* ես եմ ած ոք էն . որ առ եբրայեցիս  
գրի † ես եմ որ եմ : Որովհանիւ՝ կերպիւ իմն

\* בְּגַ, 3, 14. † אָהָה אֲשֶׁר אֲהִיא



ցուցանի գերազանցութեն էութեանն այ , նախ՝  
թէ ես եմ միայն և չիք այլ ոք . երկրորդ՝ թէ  
ես եմ անստեղծ և անսկիզբն . երրորդ՝ թէ  
ես եմ նախկին պատճառ . չորրորդ՝ թէ ես եմ  
իսկական էակ . հինգերորդ՝ թէ ես եմ որ ինչ  
եմ ՚ի յաւիտենից անփոփոխ . վեցերորդ՝ թէ  
ես եմ , որ եմ ՚ի նոյնութեան՝ և ոչ գոյ յիսյա-  
ւելումն . եօթներորդ՝ թէ ես եմ որ եմ շար-  
ժօղ էակաց . որպէս կարծեն զինէն թէ է ոմն  
որ շարժէ զերկնայինս , ութներորդ՝ թէ ես եմ  
որ ինչ եմ , և ոչ գոյն յիս այլ մասունք բաղադրե-  
լիք : Եւ գրեթէ այսու անուամբ զամ էական  
ստորոգութիւն պատկանեալս ինքեան յայտնել  
կամեցաւ , զորոց մի ըստ միոթէ ասելի է առ ՚ի  
տեսանել թէ որպէս կարեմք նմանիլ նմա բա-  
րոյականնապէս :

### Գլուխ Չորրորդ :

Յաղագս նմանութեանն Ասպաւծոյ որ արագահոնէ յանսուհ-  
մանութենէ նորին բաժանեալ ՚ի հենք պրակս :

### Պրաք Ասուջին :

Յաղագս Աէ է անսուհմանէլ :

Առ ՚ի բարեպէս գիտել թէ էութիւնն այ  
է անստհմանելի , նախ պարտ է գիտել թէ զինչ  
է սահման . և զինչ ստորադրական սահման :

Արդ՝ ըստ մեծին դաւթի սահմաննէ բան կար-  
 ձառօտ յայտնիչ բնութեան ենթակայ իրո-  
 ղութե : Իսկ ստորագրական սահմաննէ բան  
 ծաւալեալ յայտնիչ պարագայից ենթակայ ի-  
 րողութեանց , զի սահմանն զէական մասունք  
 ըստ իրին . իսկ ստորագրականն զյատկա-  
 կանն : ՚Ի սահմանի նկատին որ ինչ են հար-  
 կաւորք առ ՚ի բաղկացութե իրին , իսկ ՚ի ստո-  
 րագրականի՝ որ ինչ են պատկանաւորք իրին :  
 Էական մասունքն են զօրս ունի ներգործութե ,  
 իսկ յատկականքն են՝ զօրս ունի զօրութեամբ :  
 Զայս վասն այսորիկ եղաք , զի յըստորոգութեան  
 այ , են ոմանք որք հային առ էուին և զինչու-  
 թին այ , որպէս կենդանութե և խմացականութե :  
 Իսկ ոմանք հային առ յատկութեան այ , որպէս  
 անփոփոխութիւն՝ պարզութե և այլք . որք ե-  
 րեին սահմանել զնա , զի և մարդն ՚ի ձեռն սց  
 սահմանի , զո՞ր օրինակ կենդանութեամբ և  
 բանականութեամբ : Արդ՝ ինդըիթէ արդեօք  
 ած ՚ի ձեռն զինչ և իցէ ստորոգութեան կարէ  
 սահմանիլ :

 Եղբայրութեան Առաջին :

Աստուած ոչինչ կերպիւ սահմանիւ կարէ ,  
 ցուցանի նախ վկայութե հարցն սբց : Յերգու-  
 շարականին ասի , անսահմանն յէութե սահմա-  
 նելւացս էացուցիչ . նաև սահմանն յայտնէ

զինչութեն իրին : Այլ շնորհալին ասէ զայ , զե  
 եթէ գոլն հաւատամք , բայց թէ զինչ է ան-  
 դիտանամք . ապա ուրեմն ոչ սահմանի : Ցու-  
 ցանի դարձեալ բանիւ , որ ոչ է որոշել ի սահ-  
 մանաւոր կոպար էակի , ոչ ունի պէտս սահմանի .  
 զի սահմանն յայն սակս ֆարեցաւ , զի հանգոյն  
 արդարութեն իւրաքանչիւր էակի զիւրն բաշխես-  
 ցէ՝ որոշելով յայլմէ : Ող ասէ մեծն Դաւիթ  
 թէ՝ առաջինքն յառաւելաստացուէ և ի պա-  
 կասաստացութենէ փախչելով՝ գտին զսահմա-  
 նագրութիւն զի զիւրեանցն վայելեսցեն և յայ-  
 լոցն փախիցեն : Այլ ած ոչ է որոշեալ ի սահ-  
 մանաւոր կոպար էակի , զի է ինքն բացարձակ  
 գոլն . յորում բովանդակին ամենայն , ող ասէ  
 Պօյէցիս , թէ գոլն ամենեցուն է վեհագոյն  
 Ածութիւնն . այլ գու խմա ոչ իբր տեսակ ող  
 հոգի մարմնոյ , այլ իբր պատճառ . ապա ու-  
 րեմն ած ոչ ունի պէտս սահմանի : Երկրորդ՝  
 որ ոչ ունի քան զինքն վերանցեալ պատճառ ,  
 ոչ սահմանի . այլ ած ոչ ունի , յայն սակսէ ան-  
 հուն զի ոչ ունի զինքն հունաւորօղ . ուրեմն  
 ոչ սահմանի : Ցուցանի մեծագոյնս օրինակաւ  
 սեռականագոյն սեռի . զոր յայն սակս ոչ սահ-  
 մանեաց Պորփիւր՝ զի ոչ ունի քան զինքն այլ  
 վերանցեալ սեռ . հանգոյն սմին և ոչ ած կարէ  
 սահմանիւ , զի ոչ ունի քան զինքն այլ վերան-  
 ցեալ պատճառ . յորմէ կարիցեմք առնուլ զբան  
 սեռի : Ցուցանի երորդ՝ որ ոչ ունի զկարողութ

ընդ ներգործութեան ոչ կարէ սահմանիլ, այլ  
 ած ոչ ունի զկարողութիւն խառն ընդ ներգոր-  
 ծութեան, զի է բոլորովին ներգործութիւն, որ-  
 պէս ասաց ինքն թէ՝ ես եմ որ եմ, այսինքն որ  
 ինչ եմ ի ներգործութեան եմ և ոչ ունիմ ինչ  
 ի կարողութեան, ուրեմն ոչ կարէ սահմանիլ:  
 Ցուցանի մեծագոյնն, սահմանն առնու ի սէռէ  
 և ի տարբերութենէ, այլ սեռն է մասն կարո-  
 ղական, իսկ տարբերութիւնն է մասն ներգո-  
 ծական: Վասն այն սեռն կոչի ի փիլիսոփայից  
 էակ անլրացեալ. իսկ տարբերութիւնն էակ  
 լրացել, զի սեռն լրանայ տարբերիչ տեսակաւն:  
 Ցուցանի չորրորդ՝ ընդհանուր էակն ոչ սահմանի  
 յատուկ սահմանաւ, այլ ած է ևս շհանրագոյն  
 էակ, ուրեմն ոչ սահմանի յատուկ սահմանաւ:  
 Ցուցանի մեծագոյնն, ընդհանուր ընդդէմ է  
 մասնաւոր սահման, վասն այն Արիստոտէլ զընդ  
 հանուր էակն ի հասարակի սահմանեց՝ յասելն  
 թէ՝ էակն է որոյ ներգործութիւն է գոլն: Այս-  
 պէս և ած զէական անունն իւր սահմանօրէն ի  
 հասարակի եցոյց մովսիսի յասելն՝ ես եմ որ եմ.  
 յորմէ յայտ է թէ՝ զայ զոր ինչ ստորոգեմք է  
 շրջախօսութիւն: Առարկիցես նախ՝ կարեմք  
 զաստուծոյ ասել թէ է անմարմին կենդանի ի-  
 մացական, և այնու գալ ի ծանօթութիւն զին-  
 չութեն նր: Պատասխանեմ, թէ զայդ սահման  
 արտահանէ միտք մեր ի ստեղծունածոց, որ ոչ  
 յարմարի այ, զի ած ոչ է այնպէս կենդանի և

իմացական՝ որպէս մեք գիտեմք . վասն որոյ նըն  
դիսնէսիս ասէ , ած ՚ի վեր է քան զնամ կեն-  
դանութիւն և իմացումն մեր : Պատասխանեմ  
գարձեալ՝ թէ այդ սահման պատկանի միայն  
մասնաւոր ինչ էակի , այսինքն հրեշտակի կամ  
հոգւոյ . և ոչ ընդհանուր գոլոյն Աստուծոյ՝  
որոյ անհուն է զօրութիւն :

### †Եղբայրութեան Երերորդ .

Աստուած ոչ կարէ սահմանիլ . ցուցանի  
գիւրաւ ստորագրական սահմանաւ : Որ յայտ-  
նէ զյատկուիս իրին՝ սահմանէ զնաւ ստորագր-  
րական սահմանաւ . այլ ստորագրական սահ-  
մանն յայտնէ զյատկուիս ԱՅ, այսինքն զմիուի՝  
զճշմարտութիւն՝ զբարուի և զայլ յատկական  
ստորոգուիսն , ուրեմն սահմանէ զնաւ իւրեւ , զի  
այս է գորա բնութիւն՝ բան բացայայտիչ յատ-  
կութեան իրին :

### †Սոնութեան :

Սբք նմանին ԱՅ անսահմանութե սիրոյ .  
ցուցանի , սահմանն է այն որ յինքն ամփոփէ  
զբնուի իրին սահմանելոյ , այլ ոչ ոք ՚ի սահմա-  
նաւոր էիցս յինքն գրաւէ զսէր սրբոցն , այլ սէր  
նց զսահմանաւոր էակօք անգրանցեալ , զան-  
սահմանաւն փարի զնով , և սիրէ զնաւ անսահ-

մանօրէն : Զի կերպ սիրելըն զԱստուած՝ է սի-  
րել զնա անկերպապէս և անսահմանօրէն : Աս-  
տուատ սբք անսահման ժամանակաւ կանխեն  
միշտ յալօթս առ ած : Այսպիսի էր երանելին  
Պօղոս , որ ասէր \* քանզի հաստատել եմ , եթէ՝  
մահ , և ոչ կեանք և ոչ այլ ինչ արարածք կա-  
րեն մեկնել զմեզ՝ ի սիրոյ անտի այ՝ որ ՚ի Փրիա-  
տոս Յիսուս : Վասն որոյ՝ սէրն սրբոց նմանի  
հրոյ որ անսահմանօրէն միշտ ձգտի ՚ի վեր առ  
հուրն Աստուած նմանիլ նմին :

### Անհմանութիւն :

(Ընդդէմ սորա՝ մեղաւորք յայսմ մասին են  
յոյժ աննման Այ , զի սէր նոցագրակի ՚ի ստեղ-  
ծական բարիս , ոմանց ՚ի յինչս աշխարհիս . ո-  
մանց ՚ի սիրտս պոռնկաց . և այլոց ՚ի կարծիս  
տգիտաց թէ արդեօք գովին ՚ի նոցանի՛ , թէ ոչ  
զորոց ասէ աւետարենին թէ՝ † որ ինչ է յաշ-  
խարհիս յայսմիկ , ցանկութե՛ է մարմնոյ . ցան-  
կութիւն է աչաց . և ամպարտաւանութիւն աս-  
տի կենաց :

\* Հառավմ : 8, 38.      † 1 Յոհ : 2, 16 :

**ՊՐՄԿ ԵՐԵԲՈՐԴ :**

Յաղութիւն և Աստուած է գերամաքուր ներդորժութեան :  
և լէ որպէն մասէմք նմա :

Յաստուածային ստորոգութեան նախագահութիւն ունի ներգործական գոլն, զոր եթէ ցուցցուք, այլքն ամ դիւրաւ ցուցանին : Արդ՝ ցուցանի նախ վկայութեան գրոց, զի ըստ սբին դիոնէսիսի ՚ի գիրս ածային անունանց, ոչ է յանդգնելի ասել և ոչ զմտաւ ածել յաղագս գերագոյի և թագուն ածութեանն աւելի քան զասացելսն՝ որքյածաբանիցն ՚ի սրբազան գիրս աւանդեցան մեզ : Որոյ պատճառն է, զի ըստ անձանօթ գերագոյութեան նրա ասէ, գերագոյն գիտութեան զնելի է . յօրմէ յայտ է թէ Աստուածային գիրքն է ճշմարիտ կանովն ածաբանութեան : Աստուած պարտին ամ ածաբանք զհիմն փաստից իւրեանց ունիլ ՚ի սբ գրոց : Արդ ասէ տէրն՝ Հայր իմ մինչեւ ցայժմգործէ և ես գործեմ, այս բան՝ թէպէտ Հայի առ նախախնամութին, որով անքուն ինամէ զարարածս, սակայն ոչ սակաւ ցոյց է ածային ներգործականութեան : Ցուցանի երկրորդ բանին . Որ միշտ է էակ՝ է ներգործութիւն միշտ, այլած է միշտ էակ, ուրեմն միշտ է ՚ի ներգործութեան : Ցուցանի մեծագոյնն, գոլն էակին է ներգործութիւն իւր, զի այսպէս սահմանի յածաբանից, ապա միշտ գոլն է միշտ

ներգործութիւն : Յուցանի փոքրագոյնս վկա-  
 յութ , զի ասէ ած ես եմ որ էն . որով ցուցանի  
 բացարձակ գոլն : Եւ շնորհալին ասէ \* միշտ  
 էիդ անեղ բնութիւն բնաւրեցան : Ցուցանի  
 երկրորդ՝ պարտ է նախկին պատճառին լինիւ  
 պարզ ներգործութիւն անխառն յամենայն կտ-  
 րութեն , այլ Աստուած է նախկին պատճառ ,  
 որպէս ցուցի ի ստորե , ուրեմն է սոսկ ներ-  
 գործութիւն : Ցուցանի մեծագոյնն . ամ կարու  
 զութենէ , որպէս յայտ է յամ կարելի է ակս  
 պարուրեալս ի պատճառս իւրեանց . ապա եթէ  
 ի նախկին պատճառն իցէը կարողականութիւն  
 ինչ , հարկ էր վերածիլ ի ներգործութեն ի նա-  
 խագոյ էակէ , և այսպս անկանխւր ի գոլց նախ-  
 կին պատճառ : Ցուցանի երրորդ . անփոփոխ  
 էակն է սոսկ ներգործութեն . այլ ած է անփոփոխ  
 էակ , ուրեմն է սոսկ ներգործութեն : Ցուցանի  
 մեծագոյնն . այնմ ասի փոխիլ , որ գայ ի յէու-  
 թիւն , և կամ զնայ յուն էութիւն , այլ անփոփոխ  
 էակն ոչ ունի զայսոսիկ , որք են կարողութեք  
 դիմեալք ի ներգործութիւն . ուրեմն է սոսկ  
 ներգործութեն : Ուստի ասէ ագումինացին , կրկին  
 են ծայրք բնութեն , առաջինն ած՝ որ է սոսկ  
 ներգործութեն , երկրորդն՝ նիւթ առաջին , որ է  
 սոսկ կարողութիւն . այսպէս ևս արիստոտէլ և

գաւիթ ՚ի պրեարմէնի : Խակ այլքն ամեն խառն  
 ՚ի կարողութէ և ՚ի ներգործութէ : Առարկի-  
 ցե՞ս , ստեղծուածք էին նախ քան զստեղծա-  
 նին ՚ի կարողուե ՚ի յԱստուած , և ստեղծմամբ  
 էկին ՚ի ներգործութէ . ուրեմն գոյր կարողուի  
 ՚ի յած : Պատասխանեմ , թէ կարողուեն կրկին  
 նշանակուե ունի , մի՛ նշանակէ զանկատարուե  
 էուե ըստ փիլիսոփայից առման՝ որ ներգործու-  
 թեամբ կատարի , և այս ոչ ՚ի յած . զի էու  
 թիւն այ է ամենակատար : Երկրորդ՝ նշանակէ  
 զգօրուե առնելոյ զոր ինչ և կամի . և այս է ՚ի  
 յած , վասն այն ասի ամենակարօղ : Եւ այս ոչ  
 է անկատարութէ որ գալովն ՚ի ներգործութէ՝  
 կատարեացէ զէուեն Այ , այլ մեծ կատարելուե  
 ՚ի յազատ ներգործօղս : Այսմ գեղեցիկ օրինակ  
 տայ մեծն Յովհան Որոտնեցին ՚ի ստորոգուեց  
 մեկնուեն , զարեգակն ասելով . զօր օրինակ  
 արեգակն միշտ ներգործէ յենթալուսնեայս և  
 կայ մնայ անփոփոխ յէութեան իւրում . այս-  
 պէս նաև զԱստուած իմա՛յառնելն զարարածս :

### Կմանութեան .

Բարոյականապէս յայսմ մասին Սուրբք  
 նմանին Աստուծոյ , ըստ որումեն միշտ ՚ի գոր-  
 ծըս Տեառն , ըստ առաքելոյն որ ասէ , ՚ի  
 գործս Տեառն եղերուք յամենայն ժամ :

**Աննանութեան :**

**Մեղաւորք Են յոյժ աննաման Աստուծոյ ըստ  
սրուց որպէս զքնով անկեալ խորդան յախտու-  
ծուլութեան , և ոչ գան ՚ի գործ ածային . նը-  
մանեալ առաջին ՚ին թոյն՝ որ է սոսկ կարողուն-  
միայն . զորոց ասի , ննջեցին զքունս իւրեանց և  
ոչ ինչ գտին : Մեծ է չարուն և վսաս մեղաւո-  
րաց , զի խախտէ զյառաջադրութեն այ , քան-  
զի ած այնու մտօք արար զմարդն՝ զի ոչ միայն  
բանականաւն լիցի իւր նման , այլ և բարոյա-  
կանաւն : Իսկ սա խափանէ և ոչ թողու ըստ  
կամացն Աստուծոյ լինիլ :**

**Պրահ Երրու :**

**Յաշուա իւն Աստուծ է առաջինն ամենայն էից .  
և իւն որով նմանիմ նմա :**

**Յառաջադրութիւնս թէպէտ պայծառ քան  
զարփին յայտ յանդիման երևի . սակայն ՚ի ճահ  
վարկաք ցուցանել վասն առաջիկայ պրակացդ :  
Արդ՝ ցուցանի նախ վկայութ սթ գրոց . զի ասէ  
ած , ես եմ որ էնն . ՚ի առաջին էակն : Եւ  
եսայի,\* ես եմ առաջինն . և ես եմ առ յապայ . և**

՚ի յայտնուե՞ն, \* ես եմ այք և օ: Ցուցանի դարձեալ բանիւն. Եակն ներգործական և յորում ոչ է կարուղականութիւնը, պարտի լինիլ առաջինն ամ էից, այլ անծ է այդպէս, որպէս ցուցաւ ՚ի վերոյ, ուրեմն անծ է առաջին էակն: Ցուցանի մեծագոյնս, որ ոչ կարօտի առաջնոյ էակի, է ինքն առաջին, այլ էակն ներգործական ոչ կարօտի առաջնոյ էակի, վն զի՞ որ կարօտի, վասն երկուց կարօտի. կամ վասն գալոյ ՚ի ներգործութիւն, և կամ ՚ի ներ գալ ՚ի կատարելութիւն: Այլ էակն ներգործական անի զայս ամենայն, վասն որոյ նմանի էակի որ է անկարօտ, որպէս յինքեան ելով և ոչ յայլում. ըստ պլուկղի՝ առ որ ամբին իբր առ անպակասելի և անժտօղ կանխեն: Ցուցունի երկրորդ, էակն յինքենէ պարտի գոլ առաջին, և այս ցուցանի օրինակաւ միութե՞ն. զի պատճառ առաջնութեան միակին է գոլն յինքենէ, և ոչ յայլմէ թուոյ: Իսկ անծ է էակ յինքենէ, զի եթէ իցէր յայլմէ, ոչ լինելը պատճառ կամ նախաշարժօղ. կամ էակ ներգործական, ուրեմն Աֆէ առաջինն ամ էից: Ցուցանի երրորդ. համարնաբանորէն, ընդ համուր էակն է առաջին քան բաժանեալքն ՚ի նմանէ, յայտ է յեղերացն, այլ անծ է ևս ընդ համրագոյն էակ, ու-

\* Յայտ. 1, 8:

Եցա էպι τὸ Α. καὶ τὸ Ω. ἀρχὴ καὶ τέλος.

բեմն է առաջին քան զամ: Ցուցանի չորսրդ  
տրամաբանօրէն, սեռականսագոյն սեռն է ա-  
ռաջին՝ քան որ յինքենէ ներերելին, այլ ած  
համեմատութ էից է սեռականսագոյնն, այսինքն  
ընդհանրագոյն, զի սեռականսագոյն ասել Շ  
հանրագոյն ասել է, ըստ այնմ՝ ես եմ որ էն,  
թ ընդհանրագոյն էակն, ուրեմն Աստուած է  
առաջինն քան զոր յինքենէ երելին:

### Ամենութեան :

Բարոյականսապէս յետինն յաշս իւր, է ա-  
ռաջին յաշս Աստուծոյ, մինչէիր խոնարհ յաշս  
քո՝ եղեր գլուխ ժողովրդեան: Ահա յետին,  
որ եղեւ առաջին: Ներհակն են հպարտքն՝ զի  
յաշս իւրեանց են առաջին, իսկ յաշս Աստու-  
ծոյ են յետին, որպիսիք էին հրեայքն:

### Պէտք Զորբորտ :

Յաղագու և Աստուծոն է նախիչն պատճառ  
և նմանութեան :

Ցուցանի նախ վկայութեամբ սթ գրոց, ե-  
սայի, Համբարձէք զաշս ձեր և տեսէք, ո՞ հաս-  
տատեաց զայս նամ: իթրու թէ ասիցէ՝ ես: Ցու-  
ցանի երկրորդ մակածութեամբ, որ ստեղծա-  
նէ զերկինս և զերկիր և զայլ նամ, է նախկին  
պատճառ, այլ ած ստեղծ, ուրեմն է նախկին

պատճառ : Ցուցանի մեծագոյնս վկայութեամբ  
ըստ այնմ \* ՚ի սկզբանէ արտօ անձ զերկինս և զեր-  
կիր : Եւ գաւիթ՝ † զերկինս արար իմաստութն  
իւրով զարեգակն իշխանական տունջեան , հաս-  
տատեաց զերկիր ՚ի վր հաստատութեան իւրոյ ,  
ուրեմն և այլն : Ցուցանի երկրորդ պատճառաւ ,  
ամենայն էակաց պարտի գոլնախկին պատճառ .  
զի ըստ պրոկրի՝ կամ ոչ ուրուք եղիցի պատճառ  
էակացն , կամ ըստ բոլորակին եղիցին պատ-  
ճառք , և կամ մինչեւ ցանսահմանութիւնն ե-  
ղիցի վերելքն : արդ՝ առաջինն ոչ կարէ լինիլ  
զի յատկապէս տեսանեմք ՚ի պատճառս և պատ-  
ճառելիս . գառաջինս և վերջինս . և իմաստա-  
միրեմք զհայր՝ որդւոյ գոլ պատճառ . և վե-  
րինք՝ ներքնոց : Նաև երկրորդն ոչ կարէ լինիլ  
որպէս ՚ի պարաւորս է տեսանել , որք զմիմեանս  
քարշեն . և ՚ի միմեանց քարշին . որով նոյն ե-  
րեի գոլ պատճառ և պատճառելի . և այս ան-  
ֆար է լինիլ յեղական իրա , որպէս թէ հսյրն  
գոլով պատճառ որդւոյ՝ հակադարձաբար ե-  
ղիցի որդին պատճառ հօր . արեգակն տկւոյ  
գոլով պատճառ՝ ուկին ևս եղիցի պատճառ  
արեգական , և այս է զօր ասէ Ալպերթ՝ թէ  
բոլորակն ոչ լինի յեղական իրա որպէս թէ  
նոյնն եղիցի ինքեան նախկին և վերջին՝ այ-  
սինքն պատճառ և պատճառելի . նաև ոչ ե-

բորսէն կարէ լինիլ՝ այսինքն մինչեւ յանսահմա-  
նութիւնն կամ յանհունս տարածիլ վերելքն  
պատճառաց : Եւ այս ցուցանի այսպէս . որ է  
հունաւոր, ոչ կարէ տարածիլ յանհունս ՚ի պատ-  
ճառս, այլ պատճառեցեալք ամ են հունաւոր  
վ՛ գոլըն եղականք, ուրեմն ոչ կարեն տարա-  
ծիլ յանհունս ՚ի պատճառս : Երկրորդ՝ ցուցա-  
նէ կովտին այսպս, \* որք ունին զգույսը, ոչ  
են, եթէ ոչ լինի այն այլ, զի եթէ չլինիցէր այն  
այլ, ոչ լինէր ամ իրք յայլմէ : Եւ այսպէս կամ  
պարտ է հարկիւ ասել, թէ ոչ գոյ ինչ իրօքյաշ-  
խարհի, կամ հարկիւ խստովանիլ զգունախ-  
կին պատճառին : Եւ այս գեղեցկապէս ցու-  
ցանի օրինակաւ միակի և բազմութեան՝ այս-  
պէս, որք ունին զգու ՚ի միակէն, ոչ են, եթէ ոչ  
իցէ այն միակն, այլ ամ բազմութեն ունին զգու  
՚ի միակէն, ուրեմն ոչ եղիցի բազմութիւն ինչ,  
եթէ ոչ եղիցի միակն . զի միակն է մայր ամե-  
նայն բազմութեան . և ըստ այսմ անհարին է յա-  
ռաջանալ յանհունս ՚ի պատճառս : Դարձեալ  
ցուցանի, ամ կապակցեալ ունի ինքեան զկա-  
պակցող պատճառ, և այս կամ նմանապէս յա-  
ռաջեսցի յանհունս, կամ եղիցի անոդ բոլորակ,  
կամ հասանիցի առ իմն, որ ոչ իցէ կապակցեալ,  
այլ ամից կապօղ անկատ :

\* Կովուն, հառ . 4 . համաբնաբնութեան . վեճաբ . 2 .

ինդէր առաջին . էջ . 414 .

կարէ լինիլ յաղագս վերոյ գըեալ փաստիցն , ա-  
 պա ուրեմն դնելի է կապող իմն անկապ , և այս  
 է նախկին պատճառն ած : Արդ՝ յառաջնութին  
 և նախկնութիւնն շը արիստոտէլի ՚ի գիրս ստո-  
 րոգուեց , հինգ եղանակաւ լինի . շը տեսղուեն ,  
 շը հետեւուեն , շը կարգի , շը արժանաւովտուուեն ,  
 և շը բնութեան : Արդ շը հոգիցս այսոցիկ ած  
 է նախկին , ըստ տեսղութեն՝ է նախ քան զյա-  
 փտեանս . շը հետեւութեն՝ ըստորում եթէ է  
 ստեղծուած՝ է և ստեղծօղ , և թէ է պատճա-  
 ռելի , է և պատճառ նախկին . շը կարգի՝ քան-  
 զի գոյ կարգ ՚ի յէս շը այնմ՝\* ամ ինչ չափով և  
 կշռով և կարգաւ արարեր : Արդ՝ ՚ի մէջ այ և  
 ստեղծուածոց է այսպիսի կարգ . զի որպէս մի-  
 ակն է նախկին կարգաւ քան զբազմութիւնն ,  
 սկիզբն քան զսկսեալն և պառճառն քան ըզ-  
 պատճառելիս , այսպէս և Աստուած է նախկին ևս  
 կարգաւ քան զստեղծուածս . և շը արժանա-  
 պատճուեն՝ ըստ որում ՚ի ստեղծուածս մի քան  
 զի պատռնականագոյն է , և այս կամ յառա-  
 ջեսցի ՚ի յանհունս որ է անկարելի , զի բնուեն  
 ստեղծական փախչի ՚ի յանհոյ . և կամ հասա-  
 նիցի առ իմն , որ իցէ պատռականագոյնն ամե-  
 նայն է ից , յորում ամ կատարելութիւնք ստեղծ-  
 ուածոց բովանդակ երեսեսցին . քանզի ած է  
 ձայն բնուեն ըստ վարդապետաց . ըստ որում

\* Եմուսպ, 11, 12:

գեղեցիկքն աղաղակեն զնմանէ ևս գեղեցկա-  
գոյն գոլ, վասն որոյ ասէ իմաստունն , \* զի թէ  
ը գեղս լուսաւորացն սխրացեալ զնն ածս հա-  
մարեցան՝ ծանիցեն զի որ գեղեցկութե՛ ճար-  
տարապետն է՝ նա հաստատեաց զնոսա : Իսկ ը-  
բնութեան՝ նախկին է ած հոյր՝ քան զորդի և  
հոգի սբ , թէպէտ ժամանակու են համայտ-  
վիտենականք , ըստ այսմ՝ թէպէտ արեգակն  
համանգամայն է ը ճառագայթին իւրոյ , սա-  
կայն բնութեամբ ասի նախկին քան զնա :

Առարկիցե՞ս , Արիստոտէլ ընդունի զծը-  
նունդ կենդանեաց յառաջել ՚ի յանհունս , զի  
ընդունի զծնունդ յակիտենից : Պատասխանեմ  
զանազանելով զդրութիւն Արիստոտէլի . ընդ-  
ունի զծնունդ յակիտենից , նախ ենթադրելով  
զնախկին պատճառն , ստորասեմ . արտաքսելով՝  
բացասեմ . քանզի բնականաբար ֆա՛ր է լի-  
նիւ ծննդոց ՚ի յակիտենից , իբր զի նախկին  
պատճառ նոցա է յակիտենական . թէպէտ ի-  
րօք եղեն ՚ի ժամանակի : Ուստի յառաջումն  
ծննդոց ՚ի յանհունս ոչ թէ բառնայ զգոլ նախ-  
կին պատճառին՝ այլ առաւել հաստատէ զգօ-  
րուի նորին . իբր կարողացաւ յայնպիսի բնուե-  
ստեղծուլ զերկրորդ պատճառս . զի կարիցեն  
տեել յակիտեան և յառաջել յանհունս :

Ա Յ Ա Խ Ո Ւ Բ Ե Ա Ն :

ՍԵՐ յայսմ մասին բարոյականապէս նմա-  
նին այ՝ նախկին պատճառ լինելով բարեգոր-  
ծութեան :Այսպէս \* Ենովս նախագտակ եղե  
յուսոյ զի նա յուսացաւ կոչել զանունն այ :  
†Արքահամ հաւատոյ՝ վասն որոյ կոչեցաւ հայր  
հաւատոյ : Դաւիթ սիրոյ՝ վասն որոյ ասէր  
‡ սիրեցից զքեզ տէր զօրութիւն : Եւ գրեթէ  
ամ սԵՐ յատուկ առաքինութք փայլեցան , վայ  
ոմանց ոլջախոհութիւնն գովի որպէս || Յովսէ-  
փայ . ոմանց հեղութին՝ ուղ չ մովսիսի . ոմանց  
արդարութն՝ որպէս ¶ Յօրայ և այն : Դարձեալ  
սրբոց նախկինութիւնն նկատի ըստ ժամանակին .  
և ըստ այսմ , են ընտրեալք յառաջքան զլինին  
աշխարհի : Դարձեալ ըստ ժամանակին մարգա-  
րէք են նախկինք քան զառաքեալսն , ըստ  
ժամապատութե՝ են սԵՐ նախկինք . ըստ այնմ  
\*\* զորոց մի ՚ի նոցանէ ոչ արժէ աշխարհս : և ըստ  
այսմ առաքելք են նախկինք քան զմարգարէս :  
ուստի ասէ առաքեալն՝ †† զորս եղ ած յեկե-  
ղեցւոջ այս են՝ նախ զառաքեալս և այն . նա և  
քրիստոնեայն քան զհրէայս , ուղ ասէ տէրն .

\* ԾԱՆՆԴ . 4 . 26 : † 15 . 5 . 6 : ‡ ՍԱՂՅ . 17 :

|| ԾԱՆՆԴ . 39 . 9 : § ԷՂՅ . 3 . 11 : ¶ ՅՐԵ . 2 . 3 :

\*\* ՀԵՖԻ . 11 . 38 : †† 1 ՀՐԻ . 12 . 28 :

Թհայետինք՝ որ Եղեն առաջինք։ և այլն այս-  
պէս յարմարեա։

**Անհանութիւն :**

Իսկ մեղաւորք յովժ աննման են յայսմ մա-  
սին նախկին պատճառին, զի ոչ միայն ոչ են գը-  
տիչք տեսակաց բարեգործութե, այլ և զգիւտս  
նախկին պատճառին ապականեալ պէսպէս մո-  
լութեց լինին գտիչք։ Ասացաք զգիւտս նախ-  
կին պատճառին, քանզի բանական բնութեն է  
մեծագոյն գիւտ այ, զոր անհուն իմաստութեն  
( յետ առնելոյ զնամ էսս ) խօսելոյ եղանակաւ  
հազիւ եգիտ։ Եւ առ այս զլսորհուրդ ՚ի կիր  
էառ յասելն՝ \* արասցուք մարդ ըստ պատկերի  
մերում։ Արդ՝ զայսքան դժունարագիւտ ֆարս  
այ, մեղաւորք ՚ի պատունի չպահելով։ կամ  
չիմանալով զպատիւ բնութեան իւրեանց ըստ  
մարգարեին թէ՝ † մարդ ՚ի պատունի էր, և ոչ  
իմացաւ, դարձուցեալ յապականութիւն՝ ազգի  
ազգի մեղաց լինին պատճառք։ Զի որպէս յա-  
պականեալ գիշոյ ծնանին պէսպէս ժժմունք և  
որդունք, այսպէս յապականութե բանակա-  
նութեան՝ ծնանին մոլութիւնք պէսպէս։ Աս-  
տուստ սատանայ եղե գտակ հապարտութե, զի  
ապականեցաւ հանճար իւր, ըստայնմ՝ բարձ-  
րացաւ սիրտ քո ՚ի գեղեցկութեան քում և

\* Ծներ. 1. 26: † Ապա. 48. 11:

ապականեցաւ համճար քո , նոյնպէս և հետմասը նրա առականեալ զհանճարս իւրեանց , զանազան մեղաց եղեն գտիչք ո՞ղ Ադամ անդաշանդուն . Կայէն եղբայրասպանուն ևսյն :

**Պրաէ Հինգերորդ :**

**Յաղագ» լէ՝ Ասութած է նոյնին շարժօղ՝ և նմանութիւն:**

Ցուցանի առաջին մասն նախ վկայութե՛ սուրբ գրոց ՚ի ձեւ առարկութեան : Որ շարժէ զնամ՝ է նախկին շարժօղ . այլ ած շարժէ զաշւարհ ամ . ո՞ղ ասէ առաքեալն , \* խոստացեալէ թէ միւս անգամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և զերկինս . իսկ աշխարհ է ըստ արիստոտելի բաղկացութիւն ՚ի յերկրէ է ՚ի յերկնէ : Ուրեմն է նախկին շարժօղ : Երկրորդ՝ օրինակաւ շարժելեաց . զի տեսանեմք շարժիլ ամ էլից . և ՚ի սոցանէ իմաստասիրեմք թէ է ոմն շարժօղ սոցաւ : Ցուցանի երկրորդ մասն , այսինքն թէ ած է անշարժ շարժօղ : Եւ այս նախ վկայութեամբ սբ գրոց . զի ասէ ած , ես եմ որ եմ . այսինքն անշարժ ՚ի նոյնութեան : Եւ առաքեալն ՚ի վերայ գրեալ տեղւոջն ասէ , այլ միւս անգամն յայտ առնէ զշարժելոցն իբրև զեղելոց փոփոխումն , զի հաստատուն կացցեն անշարժքն : անշարժն է անեղն ած . զի շարժիլն եղականաց

ասէ յատուկ առաքեալն աստանօր : Յուցանի  
 երկրորդ ՚ի բաժանմանէ ըստ պրոկրլի . զի ամ  
 էակ կամ անհակաղարձական է , կամ ինքնա-  
 դարձական , և կամ այլաղարձելի : իսկ ըստ մե-  
 կնչին անհակաղարձական , այսինքն անշարժէ  
**Աստուած :** Ինքնաղարձական՝ այսինքն ինքնա-  
 շարժ են հրեշտակք և հոգիք , և այլաղարձելի  
 են մարմինք , որք ՚ի հոգւց շարժին : Երրորդ  
 ցուցանի բանիւ : Ամենայն շարժելեաց հարկէ  
 գոլ ոմն անշարժ շարժող . ապա թէ ոչ կամ  
 մինչեւ ցանսահմանութիւնն եղիցի վերելք էա-  
 կացն շարժելեաց . և կամ եղիցի անդ բոլորակ :  
**Այլ ցանհունս անհարէ գոլ :** Յուցանի փոք-  
 րագոյնս ՚ի գիրս համարնաբանութե՛ . ՚ի շար-  
 ժեալ շարժօղս եթէ ոչ իցէ անշարժ շարժօղ  
 իբր հիմն շարժութեան . և ոչ այլքն եղիցին :  
 զոր օրինակ եթէ ոչ իցէ միակն , որ է արմատ  
 շարժութե՛ թունոց՝ և ոչ այլշարժական թիւքն  
 եղիցին : Այլ գոյ անշարժ շարժօղ շարժեալ .  
 ուրեմն գոյ և շարժօղ անշարժ . վնէ արիստո-  
 տէլ ներհուն մտօքն նկատելով ՚ի շարժումն  
 երկնայնոց՝ ասաց , թէ է ոմն որ շարժէ զերկ-  
 նային մարմինս , և ինքն է անշարժ և նմա տա-  
 լի է պաշտօն : Բոլորակն ես անհարէ որպէս  
 յայտ է : Չորրորդ՝ ցուցանի անշարժութիւնն  
 այ ՚ի ձեռն տեսակաց շարժման . զորս վեց զնէ  
 արիստոտէլ ՚ի յատորոգութիւն . նախ լինելուն .  
 երկրորդ՝ ապականութիւն , երրորդ՝ այլայլուն

չորորդ՝ աճելութեն. հինգերորդ՝ նուազութեն. վեցերորդ՝ ըստ տեղւոյ փոփոխութիւն։ Արդ և ոչ մի ՚ի սոցանէ անկանի յած, նախ ոչ շարժի ած ըստ լինելութեան, զի է միշտ էակ, ես եմ որ եմ։ Երկրորդ՝ ոչ շարժի ըստ ապականութեան. վասն զի է ամենեին պարզ, երրորդ՝ ոչ շարժի ած և այլայլութեան, որպէս հոգի մեր որ զանազան կրիւք այլայլի, այսինքն ուրախութեն և տրտմութեն և այլն, զի է նախագէտ ամենայնի և ոչ անկանի ՚ի նա պատահական։ չորորդ՝ ոչ շարժի ած ըստ աճելութեան, զի է կատարեալ, և զոր ինչ յաւելցես ՚ի վերայ կատարելցն, նուշազեցուցանես և պրոկլի։ Հինգերորդ՝ ոչ շարժի ած և նուշազութեան, զի որ նուշաղի գիմէ յապականութեն, և առաքելցն թէ որ տկարանայ մերձ է յապականութեն. այլ ած է անսապական, զի է ազատ ՚ի ներհական սկզբանց։ Վեցերորդ՝ ոչ շարժի ած տեղականապէս, զի տեղական շարժումն ըստ փիլիսոփային. լինի վասն հանգստեան, այլ ած գոլովյանը ուրեք՝ է ՚ի ծայրագոյն հանգստեան։ Դարձեալ և արիստոտէլի շարժումն յերիս բաժանի, բնական, բանական, և բարոյական։ Բնականն ՚ի վեց տեսակս բաժանի, զորոց ՚ի վեր ասացաւ։ Բանականն ոչ անկանի յած, զի ոչ դու զօրագոյն քան զնա։ Բարոյականապէս ևս ոչ շարժի ած, զի բարոյական շարժումք ՚ի յորդորանաց լինին. այլ ոչ ինչ յորդորանաց

կարօտի ած : Դարձեալ ըստ նոյնոյ շարժումն  
բաժանի ի պարբերական , որպիսի է շարժումն  
երկնից ՚ի յուղիլ , որպէս ՚ի վեր կամ ՚ի վյոր  
և ՚ի խառն ՚ի բոլորակէ և ՚ի յուղղոյ , այսպիսի  
շարժմունք ևս ոչ են ՚ի յած . զի յատկութեք  
այսպիսի շարժմանց ոչ պատկանին Աստուծոյ :  
Առարկիցե՞ս , թէ սբ գիրք շարժումն դնեն ՚ի  
յած , ուրեմն շարժի : Պատասխանեմ թէ այնք  
շարժմունք հային առ խմացումն և կամքն այ ,  
որք ոչ շարժին յանկատարութենէ . այլ ՚ի կա-  
տարելութե՞ , զորոց երբ լիցի բան՝ ասացուք :

### Ն Խ Ա Ռ Ե Ա Ր Ե Ա Ն :

Սբք յայսմ մասին նմանին այ բարոյակա-  
նապէս անշարժ մնալով ՚ի բարի յառաջադրուե  
իրեանց . Որպէս հրեշտակք՝ որք անշարժապա-  
սերտեալք են յած : Այսպիսի արար ած ըդ-  
մարդարէն Երիմիա՝ ոնկ ասէ , \* եղիզքեզ այսօր  
իբրև զքաղաք ամուր . և իբրև զսիւն երկաթի .  
և իբրև զպարիսպ պղնձի ամուր . մարտիցեն ը-  
քեզ , և զքեզ ոչ ինչ կարասցեն ստնանել , ֆ  
խախտել կամ կործանել : Այսպիսի էր և ար-  
դարն Յօր՝ † իբրև զանդամանդեայ պարիսպ  
անշարժ ախոյեան կանդնեալ Շդէմ արկածիցն  
սատանայի , զորմէ ասէ շնորհալին : ‡ “ Ե՛ւ այս-  
քանեօք՝ ոչ խախտեցին , զանդամանդեայ վէմ

\* Երեմ . 1 . 77 : † Յօր . 2 . 3 : ‡ Յնորդէ :

Հաւատին : այլ մանրեցաւ ծախօղ ժանին , իբր  
ի պղինձ կամ երկաթին : ” Կաև անշարժ կալով  
յառաքինուե , շարժեն զայլ բարի օրինակաւ :

**Անմանութիւն :**

Իսկ մեղաւորք յայսմ մասին են յոյժ ան-  
նման Աստուծոյ , և մանաւանդ հերձուտծողք .  
որք և ոչ ի միում յառաջադրութեան հաստա-  
տուն և անշարժ մնան , այլ հանգոյն տերեոյ  
յամ հողմոց խարէական վարդապետութեան  
շարժին \* ը առաքելոյն՝ զի են երկմիտ , և այր  
երկմիտ առանց հաստատուե է յամ ճանապար-  
հըս իւր : զայսպիսեացն՝ ասէ շնորհալին ,  
“ Եւ ոչ եմ վէմ՝ յեղը ծովին , որ ՚ի յալեաց՝  
անշարժ պահին . այլ եմ նման՝ բեկելնաւին ,  
տարարերեալ ՚ի մէջ ծովին : կամ հողմահար՝  
խոփէ խոտին , ՚ի ժամանակ՝ աշնանային †” :  
Եւ զայսմանէ ընթերց յապաշտարանն մեր  
զմառն որ զերկայնմտուեն այ , զի անդ նմա-  
նուիք և աննմանութիւնք բազումք են՝ ՚ի  
գլուխն եր :

\* Յակ. 1, 8 :      † Յէռուս որդե :

**Գլուխ Հինգերորդ :**

Յաղագս էտիան սպորդութեանցն Աստուծոյ բաժանեալ  
՚ի հինգ պրակս»

**Պըտք Առաջին :**

Յաղագս Աստուծոյ է գոյացածան էտի ։  
և նմանութեան :

Առ ՚ի բարեպ! ս իմանալ զնմանութիւն  
հոգւոյ մերոյ ընդ Աստուծոյ, հարկ է խօսիլ  
զէական ստորոգելեացն Աստուծոյ: զի այնպէս  
աստիճանաւ առաւել ևս բացայայտի նմանութիւն:

**Եղանացութեան :**

ԱՃ է գոյացական էակ և ոչ պատահական՝  
ցուցանի առաջին մասն վկայութեամբն այ՝ որ  
ասէ, \* ես եմ որ եմ: այսինքն որ ինչ եմ, նոյն  
եմ գոյացաբար: Ցուցանի երկրորդ բանիւ:  
Պատճառն աւելի է քան զպատճառելին. իսկ  
պատճառեցեալքն յայ են գոյացութիւնք, ու-  
րեմն ևս առաւել ԱՃ. ուստի ասէ պրոկղ. ամ  
վերացուցանօղ առաւել քան զվերացուցեալն է  
քնութեամբ: վերացուցանօղ զպատճառն ասէ,  
վերացուցեալ զպատճառելին: Եւ աստ գիտելի

Ե զի նախկին պատճառն միշտ առաւել է քան  
 զպատճառելին իւր : Իսկ ՚ի յերկրորդ պատճա-  
 ռացն որք են ՚ի նոյնում սեռի , միշտ զհան-  
 գէտս յառաջածեն , որպէս յայտ է ՚ի ծնունդ  
 կենդանեաց : Իսկ որք են յայլոյ սեռի . միշտ  
 զնուազս , որպէս յայտ է յերկնային մարմինն .  
 որք թէպէտ ՚ի յերկրի զկենդանիս ևս յառա-  
 ջածեն , որք երեխն պատուական քան զնոսա  
 ձրիւ կենաց , սակայն գոլովքաղկացեալ ՚ի տա-  
 րական սկզբանց . են միշտ ասպականացուք . իսկ  
 անապականն պատուական է քան զապականա-  
 ցուն : Աստուստ յայտ է՝ թէ երկրորդ պատ-  
 ճառքն զհանգէտս ինքեանց ևս յառաջածեն  
 ընդդէմ պրոկլի ՚ի նոյն տեղուժ՝ և ոչ միշտ  
 զնուազն : Ցուցանի երկրորդ՝ ոչ ոք կարէ տալ  
 յինքենէ զոր ոչ ունի : Այլ ած տայ յինքենէ  
 զգոյացութիւն ստեղծուածոց , ապա ուրեմն և  
 յինքենէ ևս ունի զգոյացուն : Ուստի ասէ քաջ  
 հաւաքաբանն պրոկլ՝ ամոր տայ էուն այլոց ,  
 նախ ինքն է էակ . և է՝ զի յէուն իւրմէ տայ . և  
 որոյ տայն՝ նուազագոյն ունի , և ինքն կատարե-  
 լագոյն է : Ցուցանի երորդ՝ որ է ինքնակայ՝ է  
 գոյացուն . զի գոյացուն սահմանի էուն ինքնա-  
 կայ . իակ ած է ինքնակայ և ոչ յումեք ենթա-  
 կայացեալ . ուրեմն է գոյացութիւն : Աստուստ  
 յայտ է թէ Ած է իսկագոյն և գերագոյն գոյա-  
 ցուն . զի է տիրապէս ինքնակայ : իսկ ամ ստեղծ-  
 ուածք ունին զկայումն յԱծ . նմին իրի՝ եկդ և

յետին գոյացութեք ասին . Յուցանի երկդ մասն ,  
թթ թէ ԱՃ ոչ է պատահումն , այս ՛ը ինքեան է  
յայտ . սակայն ցուցցուք միով ձեռնարկութ :  
Որ է ՛ը ինքեան էակ . ոչ է պատահումն , քան-  
զի պատահումն ոչ է ըստ ինքեան էակ . այլ է  
առ ըստ ինքեան էակն : Վայ սահմանի էութե  
այլակայ : Ուստի արիստոտէլ թէպէտ բաժանէ-  
զէակն ՚ի գոյացութիւն և ՚ի պատահումն . սա-  
կայն ասէ թէ՝ պատահումն մանաւանդ ասի ՚ի  
վր էակի՝ քան թէ էակ : Իսկ ած է ՛ը ինքեան  
էակ ող ասացաւ . ուրեմն ոչ է պատահումն :  
Առարկիցե՞ս նախ՝ ամ գոյացութեան յատուկ է  
գոլ ենթակայ պատահման . ապա եթէ ած է  
գոյացութ , է ուրեմն և ենթակայ պատահման :  
Պատասխանեմ զանազանելով զմեծագոյնդ , ամ  
գոյացութիւն , է ենթակայ պատահման . բա-  
ղադրեալ՝ ստորասեմ . պարզ՝ որպիսի է ած , բա-  
ցասեմ : Քանզի ամենեին պարզ էակն ոչ կարօ-  
տի պատահման , զի է բոլորովին ներգործութ .  
ոչ ունելով ինչ ՚ի զօրութեան , որ գայցէ յետոյ  
պատահաբար ՚ի ներգործութեն : Առարկիցես  
երկրորդ՝ ամ գոյացութ փակի ՛ը ստորոգութ ,  
ող ասէ արիստոտէլ , իսկ թէ ԱՃ է գոյացութ ,  
ուրեմն ևնա փակի ՛ը ստորոգութ . իսկ փակելն  
՛ը ստորոգութ՝ փակի և ՛ը սահմանաւ . իսկ փա-  
կեալն ՛ը սահմանաւ՝ ոչ է անհուն . որ ոչ յար-  
մարի այ : Պատասխանեմ զանազանելով զմեծա  
գոյնդ . ամ գոյացութիւն փակի ՛ը ստորոգութ .

ստեղծեալ և հունաւոր՝ ստորասեմ. անստեղծ  
և անհուն , որպիսի է ած՝ բացասեմ: Արդ՝ ե-  
րիւք զանազանի ածային գոյացութիւնն յստո-  
րոգական գոյացութէ: «ախ՝ զի ածային գոյա-  
ցութիւնն է բացարձակ և ընդհանուր , և ոչ  
իբր մասնաւոր էակ ընդ սահմանաւ փակեալ:  
Երկրորդ՝ զի է անհուն . երրորդ՝ զի է ի ներ-  
գործուե . իսկ ստորոգական գոյացուեն է ըդէմ  
սոցա , մասնաւոր , բաղադրական , և հունաւոր:  
Ուստի առ ՚ի զանազանութէ բաղադրական և  
ստորոգական գոյացուե , ասէ սբն Դիոնէսիոս  
Ած է գեր քան զգոյացուի՝ քան գոյացութիւն:

### Ն Յ Ա Խ Ա Բ Ի Ւ Ն :

Հոգին մեր յայսմ մասին է նման ԱՅ գոլով  
ըստ ինքեան գոյացուի . որ ոչ միայն բաղադրել  
շու մարմնոյ բաղկացուցանէ զծնունդ գոյացա-  
կան , այլև յանջատիլն կարօղէ շուինքեան են-  
թակայանալ . զոր ոչ ունին հոգիք անբանից .  
զի նոքա ելանեն ՚ի կարողուէ նիւթոյ . վայ և  
յապականիլ նիւթոյն՝ ապականին : Բայց այսու  
զանաշանին յԱՅ , զի սա է ենթակայ պատահ-  
ման և կարողութեան դառնալ յոչ ինչ : Ո՞Շ  
թէ որքան անզեղջ է շնորհն Աստուծոյ՝ զի յա-  
մենայնում նուագի մեղանչելոյ արդիւմաւրիմք  
դառնալ յոչինչ , սակայն տակաւին ած պահէ  
զմեզ ՚ի գոյն : ընթերց յապաշխարանն մեր ըզ-  
ճառն ստեղծման : Գլուխ առաջներորդ :

**ՊՐԵԿ ԵՐԵՐԵՐ :**

Յաղագու թէ Աստղուած է անմարմին էակ . և նմանութեան :

Անմարմին գոլն այ և հոգեղէն . յայտ է  
նախ ՚ի սուրբ գրոց . որ ասէ . Հոգի է ած : Եւ  
առաքեսոյն ասէ , այլ թագաւորին անմահի և  
աներեսութի ; աներեսոյթն պատկանի հոգեղէն  
գոյացութե : Ցուցանի երկրորդ բանիւ . Ան-  
ֆութին ոչ պատկանի մարմնեղէն էակի , այլ  
ած է անհուն , ուրեմն ոչ է մարմնեղէն : Ցու-  
ցանի մեծագոյնս , մարմնեղէն էակն եթէ իցէր  
անհուն , տեղակալ էր զամէս . և ոչ տայր թոյլ  
երեխլ այլ ինչ բաց յինքենէ : Ուստի եթէ ած  
իցէ մարմնեղէն և անհուն՝ բաց յայ մարմնա-  
ւորէ այլ ինչ ոչ երեխէին յաշլսարհի . այլ զի  
երեխն , յայտ է զի ած ոչ է մարմնեղէն . այս-  
պէս ասէ և արիստոտէլ ՚ի գիրս նկատման . թէ՝  
մարմնաւորն ոչ կարէ ունիլ անհուն զօրութի :  
Ցուցանի երկրորդ՝ այ պատկանի լինիլ յամ ու-  
րեք ներկայ որպէս և է , զի է կառավար էից ,  
այլ մարմնաւոր էակն ոչ կարէ լինիլ համանգա-  
մայն յամ ուրեք . զի այս ընդդէմ է մարմնե-  
ղինութե : ուրեմն ած է անմարմին էակ : Ցու-  
ցանի երրորդ ՚ի բաժանմանէ մարմնոյ : Արդ՝  
և Սկովտեան Գաբրիէլի . մարմինն բաժանի ՚ի  
բնական՝ և յերեւաչփական , կամ պարզապէս  
ասացուք . ՚ի գոյացական և ՚ի պատահական :

Բնական մարմինն է՝ որ բաղկանայ ՚ի նիւթոյ և  
 ՚ի տեսակէ : Իսկ Երկրաշափական կամ պատ-  
 հական մարմինն է , որ բաժանի յերիս շափ-  
 մունս , ՚ի խոր , ՚ի լայն , և ՚ի յերկայն . կամ որ  
 նոյն է ՚ի խորութէն , ՚ի գիծ , և ՚ի մակերևոյթ :  
 Արդ՝ ոչ ոք յայսցանէ պատկանի այ . քանզի  
 բնական մարմինն է բազադրեալ ՚ի նիւթոյ և  
 ՚ի տեսակէ , որք են անկատար մասունք . և բա-  
 զադրութեամք իբրու ՚ի կատարումն եկեալ .  
 այլ ոչ ինչ բաղադրութիւն անկանի յած . զի է  
 անկատարութէն , ուրեմն ած ոչ է մարմին : Իսկ  
 Երկրաշափական կամ պատահական մարմինն ես  
 ոչ պատկանի այ . զի են հունաւորք . իսկ ած է  
 անհուն և այլն : Առարկիցես նախ՝ սուրբ գիրն  
 զմասունս մարմնոյ ստորոգէ զայ . որպէս աչք՝  
 ձեռն՝ ոտն՝ ննջումն և այլն . յորմէ յարաբերի  
 թէ Աստուած է մարմնաւոր : Գատասխանեմը  
 սկզբան Գաբրիէլի , [թէ նք ոչ ասին զԱՅ  
 յատկապէս , այլ այլաբանօրէն . որպէս եր-  
 բեմն ասի գառն , առիւծ : Եւ կամ փաղա-  
 նշանապէս . այսինքն դիդելով ՚ի նշանակութ  
 ինչ . կամ համանշանելով զիր ինչ յած . հա-  
 մեմատ նցին : այսպէս աչքն համեմատօրէն նշա-  
 նակէ զտեսութէն և զիմացումն այ . ոտքն զներ-  
 կայութիւն , ձեռքն զնախախնամութ , ննջումն  
 զանտես առնելն . և այն : այլ զյարմարութիւն  
 բաղմաց այսպիսեաց տես գեղեցկապէս ՚ի  
 սբյն դիմսէ սիսի : Առարկիցես Երկրորդ՝ մարդն

Է պատկեր այ , ուրեմն է մարդակերպ և հետեւապէս մարմնաւոր : Պատասխանեմ , այդ նմանուն ոչ է ՚ի կողմանէ մարմնոյ՝ այլ հոգւոյ , առ որ և գիգելով զայս պրակ ՚ի մէջ բերաք :

Ա Յանութիւն :

Յայսմիկ մասին հոգի մեր գեղեցկանպ նմանի այ , զի է անմարմին . ուստի առ ՚ի տեսակաւորել զհոգիս մեր նմանութեամբն Աստուծոյ , ոչ պարտիմք ՚ի մարմին ընկղմիլ . այլ ՚ի հոգեոր վարս պայծառանալ . զի զայնպիսի երկրպագուսինդրէ ած : Եւ զայս նմանութիւն Աստուծիսկ հարիւնդրէ ՚ի մենջ յասեն : \* Եւ երկրպագուաց նորա պարտ է հոգուով և ճշմարտութերկիր պագանել : ընթերց յապաշխառնն մեր՝ զճառն անմարմնութեան Աստուծոյ , առ . մասն . գլուխ վեշտասաներորդ :

Պրակ Երբորդ :

Թէ Աստուծոյ է չենդանի էուի :

Թէպէտ աւելորդ է ՚ի խնդիր անկանիլ թէ ած իցե կենդանի . բայց զի կարգ բանին այսպէս պահանջէ , վասն այն ցուցանելի է նախ վկայութեամբ գրոց . զի առաքեալն Պետրոս ՚ի գարձուածս բանիցն Յիսուսի՝ ասաց . † Դու ես

\* Յոհ . 4 . 24 :      † Մատ . 16 , 16 :

որդին կենդանւոյ : Ե՛ւ աւետարանին ասէ ՚ի  
յայտնութե՛ն , \* երկրապագէին կենդանւոյն յա-  
փիտեանս յափիտենից : Ե՛ւ սբյն եղիայի հաս-  
տատութեան քանի հասարակ կերպն էր այս .  
† կենդանի է տէր , և այն : Այսպէս և այլ ան-  
թիւք գտանին ՚ի գիրս սբյս զկենդանութենէն  
այ վկայութիւնք : Ցուցանի երկրորդ քանիւն .  
որով և ցուցաւ ՚ի վերս գոլգոյացութե՛ն : Նախ՝  
զի պատճառն ոչ պարտի լինիլ ՚ի նուաստագու-  
նի աստիճանի քան ղպատճառելին . այլ պատ-  
ճառելիք քաղումք են կենդանիք . ուրեմն և  
պատճառ նոցա ած : Ե՛ւ այս է զոր ասէր պրոկլ  
թէ՛ վերացուցանօղն առաւել քան զվերացու-  
ցեալն է բնութ . և թէ՛ որ տայ զէուի այլոց ,  
նախ ինքն է էակ . այսպէս պահանջէ կարգ  
քանին ասել՝ Որ տայ զկենդանութիւն այլոց .  
նախ ինքն է կենդանի : Իսկ ած տայ զկեն-  
դանութիւն այլոց որպէս ասէ մարգարէն թէ՛  
՚ի քէն է տէր աղբիւր կենաց : ապա ուրեմն  
նախ ինքն է կենդանի : Առարկիցե՞ն թէ արե-  
գակն գոլով անկենդան՝ պատճառէ զկենդա-  
նութ . ապա ուրեմն գոյ արարաչական պատճառ  
նուաստագոյն քան զպատճառելիս . քանզի ան-  
կենդանն նուաստ է քան զկենդանին : Պա-  
տասխանեմ ըլ թօմայի , թէ արեգակն շարժ-  
մամբ կենդանացուցանէ զոր ոմի ՚ի հրեշտա-

\* Ցայտ 7. 22 : † 2 Թագ . 17 . 1 . և այլ :

կէն՝ որ շարժէ զինքն . և յայտէ թէ՝ արեգակն հըշտակիմ լաւէ քան զկենդանիս և սողունս որք գոյանան յարեգակնէ : Առարկիցէս եկդ . Որ ոչ ունի զյատկուն և զներգործուն կենդանեաց , ոչ կարէ ասիլ կենդանի . իսկ ԱՃ ոչ ունի զայտոսիկ , ուրեմն ոչ կարէ ասիլ կենդանի : Ցուցանի փոքրագոյնս . կենդանին բաժանի յերիս սեռո՞ ՚ի տնկական , ՚ի զգայական , և ՚ի բանական . այլ ԱՃ և ոչ զմիում յոյցանէ ունի զներգործուն , ոչ տնկականի՝ զի ոչ կարէ մնանիլ և աճիլ . և ոչ զգայականի՝ զի ոչ կարէ ունիլ զգայուն . ոչ և բանականի՝ զի ոչ է ներխունզական պատճառի և պատճառեցելս :

Պատասխանեմնաև ընդդիմակացութեամբ . ասելով թէ ԱՃ ոչ եթէ է մարմնաւոր կենդանի այլ հոգեւոր՝ որպա ՚ի վերն հաստատեցաւ : Պատասխանեմերկրորդ ընդդիմակացութ բաժանելով զմեծագոյնդ . ԱՃ ոչ ունի զգործ երից կենդանական սեռիցդ , տեսականապէս առեալ ստորասեմ . գերաշնչապէս առեալ բացասեմ . քզի ԱՃ գերազանցապէս պարունակէ զգործս նց . վասն այն և նովաւ ասին գործել կենդանիքն ողպ արեգակն , թէպէտ տեսականապէս ոչ ունի զգործս սողնոց , սակայն գերազանցպս յառաջ ածէ զնն : Աստուստ յայտէ թէ կենդանին ոչ է փաղանսուն նկատմամբ այ և ստեղծուածոց , այլ համեմատանուն և հոմանուն . զի եականապէս տարբերի կեանքն այ և սաեղծ-

ուածոց , ո՞գ էականապէս տարբերի երկնային  
շունն ՚ի յերկրային շանէ : Եւ աստուստ է ,  
զի սըն Դիոնէսիոս զկենդանական և բանա-  
կան զօրութիւնս ՚ի բաց հեռացուցանէ յայ ,  
յասելն՝ Ոչզգայունէ նը և ոչ երևակայունէ և  
ոչ կարծիք , և ոչ բան , և ոչ գիտուն . զի  
աստուծային տեսութիւնն է պարզ , որպէս  
յառաջիկայդ տեսանելոց եմք :

### Նմանութիւն :

Յայսմ մսախն նմանիմք տիրապէս Աստուծոյ ,  
թէ զանասնականն հեղձուսցուք ՚ի մեզ , և  
եթէ զզգայունս մեր ՚ի յախտս կենդանիս մե-  
ռուսցուք : այսպիսի կենդանի էր Պօղոս՝ որ ա-  
սէր , կենդանի եմ ոչ ես , այլ կենդանի է յիս  
Քն : Սպանցուք այսուհետեւ զանդան մեր  
երկրաւորս զի կենդանի լիցուք նշ այ : Զայս-  
պիսի իմաստասէրս և Պղատօն նմանեցոց այ .  
յասելն՝ իմաստասիրսւնն է նմանուն այ նշ կա-  
րողուն մարդկան : Իսկ ինդըրողաց , թէ զինչ  
է նմանունն այ ասաց . նմանուն այ է սուրբ և  
արդարն գոլ հանդերձ խոհեմուք : Եւ այն է  
սուրբ՝ որ մաքրեալ զինքն յախտից , և մեռու-  
ցեալ զախտա՝ նշ միւս սահմանին Պղատօնի՝ թէ  
իմաստասիրունն է խօկումն մահու . զոր մեկնէ  
անյաղթն Դրակիթ , մեռելուն գործել ախտից :

Իսկ որոց ախտքն կենդանի են , նոքին յոյժ  
աննմանք են կենդանունն այ . զօրոց ասէ Ա-

Խաքեալն , շնչառը մարդ ՚է ընդունի զհոգ-  
տյն այ , ՚պ զշնորհս . զի է աննման : Զայսպի-  
սեացս զնմանութիւնն այ բացասէ առաքեալն  
յասելն . \* զինչ նմանութ տաճարի Աստուծոյ  
և մեհենաց . տես և յապաշխարանն մեր գլուխ  
ժը . առ անմահութիւնն Աստուծոյ :

**Պիտի Շարորդ :**

**Թեւ Աւարուսն է իմացէան էակ :**

ԱՅ իմացական գոյն ցուցանի նախ վկայութ-  
ուուրբ գրոց . զի ասէ Յոթ , իմաստուն է մտօք՝  
զօրաւոր և մեծ : Ե՛ւ իմաստունն ասէ՝ † գոյ ՚ի  
նմա հոգի մտաւոր : Ցուցանի երկրորդ բանիւն .  
նախ զի իմացումն է հարկաւոր յատկութ ան-  
մարմին էակի , որպէս յայտ է ՚ի հրեշտակս և  
՚ի բանական հոգիս . այլ ած է անմարմին . ող  
ցուցաւ ՚ի վերոյ . ուրեմն է իմացական : Ցուցա-  
նի երկրորդ բանիւնն պրոկղի . որ տայ յինքենէ  
այլում . զայն տայ զոր ինքն ունի . որպէս յայտ է  
՚ի լրւսաւորս և ՚ի ճրագն՝ որ տայ յինքենէ զլոյս  
այլոց : այլ ած տայ զիմացականութիւն ստեղ-  
ծուածոց , որպէս ասէ սաղմոսերգուն . նշանե-  
ցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . այսինքն լոյս ի-  
մացականութեն . ուրեմն նախ ինքն ունի զիմա-  
ցականութ : Ցուցանի երկրորդ բանիւն անյազ-

\* 2 Կոր . 6 . 16 : † Իմաստ . 7 . 22 :

Թին մերոյ Դաւթի ՚ի գիրս սահմանաց՝ թէ  
գոյ ած , գոյ և նախախնամութե՞ն . զի որ ստեղծ-  
ծանէ , և նախախնամէ : Իսկ եթէ գոյ նախա-  
խնամութե՞ն , գոյե իմաստությած , զի նախախնա-  
մութիմն ոչ լինի անբանութե՞ . այլ հանդերձ  
իմաստութե՞ , իսկ իմաստութե՞ն կայանայ ՚ի միտս :

### Ն Խ Ա Կ Ա Ր Ե Ա Ն :

՚Ի տեղւոջէս յայսմանէ կրկին կերպիւն նմա-  
նութե արտահանի նախ բնական . քանզի յայսմ  
մասին բնականաբար հոգին մեր նմանի այ . զի  
որպէս ած է մտաւոր , այսպէս և հոգին մեր է  
մտաւոր . սովոր տիրապէս կոչիմք պատկեր այ  
և նման . ըստ այնմ արար զմարդն ասէ շու պատ-  
կերի իւրում և նմանութեան : Երկրորդ տե-  
սական . և այս լինի յորժամ զմիտս մեր իմաս-  
տասիրութե՞ն տեսական մասամբք զարդարեա-  
ցուք . քանզի տեսական իմաստութիւնքն են  
ճառագայթք մտաց . որք զբնական լոյս մտաց՝  
առաւել փայլեցուցանեն . և առ ածատեսակ  
նմանութին տիրապէս ՚ի վեր հանեն : Քանզի  
երեք են գլսաւորքն որովք կերպարանի ած .  
իմաստութիւն՝ կարողութիւն՝ և բարութիւն :  
Իսկ և իմաստասիրութե՞ն զբնական հոգին երիւք  
այսոքիւք կերպարանէ . որպէս ասէ անյաղթ-  
փիլիսոփայն ՚ի գիրս սահմանաց . վնյ զհրեշ-  
տակս որք են իմաստութե՞ կատարեալ իմացա-  
կանք , կոչէ ած՝ կնիք նմանութե՞ : Բայց աւաղ

զի զայս գերաբարձր նմանութեն մեղաւորք եղ-  
ծեն յինքենս . քանզի առած է իմաստնոց թէ  
հոգիք ըմբռնեալք ՚ի մեղս՝ ՚ի մտաց ևս անկա-  
նին . նմին իրի և մարդարէն ասէ , \* մարդ՝ ՚ի  
պատուհի էր և ոչ իմացաւ . այսինքն ՚ի նմանուե-  
նայ էր զի այս է պատիւն մարդոյ : Եւ նմին  
իրի յարէ , թէ հաւասարեցաւ անսամնոց ան-  
բանից և նմանեցաւ նոցա . տես և յապաշխա-  
րանն մեր , գլուխ ժե՞տ տու իմաստութիւնն այ :

**Պրաք Հինգերորդ :**

**Թէ Ասպուհն է անյնիշխան էակ :**

Նոյն է ասել թէ ած է անձնիշխան և ու-  
նօղ կամաց : Քանզի անձնիշխանութիւնն ոչ  
այլ ինչ է եթէ ոչ ազատ կամք . ապա ՚ի ցու-  
ցանելն թէ է կամք ՚ի յած , միանգամայն ցու-  
ցանի և անձնիշխանուին : Արդ՝ ցուցանի նախ  
կամքն այ վկայութ սթ գրոց . նախ՝ յառաքելոց  
՚ի բաղում տեղիս . ՛շ այնմ այս է կամքն այ՝  
սրբուն ձեր : և թէ՝ † կամաց նր ոչ ոք կայ հա-  
կառակ : և թէ՝ ‡ նախասահմանեաց զմեզ ըստ  
հաճուե կամաց իւրոց . և Դակիթ՝ զամզոր ինչ  
կամեցաւ և արար տէր . ապա է կամք ՚ի յած :  
Ցուցանի երկրորդ բանիւ . և նախ՝ պատճառաւ  
այսպս , Ամենայն իմացական է անձնիշխան և

\* Ստղմ . 18 . 11 : † Հոռմ . 9 . 19 : ‡ Եփմ . 1 . 5 :

ունող կամաց ։ այլ ածէ իմացական ող ասացաւ  
 ուրեմն է անձնիշխան և ունող կամաց ։ Ցուցա-  
 նի մեծագոյնս ։ որ իմանայ՝ շարժէ զինքն , և  
 այն շարժումն է կամքն , քանզի կամքն ոչ այլ  
 ինչէ , եթէ ոչ յօժարութիւն և շարժումն առ  
 իմացեալ բարին և տհաճական շարժումն  
 և յետս դարձումն յիմացեալ չարէն . ապա ու-  
 րեմն ամիմացական է անձնիշխան և ունող կա-  
 մաց ։ Ցուցանի երկրորդ պատճառելեաւ ։ Որ  
 ինչ գոյ ՚ի պատճառելին՝ տեսականապէս և ոչ  
 գերազանցապէս է նախկնագոյն ՚ի պատճառն  
 այլ ՚ի պատճառելիս գոյ անձնիշխանութիւն .  
 ուրեմն և ՚ի պատճառն ։ Ցուցանի մեծագոյնս ,  
 որ ինչ պատշաճի պատճառելըն՝ պատշաճի և  
 պատճառին ։ Ցուցանի երրորդ՝ կատարելագոյն  
 կերպն գործելոյ պատկանի կատարելագոյն է-  
 կի . ող ասէ սկզբտեան Գաբրիէլն ՚ի սկզբէ ։  
 այլ ած է կատարելագոյն էակ , ապա կատա-  
 րելագոյն կերպն գործելոյ , որ է կամառորապէս  
 առնելն . այնէ անձնիշխանութիւնն՝ նմա առա-  
 ւելապէս պատկանի ։ Ցուցանի չորրորդ՝ էակն  
 որքան է զտեալ ՚ի նիւթականութէ . այնքան է  
 սղատ գործօղ . այլ ած է ամենեկին զտեալ ՚ի  
 նիւթականութէ և ՚ի կարօղականութէ . ուրեմն  
 ծայրագոյն ազատութիւն նմա պատկանի ։ Ցու-  
 ցանի մեծագոյնս օրինակաւ ստեղծուածոց . զի  
 ամենեկին նիւթականքն՝ ամենեկին են զուրկ ՚ի  
 կամաց . որպէս անզգայ տարերք և տոնկք :

Իսկ միջակքն ըստ իրաց ինչ . որպէս անբանք որք միայն ունին զբնական յօժարութիւն . և ՚ի վեր քան զայսոսիկ մարդիկք , որք ունելով ըդքանական հոգի . թէպէտ են անձնիշխանք . բայց խառնուած մարմնոյն տնկակից ցանկութեն յիւրն յօժարութեն հակեցուցանէ բաղմիցս հանգոյն անբանից , ո՞գ ասէ իմաստունն . թէ մարմին եղծանելի ծանրացուցանէ զհոգի . ֆ ընդարոյս ախորժակօքն հակէ : այլ ՚ի վեր քան զամենայն անմարմինքն են ազատ և ինքնիշխան . և մանաւանդ Աստուած :

Առարկիցե՞ս ըստ գամասկացայն . թէ խորհուրդ և ընտրութեն ոչ է պարտ գնիլ՚ի տէրն . ուրեմն և ոչ անձնիշխանութիւն , զի յանձնիշխանութեն յառաջ գայ խորհուրդ և ընտրութեն . որ բերէ զանկատարութեն . զի այսոքիկ ոչ պատկանին իմացութեանն , այլ բանի . որ խորհոգովն գնէ զնախաղասութիւն . և ընտրութեն տրամաբանելով , արտահանէ զեզրակացութեն :

Պատասխանեմ ընդ սրբոյն թօօմայի . թէ ընտրութիւնն ըստ որում բերէ զերկբայութեն՝ պատկանի մարդոյն . որ յերկբայելոյն ընտրէ . իսկ ըստ ուրում բերէ զազատութեն՝ պատկանի այ : Ուստի ասէ դաւիթ , երանի զօր ընտրեցեր և ընկալար . յայսմիտ ասի ած անձնիշխան . ֆ ազատ գործող : Վասն որոյ և ՚ի շարականն ասի զհոգոյն սրբոյ , ինքնիշխան ինքնազօր : ինքնիշխան նոյն է՝ որ և անձնիշխան :

## Ամառ-թիւն :

Բարոյականապէս յօյսմ մասին և մեք նման նվազ այ . Եթէ զանձնիշխան կամ մեր աղատ պահեցուք ՚ի մարմնական կրից . և վերամբարձ ՚ի հակեցուցիչ ծանրութեանց նորին : Այսպէս սըք յաղթելով մարմնական ախտից և հոգեկան կրից . այնպէս տիրաքար բարձրացն ՚ի նմանունն ԱՅ, մինչև վերագոյն գտանիլ օրինաց բացարձակ աղատութ ո՞գ զած : Առ որ նկատմամբ գրէ առաքեան առ տիմութէոս թէ՛ բայց զայս գիտասջիր զի ՚ի վը արդարոց օրէնք ո՞չ գոն . Ե՛ւ այս յիրաւի՛, զի սըց կամքն այնպս համակերպին կամացն այ . մինչև ո՞չ գտանիլ արատ ինչ ՚ի նոսա, որ պէտս ունիցի ուղղելոց օրինոք : ըստ այնմ՝ ամենեկին գեղեցիկ էս մերձաւոր իմ . և արատ ինչ ո՞չ գոյ ՚ի քեզ :

## Անմառ-թիւն :

Ընդդէմ այսմ տարաբախտ մեղաւորքն յոյժ օտարացեալք են ՚ի յաղատական գեղեցիկ նմանութենէս այ : Զի թէպէտ են անձնիշխանք, սակայն զանձննս իւրեանց կամաւ կացուցին ծառայս մարմնոյ՝ մեղաց՝ և սատանայի . ըստ այնու որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց : Տես և յապաշխարանն մեր առաջին մասն . և երկրորդ գլուխ . մակագիր առ ամէնիշխան տերութիւնն Աստուծոյ :

**Գլուխ Աւելյանդ :**

Յաղագս նմանութեանց , որք արդականին ՚է գըրավանցախտն  
սպորդութեանցն . Աստուծոյ , յերիս պրախ բաժանեալ :

**Պրահ Աստղին :**

Թռէ Աստուծոյ է ճշմարիք էակ :

Են ոմանք յատկութիւնք էակի , որք կոչին  
գերազանցականք , այնու՝ զի պատկանին էա-  
կաց . թէպէտ Այ պատկանին գերազանց աս-  
տիճանաւ : Եւ այսոքիկ են ճշմարտութ , բա-  
րութիւն , և միութին : Զառաջնոյն ասասցուք  
՚ի պրակի աստ հանդերձ նմանութեամբ . և  
զայլոցն հետեւապէս :

**Եղբակացութիւն :**

Ած է ճշմարիտ էակ : Ցուցանի նախ վկայութ  
սթ գրոց . զի ասէ Տէրն \* ես եմ ճանապարհ և  
ճշմարտութ և այլն : Եւ Եղբաս . † ճշմարտութն  
է յաղթօղ՝ որ կայ յաւիտեան : Եւ երկրորդ  
օրինաց՝ արդար և ճշմարիտ է տէր : Ցուցանի  
երկրորդ՝ Համեմատութեամբ ստեղծուածոց .  
զի Աստուծոյ գոլն է այնքան ճշմարիտ . մինչ զի  
ստեղծուածածք նամ Համեմատութեամբ առ նա

\* 1 Յոհ . † 1 Եղբ . 4 . 8 : 24 . 4 :

Են իբրու սուտ , ուստի ասէ առաքեալն՝ Արդ  
եղիցի Ած ծշմարիտ , և ամ մարդ սուտ : յայս-  
միտ ասէ և Եսայի \* ամ հեթանոսք իբրև զկա-  
թիլ մի ՚ի գուլէ են . ոչ ինչ են , և ոչ ինչ հա-  
մարեցան : Նմին իրի՝ Ած զծշմարիտ և զիսկա-  
կան գոլն միայն ինքեան յատկացոյց առ Մոլ-  
սէսիւ . յասելն՝ ես եմ որ էն : Այսր աղագաւ  
և Ալպերթ ասէ † Ած միայն ունի զկատարեալ  
գոլ . մինչ զի՞ ամ գոլ համեմատեալնորուն գո-  
լըն՝ ոչ ինչ է : Ցուցանի երրորդ բանիւ , այնէ  
ծշմարիտ , որ ունի զգոլ . վասն զի ծշմարտուն  
էակին է գոլն իւր : իսկ քաջայայտ է գոլն այ  
և չունի ինչ պէտս ցուցման , ապա ուրեմն է  
ծշմարիտ : Դարձեալ՝ որպէս մին անդրադարձի  
ընդ էակին , այսպէս և ճշմարտուն . այլ Ած է  
էակ և մի , ապա ուրեմն և ծշմարիտ : Եւ աստ  
գիտելի է զի ած է ծշմարիտ էակ . այսպէս և  
է ծշմարիտ և հաւատարիմ ՚ի բանս . քանզի  
բանքն այ յառաջ գան յիմացուն նորին , այլ  
որպէս իմացականութիւնն այ է անսխալ ուղ-  
ղութիւն . զորմէ ասի , † զծշմարտուն խոկայ կո-  
կորդ իւր . և թէ՝ ՚ի մէջ շաւզաց ծշմատութեան  
շրջիմ : այսպէս և բանքն բղսեալք ՚ի նմա-  
նէ . վասն որոյ ասէ Տէրն § երկինք և երկիր

\* Եսայ . 40 . 15 : † Ալպերթ 42 . 1 .

Էրեւ 10 . Յաղագն Աէ և Ասպուած :

‡ Աստաք . 8 . 7 : § Մոլուք . 24 . 35 :

անցցեն : և բանք իմ ոչ անցանիցեն : այսինքն  
ոչ ստեսցին : Ուստի ըստ այնմ են իրք , ըստ  
որում է իմացումն Աստուծոյ զնոցանէ . վասն  
այն ասեն վարդապետք , թէ ճշմարտուն իմա-  
ցութեանն այ նախ է , քան զՃշմարտուն իրաց :

### Կ Յ Ա Խ Ա Ր Ա Բ Ի Ւ Ն Ե :

Յայսմ մասին կրկնակի նմանիորք այ նախ  
քնականաբար ըլ որում եմք ճշմարտապս էակք՝  
ող և նոյն է , թէ պէտ մեք թերապէս և մասնա-  
ւոր կերպիւ . և այս է հասարակ չարաց և բա-  
րեաց : Ապա պարտիմք նմանիլ նմա և բարոյա-  
կանապէս , զի յատկացուք ՚ի չարաց . և այս  
յայնժամ լինի՝ եթէ ճշմարտապէս խօսիցիմք և  
ճշմարտապէս կենցաղավարիցիմք : Եւ աստ գի-  
տելի է . զի երեքկին է ճշմարտուն . նախ հա-  
ւասարուն և համաշափուն իմացուն ը իրի , ող  
ասեն ածարանք . և այս վերաբերի առ տրա-  
մաբանս : Երկրորդ համաշափութիւն լեզուի  
ը սրտի , կամ աղտաբերեալ բանից ը ներտրա-  
մադրելոյն , և այս է մեծ պատիւն բանակա-  
նացս՝ որ ոչ իցէ լեզուաւ կակուզ որպէս ձէթ ,  
և որտիւն որովէս ոլաք . առ այս յորդորէ շնոր-  
հալին յասելն . « ճշմարտութե՝ լեր հետեւալ  
ուղիլ խօսից սիրով գտեալ : » Երրորդ հաւա-  
սարութեն և համաշափուն գործոյ ընդ դիտա-  
ւորութեան . և այսոքիկ վերաբերին առ բա-  
րոյականս , որպէս մարդն վերանայ ՚ի նմանուն

առաջին ճշմարտութեն . քան զոր չլիք մեծաւ  
գոյն փառք մարդոյ : Ա ասն այն ասէր երանեւ-  
լին Յօհաննէս թէ \* մեծ ևս քան զայս ուրա-  
խութիւն ոչ ունիմ . յորժամ լիցեմ թէ իմ որ-  
դեակքս ճշմարտութք գնան : Այսպէս գնաց  
արդարն Յօր . վնյ վկայեցաւ յայ գոլ ճշմարիտ .  
զի ոչ գոյր իբրև զնա այր արդար և ճշմարիտ ՚ի  
վերայ երկրի : Յայսպիսեաց սակի է և կատա-  
քեալ հաւատունօղն բանից առաջին ճշմար-  
տութեանն , որ ոչ խաբէ , և ոչ խաբի :

### Անհանութեան :

Ի գեղեցիկ նմանութէ աստի օտարացեալ  
գտանին որդիքն Սատանայի . որոց ըստ Հօրն  
իւրեանց այլէ սիրտ , և այլլեզու . այլխօսին , և  
այլ առնեն . որոց կեանքնէ խառնագնաց , որք  
զգենուն այլեայլ հանդերձս ընդդէմ օրինաց .  
որք և գործեն զբարիս չարաչար վախճանաւ :  
զորոց ասի † պիղծք են առաջի իմ շրթունք  
սուտ . և թէ՝ կորուսանես զամենեսեան՝ ոյքիս-  
սին զսուտ : Սոքա նմանին Հօրն իւրեանց Սա-  
տանայի . որ սուտ է և հայր ստութեան . որ և  
՚ի ճշմարտութ ամենեին ոչ եկաց ըստ վկայելոյ  
Տեառն :

\* 3 Յոհ . 1 . 4 :

† Սոլ 5 . 7 :

## Պրաէ Եւրէսրո :

Թէ Աստուած է ամենաբարի էու :

ԱՅ ամենաբարի գոլն ցուցանինախ վկայութք սը գրոց . զի ՚ի խնդրելն մովսիսի տեսանելզերեսն նր , ասաց \* ես ցուցից քեզ զամ բարի . զամ բարի կոչեաց զինքն . այսիքն կատարեալ բարի : Այնքան բարի է Աստուած . մինչ զի ՚ի մասունս էակաց երևեալ բարիքն առ բարութն այ երեխն չարք . որպէս առ արեգակամբ լոյս ճրագին երեխ խաւար . յայս միտ արձակապէս չարս կոչեաց տէրն զմարդիկ ՚ի յանդիմանելն իւրում . ասէ՝ † եթէ գուք՝ որ չարքդ էք , գիտէք պարզես բարիս տալ որդւոց ձերոց . ո՞րչափ ևս առաւել հայրն ձեր , և սյլն : Մովսէս ՚ի ճառելն զստեղծմանէ մասնաւոր էակաց , ասէ . ‡ և ետես ած և ահա բարի են . իսկ յորժամ զբովանդակ ստեղծուածոց խօսի , ասէ , և ետես ած , և ահա բարի են յոյժ : Փանզի համախմբութիւնք մասնաւոր բարեաց , զմեծ բարութիւն բաղկացուցանեն : Ապա զինչ ասելի է զբարութենէն Աստուածոյ , յորում բովանդակին ընդհանրութիւն ամենից ստեղծուածոց : Ցուցանի երկրորդ բանիւ . բարութ էակին է գոլն իւր . զի ամ որ է բարի է : Այլ ած՝ է , ուրեմն

\* Ելք : 33 . 13 : † Մասպ . 7 . 11 :

† Ծննդ . 1 . 11 . 31 :

Ե բարի , այս հասարակէ ամենայն էակաց : Այլ  
 այ ամենաբարի գոլն այսպէս ցուցանի , Որ ունի  
 զբան ընդհանուր էակի , է ընդհանուր բա-  
 րի . որպէս ևս որ ունի զբան մասնաւոր էակի ,  
 է մասնաւոր բարի . այլ ած ունի զբան ընդ-  
 հանուր էակի , ուրեմն է ընդհանուր բարի :  
 Երկրորդ՝ որ հաղորդէ զինքն ամ էակի , է ամ  
 բարի . ուստի բարի կոչի լոյն արեգական՝ զի  
 հաղորդէ զինքն ամենից աչաց , վն սյն ասէ Դ-  
 մաստունն . \* քաղցրէ լոյս և բարի աչաց տեսա-  
 նել զարեգակն ; Ե՛ւ սուրբն Դիոնէսիոս դլսա-  
 ւոր յատկուեն բարւոյն դնէ հաղորդիլն զինքն  
 այլոց . այլ ած հաղորդէ զինքն ամից էակաց  
 ստեղծագործութ , ուրեմն է ամենաբարի . զի  
 ինքնէ միակ աղբիւր բարուեն , յորմէ ամբարուենք  
 և կեանք յառաջ բղխին : Վասն այն իմաստա-  
 սէրն Պրոկլ . կոչէ զնախիին բարին կեանք է-  
 ակաց և յաւէտահեղ առ իւր պատճառելիս :  
 Ե՛ւ տէրն զծայրագոյն բարութիւնն այ նշա-  
 նակելով ասաց ցդպիլն . մի է բարին ած . ֆ  
 արմատ և սկիզբն ամ բարութեանց : Աստուստ  
 ամ էակք . որպէս արդարեւ ազնուի և բարւոյ  
 նմա տուփան . որպէս ասէ սուրբն Դիոնէսիոս ՚ի  
 գիրս ածային անունանց և Պրոկլ ՚ի գիրս իւր .  
 զորոյ զանչափ բարութենէն սխրացեալ մարգա-  
 րէին . ասաց † իբրև զի (այսինքն որքան) բարի  
 է իսրաէլի ած . և ոյք ուղիղ են սրտիւք :

\* Ժաղ . 11 . 7 .      † Սաղ . 72 , 1 :

## Նմանութեն :

Յայսմ մասին ևս կրկնակի նմանիմք Այ .  
 նախ բնականաբար , ըստ որում էակութ եմք  
 բարի . քանզի որպէս ասեն փլղիսովայք , բա-  
 րութիւն էակին է գոյն իւր . զի որպէս ասացաւ  
 ՚ի վերն՝ ճշմարիտն և բարին բղլսին ՚ի գոլոյն .  
 վն այն որ է էակ ներգործութ , է և ճշմարիտ .  
 է և բարի : Քանզի այսոքիկ հակադարձին առ  
 միմեանս . որպէս ասէ տղումնացին ՚ի գիրս հո-  
 գեաց . թէ ճշմարիտն է բարի իմն . և բարին է  
 ճշմարիտ իմն . բայց այս նմանութիւն հասարակ  
 է բարեաց և չարաց . զի էակ գոլով են բարիք .  
 ՛շ այնմ , ետես ած և ահա բարի է . վասն այն  
 Երկրորդ գիմելի է առ բարոյական նմանութիւն .  
 որով յատկանան բարիք ՚ի չարաց : Արդ՝ բա-  
 րոյականապէս նմանիմք Աստուծոյ յայսմ մասին  
 առատաբարոյութ հաղորդելով զբարութ մեր  
 այլոց . զի այսնպս չհանդուրժելով բնութ բար-  
 ոյն հաղորդեաց զինքն այլոց , և զնմանութ իւր  
 աննախանձաբար զգեցոյց մարդոյ : Արդ չորք  
 են այսպիսի տեսակքն ածանման առատաբա-  
 րոյից , նախ մեծատունք , որք հանգոյն այս սլփ-  
 ուեն և հաղորդեն զմեծութիւն իւրեանց կարօ-  
 տելոց : Երկրորդ արուեստաւորք . որք զաշա-  
 կերտս իւրեանց կրթելով զնման ինքեանց թո-  
 ղուն յաշլսարհի : Երրորդ իմաստունք . որ զո-  
 գիս տգիտաց լուսաւորեն հաղորդելով զլոյս

իմաստութեան իւրեանց նոցա : Աստուստ վիլի-  
սոփայք զկատարեալ իմաստասէրն նմանեցու-  
ցին այ՝ բանիւն . զի որպէս ած խնամէ զամե-  
նեսեան , այսպէս և իմաստասէրն խնամ տանի  
անկատար հոգւոց : Ե՛ւ որպէս ած լուսաւորէ  
զկատարեալ հոգիս , այսպէս և իմաստասէրն .  
վասն այն տէրն որէ լոյս ճշմարիտ . նմանեցոյց  
լուսոյ \* . դուք եք լոյս աշխարհի : Չորորդ եկե-  
ղեցիք . որք ըստ սրբոյն Դիտնէսիոսի զախտի  
ծնունդս մաքրեն , լուսաւորեն , կատարելագոր-  
ծեն , և յածապէս նմանութիւն ի վեր հանեն .  
յայս հայելով տէրն՝ ասաց † եղերուք նման հօր-  
ձերոյ . զի զարեգակն ծագէ , և այլն : Ե՛ւ առա-  
քեան Պետրոս ‡ . իւրաքանչիւրոք որպէս և  
ընկալաւ զշնորհս ինչ , ի միմեանս զնոյն մատա-  
կարարել : Ըստ այսմ սատանայ և նմանիքն .  
յորոց ոչ ինչ բարի յառաջանայ՝ կոչին չարք .  
գայ չարն և այլն : Առարկիցե՞ս . ամենաբարին  
խափանէ զնամ չար . այլ ոչ իսափանէ . ու-  
րեմն չէ ամենաբարի : Պատասխանեմ զանազա-  
նելով զմեծագոյնդ : Ամենաբարին խափանէ  
զնամ չար , որքան՝ առ ինքն ոտորասեմ . որքան  
առ այլ՝ բացասեմ : դարձեալ ի բնական գոր-  
ծողս բացասեմ . զօր օրինակ արեգակն յին-  
քենէ զնամ խաւար և զբաղում այլս լուսաւորէ .

\* Մատ . 5 . 14 :      † Մատ . 5 . 45 :

‡ 1Պէտ . 4 . 10 :

բայց թէ ոք խփեցէ զաշս ինքնէ մեղադրուժ  
և ոչ արեգակն, այսպէս իմա ինձ և զած լին-  
քենէ փարատէ զամ չար՝ և զընդունակն լուսո-  
ւորէ . բայց չարքն զանձինս կնքեն աղատ կա-  
մօք ՚ի չտեսանել զլյոս :

### Պէտէ Երրորդ :

† Թէ Աստուած է Տէ Տէայն :

Միութիւնն յերիս բաժանի . ՚ի սեռական ,  
՚ի տեսական , և ՚ի յանհատական . սեռական  
միունն է , որով բաղում տեսակք տաին մի հա-  
զորդութ սեռին իւրեանց . այսպէս՝ խոհեմուն՝  
արիութիւն՝ ողջախոհութ՝ և արգարուն են մի  
հաղորդութ առաքինութեն : իսկ տեսական մի-  
ութիւնն է . որով անհատքն նկատմամբ տե-  
սակին իւրեանց ասին մի : Ուստի ողջ ասէ Պոր-  
ֆիւր թէ՝ \* տեսակին կցորդութե՝ բաղում  
մարդիկք մու . նմանապէս ասելի է թէ՝ սեռին  
հաղորդութ՝ բաղում տեսակք մու : Իսկ անհա-  
տական միութիւնն է տիրապէս միութիւն ան-  
բաժանելի յինքեան՝ և բաժանելի ՚ի յայսոց :  
Արդ՝ յերից միութեանց յայսցանէ ոչ և ոմն  
պատշաճի ԱՇ , ոչ սեռականն , զի ոչ ընդու-  
նի ՚ի ներքոյ իւր զբազում տեսակս . և ոչ իսկ  
տեսականն , զի ոչ ունի Շ իւրեւ զբազում ան-

\* Պորֆիւր յաղագո Տեսակէ , էջ . 31 :

Հատոս : Կաե ոչ անհատականն , զի է ընդ-  
 տեսակաւ . իսկ Աստուած ոչ ուրուք ՚ի ներքոյ  
 անկանի : Միթէ՞ ՛ և այնմ պատկանիցի ԱՅ ,  
 զի է անբաժանելի յինքեան և բաժանեալ ՚ի  
 յայլոց : Երկրորդ՝ միութիւնն բաժանի զի գե-  
 րազանցական և ՚ի թուական : Գերազանցա-  
 կան միութիւնն է գոյն էակին , զի ըստ այսմ է  
 միակն՝ ՛ որում ունի զգող : Ուստի միակն և  
 էակն անդրադառնան : Եւ ասի գերազանցա-  
 կան , զի ամենայն էից պատկանի . թէպէտ ԱՅ  
 առաւել պատկանի , զի գերագոյն էակ գոյով ,  
 է և գերագոյն միակ : Իսկ թուաբանականն  
 միութիւնն է՝ որ ընդդիմաբաժանի բազմութեան .  
 և այս ՛ երկուց պատկանի Աստուծոյ մի՝ ըստ-  
 որում դիմաբաժանի բազմութեան . երկրորդ՝  
 ՛ որում սկիզբն է բազմութեան . այսպէս ԱԾ  
 է մի ընդդիմաբաժանեալ բազմութեան , և  
 է սկիզբն ամ բազմութեան . զի որպէս բազ-  
 մութիւնք ՚ի միոյ՝ այսպէս և ամենայն ստեղծ-  
 ուածք ՚ի նմանէ արտահօսին : Երրորդ՝ միու-  
 թիւնն բաժանի ՚ի պարզ և ՚ի բաղադրեալ .  
 բաղադրեալ միութիւնն գտանի յամ ստեղծ-  
 ուածս , յորոց ոմանք բաղադրին բնականաբար  
 որպէս ենթալումնեայք . և ոմանք բնազան-  
 ցաբար որպէս հրեշտակք և հոգիք : Եւ այս  
 տեսակ միութեան ոչ պատկանի Աստուծոյ :  
 Իսկ պարզ միութիւնն է անխառն յամենայն  
 բաղադրութեանց , և այս տիրապէս պատկանի

աստուածային միութեան : Արդ՝ զմիութենէն  
Աստուծոյ յայսմիկ գլսով խօսեսցուք , իսկ  
զպարզութենէն ՚ի հետեւալսն :

**Եղբայրական :**

Աստուած է մի միայն . ցուցանի նախ վկա-  
յութեամբ սուրբ գրոց . զի ասի յերկրորդ օրի-  
նաց \* ընթա Իսրայէլ տէր ԱՃ քո տէր մի է : Ե՛  
իմաստումն ՚ մի է և յամի կարօղ : Ե՛գարձեալ  
‡ ծաներուք և տեսէք . զի ես եմ, և ոչ գոյ այլ  
ԱՃ բաց յինէն : Արդ աստէն յասելն ծանե-  
րուք և տեսէք յորդորէ զմեզ ՚ի քննութեն պատ-  
ճառաց էից , որով ՚ի ծանօթուն գամք նախ-  
կին պատճառին : Այսպս Արիստոտէլ , ՚ի շարժ-  
մանէ էիցս իմաստասիրել եգիտ զնախկին պատ-  
ճառն . և ծանեաւ մի միայն գոլյասելն ՚ի գիրս  
նկատման . ” է որ շարժէ զերկինս , մի է և ամե-  
նազօր , և նմա տանելի է պաշտօն . ” նմին իրի և  
առաքեալն ասէր թէ ծանեան զԱստուած . ՚որ  
մի միայն գոլ : Ցուցանի գարձեալ բանիւ . նախ-  
կին պատճառն է մի միայն . իսկ ած է նախկին  
պատճառ որպէս ցուցաւ . ուրեմն է մի միայն :  
Դարձել նախկին շարժօնն է մի միայն իսկ ած է  
նախկին շարժօղ . ուրեմն է մի միայն : Դարձել  
մի միայն գոլն Աստուծոյ յայտ է ՚ի միակարգ

\* 2 Օրէն . 6 + 4 :      † Իմաս . 7 + 27 :

† 2 Օրէ 32 + 39 :

շարժմանէ եղիկնայնոցն . որ ոչ կարէր միակերպ  
մնալ եթէ իցէր ըսդ իշխանութե՛ք բազմաց :  
Դարձել եթէ իցէին բազում ածք . կամ լինէին  
անհունք , կամ հումատորք . եթէ իցէին հու-  
նատորք՝ ոչ ոք ՚ի նոցանէ լինէր ած . իսկ եթէ  
իցէին անհունք , պարտէին զմիմեանս նուածել  
և տարագրել . \* որ է հակասական և ընդդէմ  
ածայնոյ բնութե՛ք : Ուստի իրօք մի միայն է ան-  
հունն . որ բովանդակէ զամենայն . և ինքն է  
անպարագիր , որով և միայն ԱՃ : Դարձեալ  
այս տրոհական առարկութեան մասնս , որ  
ասէ եթէ իցէին հունատորք , ոչ ոք ՚ի նոցա-  
նէ լինէր ԱՃ՝ ցուցանի երիւք , նաև ըստ գոյոցն ,  
զի գոյն հունատորք ոչ պատկանի Աստուծոյ . զի  
բերէ զանկատարութիւն և նուազութիւն . վա-

\* Զայտ ինտոպ գեշեցի՛ « վճռէ ժողով Ե ի ող սացն  
Հայ ապանէ ցո առ Սիմեոն Եկ նոխորար Պարսէ՛ ՚է  
պարագայուննեն բջնոյն , յ ը ւ մ հրաւէր զնոսու ՚է դեն եւր ,  
յասելն . „ Տեր օն անդր լողիւ շահմ ըուլեան բարբանջ  
„ Տուն , մեր աշխարհի երիւու դեհպեաչ ոչ լինին , և ոչ  
„ Տէ արարածոց երիւու սպառածք . և Եմ ժորիեցին և  
„ լինեցին երիւու բագաւոր : Մեր աշխարհի , աշխարհի  
„ տերի , և բագաւորութեաննեն եղծունին : Աշխարհ  
„ նիւթեղին է , և նիւթե որի որի և հայտառի ընդ-  
” դէմ միմէանց , Սի է Արարէն հայտառի որդոցն , որ  
„ ածէ զնոսու ՚է , ինչը ըիւն հայտառի թեամբ : Եղիշ ,  
գլո ի 20 էջ , 22 :

զի հունաւորն կարէ լնդունիլ զյաւելումն , թէ  
 և տարաչսփական քանակութեան , որ ոչ է  
 յԱստուած . թէ և զօրութեան , որ է ՚իյած :  
 իսկ որ լնդունի զյաւելումն անկատար է որպէս  
 ասէ Պըտիլ թէ՝ զոր ինչ յաւելուս ՚ի վը պարզ  
 ընութեան նուազեցուցանես . զի եթէ յաւե-  
 լու ուրեմն նուազի , ապա ուրեմն հունաւորն  
 ը էութեան ոչ կարէ գոլ ԱՃ : Երկրորդ և  
 իմացականութեան , զի հունաւոր աստուածն  
 կամ ճանաչէր զմիւն կամ ոչ . զի եթէ ոչ ճա-  
 նաչէր , լինէր նմա տգիտութիւն որ է անդէպ  
 մտածել ՚ի յԱՃ . իսկ թէ ճանաչէր՝ կամ իւ-  
 րով էութեամբն ճանաչէր կամ նորին . այլիւ-  
 րով էութեամբն անհնար էր ճանաչել զնա .  
 զի յայնժամ ճանաչէ էութ իւրով՝ յորժամ յէ-  
 ռութեան իւրում փակէ զէութ միւսոյն , որպէս  
 զամենայն ստեղծուածս . այլ հունաւոր ածն ոչ  
 կարէ փակել յէութեան իւրում զէութիւն միւ  
 սոյն . ապա ուրեմն ոչ կարէ ճանաչել զնա էու-  
 թեամբ իւրով : Աստուստ հրեշտակն գոլով  
 հունաւոր՝ զմիւն ոչ կարէ ճանաչել էութեամբ  
 իւրով , այլ էութեամբն Աստուծոյ . կամ էութ  
 նորին վերամնայ ուրեմն զի ճանաչիցէ զէութ  
 նորա . և այս ևս բերէ զանկատարութիւն :  
 Ցուցանի , որ ստանայ զգիտութիւն յայլմէ , է  
 անկատար և իմացութեան , որպէս հրեշտակք  
 և հոգիք . իսկ որ իմանայ ինչ օտար տեսակաւ  
 ստանայ զգիտութիւն յայլմէ . ուրեմն է անկա-

տար և կարօտ ըլ իմացութեան՝ որ ՚ի յԱՇ  
 անդէպ է : Երկրորդ՝ անդիպութիւնն յառաջ  
 դայ ըլ կամաց . քանզի եթէ լինէին հօմաւոր  
 աստուածք , մինն զմիւսն կամ սիրէր և կամ ա-  
 տէր . եթէ ատիցէր , ծնանիւր ՚ի միջի նոցա  
 մարտ . և գուցէ թէ զմիմեանս յաղթահարի-  
 ցէին և կորուսանիցէին զիշխանունս իւրեանց :  
 իսկ եթէ սիրիցէր , այն սէրն հանգոյն ճանաչ-  
 ման կամ բղխիւր յէութէնէ իւրմէ , կամ յէուէ  
 սիրեցելոյն . այլ ոչ կարէր բղխիւր յէութենէ  
 իւրմէ , որպէս և ոչ ճանաչումն ո՛պ ասացաք .  
 իսկ եթէ յէուէ սիրեցելոյն բղխիցէր , բերէր  
 զանկատարութիւն՝ որպէս ասացաւ իսկ : Զայ-  
 սոսիկ և հեթանոսաց իմաստունքն քննելով  
 բռնադատեցան ասել , թէ նախկին պատճառն  
 և շարժօղն էից է մի միայն : Ուստի ասէ Մար-  
 կոս կայսրն ՚ի կարծիս և յենթադատութիւնս  
 փելիսոփայից մի միայն է նախկին պատճառն և  
 մի միայն Աստուած : Իսկ եթէ ասիցես , ապա  
 վասն էր զայնքան չաստուածս պաշտէին , մինչ  
 ծանեան թէ մի է ԱՃ . յարէ զպատճառն թէ՝  
 ” դիք բաղրումք եղեն յերկինս , զի բազում  
 առաքինութիւնք գործեցան յերկրի : ” Որով  
 յայտ է թէ զառաքինիւն իւրեանց և զքաջն  
 չաստուածացուցեալ պաշտէին , և ոչ ո՛պ նախ-  
 կին պատճառ՝ զի զնա մի միայն խոստովանէին :

## Նմանութիւն :

Յայսմ մասին կրկնակի նմանիմք Աստուծոյ ,  
 նախ բնականաբար . զի ըստ որում եմք էակք  
 եմք և միակք . քանզի էակն և միակն զմիմեանց  
 հակաստորոգին : Աստուստ ամ մասնաւոր կեն-  
 դանիք կոչին անհատք հանգոյն միակի . զի  
 ոող միակն ոչ հատանի և բաժանի ՚ի մասունս ,  
 զի թէ բաժանեսցի անկանի ՚ի միակութենէն ,  
 այսպէս և անհատք հանգոյն միակի ոչ հա-  
 տանին ՚ի մասունս . զի թէ հատցին՝ անկանին ՚ի  
 միակութենէն : Երկրորդ բարոյականապէս ,  
 և այսու լինիմք մի՝ եթէ բարոյական ընթա-  
 ցից մերոց կացուցուք զմի միայն վերջին վախ-  
 ճան՝ որպէս է ԱՃ . զի նա է խական հան-  
 գիատ և վախճան բաղձանաց մերոց , որ երեք  
 կերպիւ ձգէ զմեզ առ լինքն և միացուցանէ-  
 ընդ ինքեան : Նախ՝ լու որում ըհանուր ճշմար-  
 տութիւն յառաջեալ մտաց մերոց , որ միշտ բաղ-  
 ձայ հասանիլ ճշմարտութեան : Արդ՝ ածային  
 բանքն են բոլորովին ճշմարտութիւնք որպէս  
 և ինքն . խակ միտքն մեր բնականաբար խոկա-  
 լով վասն տկարութե բնութեան իւրոյ բաղ-  
 մաց ՚ի նոցանէ ոչ կարէ հասու լինիլ : Ուստի զի  
 մի սահիցիմք ՚ի բազմադիմի կարծիս . և անկա-  
 նիցիմք ՚ի միութ գերազանց առարկային , շնոր-  
 հեաց մեզ լոյս հաւատոյ յօժանդակութ մտաց  
 մերոց , որով զօրացեալ անխոտոր մտօք հաւա-

տալով՝ ի ճշմարտութիւնն միասցուք վերջապէս  
ընդ բաղձարայն մտաց մերոց՝ ընդ ընդ հանուր  
ճշմարտութեանն : Աստուած վասն միարար զօ-  
րութեն հաւատն ասի մի . ըստորում \* մի տէր  
և մի հաւատ : Երկրորդ՝ ըստ որում ՇՀանուր  
բարի յառաջեալ կտմաց մերոց , որով շարժե-  
զաէր և զբաղձանա մեր առ ինքն ի միացուցա-  
նել ընդ ինքեան . քանզի սէրն ունի միաւորիչ  
և կապակցող զօրութիւն : Սակայն մեք մ.զէն  
ոչ կարեմք այնպէս սիրել զԱստուած ող վայել  
է հանդիսավեհութեան նորա . և որով կարի-  
ցիմք կապակցիլ Շ նմա . զի այս ոյ պարգև է ,  
վն այն † հաւատն , յոյսն , և սէրն ասին ածային  
առաքինունք : Աստուած խորհրդական հարսն ,  
այսինքն եկեղեցի աղերսէ ասելով ցփեսայն  
‡ ձգեա զիս զհետ քո . զի ինքեամք չէ բաւական  
երթալ : Եւ զայս աղերս լուեալ փեսային՝ ա-  
սաց , § ՚ի սէր յաւիտենական սիրեցի զքեզ ,  
վասն այսորիկ ձգեցի զքեզ կտպամնօք սիրոյ իմոյ :  
Զգեա զհետ քո զիս զկապեալ՝ առուամք սի-  
րոյ կենցաղւոյս , քոյ զօրեղ սիրոյդ կապանօք  
սիրելի փեսայդ հոգւոյս :

Երկրորդ՝ երկուք այսոքիւկ գերազանցական  
ստորոգութեամբք , ՚ո ճշմարտութեամբ և  
բարութեամբն զարթոցանէ . ՚ի մեզ զյոյս , ո-

\* Երեւ . 4 . 5 : † 1 Կար . 13 . 13 :

‡ Երեւ . 1 . 3 : § Երեմ . 31 . 3 :

բով յուսամք հասանիլ ՚ի յընդհանուր ճշմարտութիւնն ը զօրութեան մտաց մերոց , և վտյելել ՚ի բարութեանն ը ախորժակի կամաց մերոց , վասն որոյ գերտղանց յուսալին է մի միայն ԱԾ , որ միացուցանէ ը ինքեան զյուսացողս իւր : Ուստի առաքեալն յետ ասելոյն մի հաւատ , յարէ \* որպէս և կոչեցայք ՚ի մի յոյս կոչմանն ձերոյ : Արդ՝ որ այս երիւքս ուղղէ ընթացս իւր , երջանկտպէս ժամանէ ՚ի ձեռն Յիսուսի ՚ի ժողովօլին Հօր միութիւն , որպէս ասէ սուրբն Դիմոնէսիոս ՚ի սկիզբն գրոցն թէ որպէս միացուցիչ զօրութիւն ՚ի վերին կոյս ձգտեցուցանէլով զմեզ պարզէ և դարձուցանէ առ ժողովօլին Հօր միաւորութիւն և աստուածաբար պարզութիւն : Յայն սակա աղերսէր Տէրն առ հայր ասելով , † Հայր զորս ետուր ինձ վասն նոցա աղաւեմ , զի եղիցին և նոքա մի , որպէս և մեք մի եմք : Արդ՝ ետ մեզ զհաւատ՝ յոյս՝ և զսէր , որով միաւորիմք ը հօր :

### Աննանութիւն :

Ընդ դէմ այսմ աշխատհասէրք ոչ երբէք կարեն զմիութիւն որտի ստանալ , զի առարկայ սրտի նոցա ոչ է ընդհանուր բարին , որ ՚ի խառնիցն անշատելով միացուցանէ , այլ են մասնաւոր պատիր բարիքն . որք ը բազմուեն իւ

\* Եմ. 4. 4: † Յոհ. 17. 11:

ըեանց բաժանեն զսիրտ իւրեանց սիրողին :  
 Փառասիրութիւնն զմի մասն գրաւէ . հեշտու-  
 թիւն մարմնոյ զմիւն , արծաթսիրութիւնն զայլ  
 միւն . և այսպէս իւրաքանչիւր մոլութիւնք ըզ-  
 բաժին իմն կորզեն յինքեանս : Ե՛ւ աստուստ  
 մեղաւորք նմանին \* եօթնագլխեան գաղանին .  
 զեօթն գլասաւոր մոլութիւնս վերջին վտիճան  
 կացուցանելով ինքեանց , և ոչ գիտեն թէ ո-  
 րո՞յ մտադիւր ծառայեսցեն . ըստ տէրունեան  
 բանին թէ՝ † ոչ կարես երկուց ծառայել : Ե՛ւ  
 այսպէս ոչ կարեն նմանիլ միուեն այ . բաժա-  
 նել գոլով սիրտ նոցա ՚ի սէր զանազան մոլուեց :  
 Զայսպիսեաց ասէ մարդարէն . բաժանեալ է  
 սիրտ նոցա , արդ վախճանեսցին . ընթերց և  
 յապաշխարանն մեր զմիութենէն Աստուծոյ :  
 գլուխ (\* ) մասն առաջին :

Գլուխ Եօները :

Յաղոգս նմանութեանց որի արքահոնենէն ՚ի պարզուենէն  
 Աստուծոյ , յերես ոլրախ բաժանեալ :

Պրաչ Առաջին :

Թէ Աստուծոյ է Բնահանսէր պարզ :

Պարզութիւնն սահմանի յածաբանից , բա-  
 ցասութիւն բաղադրութեան . կամ միութեան  
 բազմաց զանազանից , որոց մինն է գործ . և միւ-

\* Յայս . 12 . 3 : † 2 Մայս . 6 . 24 :

աըն կարտղութեն : Այս սահման արտաքսէ զամբ  
բաղադրութեն : Քանզի երեք կերպիւ ասի բա-  
ղադրութիւնն . նախ բնական՝ որ լինի ՚ի նիւ-  
թոյ և ՚ի տեսակէ : Երկրորդ՝ տրամադանա-  
կան . որ լինի ՚ի սեռէ և ՚ի տարբերութեանց :  
Երկրորդ՝ համաքնաբանականն . որ լինի յէուէ  
և յենթակայուէ : Արդ՝ իւրաքանչիւրոցս յայս-  
ցանէ առաջին մասն է կարողական . այսինքն  
նիւթն՝ սեռն և էութիւնն . քանզի նիւթն է  
կարողական առ տեսակն . սեռն առ տարբե-  
րութիւնն . և էութիւնն առ ենթակայութին :  
Իսկ տեսակն՝ տարբերութիւն՝ և ենթակայ-  
ութիւնն են ներգործականք . զի ներգործա-  
ւորեն և կատարունակեն զենթակայս իւրեանց :  
ապա ուրեմն վերոյ եղեալ սահմանն արտաք-  
սէ զամբաղադրութիւն . վասն այն միտյն պատ-  
կանի այ : Արդ՝ զիւրաքանչիւրոցն ասասցուք  
ինչ համառօտ . և նախ զբնականէն :

### Եպրահացութեան :

Աստուած է բնականաբար պարզ : Ցուցա-  
նի , բնական պարզութիւնն է բացասութի բա-  
ղադրութեան ՚իւթոյ ըստ տեսակի . կամ գոյա-  
ցութեան ընդ պատահման : Իսկ ՚ի յած ոչ գոն  
այսպիսի բաշտդրութիւնք . ապա ուրեմն բնա-  
կանաբար է պարզ : Ցուցանի փոքրագոյնս և  
նախ ըստ առաջին մասին : Անկատար և կարո-  
ղական էակ գոլն ոչ պատկանի Աստութոյ . զի

ած է ջինջ և մաքուր ներգործութիւն և ամես  
 նակատար : Իսկ նիւթն է ՚ի կարողութեան առ  
 տեսակն և անկատար որպէս և յայտ է . ու-  
 րեմն ոչ պատկանի Աստուծոյ : Երկրորդ՝ տե-  
 սակն ևս է անկատար , ուրեմն ոչ պատկանի  
 Աստուծոյ : Յուցանի մեծագոյնս , կախեալն զի-  
 մեքէ և կարօտ իմիք՝ է անկատար , իսկ բնա-  
 կան տեսակն ունի զիսխումն ՚ի նիւթոյ և կա-  
 րօտ նմին առ գոյն , որք են պարզապէս անկա-  
 տարութիւնք . որ ոչ պատկանին Աստուծոյ , զի  
 է անկախ և անկարօտ : Երկրորդ՝ առենայն բա-  
 զադրեալ յետոյ է քան զայն յորոց բաշագրի .  
 որպէս ասեն Ալզերթ և Սկովտ . նաև բնակա-  
 նարար իսկ յայտ է . իսկ Աստուծած է առաջին  
 քան զանենայն . ուրեմն ոչ է բաշագրեալ բնա-  
 կանաբարար : Երրորդ՝ եթէ իցէր բաղադրեալ  
 ՚ի նիւթոյ և ՚ի տեսակէ . այս մասունքս կամ  
 լինէին անհունք կամ հունաւորք . եթէ իցէ-  
 ին անհունք , իւրաքանչիւրքն լինէին ած . որ է  
 անճարին երկու անհուն լինին . զի բնականա-  
 բար մի միայն պարտի գոլ ներգործութեամբ  
 անհուն : Իսկ եթէ իցէին հունաւորք՝ ոչ կա-  
 րէին կացուցանել զմի ած . զի ՚ի բազմաց հու-  
 նաւորաց ոչ կարէ բաղկանալ մի անհուն : Յու-  
 ցանի երկրորդ մասն փոքրագունին . այսինքն  
 թէ՝ յած ոչ գոյ բաշագրութիւն ենթակայուե-  
 ըստ պատահման . նայն՝ զի պատահումն է եկա-  
 մուտ ենթակային . իսկ յԱստուծած ոչ ինչ է եւ

կամուտ , զի ոչ իմիք է կարօտ . ուրեմն ոչ գոյ  
 ՚ի յած բալադրութե՞ գոյացութեան ընդ պա-  
 տահման : Երկրորդ՝ գոյացութիւնն վասն այն  
 գոյ ՚ի բալադրութիւն ընդ պատահման , զի  
 ըունիցի զվերջին կատարելութիւնն , քանզի  
 գոյացական տեսակին զվերջին կատարելուն  
 տայ պատահական տեսակին ոռպ ասի ՚ի բնա-  
 բանութեան . այսպէս հրեշտակք և մարդիկք  
 փափագին շնորհաց զի կատարունակեսցեն իմա-  
 ցութիւն իւրեանց . իսկ ած ը ինքեան է կա-  
 տարելով որպէս ասացաւ . ուրեմն չունի պէտս  
 պատահական տեսակի : Երրորդ՝ պատահումն  
 բաժանի յինն ստորոգութեա ըստ Արիստոտէլի .  
 այսինքն ՚ի քանակ , ՚ի յորակ և յայլս . այլ այ-  
 սոքիկ՝ ոչ են ՚ի յած . զի է ած անքանակ՝ անո-  
 րակ՝ անկիրք՝ աներք՝ անուր . ոչ ունի զդրութե՞  
 ինչ ՚ի տեղը ոյլ է յինքեան . և յատուկ է  
 նմա ՚ի գործելն հանգչիլ , ուրեմն ոչ գոյ ՚ի  
 յած պատահումն : Առարկիցե՞ս նախ՝ Առնչուն  
 է պատահումն . իսկ ՚ի յած է առնչութիւն ,  
 ցուցանի փոքրագոյնս . Հայր և որդի են առ-  
 ինչք . ուրեմն գոյ ՚ի յած պատահումն :

Պատասխանեմ բաժանելով զմեծագոյնդ .  
 Առնչութիւնն է պատահումն , ՚ի ստեղծուածա  
 ընդունիմ . ՚ի յած՝ բացասեմ . զի ծնունդն ՚ի  
 յած ոչ է ՚ի ժամանակի . որով առնչութիւնն  
 լիցի ՚ի նմա պատահումն . այլ է յաւիտենից .  
 վասն այն առնչութիւնն է ՚ի յած բնական և

ոչ պատահական . զի թէպէտ առնչութիւնքն  
են համանգամայնք , սակայն ՚ի ստեղծուածս  
յետոյ գանյենթակայն , վն այն ոչ է ՚ի նա պա-  
տահումն : Առարկիցե՞ս երկրորդ ԱՃ յստեղ-  
ծանելոյն ժամանակի անուանեցու ստեղծօղ ,  
ուրեմն ընկալու զառնչութիւն ՚ի ժամանակի :  
Պատասխանեմ բաժանելով զառաջարկուելու .  
նորոգ ընկալնով զբան ստեծելոյն , ստորասեմ  
՚ի յաւիտենից ունելով՝ բացասեմ . քանզի գա-  
ղափար ստեղծուածոց էր ՚ի յաւիտենից յած .  
որպէս ասէ առաքեալն \* Հաւատովք իմանամք  
Հաստատել զյաւիտեանսն բանիւն Աստուծոյ ,  
յաներևութից զերեւելիս եղեալ . աներևոյթ-  
աստին զնախագաղափարսն ասէ , այսպէս մեկ-  
նեն Թօմաս Ագուինացին և Նիկողայոս Լիւրա-  
ցին , այսպէս և Տաթեացին ՚ի մեկնութե պէ-  
րիարմէնտին : Եւ կամ ըստ Ակովտոյ առնչուեն  
ստեղծանելոյն ոչ եղերի իրականապէս յած . որ  
՚ի յէութիւնն ոչ ընկալնու զնոր պատահումն ,  
զնախագաղափարսն յաւիտենից ունելով . այլ  
միայն եղերի ՚ի ստեղծուածն . զի յոչ էութենէ  
լինի ստեղծեալ և ՚ի գոլ եկեալ . զոր նախ ոչ  
ունէր յինքեան . թէպէտ էր ՚ի յած ըստ նա-  
խագաղափարին : Առարկիցե՞ս երրորդ՝ ունիլն է

## \* Στερεό . 11 . 3 :

Πίετει νοσμεν κατηρτίσθαι τες αἰῶνας ῥήματι Θεος, εἰς  
τὸ μή ἐκ φαινομένων τὰ βλεπόμενα γεγονεναι.

պատահումն ըստ Արիստոտէլի որպէս զգեստա-  
 ւորիլ . այլ բանն Աստուած զգեցաւ զմարդկու-  
 թիւնն զոր նախ ոչ ունէր , որով և ասի բա-  
 նին Աստուծոյ ունիլ զմարդկութիւնն . ապա  
 ուրեմն գտանի ՚ի յԱստուած պատահումն :  
 Պատասխանեմ առ այս կրինակի բաժանմամբ ,  
 բանն զգեցաւ զմարմին զոր նախ ոչ ունէր . ըստ  
 իրին՝ ստորասեմ . ըստ գաղափարին՝ բացասեմ .  
 զի այսպէս ՚ի յաւիտենից ունէր զմարմին ՚ի նա-  
 խասահմանութեան իւրում , որպէս ասէ առա-  
 քեան \* սահմանելց որդւոյն Աստուծոյ ՚ի զա-  
 ւսկէ Դաւթի ըստ մարմնոյ . և յայտէ , զի նա-  
 խասահմանութիւնն է ՚ի յաւիտենից : յայս միտ  
 ևս առնիլ կարէ բանն , յառաջ քան զլինին  
 Արրահամու եմ ես . և առաքեան՝ ընտրեաց  
 զմեց յառաջ քան զլինին աշխարհի : Աստուստ  
 երեք բորբոքումն գոյ յերկինս . և մինն ՚ի մար-  
 մնի երեկի : Երկրորդ ասեմ ըստ Ագուինացւոյն .  
 թէ բանն ած զգեցաւ զմարդկային բնութէս ,  
 գոյացաբար և ոչ պատահաբար : Ե՛ւ այս ցու-  
 ցանի երկու կերպիւ , նախ զի որպէս հոգի մար-  
 դոյն միաւորեալ ընդ մարմնոյ ծնանի գոյացա-  
 բար . այսպէս և բանն Աստուած միաւորեալ ը-  
 մարդկայինս բնութեան՝ ծնաւ գոյացաբար .  
 վասն զի ըստ Արիստոտէլի ծնունդ կենդանեաց  
 է գոյացական : Երրորդ օրինակն է միաւորուն

Հոգւոյ ընդ մարմնոյ ՚ի յարուե՛ , որ լինի գոյացաթար և ոչ պատահաբար . և զայս բերէ Աքուինացին ՚ի ճառս մարդեղութեան յօրինակ միաւորուե՛ բանին ընդ մարդկայինս բնութե՛ . զի որպէս անջատեալ Հոգին Հայի ՚ի մարմինն իբրև զգենսի ՚ի յարութեան , և ՚ի զգենուն զգենու զիւրն գոյացաթար + այսպէս և բանն ած Հայէր ՚ի նախաստհմանեալ մարդկութիւնն իւր՝ իբրև զգենսի . և ՚ի զգենուն՝ զգեցաւ գոյացաթար . զի ծնունդն է գոյացական : Առարկիցն չորոյդ՝ Հոգին սուրբ զգեցաւ զաղանի , բայց ոչ ծննդեամբ գոյացաթար , ուրեմն պատահաբար : Պատախանեմ թէ սյն ոչ էր ճշմարիտ աղաւնի՝ սյլերեսոյթ իմն . զոր օրինակի աղագաւ ճեացոյց Հոգին սբ ՚ի նշանակել զառատուե՛ շնորհաց իւրոց . վայ առէ \* մարմնաւոր

## \* Ղուէ . 3 . 22 :

It is not meant, that the shape was like that of a dove, but that the light, or glory, by which the Holy Spirit manifested Himself, had a bodily appearance, and descended upon Jesus, in the same manner as a dove descends to the earth.      *Bp. Pearce.*

Մարմնաւոր պէոէլու առաքէն ոչ նշանակէ (սակ) զիւրապարան աղաւնաց , այլ զի լոյն գտաւացն՝ որով երեւցուաՀոգին սուրբ , զմարմնաւոր իմն ուներ զերեւոյթ . և էջ ՚ե վերաց Յեսուսի ըստ օրինաքէ աղաւնաց խոյնելու շնորհելեր ՚ե վայր , վայ սակ մարմնաւոր պէուլուամբ . և սակ :

տեսլեամբ իւրեւ զաղաւնի , զի ինքն հոգեղջէն  
գոլով՝ ոչ կարէր տեսանիլ ՚ի մարմնաւոր աշաց :

Նմանութիւն :

Յայսմիկ մասին կրկնակի նմանիմք այ , նախ  
ընսականաբար . զի որպէս ած է պարզ բնակա-  
նաբար , այսպէս և հոգին մեր է պարզ բնակա-  
նաբար և ոչ բաղադրեալ ՚ի նիւթոյ և ՚ի տե-  
սակէ : Ցուցանի , ամ էակ անմարմին է աղատ  
՚ի նիւթոյ որպէս յայտ է ՚ի հրեշտակս և յած .  
իսկ հոգին է անմարմին էակ , ուրեմնէ աղատ ՚ի  
բաղադրութէն նիւթոյ : Ցուցանի փոքրագոյնս,  
որ ունի զներգործութ յատուկ անմարմին էակի :  
է անմարմին . այլ հոգին ունի զգօրութէն և ներ-  
գործութիւն յատուկ անմարմին էակի . որդոն  
զիմացումն և զկամք . զի սոքա են անմարմնոց  
յատուկ՝ որպէս ասեն Արիատոտէլ և Աքուինա-  
ցին . ուրեմնէ անմարմին : Անմարմին խմա ըստ  
ինքեան , և ոչ ըստ այսմ որ բաղադրի ՚ի մար-  
մնոյ ՚ի տեսակաւորել զնա : Ցուցանի փոքրա-  
գոյնն . Հոգեղջէն էակն եթէ չիցէր աղատ ՚ի  
նիւթոյ , ոչ կարէր ենթակայանալ յինքեան .  
որպէս յայտ է ՚ի հոգիս անսանոց , որք յայն-  
սակս չունին յինթակայանալ յինքեանս , զի  
ծագին ՚ի կարողութենէ նիւթոյ՝ որպէս ասի  
՚ի գիրս հոգեաց : Այլ հոգին ունի ենթակա-  
յանալ յինքեան յանջատիլ իւրում ՚ի մարմնոյ .  
և այս յայտ է ՚ի հաւատոց , զի Փրիստոս աստց

\* Հայոց ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ : Եւ  
Ստեփանոս , † Տէր Յիառաւ ընկալ զհոգի իմ :  
ուրեմն է աննիւթ : Յուցանի և բանիւ . որ Շ  
էութեան իւրումչէ ազատ ՚ի նիւթոյ . ոչ կարէ  
իմանալ զընդհանուրս , որպէս ասէ Աքուինացին  
՚ի գիրս հոգեաց : Եւ այս յայտ է յանասունս ,  
որք զգայութէ միայն զեղանակն ըմբոնեն .  
և ոչ կարեն իմանալ զընդհանուրս . այլ հոգին  
իմանայ զընդհանուրս , ուրեմն է ազատ ՚ի նիւ-  
թոյ , և ըստ էութեան իւրում նման այ : բայց  
այս նմանութէ հասարակաց է : Երկրորդ նմա-  
նութիւնն որ պատկանի ընտրելոց , նկատի բա-  
րոյականապէս : Աբդ՝ այն հոգին ասի պարզ բա-  
րոյականապէս , որոյ իւլձքն առակարգ ցանկութ-  
ոչ է բայց լուրեալ ընդ ընչից աշխարհիս . այլ  
ընդ սկզբնատպին իւրոյ . այսպիսեանց սիրան է  
անդ՝ ուր է գանձն իւրեանց Փրիստոս : Առ որ  
յորդորէ առաքեալն , զվերինն խորհեցարուք և  
այն : Այսպիսեաց սիրան է իրքեւ զպարզ ջուր .  
՚ի յոր պատկերն սկզբնատիպ նկարեալ լինի .  
ջուր խոր է խորհուրդ սրտի առն . և այր  
իմաստուն քննեսցէ զնա :

## Աննանութեան :

Խոկ հոգիք ագահաց ոչ ունին զայս գեղեցիկ  
նմանութս տատուածային պարզութեան , զի են

† Ղբեէ . 23 . 46 : † Գրէժ . 7 . 58 :

բաղադրեալք ՚ի գանձուց հիս ըս ասելոյ թն  
թէ՝ ուր գանձն ձեր է , անդ և է սիրտ ձեր :  
Այսպիսեաց հոգին նմանի պղտոր ջրոյ , ուր  
ոչ երկի պատկեր նախատպին . քանզի ըստ ի-  
մաստնոյն ջուր խոր է խորհուրդ սրտի առն :  
Ընդ որ մինչ բաղադրի շիկակարմիր փոշի գան-  
ձուն՝ պղտորի . բայց եթէ առատ իցէ փոշի գան-  
ձուն յթ ախտն ագահուեն , յայնժամ ազնուա-  
կան անձին փառքն սկսանի մակրդիլ մածնուլ՝  
թանձրանալ և բոլորովին երկարանալ ըստ  
Պլոկին :

### Պլաէ Երերէր

Թէ՛ Ասուուծ է պրանտքունորէն պարզ :

Տրամաբանօրէն պարզութիւնն է բացա-  
սումն տրամաբանականի բաղադրութեն . իսկ  
տրամաբանական բաղադրութիւնն է սեռի ը-  
տեսակի , զոր մտօք ընծայեցուցանեմք իրաց :  
Այս տեսակ բաղադրութեան ընծայի ամենայն  
էակաց , բաց յայ : Քանզի ամենեքին են ընդ-  
ստորոգութեամք (բաց յԱստուծոյ) և տեսա-  
կօք տարբերեալք . վասն որոյ առ ՚ի որոշ ըմբո-  
նելոյ զնոսա՝ ընծայեմք զսեռս , և տարբերութ-  
կատարեմք ՚ի տեսակս :

### Եղաէացութիւն :

Աստուծ ոչ բաղադրի ՚ի սեռէ և ՚ի տար-  
բերութ , որպէս այլ ամենայն տեսակք : Ցու-

ցանի նախ յանպատշաճութենէ սեռին : Անկա-  
տար գոլն ոչ պատկանի Աստուծոյ . իսկ սեռն է  
անկատար , ուրեմն ոչ պատկանի այ : Ցուցանի  
փոքրագոյնս , որ ընդունի զյաւելումն և կարօ-  
տի յաւելման , է անկատար . որպէս ասէ Պլրոկղ  
եթէ յաւելու՝ ուրեմն նուազի . իսկ սեռն ընդ-  
ունի զյաւելումն . և կարօտի լրացուցիչ տար-  
բերութե և տեսակի . քանզի տարբերութն և  
տեսակն ՚ի վերայ եկեալ , լրացուցանեն զսեռն .  
ուրեմն է անկատար . վասն Պորփիրոս զսեռն  
նմանեցուցանէ նիւթոյ , որ է ըստ ինքեան ան-  
կատար . և տարբերութիւնն՝ ձեռյ , որով կա-  
տարի և տեսակաւորի նիւթն . ասելով՝ որպէս  
այրաձեռն դնի ՚ի նիւթոյ ՚ի պղնձոյ և ՚ի տեսակէ  
՚ի ձեռյ , այսպէս և մարդն ՚ի նիւթոյ՝ համեմա-  
տաբար բաղկացաւ ՚ի սեռէ . և ՚ի կերպէ՝ ՚ի  
տարբերութենէն . զի որպէս յանցեալ պրակին  
ատացաք , թէ նիւթն ըստ ինքեան է անկատար  
և կատարի բնական տեսակաւն , այսպէս հա-  
մեմատաբար սեռն ըստ ինքեան է անկատար .  
և կատարի տարբերութե : Ցուցանի երկրորդ  
յանպատշաճութենէ տեսակին , որ զհետ գայ  
եթէ գիցի ՚ի յած , նախ՝ զի տեսակն է ը գե-  
րագոյն սեռիւ . այսինքն ընդ ստորոգութեամբ  
գոյացութեան . Այլ ած ոչ փակի ընդ գերա-  
գոյն սեռիւ . զի ոչ է քան զինքն այլ վերան-  
ցեալ ընդ հանուր , այլ է ինքն ընդ հանրագոյն  
գոլն ամենեցուն . ուրեմն բան տրամաբանական

տեսակի ոչ պատկանի նմա : Երկրորդ՝ զի տեսակն առ գոլն իւր կարօտի սեռի + որպէս պատահումն գոյացութեան , զի սեռն է հիմն տեսակի , զի որպէս ՚ի բնականս տեսակն կախի զնիւթոյ , որով պահպանի ՚ի գոլն իւր , այսպէս և ՚ի տրամաբանականս տեսակն կախի զեռէ , որով պահպանի ՚ի գոլն իւր : Այլ Աստուած է անկախ էակ և հիմնական գոլն ամենեցում , ուրեմն ոչ պատկանի նմա տեսակն տրամաբանական , ուրեմն և ոչ է բաղադրեալ տրամաբանօրէն : Կառ անձային պարզուին գերագութեակի և միակի + զի թէպէտ էակն և միակն ոչ ունին քան զինքն վերանցեալ գերագոյն սեռ ընդ որս բաղադրիցին , սակայն են բաղադրականք ՛ը ստորայնոց իւրեանց . զի էակն գայ ՚ի բաղադրութիւն ընդ գոյացուեն մարմնոյ կենդանեաց և այլն , այսպս և միակն բաղադրի ՛ը երկեակի և այլն : Այլ անոչքան զինքն վերանցեալ գերագոյն սեռ ունի , և ոչ ևս է բաղադրական ՛ը ստորայնոց , այլ է պարզ տեսակ յինքենէ և ոչ տեսակաւորեալ :

### Կառանը թիւն :

Յայսմ մասին տրամաբանօրէն թէպէտ եմք աննման աստուածային պարզութեանն՝ զի եմք բաղադրեալք ՚ի սեռէ և ՚ի տարբերութենէ այսինքն ՚ի կենդանութե և ՚ի բանւոկանուէ , սակայն կարեմք զբարոյական ինչ նմանութե

արտահանել յայսմանէ . որով առ ածատեսակ  
պարզութիւնն պատեհ իցէ մեզ վերանալ : Եւ  
այս լինի եթէ զանամնավայել կենդանական  
զօրութիւնն ի մեզ մեռուսցուք և միայն ի Քո  
կենդանասցուք : Այսպիսի էր առաքեալն որ  
ասէր . կենդանի եմ ոչ ես , այլ կենդանի է յիս  
Քրիստոս . զի մեռուցել էր զանդամն իւր զերկ-  
րաւորս : Վասն այն և մեզ հրամայէր ասելով .  
մեռուցէք այսուհետև զանդամն ձեր զերկրա-  
ւորս . զի առանց մեռելութիւն գործելոյ ախ-  
տից , անջարին է մտացն պարզիլ , և ձգտիլ ի  
վեր կոյս . զի ըստ Պրոկղի նիւթական պատ-  
մուճանս այս՝ յորումունի զկոյ ազնուական ան-  
ձին կառք , այսինքն հոգին զօրութեամբ.ք իւ-  
րովք . որպէս զվավաշոտ մերձաւոր միշտ կար-  
կառէ զլննձոր որպէս ասի յԱլպերտի . որով  
ծանրանայ հոգին և հակի ի կատարումն ախ-  
տին կամաց , որպէս գեղեցիկ գըշ իմաստունն  
յասելն . \* մարմին եղծանելի ծանրացոցանէ  
զհոգի . և հակէ հողեղէն յարկ զմիտս բազմո-  
հոգս : վասն այն թօթափելի է զայս քուն մա-  
հու . և արթնանալի է յայս նիրհմանէս , զի մի  
զազրացուսցէ զմեզ պատմուճան մեր . ըստ այնմ  
թէ զազրացոյց զիս պատմուճան իմ . և մթա-  
ցուսցէ զակն մեր ի չտեսանելզպարզ լոյն ճըշ-  
մարիտ , աղաչեսցուք և Ներսիսի զտէր ասելով .

Յաշաց մտաց՝ զախտից փո շլն,

Մաքրեա՞ զներքինն՝ և զարտա քին.

Որով յստակ՝ տեսից յեր կին,

Զերպարանո՞ նախատը պին :

### Անհոգութիւն :

Իսկ մարմնասէրք որպէս են ՚ի կենդանուէ  
և ՚ի բանականութենէ բաղադրեալք, յայսմիկ  
բաղադրութեան կան և մնան և ոչ երբեք  
անջատեն զմիտս իւրեանց ՚ի յախտակիր զօրու-  
թեանց կենդանական մասին, նա՝ բոլորովին  
ընկլմեալ գոն յանասնական կիրս, քանզի ըստ  
Արիստոտէլի մարմնական ախտն բոլորովին  
կլանէ զբանականութիւնն, վասն այն առա-  
քեալն գեղեցիկ այլաբանութեամբ զայնպիսիս  
կոչէ անասունս ֆ շնչաւոր յասելն, շնչաւոր  
մարդ՝ ոչ ոմի զհոգւոյն ԱՇ, զի յիմարունէ-  
նմա : և մարդարէն՝ հաւասար անասնոց կոչէ  
զնոսա, մարդ ՚ի պատուի էր և ոչ իմացաւ ֆ  
և ոչ վարեցաւ ըլ լուսոյ բանին, հաւասարե-  
ցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա :  
Համաձայն աստուածային գրոցս և բանն Պրոկ-  
ոլի, որ ՚ի վերջին գլուխն ասէ, աղնուական ան-  
ձին ՚ի վայր իջանելովս առնու յինքն զանբան  
կենդանեաց կիրս և նմանի կենդանութեան  
կարողական անձանց : Կարողական անձինս կո-  
չէ զանասունս, զի ոոկ նոքա բաց ՚ի կրից մարմնոյ  
զվերագոյն ինչ ոչ ոմին խոկալ, այսպէս և

Հեշտասէր մարդիկ զմարմնոյ միայն խորհին և  
խոկան ըստ առաքելոյն , և ոչ երբէք դարձու-  
ցանեն զսիրտս խրեանց առ աստուածատեսակ  
պարզութիւնն . ՛ը բանին Մաղաքիայ թէ՝ ոչ  
ետուն զսիրտս խրեանց դառնալ առ ԱՃ , զի  
այս պոռնկուել է ՚ի նոսա . և Երեմիաս , Ասա-  
ցի յետ այնչափ պոռնկութենէն դարձ առիս և  
բժշկեցից , և ոչ դարձաւ :

### ՊՐԻՒ ԵՐՐՈՐԴ :

Թէ Աստվածած է համաբնաբներէն պարզ :

՚Ի վեր անդր ասացաք թէ սահմանն պար-  
զութեան արտաքսէ զամբաղադրութի : Արդ՝  
ցուցանել թէ ած է պարզ բնական և տրամա-  
բանական պարզութեամբ՝ չէ ինչ . բայց գործ  
մեծ է ցուցանել թէ է համաբնաբանապէս  
պարզ . որով մեկուսացեալ յտուկացի յամէից :  
Եւ զի աստիճանս այս բարձրագոյն է , առ որ  
միտք մարդկան դժուարաւ հասանի , վասն  
որոյ ջանասցուք օրինակօք թերես ընտանե-  
ցուցանել մտաց :

### ԵՎՐՈՒ ԱԳՐՈՒՆԻՒՆ :

ԱՃ է համաբնաբանապէս պարզ . ցուցանի  
նախ ՚ի սահմանէն : Համաբնաբանական պար-  
զութիւնն է բացասումն բաղադրութեան . յո-  
րոց մինն է կարողութիւն , և միւսն ներգործու-

թիւն այլ ՚ի յԱՌ բացասի այդպիսի բաղա-  
 զրութեան է համարնաբանապէս պարզ :  
 Մեծագոյն յայտ է , ցուցանի փոքրագոյնս :  
 Կարողականութիւնն կրկին կերպիւ նկատի ,  
 կամնախ քան զգութիրին , և կամ զկնի գոլոյն :  
 Առաջնով կերպիւ ամս ստեղծուածք էին ՚ի կա-  
 րողութեան , և մինչ ներգործութեամբ ընկազան  
 զգոյն , յայն կարողութե՝ և յայս ներգործութե-  
 նէ բաշադրեալք եղեն , և այս ասի համարնա-  
 բանական բաշադրութիւնն , ֆ ընազանցականն  
 և ՚ի վեր քան զբնականն , զի բնականն զտե-  
 սակն ընիւթոյ բաշադրէ , իսկ սա՝ զկարողա-  
 կան գոյն ըն ներգործական գոլոյ : Ուստի որ-  
 քան առ բնականն՝ հագիք և հրեշտակիք ոչ  
 ունին զբաշտդրութիւն , զի են պարզ տեսակիք  
 արտաքոյ նիւթոյ՝ ոնպ ցուցաւ ՚ի վերագոյնդ :  
 Բայց որքան առ համարնաբանականն՝ են  
 բաշադրեալք ՚ի զօրութենէ և ՚ի ներգործութե :  
 Ուստի յաստուածաբանական գրեանս մինչ ա-  
 սի , թէ ՚ի հրեշտակս է բաշադրութիւն , որ  
 է և որով է . որն վերաբերի առ կարողական  
 գոյն . իսկ որովն վերաբերի առ ներգործական  
 գոյն : Զի որն յարաքերէ զենթակսյն ստեղ-  
 ծանելի , իսկ որովն տաի ստեղծմամբն . և այս-  
 պէս հրեշտակն յինքենէ ֆ ՚ի կարողական գո-  
 լոյն իւրմէ և ՚ի ստեղծանելոյն բաշտդրի :  
 Եւ սորա ունիմք երկու վայելչական օրինակա ,  
 մի՛ զստեղծումն Աղամայ , զի ոնպ Աղամ չե և

ընկալեալ զհոգին , էր իբրու ՚ի կարողութե ըն-  
 կանոյ զայն . և մինչ ընկալաւ ներգործութե՝  
 յինքենէ և ՚ի հոգւոյն բաշտրեցաւ , իբրու որ  
 է , և որովէ : Երկրորդ՝ զկողն աղամայ . զի ոռպ  
 կողն այն էր ՚ի կարողութեան իբր որ՝ ընկանոյ  
 զկերպարանս կնոջ . և մինչ ընկալաւ , կերպա-  
 րանաւն՝ իբր որով՝ բաշտրեցաւ . այսպէս իմա  
 և զհրեշտակս : Իսկ այսպիսի կարողական գոլն  
 յայտէ , զի ոչ երբէք էր ՚ի յած . որպէս զի յե-  
 տոյ գալվի ՚ի ներգործութիւն . բաղադրեսցի :  
 Զի նա ինքն է անփոփիս և յաւիտենական  
 գոլն , յորմէ ամենեքեան ընկանուն զգոլ . իսկ  
 այլք այս խորին վարդապետութեան բերեն  
 օրինակ զլցյան՝ և լուսաւորելն . զի լուսաւորելն  
 էր ՚ի կարողութե ընկանլոյ զլոյս . և մինչ ըն-  
 կալաւ , յինքենէ և ՚ի լուսոյն բաղադրեցաւ .  
 Բայց լոյն է ըստ ինքեան պարզ , և ոչ բաղա-  
 դրեալ . այսպէս իմա և զած : Բայց այս նմա-  
 նութիւն պատկանի առ երկրորդ կարողակա-  
 նութիւնն՝ որ ասի , զինի գոլոյն . կամ պատա-  
 հապէս : զի որպէս հոգիք և հրեշտակք յետ  
 ընկանլոյ զգոլն ներգործութեամբ . են ՚ի կա-  
 րողութե ընկանութ զլոյս շնորհաց : Արդ ուր-  
 ուրեք լսես թէ ած ոչ է բաղադրեալ յէուէ  
 և ՚ի գոյացութենէ . էութեամբ իմա զկարողա-  
 կան գոլն . որ ոչ է ՚ի յած . զի ած է միշտ ներ-  
 գործութեամբ . վս այն ոչ բաղադրի՝ յէուէ .  
 որ ասէ զկարողականութիւն , իսկ գոյացութք

իմա՞ զներգործական գոլն . իսկ ստեղծուածք  
 են բաշտդրեալք յէութենէ և ՚ի գոյացուէ .  
 որ է նոցա վերջին ներգործութիւն գոլը . որով  
 դնին արտաքոյ պատճառաց և ոչընչի . որպէս  
 ասի ՚ի համարնաթանուե ; Առարկիցէ՞ս նախ՝  
 թէ ըստ այդմ գրութեան՝ բնական բաղա-  
 դրուին ոչ զանտղանի ՚ի համարնաթանակա-  
 նէն . զի որպէս համարնաբնականն բաղադրի  
 ՚ի զօրութենէ և ներգործութենէ , այսպէս և  
 բնականն . ուրեմն ոչ զանազանի : Ցուցանի  
 փոքրագոյնս . զի և ՚ի բնական բաշտդրութե-  
 նիւթն է ՚ի զօրուե առ տեսակն . ո՛գ ինքնին  
 իսկ յայտ է : Պատասխանեմ բացասելով զմե-  
 ծագոյնն . զի է մեծ զանաշանութիւն ՚ի մէջ եր-  
 կուցն . վա զի՝ ՚ի բնական բաղադրութս նիւթն  
 միայն է ՚ի զօրուե առ տեսակն . իսկ ՚ի համա-  
 րնաթանականս՝ երկոքեանն ևս են ՚ի զօրուե .  
 վասն այն որք ունին զնիւթ և զտեսակ , ՚ի նոսա  
 կրկին է բաշտդրութիւն . մինն նիւթոյ ըստե-  
 սակի . երկրորդն՝ երկոցունցն ըստ գոլը . զոր օրի-  
 նակ ՚ի փչելն Աստուծոյ զհոգին յաղամ , բա-  
 ղադրեցաւ բնականապէս . որով և ընկալաւ իսկ  
 զգոլն , բայց զի երկոքեանն էին զօրութեամբ  
 ՚ի պատճառս իւրեանց , հոգին յած , մարմինն  
 ՚ի տարերս , որք մինչ եկին ՚ի բաղադրութիւն  
 և ընկալան զգոլ , յայս գոլը և յայն զօրութէ՝  
 ասին բաղադրեալ համարնաթանապէս : Իսկ  
 որք են միայն պարզ տեսակք , որպիսի են հո-

գիք և հրեշտակք , ի նոստ է մի միայն բաղա-  
 դրութիւն համարնարանականին . ո՞պ ասացաւ  
 ի վերն : Առարկիցի՞ս երկրորդ՝ Ած թէ ոչէ  
 բաղադրեալ ի յէսութէ և ի գոյացուէ , սա-  
 կայն է բաղադրեալ ի բնութենէ և յենթա-  
 կայութէնէ . զի բնութիւնն այ ըստ ինքեան  
 նկատեալ , է հաղորդելի անձանց . իսկ յան-  
 ձինսն նկատեալ է անհաղորդ , ուրեմն է ի ի  
 կարողութեան առ անձինսն և ի հաղորդիլ  
 անձանց , առնու ի նոցանէ զլրումն ինչ , և այս-  
 պէս բաղադրի ի բնութենէ և յենթակայուէ  
 համարնարանապէս : Պատասխանեմ բացասա-  
 պէս . զի համարնարանական բաղադրութիւնն  
 սղարտ է լինիլ իրական . և ոչ մտածական . իսկ  
 այդպիսի զանազանութիւնն և բաղադրութիւնդ  
 է մտածական և ոչ իրական . զի իրաքանչիւր  
 էակի այն է բնութենի իւր՝ զոր ունի տեսականն :  
 Ուստի արեգակն այնու է արեգակն . զի է լու-  
 սողեղ և ճառագայթաւոր . եթէ բաժանես  
 մոօք զճառագայթին ի նմանէ՝ եղծանես զէուէ  
 արեգական : Վասն այն ասելի է թէ արեգակն  
 ըստ բնութեան իւր նկատեալ է անկատար , և  
 ըստով կատարի . և այնու ասի արեգակ , զի է  
 լուսաւոր : Եւ թէ ասես մարդն ըստ բնութե-  
 իւրում է հաղորդական . իսկ շը բանականուն-  
 է անհաղորդ՝ թիւրէ , զի մարդն ըստ սեռին  
 է հաղորդական . իսկ շը բնութեանն կամ տե-  
 սակին է անհաղորդ , զի տեսական է բնութ

մարդոյն . իսկ յած ոչ գոյ սեռ , որ իցէ հա-  
 ղորդական՝ և տեսակամ լրացի , կամ անձին-  
 քըն որպէս տեսակ լրացուացեն զնա . զի ոչ է ՚ի  
 կարողութեան առ անձինսն , որովք բաղադրիցի  
 համարնաբանապէս . զի ած այնու է ած , որով  
 է իմացական և ազատ . կամ որով ունի զբան և  
 զսէր՝ որք են անձինքն : Ուստի անհսարին է ի-  
 մանալ ածային բնութիւնն առանց բանին և  
 առանց հօգույ . որպէս ասեն Գրիգոր ածա-  
 բանն . և սբն Ներսէս շնորհալին . և Նարե-  
 կացին : Ե՛ւ թէն Ակովտ ասէ , թէ ՚ ածային  
 բնութիւնն թարց անձանց իմացեալ և ինքեան  
 է կատարեալ , վասն այն անձինքն ոչ տան ըզ-  
 կատարումն , ուստի և ոչ բաղադրումն յենթա-  
 կայութենէ և ՚ի բնութէ . ՚ բայց այս և մտաց  
 զանազանութեան իման . ըստ որում միտքն յա-  
 ռաջնում կիսուջ իմանայ զած որպէս իմացական .  
 և յերկրորդումն՝ որպէս պարզաբար , ֆ ծնող .  
 և ոչ ըստ իրին : Առարկիցե՞ս երկրորդ , որդին  
 ծնանի յէութենէ հօր առնչապէս . ոնպ ասէն  
 սուրբն Մովսէս խորենացի յերգս շարականին .  
 ՚ որ յանձառելի ծոցոյ հօր ծագեցար արեգակն  
 արդարութեան . ՚ ուրեմն յինքենէ և յէուէն  
 հօր բաղադրի առնչապէս : Պատասխանեմթէ՝  
 այդ տոնչական բաղադրութիւն միայն լինի ՚ի  
 ստեղծուածս , յորս հայրն է ՚ի կարողութեան  
 առ ՚ի ծնանիլ զորդի . և ՚ի ծնանիլն ներգոր-  
 ծապէս , յայն կարողութենէ՝ և յայս ներգոր-

ծութե՞ բաղադրի համարնաբանապէս . բայց  
ոչ և ՚ի յած . զի շայրն ոչ երբեք եղե ՚ի կա-  
րողութեան առ ծնունդ որդւոյն . այլ ՚ի յաւի-  
տենից ներգործութեամբ միշտ ծնանի . վասն  
այն՝ յառնչութենէ և յէտթենէ ածային ան-  
ձինքն կացուցանին . և ոչ բաղադրին :

### Կ Ա Խ Ա Ն Ա Ռ Ե Լ Ա :

Արդ՝ իբր համարնական պարզութիւն է  
սրբութիւն սրտի . զի է ՚ի վեր քան զբնութե՞ .  
և որպէս համարնական պարզութիւնն հաղիւ-  
ուրեք գտանի , այսպէս և սրբութիւն սրտի .  
վասն այն ասէ իմաստունն . ով ոք պարծեսցի  
սիրտ սուրբ ունիլ . վասն զի է գերբնական  
պարզե . քանզի լինի սիրովն այ , որ է գերբնա-  
կան առաքինութե՞ : Որպէս ասէ սբն Կերսէ ս  
շնորհալին :

Եւ այն սիրով՝ բաղձմամբ սր տի .  
որով հոգին՝ սրբեալ մաք ըի .  
ածատես՝ այնու լի նի .  
որպէս խոստումն տէրու նի :

Որ ասէ երանի որ սբք են սրտիւք , զի նոքա  
զած տեսցեն : Աստուստ երեկի թէ՝ որ ոչ է սբք  
սրտիւ և պարզ մտօք , ոչ է ըմբռն տեսանել  
զածային պարզութիւնն . վասն այն ասի ՚ի գիրս  
ձեռքածուե՝ թէ ած մի և ամենապարզ է , ոչ  
կարես հպիլ երջանկութեան նորին , եթէ ոչ  
բացակատարեսցիս մի և ամենապարզ :

**Անհանութեան :**

Բայց իբր համարնական բաղադրութիւն  
է արժանապատութեան ընդ հպարտութեն .  
քսնզի բազումք մինչ յառաքինութեան կամ  
իմաստութեան յարժանապատութիւն ,  
որով իբրու պարզին ՚ի մըրոյ մոլութեանց . իս-  
կոյն սկսանի տարրանաւ ՚ի միտս նոցտ ախտն  
հպարտութեան և մնափառութեան : Այսպէս  
Սադայէլ ՚ի գեղեցկութեան իւրում հպարտա-  
ցաւ . որով և ապականեցաւ հանճար նը . վն-  
այն անտրժան գտեալ վայելման ածայինց պար-  
զութեան , կործանեցաւ ՚ի գժոխս : Այսպէս  
և զՊտշումէսէ ասի , էր աղգական քահանայա-  
պետին վասն այն հպարտացաւ սիրտ նը . նմին  
իրի՝ զգուշացուցանէ իմաստունն , թէ որքան ՚ի  
մեծութիւն հասանիցիս , ՚ի խոնարհուե կսոլ  
զանձն քո , և առաջի այ գտցես զշնորհս : տես  
և յապաշտարանն մեր զպարզութենէն Աստու-  
ծոյ , մասն առաջին գլուխ— :

**Գլուխ Ուներըդ :**

Յաղագո նմանութեան որ որպահնեան յանհնութենէն

**Ասուծոյ :**

Անհնութիւնն ածային սահմանի յածա-  
բանից այսպէս . անհյութիւնն է ներքին կերպ  
բնութեան , որով այ ՚ոչ ինչ պակասի յէակա-

նութեանց , այնու կերպիւ որով կարէ ունիլ ։  
 այսինքն տեսականապէս կամ գերազանցապէս ։  
**Արդ՝** ասի ներքին կերպ , զի միայն այ պատկա-  
 նի և ոչ ստեղծուածոց , և ասի կերպ՝ զի որպէս  
 հունաւորութիւնն է կերպ , և եղանակ գոլոյ  
 ստեղծուածոց . այսպէս անհրութիւնն է կերպ  
 և եղանակ ներգոյուե ստեղծողին և բնուե ։  
**Երկրորդ՝** ասի որով **Աստուծոյ ոչինչ պակասէ**  
 յէականուեց , զի եթէ յէակացն ինչ արտաքոյ  
 մնոյցէր և ոչ պարունակիւցիւր յէուե այ , ան-  
 հունութիւնն այ հունաւորիւր , զի ոչ հասա-  
 նէր առ այն էակն ըստ պարունակութեան կամ  
 զօրուե ։ **Երրորդ՝** ասի այնու կերպիւ որով  
 կարէ ունիլ և այս առ ՚ի զանազանութիւն կեր-  
 պի պարունակելոյն . զի ոչ միակերպ պարունա-  
 կէ ած զամենայն , այլ զանազանապէս . քանզի  
 յէակացն ոմանք են կատարեալք և ոմանք ան-  
 կատարք : **Անկատար** իմա ոչ ըստ բնութեան  
 իւրեանց , շո որում ամենեքեան են ՚ի կարգի  
 իւրեանց կատարեալք . սյլ նկատմամբ վեր-  
 նոց իւրեանց . վամն զի նկատմամբ անմարմնոց՝  
 մարմնականքն ասին անկատարք . և նկատմամբ  
 կենդանեաց՝ անկենդանքն : **Արդ՝** զկատարելոն  
 պարունակէ տեսականապս . որպիսի է բարուի ,  
 ճշմարտութիւն , միութիւն , արդարութիւն ան-  
 մարմնութիւն , կենդանութիւն , իմաստութիւն ,  
 և այլք այսպիսիք : **Եւ** այսոքիկ ասին տեսա-  
 կան պարունակութիւնք , զի ՚ի սոցունց պարու-

Նակօղն յարանուանի , ո՞պ յիմաստութենէ՝ իմաստուն , և ՚ի կենդանութենէ՝ կենդանի , և այլն : Յայս միտ յԱլպերթի ասի \* ածէ ձայն բնուե , որով կատարեալքն աղաղակեն գնմանէ ևս կատարելագոյն գոլ : Իսկ զանկատարմն պարունակի ած գերազանցապէս . և գերազանցական պարունակութիւնն է այն , որով պարունակօղն ոչ յարանուանի ՚ի պարունակեցելոյ , որպիսիք են մարմնաւորք և անկենդանք , զորս թէպէտ ած պարունակի , սակայն ոչ յարանուանի ՚ի նոցանէ , թէպէտ յառաջածէ յինքենէ զոր օրինակ արեգակն գերազանցապէս պարունակէ զորդունս . զի կարէ զնայ յառաջածել , թէպէտ ոչ յարանուանի ՚ի նոցանէ :

### Եշտէսցութէն :

Ած է պարզապէս անհուն : Ցուցանի նախ՝ վկայութք սը գրոց , զի ասէ սաղմոսերգուն , † մեծէ ողր և մեծէ զօրուենը , և իմաստուենորա ոչ գոյ բաւ : Արդ՝ եթէ իմաստութիւնն է անբաւ և անհուն՝ նաև այլ ստորոգութք , և հետեւապէս նաև էուին . զի ստորոգութիւնքն բղխին յէուէն : և Սողոմն † զի եթէ երկինք երկնից չեն բաւական քեզ , զիարդ տունս զոր շինեցի քեզ : և Եսայի առէ , || ոչ տփեաց զերկինս թզաւ :

\* Ալու . Գլ 1 . Էլ 10 : † Սողմ , 146 . 5 :

† 3 Թռագ . 8 , 27 : || Եշտէ : 40, 12 :

որով ցուցանէ զանքուին այ : Այսպէս և Բա-  
 րուք , մեծ է՝ և ոչ ունի զվախճան , բարձր և  
 անշափ : Ցուցանի երկրորդ՝ բանիւ , պարզ ներ-  
 գործութիւնն է մի միայն և անհուն , այլ ած  
 է պարզ ներգործութիւն , տպա ուրեմն է ան-  
 հուն : Փոքրագոյնս ցուցաւ ՚ի վերոյ , ցուցանի  
 մեծագոյնս . զի ող ասի ՚ի համարնաբանուե՞ ,  
 ներգործութիւնն հունաւորի և բաղմապատկի  
 կարողութ . և վ՛ այն՝ եթէ զերծ իցէ ՚ի նմանէ-  
 լինի մի միայն և անհուն ՚ի գծի իւրում : Աստ-  
 ուստ ամ տեսակք վերացեալք են մի միայն և  
 անհունապէս հաղորդականք ստորակայից . ուս-  
 տի եթէ իցէին իրօք ենթակայացեալ ՚ի վե-  
 րացման իւրեանց՝ լինէին իրօք մի միայնք և  
 անհունք : Եւ զի Պղատօն զվերացեալ տե-  
 սակսն իրօք ենթակայացեալ կարծէր , վ՛ այն  
 դնէր մի միայն և անհունապէս հաղորդական :  
 այլ թէ պղատօնական տեսակքն իցէին իրօք ևս ,  
 սակայն ոչ լինէին տիրապէս մի և անհունք , զի  
 հաղորդելով անհատից հունաւորէին և բագ-  
 մապատկէին . այլ զի ած է ըստին ենթա-  
 կայացող և անընկալ ՚ի կարողուե՞ , վ՛ այն է մի  
 միայն և անհուն : Երկրորդ՝ այն էակն անհուն ,  
 որ ոչ փակի ըստամանաւ , և ոչ ըստամանակաւ  
 և ոչ ըստեղեաւ . և ոչ ըստ կոպարաւ էակի . այլ  
 ած ոչ փակի ըստքօք , զի որքան առ առաջինն՝  
 է անստահման , որքան առ երկրորդն՝ է անժա-  
 մանակ և յաւիտենական : իսկ որքան առ եր-

բորդն՝ է անպարագըլի . այլ որքան առ չըդն՝  
 է բոլոր լիուն գոլոյ և պարագրող ամ է ակաց :  
 Ցուցանի երրորդ՝ որոյ ստորոգութիւնք են ան-  
 հունք՝ նորին և էութիւնն , իսկ այ ստորոգու-  
 թիւնքն են անհունք . ուրեմն և էութիւնն ,  
 մեծագոյնս յայտ է . զի ստորոգութիւնքն բըշ-  
 խին յէութենէն , և աստուստ է մարդոյս կա-  
 րողութեան և իմաստութեան և բարութեան  
 հօնաւոր գոլն , զի էութիւնն մեր է հօնաւոր ;  
 Ցուցանի փոքրագոյնս գրովք սբվք . Սաղմոս ,  
 իմաստութեան նորա ոչ գոյ բաւ : Իմաստունն  
 մի է և յամենայնի կարօղ : յողբա , ողորմութեք  
 տեառն անսպառք են . յերկրորդ օրինաց՝ Ես  
 ցուցից քեզ զամենայն բարի : Եւ սաղմոս . իբրև  
 զի բարի է խրայէլի Ած , այսինքն որքան .  
 որով ցուցանի անհունութիւնն : Աստուստ ասէ  
 ալպերտ թէ՝ որպէս կարողութիւնն Աստուծոյ  
 է անհուն , այսպէս և էութիւնն : Եւ օրինակ  
 սմին , զի եթէ արեգակն իցէր անհունապէս  
 մեծ՝ նորին ջերմունին և ճառագայթքն ևս լինէ-  
 ին անհունք : Առարկիցե՞ս նախ՝ եթէ ած իցէր  
 անհունապէս բարի՝ իմաստուն և ողորմած . ոչ  
 ինչ չար , կամ տգիտութիւն , կամ թշուառութ  
 գտանէր յաշխարհի . այլ լի է աշխարհ սոքօք ,  
 ուրեմն և այլն : \* Պատասխանեմ բաժանելով

\* Զայս տէղէ գեղեցիկ բացարէ Փէլնէ , զագու-  
 ն ինայնեամբ - ըւան ունէցն մարեան յասէն :

զ Ա ծագոյնդ . ոչ ինչ լինէր յայնցանէ յաշխարհի ; Եթէ իցէր աստուած բնականապէս գործող , ստորասեւմ . որպէս արեգակն Եթէ իցէր անհուն փարատէր զամենայն խաւար : Եթէ աշատապէս , բացասեմ . խակ աստուած է պարզապէս գործող , և որպէս ունի զայնս անհունապէս , այսպէս և բաղադրութիւնն . և վասն այն ըստ իւրում արդարացի գատաստանին թողուզուանս ՚ի թշուառութեան , զումանս ՚ի տգիտութեան . և զումանս ՚ի յատուկ բնուել իւրեանց՝ որով գիմեն առ չարն . զի բնութիւն թողեալ ինքեան դիմէ ՚ի նուազումն : Առարկիցե՞ս երկրորդ՝ Եթէ ած իցէր ըստ էութեան անհուն , բայց յինքենէ՝ այլ ոչ ինչ լինէր յաշխարհի . այլ են , ուրեմն և այլն : Պատասխա-

Եւ զի՞ն աներածէշա գործէ նոխախնամութիւնն ամ-  
բորէշպա անէաւս ըուով ընդ շանդէւս անէեալ , զի չարժն  
երէուցէալ զնախախնամուր իւն ուսոյէն , . . . զի Տէ պա-  
ճարոց զօրէն՝ առ անգիտութեան պատճակուլուծէալ էղէով  
միահամուտ ՚ի Տ. հ. Տափնէցէն , ՚ի չարութենէ ոչ դա-  
դարել չամեցէլ : Այսպէս և Եղիշէ գլ, 2, էջ , 31:

Et quid imperite agit providentia, in impios paucos numero fulmine animadvertis, ut mali timore acti providentiam ediscant: quippe qui ex natura sunt rationali: ne servorum more, imo et brutorum, prae inscitia acriter castigati universim morti tradantur, quum nolint cessare a malitia?—

*Philo de Provid, lib. 1. p. 25.*

նեմ բաժանելով զմեծագոյնդ . Այլ ինչ ոչ լի-  
նէր , եթէ իցէր Աստուած մարմնաւոր էակ ,  
ստորասեմ . եթէ հոգեոր՝ բացասեմ . այլ է  
ած հոգեոր էակ , այսինքն անմարմին ող ցու-  
ցաւ ՚ի վերոյ : Ստիպիցե՞ս , ուրեմն ոչ պարտ է-  
ին լինիլ հոգեոր էակք , այսինքն հրեշտակք և  
հոգիք : Պատասխանեմ բաժանելով , եթէ ի-  
ցէին նոյնոյ բնութե՝ ստորասեմ , այլոյ բնութե՝  
բացասեմ . զի թէպէտ ած է անմարմին . բայց  
ոչ համարուն ը հրեշտակաց . և հոգւոց . այլ  
այլաբուն : Ուստի ած գաղտնի և անքննելի  
թափանձանց բնութեամբն թագնացեալ է  
ոչ միայն ՚ի մարմնաւոր էակն . այլ և ՚ի հոգե-  
ւորս : Ուստի առաքեալն ասէ ցարիսպագացին .  
և ոչ ևս է հեռի ՚ի մէնջ . զի նովաւ կեամք ,  
շարժիմք , և եմք . զի որպէս մարմինն շարժի ՚ի  
հոգւոյ . այսպէս և հոգին շարժի յԱստուծոյ  
՚ի ներքուստ :

### Կ Յ Ա Խ Ա Ր Ե Ւ Ա :

Թէպէտ հոգիք մարդկան հանդերձ զօրու-  
թեամբքն է հունաւոր , սակայն ըստ որումա-  
ռարկայք իւր են անհունք , ըստ առարկայից  
իւրոց զգենու զբան անհոյ . ուստի զօրութե՞ք  
հոգւոյն էապէս գոլով հունաւորք , առարկա-  
պէս ասին անհունք : Առ որոյ բացայայտու՞ն  
՚ի բաց թողեալ զայլ առարկայս , զառարկայից  
կամաց ( որ առաւել հայի առ յառաջադրու-

թիւնս , ) խօսեսցուք սակաւուք : Արդ՝ առար-  
 կայ կամացն է բարին . որպէս և մտացն ծշմար-  
 տութիւնն : Իսկ բարին բաժանի ՚ի յանստեղծ ,  
 և ՚ի ստեղծեալ : Անստեղծ բարին է ընդհա-  
 նուր բարին անհուն , որ հարկիւ և բնականա-  
 բար շարժէ զկամքն , որպէս և ծշմարտութիւնն  
 զմիտն՝ ոնպ ասի ՚ի գիրս հոգեաց : Իսկ ստեղ-  
 ծեալ բարին՝ թէ պէտ իցէ հունաւոր ըստ էա-  
 կութեան իւրում . սակայն ըստ բաժանման տե-  
 սակաց և անհատից՝ տարածի մինչև յանհունս .  
 վասն այն Պղատոն մինչև ցտեսակսն հրաման  
 տայր իջանել . և ոչ յառաջել անդր ցանհատս ,  
 զի են անհունք : Այս ստեղծել բարիս ոչ շար-  
 ժէ եթէ ոչ զթիւրեալ և զախտակիր կամս .  
 վասն այն այս ինչ ըստ մէջէ ՚ի մէջ չարաց և բա-  
 րեաց . բարիք իմացեալ զպատիր բարին՝ և թէ  
 ոչ կարեն յագեցուցանել զինքեանս անդրաբե-  
 րեն զբաղձանս իւրեանց առ անհուն բարին . և  
 այնպէս յարին ՚ի նա . որ ոչ երբէք ՚ի բաց թո-  
 ղուն մինչև ժառանգեացեն . այսպէս հարաւ ՚ի  
 սէր փեսային հարսն հոգեւոր . վասն այն ասէր  
 կալայց զնա և ոչ թողից , մինչև տարայց զնա ՚ի  
 տուն մօր իմայ . այսինքն ՚ի վերին երուսաղէմ  
 որ է մայր մեր : Այսպս հոգին նմանի երկնային  
 նիւթոյ . որ միանգամ կալեալ զտեսակն ոչ եր-  
 բէք դնէ ՚ի բաց . և բաղձանք սոցա է կերպիւ  
 իւրիք անհուն , զի ոչ յագի հունաւորաւս . այլ  
 միայն անհունով ավ , այսպէս անհուն և ան-

յագ էր բաղձանքն Դաւթի . զոր ոչ կարացին  
յագեցուցանել թտդաւորական բարիքն . վասն  
որոյ ասէր՝ յագեցայց յերեկիլ փառաց քոց : Ա-  
հա այսու անհուն բաղձանօք նմանին սբքն  
անֆութեանն Աստուծոյ :

### Աննանութիւն :

Իսկ չարաց բաղձանքն յոյժ աննման է բաղ-  
ձանացն արդարոց , զի թէպէտ կերպիւ իմն է  
անհուն . ըստ որում անհունք են բաղձալիքն .  
ոտք ասէ Արիատոտէլ ՚ի բարոյականի , թէ ան-  
հուն գոլով բաղձալիքն , անֆից ցանկան մար-  
դիկք . սակայն բարեացն բաղձանք է կայուն  
և յարամնաց . զի առարկայ կամաց նց է ան-  
փոփոխ անհուն լցուցիչ բարին : Իսկ չարացն  
բաղձանք է անկայուն և անհաստատ ըստ  
որում և առարկայ նոցա . զի է հոսանուտ և ան-  
ցաւոր բաժանական բարին . վասն այն հարկ  
է զի ընդ փոփոխիլ նոցա և բաղձանացն յե-  
ղումն կրել : Ե՛ւ ըստ որում չարեաց բաղձանքն  
նմանի երկրային նիւթոյ՝ որ ասի անհուն , զի  
բաղձայ անֆից տեսակաց , անցելցն՝ զոր ե-  
թող , ներկային՝ զոր գրկէ , և ապագայից՝ առ  
որս ձգտի . և այսպէս պարայածութ միշտ տա-  
տանի : Այսպէս և ախտակիր բաղձանք չարաց՝  
ցանկայ անցելց՝ զորս կորոյս . և ապագայից  
զորս յուսայ ունիլ . իսկ զներկայն տաղտկանօք՝

Վայելէ : Տես և յապաշտարանն մեր մասն առաջին , գլուխ + մակագիր առ անհնութիւնն այ :

**Գլուխ Իններորդ :**

Յաղագո Նմանութեանց որ : արքահաննին ՚ի յաւիպենականութեանը Ասպուծոց :

Ե՛ւ քանզի ածային անհնութիւնն բացասէ զամենայն ժամանակ՝ զամենայն տեղի՝ զամենայն հասողութիւն մտաց , և զամենայն չափ , վասն այսորիկ զացանէ ասելի է : Ե՛ւ նախ՝ զյաւիտենականութեն . զորմէ երիս իրս ասելի է . նախ՝ թէ զինչիցէ . երկրորդ՝ թէ աստուած իցէ՞յ յաւիտենական . և երրորդ՝ զնմանութենէն :

**Եղբայրութեան Առաջին :**

Յաւիտենականութիւնն բազում կերպիւ առել լինի ՚ի գերս սուրբս . նախ վասն հնուե այսպէս մեսիայն ցանկութիւն յաւիտենական բլրոց : Երկրորդ՝ վասն երկարատեսութեան , ոչ այնմ , տաց քեզ զերկիրն քանանացւոց ՚ի ժառանգութ յաւիտենական : Այսպէս զարարողական օրինացն ասի , օրէնք յաւիտենական եղիցի այսքեզ : Երրորդ՝ վասն ոչ ունելցն զվախճան . այսպէս հուրն գծոխոց ասի յաւիտենական . այսպէս հրեշտակք և հոգիք են յաւիտենական . այսպէս ևս երկնայինն էուեքն արեգակն երկինք և աստեղք են յաւիտենական . զի են ա-

Նատական ստեղծուածք . չը նոսին նաև գունտ  
Երկրի . ոչ ըստ կենդանեացն , այլ ըստ էուե  
իւրում , ուստի ասէ իմաստունն , \* աղդ Երթայե  
ազգ գայ , և Երկիրյաւիտեան կայ : Ե՛ւ Յակոբ  
† օրֆութիւն հօր քո Յակոբայ՝ որ բարձրացան  
՚ի վերայ լերանց մշտնջենաւորաց , և բլրոց յա-  
վիտենականաց : Ե՛ւ Պետրոս , † նորոյ Երկնից և  
նորոյ Երկրի ըստ աւետեացն ակնունիմք : Ե՛ւ  
ասի նորոյ , զի ՚ի պատահական մասանց որք են  
տնկատարութիւնք մաքրելոց են . այսինքն ՚ի զանա-  
զան շարժմանց : Այլ տիրապէս յաւիտենակա-  
նութիւնն է , զոր սահմանէ Պշչեցիոս այսպէս .  
յաւիտենականութիւնն է անեղերելի կենօք՝  
բոլորն ՚ի միասին և կատարեալ ստացումն :  
Արդ՝ ասի անեղերելի կենօք , զի արտաքսիցի  
եղերումն սկզբան և վախճանի . և ըստ այսմ  
ամստեղծուածք ոչ են յաւիտենականք , զի ու-  
նին եղերումն ընդ սկզբան . զի են սկսեալք :  
Երկրորդ՝ ասի բոլորն ՚ի միասին , զի արտաքսի-  
ցի յաջորդութիւն ժամանակի , որ միայն պատ-  
կանի ստեղծուածոց : Երրորդ՝ ասի կատարել  
ստացումն , զի արտաքսիցի կախումն : Աստուստ  
եթէ իցեր եակ ինչ ՚ի յաւիտենից ստեղծեալ ,  
ոչ կարէր ասիլ ըստ այսմսահմանի յաւիտենա-  
կան , զի տակաւին ունէր զկախումն յաստուծոյ :

\* Ժող . 1, 4. † Ծանր , 49, 26. † 2 Պէտ . 3, 13.

Եպրահացութեան Երիբրա :

ԱՃ ոչ է լը այսմ սահմանի յաւիտենական ,  
Ցուցանի նախ՝ վկայութե սթ գրոց զի ասէ  
Դաւիթ \* գու տը յաւիտեան կաս . և Մովսէս  
† Տը թագաւոր յաւիտեանս յաւիտենից և ևս :  
ԵՇ առաքեալն ‡ թագաւորին յաւիտենից տ-  
ներեւութի անսմահի փառք : և այլք բաղումք :  
Ցուցանի երկրորդ՝ բանիւ , Անփոփոխ էակն է  
յաւիտենական , այլ ԱՃ է անփոփոխ էակ , ու-  
րեմն է յաւիտենական : Ցուցանի երրորդ՝ ամ  
միշտ ներգործութե էակ՝ է յաւիտենական այլ  
ած է միշտ ներգործութե էակ , ուրեմն է յա-  
ւիտենական : Ցուցանի մեծագոյնս , որ ոչ ե-  
լանէ ՚ի զօրութենէ ՚ի ներգործուի , ոչ կարէ  
գաղարիլ ՚ի գոլց , այլ միշտ ներգործութե է-  
ակն ոչ ելանէ ՚ի զօրուէ ՚ի ներգործութե . վս  
այն ոչ կարէ գաղարիլ , տպա ուրեմն է յա-  
ւիտենական : Ցուցանի չիդ՝ ամ բացարձակա-  
պէս հարկաւոր էակ է յաւիտենական , այլ  
ած է բացարձակապէս հարկաւոր էակ , ու-  
րեմն է յաւիտենական : Ցուցանի մեծագոյնս ,  
որ հարկաւոր է գոլ , անկարելի է ոչ գոլ :  
ուրեմն է յաւիտենական : Ցուցանի և փոքրա-  
գոյնս , զի եթէ չիցէր ած , անհար էր գոլ  
և կայանալ ստեղծուածոց , ոնց անկարելի է

\* Սաղմ. 18, 2. † Ելք, 15, 18. ‡ 1 Տեժ, 1, 17:

գոլ պատճառելեաց առանց պատճառի , ապա-  
 ուրեմն այ գոլն է հարկաւոր : Յուցանի հինգ-  
 երդ՝ Ամ անպատճառ էակ է յաւիտենական ,  
 այլ ած է անպատճառ էակ , ուրեմն է յաւի-  
 տենական : Մեծագոյնս յայտ է , ցուցանի  
 վոքրագոյնս . զի եթէ ած ունիցէր զպատճառ  
 ոչ լինէր ինքն ած , զի ավ խմանամք զնախկին  
 պատճառն : Եւ աստ ծանիր զզանազանուն  
 յաւիտենականին , մշտնջենաւորին , և ժամանա-  
 կաւորին , զի յաւիտենականն է այն՝ որ ոչ ունի  
 զսկիզբն և ոչ զվախճան , և այս պատկանի այ  
 միայն . իսկ մշտնջենաւորն է այն՝ որ ունի զսկիզ-  
 բըն և ոչ զվախճան , և այս պատկանի անապա-  
 կան ստեղծուածոց . այլ ժամանակաւորն է այն  
 որ զերկուսեանն ևս ունի , որք են ապականա-  
 ցուք : Բայց սակայն ՚ի գիրս սբա երբեմն ան-  
 զանազանապէս առեալ լինին յաւիտենականն  
 ՚ի վը ստեղծուածոց , այսպէս հուրն կոչի յա-  
 վիտենական , ո՛պ ՚ի վերն բացատրեցաք . իսկ  
 մշտնջենաւորն ՚ի վը այ . ըստ այնմ՝\* բլուրք տի-  
 եզերաց խոնարհեցան յերեսաց գնացից մշտըն-  
 ջենաւորութեան նորա :

**Եպաւայութեան Երրրդ՝ և Կմոնութեան:**

Յայսմ մասին Սուրբք նմանին այ բարոյա-  
 կանապէս , ըստ որում զանապական գոլն հոգւոյ

\* Ամբողջամ , 3, 6.

Հաւատացեալ, և յաւիտենական վառացն այ  
 ընդունակ գոյն՝ ի մոռացօնս արկանեն զժամա-  
 նակառորս, և խոկան միշտ զյաւիտենականն,  
 որոյ վասն խոկ ծնեալք են : Այսպս խոկայր  
 Դաւիթ՝ յասելն \* ժամանեցին պահուց աչք  
 իմ խոռովեցայ և ոչ խօսեցայ, խորհեցայ զա-  
 ւուրան զառաջինն և զաման յաւիտենից յիշե-  
 ցի : Այսու խոկմամբ աշակերտեալքն Քնի մո-  
 ռացեալ զհայր և զմայր և զամ աղգականս և  
 իբրու անհայր և անմայր, և կամ բարոյական  
 իմն յաւիտենականք օտարացեալ ի տոհմից,  
 զամ հոգս ընկենըով յած՝ երթան զհետ Քնի,  
 առ ի նմանիլ Որդւյն ԱՅ հանգոյն Մելքի-  
 սեղեկի, որոյ անծանօթ գոլով ծնօղքն, և ին-  
 քըն անծանօթացեալ ի ծնօղացն՝ յաւիտենա-  
 կանութեանն այ օրինակ առեալ եղեւ . որպէս  
 ասէ առաքեալն, † քզի այս Մելքիսեղեկ և  
 այն, անհայր անմայր չհամարեալ յազգս, ո-  
 րոյ ոչ սկիզբն առուրց, և ոչ կատարած կենաց,  
 նմանեալ Որդւյն ԱՅ : Այսպէս վայելչապէս  
 կրօնաւորքն նմանին Մելքիսեղեկի, և այնու  
 Որդւյն ԱՅ . գոլով անհայր և անմայր, և ըզ  
 կեանս իւրեանց ծածկելով ի Քն, ը առա-  
 քելոյն : Եւ թէ՝ զանտոհմն հիս ընտրեց ած :  
 զի և յաւիտենականն ոչ ունի զտոհմն, ը այնմ  
 զաղգատոհմն նորա և պատմեսցէ :

\* Ստպ. 65, 9. † ԵՒ. 7, 1, 2, 3.

## Անհանութիւն :

Իսկ ամբարիշտք յայսմ մասին յոյժ աննման  
գտանին այ . զի ուրացեալ զանմահուի հոգւոց՝  
որով և զյաւիտենական կեանսն , համարին  
յետ մեռանելոյն անկանիլ յանդունդս չքուե՛ ,  
և եպիկիւրեան աշանդոյ : Եւ վասն ոյն հան-  
գոյն անքանից ընկղմեն զինքեանս ՚ի ժամանա-  
կաւորս , զերկրաւորս և եթ խորհելով . և ասե-  
լով յանձինս \* կերիցուք , և արբցուք , քզի  
վաղին մեռանիմք : Ընթերց և յապաշԽարանն  
մեր զյաւիտենականուեն այ մասն առ , գլուխ :

## Գլուխ Տառերբար :

Յաղագս նմոն ուրեանց՝ որի արարականին յանչ դուլե-  
նէն Աստրածոյ :

Նոյն է անջունին որ և անչտփուեն , որպէս  
նոյն է հունաւորութիւնն ը չափաւորութեան ,  
զի ող ած գերազանցէ զժամանակաւ , զտե-  
ղեօք , և զմտօք , անջուրք , այսպէս և անչա-  
փուրք . բայց զի չափն է զանաշան , տեսանելի  
է թէ՝ առ որ չափս նկատելով ամի ած անչափ :  
Եւ գիտելի է , զի չափն կրկնակի առեալ լինի ,  
նախ՝ ը քանակուե՛ . երկրորդ՝ ը զօրութեան :

\* Իմաս , 7, 2, 3. Եռայ , 23, 13. Ակրիլ , 15, 32.

Քանակական չափն բաժանի ՚ի տարորոշ , և  
 ՚ի շարունակ : Տարորոշ չափն չափէ զթիւս և  
 զփաղառութիւնս : իսկ շարունակն չափէ զեր-  
 կայնութիւն՝ զլայնութիւն՝ և զխորութիւն մարմնոց : Իսկ  
 զօրութենական չափովն չափեալ լինին զօրուեք  
 գեղրէից , և կենդամնեաց , ևս և հոգւոց և  
 հրեշտակաց ՛ սաստկուե և ՛ թուլութեան :  
 Արդ՝ տեսանելի է թէ արդեօք նկատմամբ ե-  
 րից տեսակաց չափուցս ԱՃ իցէ՞ անչափ :

**Եւրոպացութեան :**

ԱՃ է անչափ ՛ երից չափուցս ։ ցուցանի  
 նախ՝ վկայութե սթ գրոց ։ զի ասէ մարգարէն ,  
 իմաստուե նր ոչ գոյ չափ : իսկ որոյ ստորոգու-  
 թիւնն է անչափ՝ նորին և էուին , ուղ ցուցաւ  
 ՚ի վերոյ ՚ի ճառն անհյութեան : Ցուցանի երկ-  
 րորդ՝ բանիւ , ըստ երից մասանցն . Նախ՝ զօրու-  
 թենական չափն ոչ կարէ չափել զնա . զի է  
 անհունազօր , և վասն այն կոչի ամենակարօղ .  
 ըստ այնմ , մի է և ամենայնի կարօղ : Երկրորդ՝  
 տարորոշ չափն ևս ոչ կարէ չափել զնա . Ցու-  
 ցանի , որ ոչ է թիւ , ոչ կարէ չափիլ տարորոշ  
 չափով . այլ ած ոչ է թիւ , ուրեմն ոչ կարէ  
 չափիլ տարորոշ չափով . մեծագոյնս յայտ է ,  
 զի և բանն որ ասացաք չափիլ տարորոշան , ոչ է  
 յատուկ տեսակ քանակութե , այլ վերածի ՚ի  
 թիւ , ըստ որում չափի սողոբայիւք . որպէս ասէ  
 արիստոտէլ : Ցուցանի փոքրագոյնս , միակն ոչ

Ե թիւ , այլ սկիզբն թուոյ . որպէս ասէ գաւիթ  
 անյաղթն ՚ի գիրս սահմանաց , նաև ըստ ին-  
 քեան յայտ է , իսկ ած է գերագոյն միակ . ու-  
 րեմն ոչ է թիւ : Երկրորդ տեսակ տարորոշին  
 ևս ոչ կարէ չափել զած , այսինքն բանն . զի  
 բանն կամ չափէ զբազմութիւն սիղոբայց , և  
 վերաբերի ՚ի թիւն . որ ոչ է ՚ի յած . կամ չա-  
 փէ զտեռողութե՛ն ձայնի և վերաբերի առ ժա-  
 մանակն , որ և նմանապէս ոչ է ՚ի յած , ո՞պ ցու-  
 ցաւ : Երրորդ՝ շարունակն ևս ոչ կարէ չափել  
 զած՝ ցուցանի ՚ի բաժանմանէ . զի շարունակն  
 բաժանի ՚ի յաջորդական և ՚ի մնացօղ . յաջոր-  
 դականն , որպէս օրն տարածի ՚ի ժամս միմեանց  
 հետեւալս , որ է ժամանակն որ ոչ է ՚ի յած :  
 Իսկ մնացօղ շարունակն ՚ի գիծ , ՚ի մակերեսոյթ ,  
 և ՚ի մարմին . կամ որ նոյն է յերկայնութիւն ,  
 լայնութե՛ն և ՚ի խորութիւն . այլ այսոքիկ մար-  
 մնականաց պատկանին . իսկ ած է անմարմին  
 որպէս ՚ի վեր անդր ցուցաւ , ուրեմն ոչ չափի  
 սոքօք : Ցուցանի երկրորդ՝ ոչ է ՚ի յած պատա-  
 հումն . իսկ ասացեալ չափքս են պատահումն .  
 զի են տեսակք քանակութեանց , ուրեմն ոչ ան-  
 կանին ՚ի յած . սակայն ըստ ալպերտի այսոքիկ  
 ասին ՚ի յած այլաբանօրէն . զի ՚ի յաստուած է  
 երկայնմտութե , որով երկայնամիտ լինի դարձի  
 մեղաւորաց , ըստ այնմ \* աստուծոյ երկայն-

մտութիւնն զքեղ յտպաշխարութիւն ածէ, լայս  
նութիւն գթուե, որով զամենեսեան նախա-  
խնամէ . Զգի ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս օդ-  
տակարս առողջուե, և զարմանէ զամենեսեան  
քաղցրութեամբ : Բարձրուե իմաստուե, որով  
զամենեսեսն տեսանէ, ը այնմ ամենայն ինչ  
մերկապարանոց է առաջի նորա : Ե՛ւ խորուե  
արդարուե, ը այնմ\* իրաւունք քո ող խորք բա-  
զումք : Ե՛ւ առաքեալն այսոքիկ չափովք այլա-  
քանէ զսէրն Քրիստոսի . յասելն † Զի կարօղք  
լինիթք հասանիլ ը ամենայն սթս . թէ զինչ  
է լայնութիւն և երկայնութիւն , բարձրութե  
և խորուե սիրոյ Քրիստոսի : Արդ՝ սէր Քրիս-  
տոսի ասի լայն . զի է առ ամենեսեան . ը այնմ.  
սիրես զամենայն , որ են : Ասի երկայն . զի է յա-  
փատենական . էրէմ . 31. 3. յաւիտենական սիրով  
սիրեցի զքեղ : Ասի բարձր , զի է անճառելի .  
† տեսէք որպիսի սէր չնորհեաց մեզ , զի որդիք  
Աստուծոյ լինիցիմք : Ե՛ւ ասի խոր . զի իջանէ  
մինչև առ թշնամիս ըստ ոյնմ . յայտնեց Ած  
զսէրն իւր ՚ի մեզ , զի մինչ դեռ թշնամիքն էաք .  
քու վասն մեր մեռաւ . զի վասն արդարոյ հա-  
զիւ ոք մեռանիցի :

\* Առշմ . 35, 7. † Եպէս . 3, 18. † 1 Յոհ . 3, 1.

## Նմանութիւն :

ՍԵՐ ԹԵՎՈՒԹ են չափաւոր էութեամբ ,  
բայց ունին զառաքինութիւն , որով նմանին այ  
բարոյականապէս . զի է ՚ի նուսա երկայնմտուն  
համբերուն . որով տանեն դչարս վասն այ ;  
Որպէս յայտէ ՚ի սը հայրապետն մեր Գրիգոր ,  
և յարդարն Յորք . և այն : Լայնութիւն սիրոյ .  
որով լինին ընդունակ անտանելի էութեանն .

\* **Եթէ** ոք զիս սիրէ , եւ և հայր իմ առ նա ե-  
կեսցուք . և օթեանս առ նմարասցուք : Բարձ-  
րութիւն սրբութեան . մինչեւ արժանանալ տե-  
սութեն . շայնմ , † Երանի այնոցիկ՝ որք սը ք  
են սրտիւք . զի նք զած տեսցեն : Ցնծացեն  
և ուրախ լիցին ամենեքեան . ոյք ուղիղ են սր-  
տիւք : **Եւ** խորութիւն խոնարհութեան . մինչեւ  
որպէս ծով ընդունելով զբաղցրութիւն գետոց  
շնորհաց հոգւոյն սրբոյ , տակաւին կալ մնալ՚ի  
դառնուն խոնարհուն : Զի առ այնպիսին ասի  
թէ և հոգին եօթնաբուղիս վտարօքն ինքնին  
դիմեացէ , տակաւին ող անդունդ մնան անյագ :  
**Այսպի** էր կոյսն , որում թէպէտե ասացաւ  
‡ Հոգի սը եկեսցէ ՚ի քեզ . սակայն տակաւին  
զլսոնարհուն բարբառեաց յատելն , ահաւասիկ  
կամ աշախին Տն : Առ այսպիսիս ասի , զի ոչ  
եթէ չափով տայ ած զհոգին , և այն : **Սոցա**  
ընդդէմն է աննսմանութիւնն :

\* Յոհ 14, 23. † Մատ 5, 8. ‡ Ղուկ 1, 35, 38.

Գլուխ Մէտաստներորդ :

Յաղագո Նմանութեան՝ որ արքահանի յանպարագրութե-  
նէն. Ասպարծոյ :

Առ ՚ի բարեպէս իմանալ թէ ած է անպա-  
րագրելի , պարտ է գիտել թէ զինչ՝ է պարա-  
գրումն , և զինչ՝ տեղին : Առո՞ւ պարագրումն  
է պարունակուն իրին ՚ի տեղւոջ . իսկ տեղին է  
տարածուն մարմնոյ ծոցաւորի կամ ծոցաւոր  
մակերեսոյթ մարմնոյ պաշարողի , որպէս ասի ՚ի  
տրամաբանութեանն Կովտնոյ : Յորմէ զերիա  
Հաստատեմք , նախ՝ թէ պարագրումն պատկա-  
նի մարմնական գոյացուեց , զի մարմնական իրն  
ու մարմնով պարունակի , բացառոցի սակայն  
յայսմանէ լուսեղէն երկինքն . զի նա պարունա-  
կէ միայն զամ մարմնական էակս , և ինքն մնայ  
անպարունակ ՚ի մարմնական էից : Երկրորդ՝  
անմարմնական էակն ոչ պարագրի ՚ի մարմնա-  
կան տեղւոջ , աստուստ ասի ՚ի մերն Սկմէօնէ  
՚ի տրամաբանութեան թէ՝ ոչ ինչ տեղի նանի  
կամ գալարկի յանմարմնոց : Ուստի՝ զի թէ  
բիւր հրեշտակք բնակին ՚ի սիրտ մարդոյ , ոչ  
ասի լցեալ : Աստուստ լէգէօն մի գիւտգունդ  
զօրաց կարաց բնակիլ ՚ի սիրտ գիւտհարին , ո՛գ  
յայտ է : Եւ յայսմանէ երրորդ մակաբերի ,  
անմարմնոյն լինիլ ՚ի տեղւոջ սահմանօրէն և ոչ  
պարագրանկս , ո՛գ ասէ ալպերտ . զի ոչ կարէ

մարմինն զանմարմինն պարագրել : Իսկ սահմանօրէն լինին ՚ի տեղւոջ , է կարեն լինիլ միանգամայն ՚ի բազում տեղիս . աստանօր հրեշտակը ոչ կարեն լինիլ միանգամայն ՚ի բազում տեղիս , զի սահմանեալ և եզերեալ են էութ , և այս այ միայն պատկանի ոռպ արդ ցուցցուք :

### Եղանակնեւն :

Աֆ է անպարագրելի ՚ի տեղեաց . եզրակացուես ցուցանի նախ՝ վկայութ որ գրոց . այնոքիւկ , որով և ցուցաւ անդուն տես անդ : Ցուցանի երկրորդ՝ բանիւ , անհունն էութ ոչ կարէ պարփակիլ ՚ի հունաւոր էակէ , այլ ոսհամանգամայն առեալ՝ է հունաւոր , իսկ ած է անհուն էութ , ուրեմն ոչ կարէ պարագրիլ յէ : Առարկիցե՞ս նախ՝ անպարագիրն մնայ արտաքոյ պարագրողին , այլ ած է անպարագիր յէ , ուրեմն է արտաքոյ ո՞ի յանհունս : Պատասխանեմ բաժանելով զմեծագոյնու , անպարագիրն ած մնայ արտաքոյ պարագրողին յանհունս՝ որպէս ՚ի տեղւոջ . բացասեմ . զի ոչ գոյ այլ տեղի արտաքոյ աշխարհի . ՚ի յինքեան , ստորասեմ . զի ած ոչ կարօտանայ տեղւոյ . այլ մանաւանդ տեղին նմա : Ուստի որպէս յառաջ քան զլինին ո՞ի՝ էր ած յինքեան , այսպէս և այժմ է յինքեան . զայս հաստատէ բանն տէ . ըունի որ ասէ թէ՝ հայր յիս է և ես ՚ի հայր : ցուցանելով թէ ոչ է յայլ տեղի իբրև ՚ի կայա

նի , թէպէտե է ներկայ ամենեցուն , Եւ ծառ  
 նիր , զի մինչ ասի թէ ած է յինքեան , ոչ է  
 պարտ իմանալ գրականապէս , զի այսպէս զա-  
 նազանիւր յինքենէ , այլ բացասապէս , որ թէ  
 ոչ է յայլում ող ասէ Ակովտ : Եւ աստ գիտե-  
 լի է , զի այ անպարագրութիւնն կրկին կերպիւ  
 իմանի , նախ՝ ըստ օրինակի հոգւոյ ՚ի մարմնոջ .  
 նախ զի՝ ող հոգին է բոլորն ՚ի բոլոր մարմնի ,  
 և բոլորն յիւրաքանչիւր մասին նորա . այսպէս  
 ած է բոլորն ՚ի բոլոր ՚ի , և բոլորն յիւրա-  
 քանչիւր մասին : Վն այն ասի ած յամ ուրեք ,  
 և ոչ ուրեք . զի ոչ է այնպէս ՚ի տեղւոջիմիք ,  
 որ ոչ գուցէ յայլ տեղւոջ : Ող և հոգին իսկ ոչ  
 կարէ այնպս զսպիլ ՚ի մասն ինչ մարմնոյ , որ ոչ  
 իցէ յայլ մասունս . յայս միտ ասէ Կարեկացին  
 անուրեք ՚ի վսյրաց և չիք սահման առանց քո :  
 Աստուած ումանք ասացին այլաքանօրէն թէ՝  
 ած է հոգի ՚ի , այլ գու իմա պատճառաբար՝  
 շարժողաթար՝ և կառավարապէս , և ոչ տեսա-  
 կօրէն . զի ած ոչ կարէ լինիլ տեսակ ՚ի , ող  
 հոգին է տեսակ մարմնոյ : Աստուծոյ զսյս օրի-  
 նակ լինիլն կառավար ՚ի , վկայէ իմաստունն՝  
 յասելն , գարմանէ և ընդմտանէ ը ամ վն յըս-  
 տակութեան : Այսու օրինակաւ հոգւոյ գիւ-  
 րապէս մեկնի գժուարութիւն բանիցն աստ-  
 ուածաբանից , որ ասեն թէ՝

Եր բովանդակ՝ յորովայնին ,  
 և նովաւ էր՝ լցեալ երկին .

ծածկեալ յարգանդ՝ սրբոյ կուտին ,  
 և ՚ի ծոցոյ՝ հօր անբաժին :  
 և այսպէս համեմատաբար կարէ ասիլ թէ՝ բու-  
 լը հոգին ՚ի բոլոր աչն , և է նովաւ լցեալ  
 բոլոր մարմինն : Երկրորդ՝ զի ո՞պ հոգին ՚ի յը-  
 զացման զսպեալ գոլով ՚ի կորկաշափ մարմնի ,  
 որքան աճէ մարմինն՝ այնքան և էութիւն հո-  
 գւոյն ընդարձակի , մինչ զի՝ եթէ մարմինն ա-  
 ճեսցի ցհարիւր կանգուն , կամ այլ ևս աւելի .  
 լնու հոգին և գրաւէ զնա ո՞պ յայտ է յանձու-  
 նի կենդանիս և ՚ի վիշտապս ծովայինս : Այսպս  
 ոս այս՝ զոր լնու ած , ու այնու թէ՝ զերկին և  
 զերկիր ես լնում . եթէ իցէր բիւր քան զայս  
 մեծագոյն՝ տակաւին լնոյր ած մինչև ցանհունս :  
 Այս օրինակ թէպէտ գեղեցիկ է առ իմանալ  
 զանհուն էութեանն այ , բայց և ոչ զան-  
 պարագրութիւնն . զի երկոքումբք պակասի :  
 Նախ՝ զի ոչ ասէ զներգործական ներկայութ-  
 էութեանն այ յարտաքս , այլ միայն զզօրու-  
 թենականն , ո՞պ յայտնապէս բացասէ ալպերտ  
 ՚ի ճառն անպարագրութեն թէ՝ նախադասու-  
 թիւնս այս արտաքոյ , ոչ ասէ զներգործական  
 ներկայութիւնն առ տեղին , այլզկարողականն,  
 որ ոչ է այսպս իմանալի . զի ած ո՞պ ներգործա-  
 պէս է ներկայ ՚ի , այսպէս և ներգործապէս  
 է արտաքոյ ՚ի . բայց ոչ ո՞պ ՚ի տեղով , այլ  
 յինքեան : Եւ ամին օրինակ կտրէ տրիլ լոյսն  
 արեգական , զի ո՞պ նա է արտաքոյ տան , սա-

կայն և ՚ի ներքս թափանցեալ , այսպէս և ածէ արտաքոյ ՚ի յանհունս , թէպէտե ՚ի ներքս ող ասէ Սկզբ : Երկրորդ՝ զի ասէ զեզերումն իմն , զի հոգին եզերեալ և սահմանեալ իմն է ՚ի մարմնի , թէպէտ ոչ պարագրեալ : Ուստի եթէ ած այնպէս իցէր յ՞ի , ող հոգին է ՚ի մարմնի . հետեւիւր եզերումն և սահմանումն իմն էութեանն այ . թէև ոչ ՛շ զօրութեան , սակայն ըստ ներգործութեան . բայց ոչ է պարտ զԱստուած ասել միայն զօրութեամբ անհուն , այլ և ներգործութեամբ :

Առարկիցե՞ս երկրորդ՝ որ է միայն յերկինս , ոչ է յամենայն ուրեք , և հետեւապէս ոչ անպարագիր . այլ ած է յերկինս , որպէս ասէ տէրն . Համար մեր որ յերկինս ես : Ե՛ւ երեք մանկունքն ասացին , զի է մեր ած յերկինս և այն : Ապա ուրեմն ոչ է անպարագիր : Պատասխանեմ թէ զայս տարակուսութե՞ն ած ինքնին լուծանէ յանելն , երկինք աթոռ իմ են . և երկիր պատւանդան ոտից իմոց . ոչ ձեռն իմ արար զայս ամենայն . և սաղմոսերգուն , ՛ը ամենայն տեղին է տէրութիւն նորա : Այլ ասի յերկինս գոլ վ՛գերազանց հետոց երևաննն . յորմէ և արիստոտէլ պատրեալ , կարծեաց թէ միայն յերկինս իցէ էութեամբ , իսկ զօրութեամբ յամենայն ուրեք ներգործող և ազդօղ . որպէս երեխ յաշխարագրութեան աղեքսանդրի : Ե՛ւ աստ գիտելի է , զի Աստուած բազում կերպիւ ասի լի-

նիւ յիրս . նախ վկայութեամբ զօրութեամբ և  
 էապէս . և ըստ այսմ է յամենայն ուրեք : Աստ-  
 ոմանք անդէպ ինչ զրոյց մակամտածեալ՝ ասեն.  
 Եթէ իցէր աստուած յամ ուրեք էապէս . աղ-  
 տեղանայր յախտեղի տեղեաց : Ասելի է թէ՝  
 անսմարտինն ոչ կարէ ախտեղանալ ՚ի մարմնա-  
 կանաց . որպէս և ոչ ախտեղանայ լոյսն արեգա-  
 կան . կամ հոգին ՚ի բորոտեալ մարմնի : Երկ-  
 րորդ՝ միութեամբ բնութեան . և ըստ սյնմ է  
 ՚ի Քրիստոս : Երրորդ՝ սքանչելագործութե-  
 ը այնմ \* մատն այ է աստ . չորրորդ՝ շնորհօք .  
 և այսպէս է ՚ի բարիս . հինգերորդ՝ ահարկութ-  
 և ըստ այսմ է ՚ի չարս և ՚ի գես . զայլն տես-  
 է յալպերտ և ՚ի սկովտ : Խնդրիցես, եթէ իցէր  
 Աստուած միսյն ՚ի յերկինս , կարէ՞ր արդեօք  
 ներգործել ՚ի յերկրի : Պատասխանեմ թէ կա-  
 րէր ներգործել ՚ի յերկրի . և ՚ի բացակայս .  
 բայց ոչ ՚ի յանհունս : Առաջին մասն յայտ է  
 օրինակաւ աստեղաց և արեգական . որք այն-  
 չափ տարակաց գոլով յերկրէ , տակաւին ազդեն  
 յերկիր : Երկրորդ մասն այսպէս ցուցանի , ՚ի  
 հունաւոր էութենէ ոչ երբէք ելանէ անհուն  
 զօրութիւն , աստուաստ աստեղաց զօրութիւն ՚ի  
 յառաւել տարակացութենէն նուաղ ազդէ .  
 քան թէ իցէին մերձ : Վասն այն էութիւնն այ  
 պարտի գոլ անհուն :

\* Ելք, 8 19. † Ալպ , Գլ 17. որում և պհեսք գնույ :

## Նմանութեան :

Յայսմմասին կերպիւ իւիք սբք նմանին այ-  
թէ և ոչ անպարագրութեամբ էութեան. սա-  
կոյն անպարագրութեամբ համբաւոյ . որոց  
բարի համբաւ ըստ առաքելոյն յամենայն տե-  
ղիս հոչակ հարկանէ , տարածեալ գոլով ՚ի  
յած , ՚ի հրեշտակս , և ՚ի մարդիկք . և լցեալ  
գոլով անուշահոտութ նց երկինք և երկիր:  
Այսպիսի էր սբն Պօղոս՝ որ ասէր , հոտ ա-  
նոյշ եմք Քրիստոսիւ առ ած , ոմանց հոտ ՚ի  
մահուանէ ՚ի մահ , և ոմանց՝ ՚ի կենաց ՚ի  
կեանս : Հայեաց ՚ի սբն Պօղոս , թէ ողէ ե այ  
հոտ անոյշ , հրեշտակաց զուարձութիւն , ( որ )  
մարդկանց զիեանս բուրէ , և դիւաց՝ և չարաց՝  
է ող զհոտ մահաբեր : Այսպէս պարտին լինիլ  
Կաթողիկոսունք և եպսք այ հոտ անոյշ , եկե-  
ղեցւոյ պարձանք , բարեաց ցնծուն , և չարաց  
ահարկութիւն . բայց այժմու ժամանակիս մա-  
նաւանդ ներհակն տեսանի , վայ ինձ :

## Գլուխ Երէոպաստնէ բարու :

Յաղագո նմանութեան՝ որ արդահոնէ յոնհառաւթենին  
Ասպուծոյ :

Աստուած վա իւրոյ գերազանցութեանն ,  
ասի անհասանելի , անըմբունելի , և անձա-  
ռելի , և զի սբ առ մի և նոյն ունին նկատումն ,

Խւստի զոր ՚ի մեղ ասէ առաքեալն \* այնպէս ըն-  
թացարձւք զի հասանիցի՞ք . առ Լուտինս գրի  
զի ըմբռնիջի՞ք : Եւ որ ՚ոչ ըմբռնէ , ՚ոչ կարէ  
ճառել , վս այն զերիցս յայսցանէ՝ յայսմիկ  
գլխոց համառօտարար խօսեսցուք :

## Եղբայրութեան Առաջին :

Աստուած է անհաս և անըմբոնելի ՚ի ըս-  
տեղծուածոց ։ ցուցանի նախ վկայութ սբ գրոց  
զի ասի ՚ որ նատիս ՚ի քրոբէս ։ այսինքն ՚ի վեր  
քան զիմացականութիւն քերօթէից ։ Ե՛ւ եսայի,  
՚ սերօթէքն ծածկէին զերեսմ իւրեանց ։ ուր եր-  
եսօք իմանի աչքն ։ և աչօք իմացականութիւնն  
որով ծանուցանի անհատութ նց առ էութիւնն

\* 1 Կոբե . 9, 24.

An ignoratis, eos qui stadio currunt, omnes  
quidem currere, sed unum accipere praemium?  
Sic currite ut comprehendatis. *παντὶς ἁγίοις* com-  
prehendo οὐ τὸν πωρεύεται τὸν Στέρετόν, οὐτὶς ὑπὸ τοῦ θεοῦ  
ἴεται, εἰσενελθεῖς θυμός, ἀ τελείωτον τὸν οὐτούτον  
πάτημα πωρεύεται τὸν γρανθανίκον, στρέψας τρέχετε, ἵνα κατα-  
λαβητε (πρῶτον οὐ τούτοις εὑνέποντες, οὐδὲ εὐτρόποις θεοῖς.) ἀ  
πορεύοντες οὐκέτι εἰς οὐρανούς τοὺς θεοὺς οὐκέτι εὐτρόπους φέρετε. “Στέ-  
ρετον πάτημα οὐτούτον πάτημα φέρετε.” ἀ τοῦ “οὐδὲ θεούς πάτημα φέρετε.”  
παντὶς Θεοῖς φέρεται θεοῖς καταλαβητε γεράποτε πάτημα τοῦ  
οὐρανοῦ πάτημα θεοῦ πάτημα accipere, πρωτότον πάτημα  
παντὶς εὐτρόποις: — **Τυρός**, 98, 1. ♫ **Βούλης**, 6, 2.

այ : Եւ առաքեալն ասէ . զոր ոչ ոք ետես ի  
 մարդկանէ . և ոչ տեսանել կարօղէ . այսինքն  
 ոչ ոք աստ կամ ՚ի վերին գաւառին կարէ ըմբռ-  
 նել զնա . կամ հասանիլ լրիւ : Ցուցանի երկ-  
 րորդ՝ բանիւ . Անհունն ոչ կարէ ըմբռնիլ ՚ի  
 հունաւորէն . այլ ած է անհուն . և մարդն հու-  
 նաւոր . ուրեմն ոչ կարէ ըմբռնիլ ՚ի հունաւո-  
 րէն , թէ մարդ իցէ թէ հրեշտակ : Երկրորդ՝  
 որ ոչ սահմանի . ոչ կարէ ըմբռնիլ . զի իրն ըմ-  
 բռնի սահմանաւ . ո՛պ ասէ պղատօն , ով մա-  
 նուկ դու , մի է սկիզբն գեղեցկապէս խորհելոյ,  
 ֆ գիտել թէ յաղագս ոյր է մտածուին , առա  
 թէ ոչ հարկ է յամենայնէն վրիպել : Այլ ած  
 ոչ կարէ սահմանիլ ո՛պ ցուցաւ ՚ի սկզբան գրոցս .  
 ուրեմն ոչ կարէ ըմբռնիլ : Հարցանիցե՞ս , եթէ  
 ոչ ըմբռնի ած , վա՞ էր ապա անձաբանք տքնին  
 ՚ի քննութիւն այ . և զիա՞րդ ասի սբց ըմբռնել  
 զած ՚ի վերին գաւառին . և այնմ թէ կալսց  
 զնա և ոչ թողից : Պատասխանեմ թէ ըմբռո-  
 նումն կրկին կերպիւ իմանի . ըստ բոլորի , և շ  
 մասին . և բոլորին միայն որդի զհայր ըմբռնէ .  
 և հակառարձարքար : Ոչ ոք գիտէ զհայր . եթէ  
 ոչ որդի և այլն . և զայան ոչ ոք գիտէ եթէ  
 ոչ հոգին այ : Իսկ ըստ մատին անձաբանք ըմ-  
 բռնեն անտեսաբար . իսկ երանեալք տեսո-  
 ղաբար . Եւ այս յայտ է ըստ ալպերտի օրի-  
 նակաւ ծովու . որ այնքան տայ զինքն տեսու-  
 թեան , որքան զօրէ աչքն :

## Ամանութեան :

Յայսմ մասին սուրբք նմանին Որդւոյն այ  
բարոյականապէս . ըմբռնելով զած հանգոյն  
նմին : Եւ այս երեք կերպիւ . նախ հաւատով,  
“ հաւատով ճանաչել զնա և զօօրուն յարուն  
նր . և այլն : ” Ուստի հաւատն է լոյս գերբնա-  
կան . որ վերացուցանէ զմիտս մեր ՚ի տեսուն  
և ՚ի ծանօթութիւն ամենասթ Երրորդուն :  
Այսու լուսով դաւանեաց սուրբն պետրոս ըդ-  
ծնունդ բանին ամելով . դու ես որդի այ կեն-  
դանւոյ : Երկրորդ՝ խոնարհութք , գոհանամք  
զքէն հայր տէր երկնի և երկրի . զի ծածկեցեր  
զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց . և յայտնեցեր  
տշայոց . այսինքն խոնարհաց : Եւ ծանիր , զի  
յերկու կերպ խմաստնոց ծածկեալ լինի . նախ  
յայնց՝ որք կամին բնական ուժգնութք մտաց  
ըմբռնել : Երկրորդ յայնց՝ որք յաչս իւրեանց  
են խորհրդականք . այսինքն ՚ի յօնապանծ ի-  
մաստակաց : Երկրորդ՝ սիրով . գիտուն հպարտա-  
ցուցանէ , այլ սէր շինէ : Եթէ ոք սիրէ զած ,  
նա է տեղեկացեալ զնմանէ : Իսկ ըդիմակին ե-  
րիցս ոչ կարեն ըմբռնել զած . զի են աննմանք :

## Եղախացութեան Երերրդ :

Աֆ է անճառելի . ցուցանի նախ վկայութ  
սուրբ գրոց . մատիցէ այր ՚ի խորութիւն սրտի

թւրոյ . և բարձր եղիցի ած : ԵՇ սիրաք . օրհնողի զտէր , բարձրացուցէք զնա . որքան կարէք զի մեծագոյն է քան զամնայն գովութէ : Ավագուցանի եկդրանիւ . Հունաւորն ոչ կարէ ճառել զանքոյն . այլ ստեղծուածք են հունաւորք . ուրեմն ոչ կարեն ճառել զԱստուծոյ : Ցուցանի երրորդ՝ Որ ոչ ըմբռնի լիով . ոչ կարէ ճառիլ բոլորովին . այլ ած ոչ ըմբռնի լիով որպէս ցուցաւ ի վեր . ուրեմն ոչ կարէ ճառիլ բոլորովին : ԵՇ աստ ծանիր զղանաղանութէ ըմբռնելոյն և ճառելոյն . զի ըմբռնելն է իմանալ . իսկ ճառելնէ իմացուցանել . իսկ իմացուցանելն լինի բանիւք . և բանն բաշխնայ յանուանէ և ՚ի բայէ . զոր արտահանէ միտք մեր ՚ի ստեղծուածոց . որոց եղանակ նշանակելոյն ոչ յարմարի ստեղծողին . զի յորժամ ասեմք զնա իմաստոն՝ անշափ՝ անհուն՝ պարզ . թէպէտ սոքա և իրին են ՚ի յած , սակայն ոչ և կերպի մերոյ իմացման : Աստուստ սուրբն դիմնէսիոս ասէ բացականքն առաւել ընտանեցուցանեն զմեզ այ . բայց սակայն և ոչ բացասականաւն կարեմք զնա ճառել յատկապէս . այլ միայն անյատկապէս . ծանուցանելով թէ ոչ է ըստ իշխաք էիցու : Առարկիցես նախ՝ եթէ անճառելի է ած . ուրեմն ընդունայն խօսին գիրք սուրբք զնանմէ : Պատասխանեմթէ գիրք սուրբք իմացտկանութեան մերոյ օգնել

դիտեն , այլ ոչ բոլորովին ըմբռնել տալ , ուստի ոչ են ընդունայնք . այլ օգտակարք և լուսաւորք ամենոյն ածաբանութիւնք . Ասիցես երկրորդ՝ Երանեալքն կարեն ճառել զնմանէ , զի տեսանեն զնա . ուրեմն չէ անձառելի :  
 Պատասխանեմ բաժանելով զմեծագոյնք , կարեն ճառել զնմանէ՝ և չսփռ տեսուե իրեանց , ստորասեմ . և , որում պահանջէ առարկայն՝ բացասեմ . զի առարկայն է անհուն : Զո՞ր օրինակ եթէ ոք կամիցի վասրութիւն ծովուչափել ինքեամբ , այնքան կարէ չափել , որքան և մուտ տայ . և քան զոյն աւելի ոչ կարէ չափել : Եւ այս օրինակեցաւ ՚ի ջուրսն Եղեկիէլի , \* և չափեաց հաղար չափովն և էանց ընդ ջուրն ջուրյորդուե . և չափեաց հաղար չափովն և հարկանէր մինչեւ ցերանս ; Եւ չափեաց հաղար չափովն , և հարկանէր մինչեւ ցգօտին , և չափեաց հաղար չափովն , և ոչ կարէր անցանել զի յորդեաց ջուրն և : Աբդ ջուրն է ինքն ած . և այնմ , թողին զիս աղբիւրս ջուրց կենաց : Այլն այն չափող ջրոյն է մարդկային միտն՝ որ է չափն , չորլցս չափեալ եղեւ . յերիս չափմունս է անց . իսկ և չորորդն չկարաց անցանել : Երեք չափքն են նկարագրական , այլաբանական , և բարոյական ածաբանուեքն . և որս ածաբանք համարձակ անցանեն , բայց և չորսրդ չափն , որ է խոր-

Հըրդական ածաբանուին . յորում են յորդու-  
թիմք զինչուե՛ , նախասահմանութեան և եր-  
բորդական անձնաւորութեանն այ՝ ոչ կարեն  
անցանել . թէ պէտ չափ արկանեն երբեմն ՚ի  
վ՛ , ո՞ղ այրն այն : Այսպէս և երանեալքն ընդ  
երխս հազար չափն անցանեն , առաջին հազար  
չափնէ երանական տեսուին , երկրորդն տեսու-  
թիմ մարդեղութեան . երորդն տեսութիմ  
ներքին կերպից , ո՞ղի է պարզութիւնն , անփո-  
փուսութիւնն և այն : Բայց ըստ որորդ չափն ,  
որ է անչուի յորդուե՛ սոցին , ոչ կարեն անցա-  
նել , իսկ հազար չափն նշանակէ զկատարե-  
լութիւն այսոցիկ ամենից :

### Ե, մանութեան .

Առաքինի անձինք գոլով նման այ , այնքան  
գերազանց պատուի են , մինչ զի՝ ո՞ղ վ՛ գերա-  
զանցուե՞ն այ խօսիմք զնմանէ բացբարձականաւ ,  
հանգումաբար և զուբց այսպէս խօսի առաքենք  
զորոց մի ՚ի նոցանէ ոչ արժէ ։ Եւ թէ թը-  
պասաւի սրտի , հոգւոյ , և ոչ մարմնոյ . Որոյ  
գովուի ոչ ՚ի մարդկանի է այլ յայ : Ասո-  
ւուստ յայտ յանդիման երեխ թէ՝ ո՞ղ մարդ ոչ  
կարէ զգովուէ այ ճառել լիապէս , այսպէս և  
ոչ զառաքինեաց : զի են ածանմանք , վ՛յ զար-  
մացաբար ասէ սըն Գրիգոր նարեկացին , և որ-  
քան մարդ է զմարդն այ նմանեցուցանել ե-  
րեսք պարզ և անպատկառելիք ! և այն :

**Գլուխ Երեխառանելորդ :**

Յաղագո նմանաթեանց՝ որի արքականին յանշատիպատե-  
նէն Աստուծոյ :

Արդ՝ փոփոխութիւնն լինի շարժմամբ, վա-  
սյն ըստ որքանուե տեսակաց շարժման՝ և տե-  
սակ փոփոխուե : Եւ զշարժմանէ ասացաք ՚ի  
վեր, վայն սակաւուք անցցուք և ըստ այս  
ճառ : Արդ՝ ըստ վեց տեսակաց շարժմանց ելոց,  
վեց են և տեսակք փոփոխուեց, նախ՝ յուչ գո-  
լոյ ՚ի գոլ, երկրորդ՝ ՚ի գոլոյ յուչ գոլ : Երրորդ՝ ա-  
ճումն, չորրորդ՝ նոււազումն . հինգերրորդ՝ տեղական  
փոփոխումն . վեցերորդ՝ այլայլուե : Սոցա եր-  
կուք առաջինքն են ըստ գոյացուք . երկուքն  
հետեւեալք ըստ քանակուք . հինգերորդն ըստ  
պիչն, և վեցերորդն ընդ որակութեամբ :

**Եպտէտղութիւն :**

ԱԾ է անփոփոխ ըստ վեցեցունց տեսակացք,  
ցուցանինախ վկայութ սրբ գրոց, ամենեքեան  
ուղ զձորձս մաշեսցին, և ուղ զգերարկուս փոփո-  
խեսցես զնն, և փոփոխեսցին . բայց դու նոյն  
ես: և ես եմ որ եմ, յա անփոփոխ ՚ի նոյնուեն: Յակոք, \* որում չիք փոփոխումն և կամ շրջե-  
լոյ ստուեք, զի ուշ ստուերանայ փոփոխմամբ  
պայծառուել լրաց ածութեանն, ըստ այնմ† ես

\* Յակ, 1, 17. † Մատուաք. 3, 6 :

ած ոչ փոփոխիմ : Ապացուցանի երկրորդ բա-  
 նիւ, պարզ ներգործութիւնն անմասն ի կարո-  
 ղուէ ոչ կարէ փոփոխիլ, այլ ած է պարզ ներ-  
 գործուէ անմասն ի կարողուէ , ուրեմն ոչ կա-  
 րէ փոփոխիլ : Փոքրագոյնս ցուցաւ ի վերոյ ի  
 ճառն պարզ ներգործութեանն այ : Ցուցանի  
 մեծագոյնս , որ փոփոխի ոչ է պարզ ներգործու-  
 թիւն , այլ ունի զկարողուէ փոփոխման , որով  
 փոփոխի , այլպարզ ներգործութիւնն անմասն  
 է ի կարողուէ , ուրեմն ոչ փոփոխի : Ապացու-  
 ցանի երկրորդ՝ ամենեին անկարօտ էակնէ անփո-  
 փոխ , այլ ած է ամենեին անկարօտ , ուրեմն  
 է անփոփոխ : Մեծագոյնս յայտ է , զի ամ փո-  
 փոխումն է վս կարօտուե իրիք ոոպ ասէ Արիս-  
 տոսէլ : Ցուցանի փոքրագոյնս մակածութ , ած  
 ոչ կարօտի պատճառո՞՝ զի իցէ , և տեղւոյ՝ ուր  
 լինիցի , ոչ ենթակրոցի , և ոչ տեսակի , զի ոչ է  
 նիւթ , և ոչ այլ ինչ էակի . զի է լիութիւն գո-  
 լց , ուրեմն է ամենեին անկարօտ , և հետեա-  
 պէս անփոփոխ : Ապացուցանի երդ ի բաժան-  
 մանէ . որ ոչ փոփոխի շը տեսակաց փոփոխման՝  
 է անփոփոխ , այլ ած ոչ փոփոխի ի շը տեսակաց  
 փոփոխման , ուրեմն է անփոփոխ : մեծագոյնս  
 յայտ է , ցուցանի փոքրագոյնս , զի ամ փոփո-  
 խումն կամ լինի շը գոյացուե , կամ շը պատահ-  
 ման . շը գոյացուե , ոոպ յոչ գոլոյ ի գոլ . և  
 հակադարձաբար . այլ սյս ոչ անկանի ի յած :  
 զի է անսկիզբն և անվախճան : Իսկ շը պատահ-

ման , ող աճումն և նուաղումն , և այս ևս ոչ  
անկանի յած . վազի է ամենակատար : Իսկ ա-  
մենակատարն ոչ աճէ և ոչ նուազի . զի թէ  
աճէր , ուրեմն անկատար էր ող ասէ Պլոկդ :  
Դարձեալ շուտ այլայլութեան ևս ոչ է յած ,  
զի ասէ երեւմիաս , զերկինս և զերկիր ես լնում :  
Դարձեալ ըստ այլայլութեան ևս ոչ փոփոխի .  
քանզի այլայլութիւնն յերիս զօրութս ենթա-  
կայաւորի , նախ՝ ՚ի զգայական բաղձանս , որ-  
պիսիք են կիրք հոգւոյն , ՚ո ուրախութիւն և  
տրտմութ . յոյս և յուսահատութ , սէր և ատե-  
լութիւն , երկիւղև համարձակութիւն , և այլն .  
յորոց ոմանք հային ՚ի ցանկական մասն , և ո-  
մանք ՚ի ցասմնականն , այլ այսոսիկ ոչ ասին  
զայ եթէ ոչ այլաբանորէն և անյատկապէս .  
զի արմատ սոցա , որ է զգայական բաղձանքն ,  
ոչ է ՚ի յած . վնկ ոչ կարեն ասիլ զնմանէ յատ-  
կապէս : Երկրորդ՝ յիմացական մտախն , որ-  
պիսի է գիտութիւն և մոռացումն , որք ոչ  
կարեն բնաւին լինիլ ՚ի յԱստուած :

Երրորդ՝ յախորժական մասին , ՚ո ՚ի կամն .  
ողի է վճռելն և ստրջանալն . և այս ոչէ ՚ի յած :  
Առարկիցեամ Շգէմ առաջնոյն , զայ ասի ննջել՝  
յառնել՝ գնալ՝ գալ՝ ուրախանալ և տրտմիլ և :  
ուրեմն փոփոխի : Պատասխանեմ թէ այսո-  
քիկ ասին այլաբանորէն , զի ննջելն նշանակէ  
անտես առնելն . յառնելն՝ յօդնութ գալն , ող  
սրբն Ստեփաննոսի . այսպէս և այլն , զորմէ

տեսցես ՚ի Դիոնէսիոսի գեղեցիկ մեկնեալ։ Առարկիցես՝ Ը գէմ երկրորդին, սաղմոս, մինչև  
 Երբ տը մոռանաս զլս խսպառ։ Պատասխանեմ  
 ող ՚ի վերոյ, և աստ ծանիր զզանազանութիւն  
 գիտուեն այ և մեր, զի գիտուին այ անփոփոխ է  
 և անմոռաց, իսկ մերն ներհակն։ Եւ պատ-  
 ճառն է, զի գիտուին այ յընտանի առարկայէ  
 ծնանի, այսինքն ՚ի յէուէ իւրմէ, վայ ող էուին  
 այ է անփոփոխ և գոյացական, նոյնպէս և գի-  
 տուին։ իսկ մերն ՚ի յօտար առարկայէ ծնանի  
 վասն այն է պատահական, և հետեապէս փո-  
 փոխական։ Եւ աստուստ ՚ի նորաստեղծ իրաց.  
 ած ոչ ստանայ զնոր գիտուէ, զի ՚ի յաւիտենից  
 գիտէ զնոսա : Առարկիցես Ը գէմ երկրորդին  
 որ սորջանայ է փոփոխական, այլ ած սորջա-  
 ցաւ առնել զմարդն, և սաւուզ կացուցանել ՚ի  
 թագաւոր։ Պատասխանեմ թէ այսոքիկ՝ իմա-  
 նալիէ անյատկապէս և ոչ յատկապէս, ող ՚ի  
 մեզ լինի, և պատճառն է, զի ած գիտէ զամ  
 պարագայս իրին։ Վակ ոչ զգայ զապաշաւանս  
 ներքսապէս յորժամ պատահի, այլ այնող ցուցա  
 նէ մեզ, իսկ մեք վա այն զգամք ՚ի ներքուստ ըզ-  
 ցաւ, զի ոչ կարեմք քննել լիով զպարագայս իրին։  
 Ասիցես երկրորդ՝ ած փոխեաց զվճիոն Նինուէի  
 և եղեկիայի, ուրեմն է փոփոխական։ Պատաս-  
 խանեմ թէ՝ ած երեմն բացարձակապէս վճռէ,  
 ող զմարդեղուին մարդարէիւք, և այս միշտ կա-  
 տարի, իսկ երբեմն թէականաբար և այս ո՛

կատարի . զի համաձայնին նմասորին պատճառ-  
քը , ուստի եթէ նինուէ ոչ ապաշխարէր . և  
Եղեկիա ոչ ոլոթէր , կատարելոց էր բանն , այլ  
զի արարին՝ այն իսկ էր կտմքն Աստուծոյ :

Ամենութեան :

Յայսմմասին նմանիմք այ բարոյականապ ,  
մինչ լինիմք անփոփոխ ՚ի յառաջինուշն և հաս-  
տառ ՚ի յառաջադրութեան ուստի ամէ հարցէք ըզ-  
յաւիտենական շաւզոց ան , և գնացէք Շնա :  
Եւ տըն ամէ , որ յարտուեեօցէ խսպառ , նա կեց-  
ցէ , զինչ է յարատեւուն , և յաւիտենական շա-  
փոյն այ , եթէ ոչ բարոյական իմն անփոփոխու-  
թին ՚ի բարի յառաջադրութեան : Այսպէս ան-  
փոփոխ էր ՚ի բարի յառաջադրութեան Սիմեօն սիւ-  
նակեացն , որ ութսուն ամ անտանելի ճգնութ-  
եկաց ՚ի միում առան . և սբն Գրիգոր լուսաւո-  
րին , որ երեքտասան ամ՝ ՚ի խոր վիրապին տե-  
եաց անփոփոխ մոօք շնորհօքն այ , այսպէս և  
երանելին Յոր ՚ի չարաչար կեղմն անկեալդը-  
նիւր ՚ի բացի , և բազում ժամանակ անցանէր ՚ի  
վը նը ող ասէ սբ գիրն , և ինքն ոչ փոխէր  
զմիտս իւր յանզգամութ առ ած : Այսպիսիքս նը-  
մանին արեգական , որ անփոփոխ կայ մնայ յիւ-  
րում պայծառութ , և այնմ՝ մարդ սբ ներ  
իմաստութ իւրում կայանայ որպէս զարեգակն ,  
Այսպիսիք են մանաւանդ հոգեառ կարգաւորքն ,  
որք անփոփոխ կան ՚ի կոչման իւրենց , յոր կո-

չումն կոչեցայք ՚ի նորն կացըլք : Խոկ յիմարքն  
կըկնակի աննման գտանին այ յայամ մասին, նախ՝  
փոփոխելով ՚ի բարի յառաջ սդրուեց իւրեանց,  
և ՚ի կոչեանէն՝ յոր կոչեցսն հանգոյն լուսնի.  
՛լ այսմ, իակ յիմարն ող լուսին փոփոխի : Երկ-  
րորդ՝ ՚ի չարիս անփոփոխ մնալով, ող ասէ սթ  
Գրիգոր նարեկացին, չարս անփոփոխ : Այս-  
պիսիքս նմանին սատանայի, որ կայ մնայ անփո-  
փոխ յիւրում չարուեց : Յօր, սիրտ նը սալացել  
է իբրև զվեմ դարբնաց անշարժ, զայսպիսեաց  
ասէ, ծերասջիք ՚ի չարութ : Եւ դանիել, ֆա-  
ցեալ աւուրբք չարուեց : Եւ տէրն ասէ, մեռա-  
նիքիք ՚ի մեղս ձեր : Ընթերց և յապաշխարանն  
մեր, մասն առաջին, գլուխ մետասաներորդ :

(Գլուխ Չորեափառոնէրբորդ :)

Յուղագո նմանութեանց ՚ի նախագուղաժարութեանցն)

Ասորուծոյ, բաժանեալ յերես պրախ :

Պրախ Ասոր Զին :

Յուղագո լէ նախագուղաժարութն էրաց . յիմացականու-  
թեանն Ասորուծոյ զինը էն և զիարդ էցէն :

Գիտելի է, զինախագաղափարքն իրաց ոմանք  
ասեն թէ են յէռէն այ, և այլք թէ են յիմացա-  
կանուէն այ, բայց նոյն են, զի մինչ նոյն է  
էռէն և իմացականուէն իրականապէս, ոչ գոյ  
՚ի նոսա զանազանութ, եթէ ոչ ՛լ բանի միայն :  
Եւ վասն իրական նոյնութեանն ասի նախա-

գաղափարունք իրաց են ի յած , ոոպ և մակամը տածական տեսակք ասին գոլ ՚ի մարդն , թե պէտ են ՚ի հոգին . ըստ այսմ , գիտէր ինքն զի՞նչ կրէր ՚ի մարդն : մարդով զհոգին նշանակեալ կամ բոլորովն զման . զի նոյն է ասել կրէ ՚ի հոգին , կամ ՚ի միտն :

### Ի Եղագացութեան Առաջնութեան :

Նախագաղափարքն\* իրաց են նախկին տեսակք իրողունք ՚ի միտս այ տպաւորելք ՚ի յաւիտենից , յայն սակս կոչին յառաքելոյն յաւիտեանք : Հաւատովք իմանամք հաստատել զյաւիտենս բանին այ , յաներևութից զերեւելիս եղել :

\* Քանիդ Ասպուած ոչ յառաջ է մանալ սկսու , այլ առեւ , և ոչ էր քայլում Ասպուած ոչ առեւէր պեսաչոց սկզբանեւ մը լնու եղելու : Deus enim non prius cœpit , quam agere ; nec unquam (tempus) fuit , quando non ageret , (vel ideis) ipsis ab origine cum illo existentibus.—*Philo de Provid.* Or. 1. p. 5.

Ըստ այս և Եղիշէ 42, Էջ . 30. ” Ու եւեւ յետոյ է մայու և արար . այլ Տինչ չեւ արարեալ էր նորա՝ ՚է չանուի գիտութեան իւրում պեսոնէր զարարածս : Որպէս այժմ Տինչ չեւ է գործեալ մարդոց զբարի և զշոր , Ասպուածոց շաշորնէ է անդրոցն մարդոցն . առյնուն և շայնձամն , Տինչ չեւ էր արարեալ զանցան . այլ չու բգեալ և յարմարեալ չայն տառաջն է նոր իւրաքանչիւր մասանցն պեսոնէս , և Տարդ քան և հրեշտակաց պեսոնէս և որ ՚է պեսոնէն զննելոց էին :

Աներեսոյթքն են յարացոյցքն և նախագաղաթա-  
 փարքն աշխարհի ՚ի միտս այ անփոփեալք , կամ  
 յեռեն այ վերտափուղլեալք . զայս և նախկին փե-  
 լիսոփոյք ծանեան , ուստի տոէ պղստոն ՚ի փե-  
 տովսի , “Եթէ բարեպէս կեցեալ իցեմք , յել  
 աստեացս վայելեսցուք ՚ի մեծապէս անձկալին  
 մեր՝ ՚ի ճշմարտութեան . տեսանելով զառաջին  
 էն , յորում են կենդանի և նկարագրել տեսակք  
 ամ էից ՚ի վայելման ջինջ իմաստութեան ած-  
 եղէն լուսոյ : ” Ցուցանի սոյնս նաև բանիւ .  
 ամ իմացական առնօղ , առնէ ըստ ձեակերպուե-  
 մուաց իւրոց . այլ ած է իմացական առնօղ , ապա  
 ուրեմն առնէ . զամենայն ըստ գաղափարուե մուաց  
 իւրոց , փոքրագոյնս յայտ է ցուցանի մեծա-  
 գոյնս . կատարելսպէս առնելն պատշաճի իմա-  
 ցական առնողի , և մանաւանդ գերագոյն իմա-  
 ցականին , որ է ած . այլ առնելն ըստ նախսյղաց-  
 ման մուաց կամ ըստ ձեակերպուե , կատարելսպոյն  
 է քան ըստ դիպուածոյ , զի այս պատկանի խելա-  
 ցընորից և արբեցողաց , ուրեմն պատշաճի առ-  
 նելն ըստ նախսյղացման մուաց կամ ըստ նախաձե-  
 ացման իմացական առնողի , և մանաւանդ գե-  
 րագոյն իմացականին : Ցուցանի ևս օրինտկաւ ,  
 զի ճարտարապետն տան նախ յղանայ զձեւ տանն ,  
 ՚ի միտս իւր , և ապա ըստ այնմ ձեռյ կազմէ զտունն  
 այսպէս և ամենայն արհեստաւորք : Աստուստ  
 իմանի զանազանութ բանին , որ ասէ յաշխարհի  
 էր և աշխարհ նովաւ եղեւ , զի առաջին հաւն

իմանին նախագաղափարքն ո՞ի ի միտս այ , իսկ  
 երկրորդին իրական ո՞ս , ապա թէ ոչ նախքան  
 զինին ո՞ի , զիարդ ասի թէ յօ՞ի էր : Եւ աստ  
 ծանիր զզանաշամուն նախագաղափարուեցն) և  
 դպրուե կենաց , զի նախագաղափարքն հասա-  
 րակ է չարաց և բարեաց . իսկ դպրուեն կենաց  
 է միայն բարեաց . քանզի ոչ միտյն բարեաց նա-  
 խագաղափարքն է ի յած , այլ չարաց և դի-  
 ւաց . բայց ոչ ոոպ չարք , այլ ոոպ բնուեք իրաս-  
 տեղծք : Երկրորդ՝ զի ի նախագաղափարացն  
 բազումք ջնջին , բայց ի դպրուեն կենաց ոչ ոք  
 կարէ ջնջիլ , ջնջիլ իմա աստ զլսութելն , իսկ գրել  
 ի դպրուե կենաց , զընտրելն , զորմէ տեսցես  
 ստորև ի ճառն նախասահ հմանուե . զո՞ր օրինակ  
 հայրն ի նախկնում կիտոջ զգաղափար ամենայն  
 որդւոց իւրոց ունի ի միտս իւր . իսկ երկրորդում  
 կիտոջ զբարիսն ունի յընտրուե , իսկ զչարմն ի  
 խոտման և ի մոռացման : Այսպէս և ած , յա-  
 ռաջնում կիտոջ կրէ զամենեցունց նախագաղա-  
 փարս , իսկ յերկրորդում կիտոջ զչարմն ունի ի  
 մոռացման . իսկ զբարիսն յընտրուե , որ ասի  
 դպրուե կենաց : Առարկիցես նախ , եթէ չգու-  
 ցէ ինչ , և ոչ նախագաղափար կարէ գոլ . այլ  
 նախքան զստեղծումն ոչ գոյր ինչ . ուրեմն և  
 ոչ նախագաղափար , փոքրագոյնս յայտ է ցուցա-  
 նի մեծագոյնս , զի նախագաղափարքն ոչ այլ  
 ինչ են , եթէ ոչ նախկին տեսակ իրողուեց . ապա  
 յոչ գոլ աեսակաց և ոչ նախագաղափարք կարեն

գոլ։ Պատասխանեմքաժանելով զմեծագոյնդ։  
 ոչ կարեն գոլգաղափարքն թարց իրաց, ՚ի ըս-  
 տեղծեալ միտս, ստորասեմ. ՚ի յանստեղծ իմա-  
 ցականուեն այ, բացասեմ. զի իմացականուեն ոչ  
 կարօտի արտաքին իրաց, զի է և ինքեան պըտ-  
 ղաբեր. և յառաջածիչ անհուն տեսակաց : Ա-  
 ռարկիցես երկրորդ՝ երեկի թէ և իմացականու-  
 թեն մարդոյ կարէ մակամտածել և վերաստեղ-  
 ծուլ զզանազան տեսակս որք իրօք ոչ են, որպէս  
 զեղթերուաքաղս և զոսկեղէն լեառն : Պատաս-  
 խանեմթէ անհրարին է ստեղծեալ մտաց կեր-  
 պարանել զնոր տեսակ, զի յայն սակս ասէ. Ա-  
 րիատոտէլ, թէ ոչ ինչ է յիմացականուեն եթէ ոչ  
 նախ լեալ իցէ ՚ի զգայուեն . սակայն կարէ զսե-  
 սակս միմեանց բաղդատել, և կազմել զեղթերուա-  
 քաղս և այլն : Առարկիցե՞ս երրորդ՝ դպրուեն  
 կենաց ոչ սլատկանի ծնջիլն, զի անդեղթք են ընտ-  
 րուեն այ . այլ դասիթ ասէ, ծնջեսցին նոքա  
 ՚ի դպրուե քումմէ կենաց : և Մովսէս ասէր,  
 ապա թէ ոչ, և դիս ընթեալ ՚ի գրոյն կենաց, յոր  
 գրեցեր : յորոց երեկի թէ՝ գիրն կենաց է նախա-  
 գաղափարքն, որք կարեն խոտիլ : Պատասխա-  
 նեմթէ գիրն կենաց ոչ է նախագաղափարքն,  
 այլ է մատեանն ընտրելոց համանմանեւուլ ՚ի նա-  
 խագաղափարըն : Արդ՝ առ բանն դաւթի ասե-  
 լի է թէ՝ իմանի ասել ոչ գրեսցին . ո՛պ յարէ և  
 ՛ը արդարս քո մի՛ գրեսցին, լու այնմ է և այն,  
 ելցեն արտաքս շունք և դողք, լու ոչ մտցեն .

իսկ մավսես զանկարելին յառաջադրէք, զի ի  
գութ շարժեսցէ զած ՚ի վերայ ժողովրդեան՝  
որոց բարկացեալ էք :

### Կ Յ Ա Ն Պ Ա Ր Ե Ա :

(Բարոյականապէս մեք պարտիմք նմանիլ  
նախագաղափարին մեր, որ է յեռեն այ, քան-  
զի յորժամ զուարձացեալ էք զտիեզերս բովան-  
դակել, և ուրախ լինէք Շ ստեղծումն որդւոց  
մարդկան, խորհուրդ ՚ի մէջ առեալ աստց, ա-  
րասցուք մարդ Շ պատկերի մերում : Եւ այսու  
խորհրդեամբ զնախկին տեսակ մեր յինքենէ է-  
առ, ո՞չ թէ որքան մեծ է պատիւ մարդոյն :  
զայլ ստեղծուածոց տեսակն ՚ի զօրուե՛ մտացն  
յառաջէած, իսկ զգաղափար մարդկան յինքե-  
նէ արտահանէ, արասցուք մարդ Շ պատկերի  
մերում : Արդ՝ թէ ուղի իցէ տեսակն մեր յեռ-  
թեանն այ, կարէ ասիլ թէ՝ այնպէս է, որպէս  
ամպատուիրանքն այ կարեն զսրդարել, զի ած  
զմարդն արար ուղիղ Շ ուղղուե տեսակին որ  
յինքեան, բայց մինչ նք ինդրեցին զխորհուրդս  
չարուե . յաճախեաց զպատուիրանս իբր քանո-  
նաւ ուղղուե ածել յառաջին ուղղուին, զի հա-  
մատեսակ գտցի նախագաղափարին իւրոյ : Այս  
պիսի համատեսակ գտաւ դաւիթ, զորմէ ասէք  
գտի զայր մի զորդին յեսսեայ Շ սրտի իմոյ, որ  
արասցէ զամզկամն իմ : Զոր օրինակ երբ գա-  
ղափար ուկերչաց ամբողջ ձուլէ զձուածոյն

յայնժամասի ը գաղափարին ձուլեալ, այսպէս  
յայնժամասի մարդն ընսիսագաղափարին իւրոյ  
գտեալ, երբ եցէ ը ամի կամացն այ առհետե-  
եալ: Իսկ մեղաւորքյոյժ օտարացեալ և աննը-  
ման գտանին ՚ի նախագաղափարէ իւրեանց .  
զորոց ասէ Երեմիաս ; Ես տնկեցի զքեզ որթ-  
ամենեին պտղաբեր և գեղեցիկ, զիարդ գար-  
ձար ինձ ՚ի գառնուի որթգ օտարացեալ: Եւ  
մարդքէն ասէ, օտարք եղեն մեղաւորք ՚ի մօրէ:  
յայնժամ մանուկն օտար լինի ՚ի ծնէ, երբ չիցէ  
նման հօրն . զինչ է նախագաղափարն , եթէ  
ոչ ծնօղ մեր , ը տեսակի որոյ պարտիմք ծնանիլ  
՚ի կեանս բարիս , բայց մինչ ապականիմք մեղօք՝  
օտարանամք ՚ի նմանէ : Հապա , գուն գործել  
նկարեսցուք զսկզբնատպին մերոյ զգեղեցկուի  
բարի վարուք ՚ի յոգիս մեր :

### Պրոէ Երեմիա:

Յաղագս Նմանութեան՝ որ արտուհունի ՚ի գիպութենէն  
Ապուծոյ :

Յիմացականուե մերում գտանին հինգ ունա-  
կովթինք . այսինքն առաջին ունակուիք սկըզ-  
բանց , երկրորդ՝ իմաստուի, երորդ՝ գիտութի,  
չորրորդ՝ արհեստ , հինգերորդ՝ խոհեմուի; Այս  
չորեքեանս ՚ի մեզ կախին զառաջնոյն, ֆյունա-  
կուէ սկզբանցն ; Եւ զի սա է արտաքուստ ՚ի  
մեզ , վամն այն ամ իմաստուիք և գիտուեք ՚ի

մեղ են հունաւորք , փոփոխականք , և նսեմսւ-  
գոյնք , զի ոչք լիսին յէ ու է հոգւոյն , այլքաղին  
յարտաքին առարկայից : Այլի յած ներհակն է  
տեսանելի , յայն սակս իմաստութ և գիտութիւն  
յած ոչ են ունակականք , այլպարզ ներգործա-  
կանք , որք նշանակեն զպարզ ճանաչումն էից  
անհապէս :

### Եպ Հոդո-Բեն :

Աստուածային գիտութին կամ ճանաչումն ու-  
նի չորս գերազանցութս . նախ՝ զի է անհուն ,  
երկրորդ՝ անփոփոխ , երրորդ՝ կատարեալ , չո-  
րրորդ՝ համանգամայն . այս երեքեանս հետե-  
ին առաջնոյն , քանզի մինչ իցէ ածային ճանա-  
չումն անհուն , հետեւապէս լինի և անփոփոխ և  
կատարեալ , և համանգամայն : Ցուցանի առա-  
ջին մասն նախ՝ վկայութ նբ գրոց , սաղմոս ,  
իմաստութ նորա ոչ գոյ չափ . և առաքեալն ,  
ովլիսորք իմաստութ և գիտութին այ : որովցու-  
ցանի անհունութն : երկրորդ՝ ցուցանի բանիւ ,  
որոյ իմացականութն է անհուն , նորին և իմա-  
ցումն . այլ այ իմացականութն է անհուն , զի են-  
թակայանայ յան հուն էու էն , ուրեմն և իմացու-  
մըն : Ցուցանի երկրորդ մասն , թթ թէ է անփո-  
փոխ , և նախ սբ գրով , երգ երգոց . աչք նորա  
իբրև զաղաւնոյ լուացեալ կաթամբ , նստեալ ՚ի  
վը լիութ ջուրց : զինչ ասէ , զի նստել բառդ  
աշաց ոչյարմարի , յայտէ ուրեմն , զի այսու բա-

ցայսայտէ մեզ զանփոփոխութէ տեսուեն այ , վկ  
 զի նստիլ զհանգստութէ և հաստատութէնշանակէ  
 Եւ ամ իմաստութէ իի տնէ այ է , և շնմա եղե  
 միշտ , և յառաջքան զյաւիտեանս : յորմէ այս-  
 պէս ձեռնարկեմք , յաւիտենական և միշտ էակն  
 է անփոփոխ , այլ իմաստութէ այ է յաւիտենա-  
 կան և միշտ . և այս յայտ է ոչ միայն վկայութ-  
 ոք գրոցդ , այլև բանիւ ոող ցուցեալ է . ապա  
 ուրեմն է անփոփոխ : Ցուցանի երորդ մասն , թթ  
 թէ է կատարեալ . և առ ցուցումն սը նախ ծա-  
 նիր , զի իմացումն միշտ երկու կերպիւ է անկա-  
 տար , նախ՝ զի մերթ աճէ , և մերթ նուժազի .  
 երկրորդ՝ զի ոչ կարէ որոշ և պարզ ըմբռնել զա-  
 մենայն : Եւ պատճառ սը է կրկին . նախ՝ զի է  
 հունաւոր . երկրորդ՝ զի ոչ ունի յինքեան զտե-  
 սակս իրաց բնականաբար : Աստուստ յայտ յան-  
 դիման երեկի թէ կատարեալ իմացումն է այն՝  
 որ ոչ աճէ և ոչ նուազի , և զի որոշ և պարզ ըմ-  
 բռնիցէ ոչ միայն զտեսակս իրաց այլև զան-  
 հասս : Եւ արդ՝ թէ շն այսու տարազու իցէ  
 կատարեալ ածային իմացումն : Ցուցանի նախ  
 վկայութ սք գրոց , աչք տն լուսաւորագոյնք  
 են քան զարեգակն : Արդ վասն էի՞ բերէ զա-  
 րեգակն օրինակ , զի ցուցեէ թէ ոող լոյս նորա  
 ոչ աճէ և ոչ նուազի , այսպէս և ոչ լոյս իմաց-  
 մանն այ : և թէ իցէ որոշ ըմբռնող զամ . ցու-  
 ցանէ սառընս , որ նստիս իի քրոբէս և հսցիս  
 յանդունդս : տես թէ ոող միով բանիւ յայտ-

Նեաց զանձային զամենատես զօրութն , զի որ  
 ՚ի քերորդէից հայի յանդունդս . տեսանէ ապա-  
 քէն զամենեսեան որ ՚ի միջոցիս : և առաքեալն  
 հզօր է բանն այ և աղդու , և անցանէ մինչեւ  
 ցորոշումն շնչոյ և հոգւոյ՝ և քննիչ է խորհր-  
 դոց : վն այն ոչէ մտածելի և ասելի ով խրա-  
 տում սիրաքայ , թէ զինչէ անձն իմ յաշա այ ,  
 առ այսքան բազմութ մարդկան : զի ահա եր-  
 կին և երկնից երկին և ամ որ ինչէ ՚ի սմա ո՛չ  
 են ծածկեալ յաչաց նը : և պատճառն է զի  
 մինչ իմացումն այ է ամենակատար , ոչինչ պար-  
 տի վըիսկիլ ՚ի տեսութ նը : Ցուցանի և չորորդ  
 մասն , նախ՝ գրով , երկրորդ՝ պատճառաւ , ֆ  
 թէ ածային գիտուին է համանգամայն , զի  
 ասէ առաքեալն . ամինչ մերկապարանոց է ա-  
 ռաջի նը , ֆ մերկ և պարզապէս յայտնի . յորմէ  
 ցուցանի թէ զամն տեսանէ համանգամայն և  
 իմանայ . և ոչ մի զինի միոյ , ոնդ իմացումն մեր :  
 Ցուցանի երկրորդ՝ բանիւ , իմացումն պարզ  
 ներգործական , իմանայ համանգամայն . իսկ  
 այ իմացումն է պարզ ներգործական . ապա  
 ուրեմն իմանայ համանգամայն : բան մեծա-  
 գումին է , զի ոչ իմանի , եթէ ոչ ներգործութ-  
 իմացականին , ապա եթէ իցէ իմացումն միշտ  
 ՚ի ներգործութ , և ոչ ինչ ունիցի յունակութ ,  
 որքան զօրէ իմանալ , իմանայ համանգամայն .  
 իսկ եթէ իցէ անհունազօր՝ իմանայ զամ հա-  
 մանգամայն : իսկ պատճառ փոքրագումին է ,

զի ածային իմացումն զտեսակս իրաց ունի յինքենէ և ՚ի ներքուստ , և ինքն ոչ ՚ի կարողութեառ առ այնս . զի ոչ ինչ կարողականութ գոյ ՚ի յած , ապա թէ ոչ լինէր դադարումն իմացմանըն այ , որ է անդէպ , վաստակած ասէ իմաստունն քան զամ շարժումն շարժագոյն է իմաստութ , և թէ է մշտաշարժ . ֆ միշտ ՚ի ներգործութե : զոր օրինակ . եթէ արեգակն իցէր իմացական էակ , և լոյն նը իցէր իմացումն իւր . յորքան վայր տարածանէր լոյն , այնքան միջոցի եղեալն իմանայր միանգամայն : Առարկիցե՞ս նախ թէ ած նախքան զլինին էից , տեսանէր զնանախ նախադադաղափարան . իսկ յետ որոյ եղեն տեսանէ զնան ՚ի յատուկ սեռի և տեսակի իւրեանց որ է փոփոխումն իմացման : Պատասխանեմթէ սյոյ ոչ կացուցանէ ճշմարիտ փոփոխումն . վազ զի՞ զոր օրինակ գու , որ միանգամ ունիս ՚ի քեզ տպաւորեալ զտիպ արեգական , կրկն տեսանելով զարեգակն մի՞թէ իմացումն քո փոփոխումըն կրէ , ոչ երբէք . այսպէս և ած ունելով քնականաբար տպաւորեալ յինքեան զտեսակս ամ էից , ՚ի ստեղծման ՚ի սեռս իւրեանց տեսանելով , ոչ երբէք փոփոխի :

+ Նմանութեան :

Յայսմ մասին թէպէտ գիտութիւնն իցէ ՛լէութեանն հունաւոր , սակայն բարոյականապէս կարեմք բերել ՚ի մեզ զնմանութ երից ա-

ռաւելունց գիտութեանն այ : Եւ նախ՝ զան-  
 փոփոխութիւնն . յորժամ անթարթ աշօք մը-  
 տաց խոկամք ՚ի տուէ և ՚ի գիշերի զօրէնս այ :  
 Եւ այսու նմանիսք քերովքէից գիտութեանն  
 որք անփոփոխ յարատեռութ զաչս իւրեանց բա-  
 ցեալ ակծիու հայէին առ տապանակն) : Արդ՝  
 բարոյական տապանակնէ մեզ անձաշունչն . առ  
 որ հանգոյն քրովքէից զաչս մտաց մերոց պար-  
 տիմք հանապաղ յառել : Իսկ որ յառեալ ՚ի  
 կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի և  
 ՚ի նմին կացցէ , ոչ եղև նա լսող մոռացունց ,  
 այլ առնօղ գործոյն . նա յառնելն եղիցի երա-  
 նելի : Երկրորդ՝ զկատարելութիւնն) : Արդ՝  
 այն է կատարեալ գիտութ յորդիս մարդկան ,  
 որ ունիցի զանցային գիտութիւնն , և ոչ որ մի-  
 այն փիլիսոփայականն . քզի փիլիսոփայականն  
 է ոտք նիւթ , իսկ անցայինն ոտք տեսակ . այլ ոտք  
 նիւթն ը ինքեան անկատար է և կատարի տե-  
 սակաւ ը արիստոտէլի ՚ի գիրս Փիզիգային ,  
 այսպէս և փիլիսոփայականն ը ինքեան է ան-  
 կատար է և կատարի անցայնովն : Ուստի ասէ  
 իմաստունն , թէպէտե իցէ ոք կատարեալ յոր-  
 դիս մարդկան , և առ ՚ի քէն իմաստութենէդ  
 թափուր , ոչ ինչ համարեսցի : զ՞ր օրինակ ա-  
 րիստոտէլ յաչս ՚ի կատարեալ է . իսկ յաչս այ  
 ոչ ինչ համարեալ : Ածային գիտութիւնն իմա-  
 գհաւատն , զյոյս , և զսէր : Երրորդ՝ զհաման-  
 գամայն տեսութիւնն . և այս նմանուի լինի ՚ի

վերին գաւառին՝ յորժամ արժանանամք շնորհուած ամսանել զեռվական ամենագեղ . և յայնժամ միտքն մեր պայծառանայ հանգոյն իմացականութեանն այ յըմբռնել համանգամայն զամ ճշմարտութեան էից՝ որում և տենչամք : Քղի լինիմք հաւասարք հրեշտակաց՝ ող ասէտէրն : Իսկ շա վճռոց ածաբանից , հրեշտակք տեսանելով զեռվական այ տեսանեն ի բանի և իմանան համանգամայն . սակայն թէ երանեալք՝ թէ հրեշտակք՝ ըմբռնեն որքան յայտնէ ած , և ոչ անջօրէն՝ ող ինքն : Որում ըզմեզ և զաննախանձ ընթերցողսդ արժանի արացէ . ամէն :

### ՊՐԵԿ ԵՐԵՒՐԻ :

Յաղագո նմանութեանց՝ որչ արականենին ի նախապետութենէն Աստուծոյ :

Նախատեսութիւնն ի յԱստուած է կրկին , մինն բացարձակ , որով յաւիտենից նկատէ զամ ապառնիս : Երկրորդն է վերանկատմամք տու մեղաւորսն , որ և կոչի նախագիտութիւն . զերկրորդէս ոչ ունիմք փոյթ խօսելոյ յայսմիկ մատենի , վասն զի դիտումն մեր է զայնց ստորոգութեանցն Աստուծոյ միայն խօսիլ , յորոց կարէ բարոյական նմանութիւն ինչ արտահանիլ , ապա թողեալ զերկրորդն՝ բուռն հարցուք զառաջնոյն :

## Եղբայրութեան :

ԱՃ է նախագետ ամապառնեաց , և ոչ ինչ  
իր թարց նրին գիտութեանն կարէ լինել յ՛սի  
և գիպուածոց : Ցուցանի նախ՝ վկայութեաց գը-  
րոց , զի այսու միայն յատկացուցանէ աճ զինքն  
ի կրոց , թողեալ զայլ անբաւ գերազանցութեա-  
իւր , յասելն յեսայեայ . պատմեսցեն զայն որ  
լինելոց է , և ասասցուք թէ աճք են : Տէրն ,  
\*մինչչե հաւու խօսեալ իցէ երիցս , և : † ի ժա-  
մանակի յայսմիկ եկից , եղեցի որդի Սառայի :  
Եւ ո կարէ թուել զվկայութեաց որ զայսմանէ ,  
զի զբովանդակ ապառնիսն մարգարէիւք մեզ  
բացայայտեաց . նաև ոչ միայն զապառնիսն ,  
այլև զկարելիսն նա միայն գիտէ . և այնմ՝ † թէ  
ի սիդան եղեալ էին զօրունքն որք ՚ի քեզ եղեն  
վաղու ևս ապաշխարեալ էին : Ցուցանի եկրդ՝  
պատճառաւ . քզի իմացումն այ է յաւիտենա-  
կան , վն այն գիտէ զամապառնիս : Եւ այս  
պատճառ այսպս ձեւանայ , յափտենական իմա-  
ցումն իմանայ զամապառնիս , վն զի յաւիտենա-  
կանուեն ամ ժամանակք են ներկայք . և ոչ ինչ  
է նմ անցեալ կամ ապառնի : Երկրորդ՝ այսպս  
ցուցանի , նա միայն գիտէ զամ , առանց որոյ  
գիտուեն և կամաց ոչ կարէ լինել ինչ . իսկ ա-

\* Մատք . 26, 34. † Ծանոթ . 18, 14.

‡ Մատք . 11, 21.

ուանց գիտուեն և կամոց այ ոչ կարէ լինիլ ինչ .  
ո՞ղ ասէ իմաստունն \* քղի զիարդ լինէր ինչ ե .  
թէ ոչ կամէիր , ապա ուրեմն գիտէ տէր զինչ  
առնելոց է : Երրորդ այսպս ցուցանի , յորում են  
տեսակք ամ էից և որք էանալոց են , գիտէ  
զամ . իսկ ՚ի յած են տեսակք ամէից , ոչ միայն  
եղելոց՝ այլ և լինելեաց , ուրեմն գիտէ զամ :  
Մեծագոյնս ցուցանի օրինակաւ . զոր օրինակ ,  
եթէ երկինքն լինէր իմացական և անստեղծ ,  
և ՚ի նմա լինէին տեսակք իրաց , ումանք եղելոց  
և ումանք անլինելեաց և հանդերձելոց . գիտէր  
արդեօք զամ : Առարկիցեմ , թէ զապառնիսն  
իմանալ ոչ է յատուկ այ . քղի դեք , աստե-  
ղաբաշխք , և ումանք յանբան կենդանեաց ևս  
իմանան : Պատասխանեմ , թէ պէտ ընդունիմ  
թէ սք կերպիւն ինչ տեղեկանան ապառնոյ ,  
կամ՚ի պատճառէն զսլատճառելին մակարերե-  
լով ո՞ղ դեք . կամ թուաբանական արհեստիւն  
զշարժմունան աստեղաց հաշուելով , ո՞ղ աստե-  
ղաբաշխք իմանան զլսաւարումն արեգական .  
և կամ բնական ազդմամբ նախազգալով զշար-  
ժումն լուսաւորաց ո՞ղ անբանք ումանք , որով  
և նախապատրաստեն զինքեանս՝ որպէս ասի ՚ի  
գիրս կենդանեաց . սակայն սց գիտութիւնն է  
մասնաւոր և սեղմամբ լի . այլ բացարձակ գի-  
տել զապառնիսն միայն այ պատկանի :

## Ամառ-թիւն :

(Յայսմ մասին նախ նմանեցան այ մարդարէ-քըն, որք ՚ի հոգւոյն կրթեալք նախագուշա-կեցին զլսորհուրդս անձառս : Երկրորդ՝ նմա-նիմք և մեք բարոյականապէս ՚ի ձեռն խոհե-մուտ . զի սը է զբովանդակ ժամանակին ՚ի մեջ ածելյիշելով զանցեալսն, կարգաւորելով ըդ-ներկայս, և զգուշանալով յապառնեացն : Առ-այս յորդորէ զմեղ իմաստունն օրինակաւ մրջման \*երթ առ մրջիւնն ով վատ, զի նը ոչ գոյ հար-կադիր և ոչ ը տերամբք է, և պատրաստէ յա-մարայնի զիերակուր վ՛՛ ձմերայնոյ : Ընորհակա-լութիւնք մեծին այ . զի մեղ յայտնել է ՚ի ձեռն պայծառ լուսոյ հաւատոյն զապառնեաց և ըդ-հանդերձելոց որպիսութիւնն : Ապաքէն քան զմրջիւնն վատթարագոյն լինիմք, եթէ ոչ նա-խահոգայցեմք զկերակուրն որ մնայ ՚ի կեանսն յաւիտենից : †Երթայք գործեցէք մի՛ զկորստա-կան կերակուրն, այլ որ մնայ ՚ի կեանս յաւի-տենստկանս : Իսկ մեղաւորք կարի աննման գտա-նին այ յայսմ մասին . զի զկորստական կերա-կրովք զբաղեալ, և աստեօք շուստեալք, ոչ ինչ փոյթ է նոցա զհանդերձելոցն) :

**Գլուխ Հեղինակաները :**

Յաշտակա և մասնաւթեանց՝ որ արդահանէն ի զօրութեանց  
էն մայն Աստուծոյ, բաժանեալ յեօթն պրատի:

**Պրատ Աստուծին :**

Յաշտակա և մասնաւթեան՝ որ արդահանէն ի նախասահմա-  
նութեանէն Աստուծոյ:

Թռէ իցէ կամք ՚ի յԱՌ, ցուցաւ յառաջա-  
գոյն. այժմ ասելի է զզօրուեցն որք են առ ար-  
տաքս, որ նախասահմանութ, նախադինամութ,  
արդարութ, և այլք նմանք, զորոց համառօտա-  
պէս խօսեացուք արտահանելով զնմանութ ինչ:  
Եւ նախ՝ զնախասահմանութենէն զորմէ երեք  
ինչ ասելի է. նախ՝ թէ զինչ իցէ. երկրորդ՝  
թէ արդեօք նախադինամութիւնն զնիցէ ըդ-  
հարկ. երրորդ՝ թէ արդեօք թիւն նախա-  
սահմանելուց իցէ անվըէպ:

**Եպրատացութեան Աստուծին :**

Նախասահմանութիւնն է նախընտրութիւն  
ընտրելուց իմացական և բանական ստեղծուա-  
ծոց, և նախապատրաստութ փառաց նցին: Ասի  
նախընտրութ վն երկուց, նախ՝ առ ՚ի ցուցանել  
թէ նախասահմանն է յաւիտենական, ըայնմ՝  
յաւիտենական սիրով սիրեցի զքեզ:

\* Նիկողիմոս ։ մինչ չե էր ստեղծեալ քո ։ զի է-  
իր ՚ի ներքոյ թղենոյն , տեսի զքեղ : Ընտրեց  
զմեղ նախքան զլինին ՚ի : Երկրորդ՝ առ ՚ի  
ցուցանել թէ ընտրուին է գործ կամացն այ .  
վնզի իմացականն ճառագայթէ ՚ի տեսակն .  
իսկ կամքն ընտրէ զլաւն ՚ի վատթարէն . Շայնմ  
յառաջագոյն սահմանեաց զմեղ յորդէգրուեն ՚ի  
ձեռն յնի քնի շ հաճութեան կամաց իւրոց :  
Երկրորդ՝ ասի ընտրելեաց , զի ծանուսցէ թէ՝  
ած ոչ բացարձակ կամաւ վարի ՚ի նախասահ-  
մանելն , այլ կարգեալ . քզի կրկին կերպիւ նը-  
կատի կամքն այ , բացարձակ , և կարգեալ :  
Բացարձակ կամաւն կամելով զփրկութիւն ամե-  
նեցուն՝ զորս ստեղծ , զորմէ ասէ առաքեալն ,  
ած կամի , զի ամ մարդիկ կեցցեն և ՚ի գիտուեն  
ճշմարտութեան եկեսցեն : Բացարձակ կամացն  
այ ոչ ոք կարէ կալ հակառակ շ առաքելոյն ,  
եթէ կամեսցի սովաւ փրկել զամ , ոչ ոք կորն-  
չի . բայց զայս ամենողորմ կամք բարեխառնէ  
արդարութ կարգեալ կամքն . թոյլ չտալով  
զչարս և զբարիս փրկել . այլ միայն զբարիս ,  
զորս համաձայնեալ տեսանէ կոչման և շնոր-  
հաց : Յայն սակա դնի ՚ի սահմանին՝ ընտրելեց ;  
Երրորդ՝ ասի իմացական և բանական ստեղծ-  
ուածոց . զի ոչ միայն բարի մարդիկ , այլև բա-  
րի հրեշտակք են նախասահմանեցեալք : Զորդ

ըորդ՝ նախապատրաստուի փառաց ասի , զի ա-  
մէ առաքեալն զոր ակն ոչ ետես և ունկն ոչ  
լուսաւ , ած պատրաստեաց սիրելեաց իւրոց : Եւ  
թէ՝ յայտնի արասցէ զմեծուի փառաց իւրոց  
՚ի վը անօթոյն ողորմուե զորս պատրաստեաց ՚ի  
փառս . աստուստ և չարաց նախապատրաստել  
է տանջանք : Երթայք յինէն անիծեալք ՚ի  
հուրն յաւիտենական . Եւ թէ՝ համբեր բազ-  
մաւ երկայնսմուլք անօթոյն բարկուե պատ-  
րաստելոյն ՚ի կորուստ : Եւ այս պահանջէ ար-  
դարութիւնն , բարեաց զփառս , և չարաց ըզ-  
տանջանս պատրաստել : Աստուստ թագաւորք  
նախապատրաստեն զիսիլայս և զշղթայս , ըշ-  
յալթօղսն պսակել , և զչարսն պատժել :

### Եղանակութիւն Երիրրդ :

Նախասահմանութիւնն ոչ դնէ զհարկ . զի  
այսպէս ըստնայն լինէին պատուիրանք , խոստ-  
մունք , սպառնալիք և անձնիշխանութիւն : Եւ  
ոչ յոմանց բառնայ և սյրոց տայ . զի այսպէս  
ած լինէր երեսապաշտ և աչառու . այլ այսոքիկ  
հետեւին բնականիմն կարգաւ . առ որ ածային  
գիրն բերէ զերիս վսյելչագոյն օրինակս : Նախ՝  
զարեգակն . զարեգակն ծագէ ՚ի վը արդարոց  
և մեղաւորաց : Արեգակն է շնորհքն այ , զի  
ո՞պ զարեգական լոյսն ոչ հաւասարապէս վայե-  
լեն առողջքն աչօք և տկարքն , թէպէտ հա-  
սասարապէս ծագէ . այսպէս է իմանալի և ըզ-

շնորհացն այ , որ կամի զամենեսեան լուսաւո-  
 րել , թէպէտ ոմանց հոգւոյ աչքն տկար գողով՝  
 խաւարին , զի և արեգակն ծագէ ՚ի լուսաւորել .  
 թէպէտ ոմանք յարփիական լուսոյն վնասեալ՝  
 կուրանան : Այսու եղանակաւ կուրացուցանէ  
 ած զսիրտս անհաւատից և ոչ բացարձականպս :  
 զորոց ած ՚իս այսորիկ կուրացոյց զսիրտս ան-  
 հաւատից , բազումք իմանան զճշմարտէն այ .  
 բայց յիմաստուե ասի , կուրացոյց զնն չարուի  
 իւրեանց : Համանման կերպիւ տկար աչքն մինչ  
 կուրանայ ՚ի լուսոյ , մերթ ասի , թէ կուրացոյց  
 զնա արեգակն . և մերթ՝ թէ կուրացոյց զնա  
 ցաւն իւր . բայց թէ ցաւն չլինէր , արեգակն  
 ոչ կուրացուցանէր : Երկրորդ՝ բերէ օրինակ  
 զանձրեն , ածէ զանձրե իւր ՚ի վը չարաց և բա-  
 րեաց : զի ուղ անձրեն տեղացելյապառաժի ոչ  
 ինչ օգտէ , իսկ յարգաւանդի տեղացեալ զբա-  
 զում արդիմս բուսուցանէ , այսպէս իմա և ըդ-  
 շնորհէն այ . զի բարիք ունին զինքեանս առ-  
 շնորհն այ ուղ զարգաւանդ երկիր . իսկ չարք  
 ուղ զիսիստ ապառաժ : Այսու օրինակաւ լուծա-  
 նին դժուարագոյն տեղիք սթ գրոց , այն թէ՝  
 ում կամիմ ողորմիմ , և ում կամիմ խստանամ :  
 զի այսպէս բարառնաբար ասի զանձրեոյ խըս-  
 տանալ ապառաժի և կակզանալ արգաւանդի :  
 Այսպէս իստացաւ փարաւօնի , զի էր ինքն փա-  
 րաւօն իսիստ : Բայց խստուե քարանց են զանա-  
 զան աստիճանք , են ոմանք՝ որք յանձրեոյ լու-

ծանին : ո՞ղ այնք՝ որք յառաջն գոլով ապըստամք , յետոյ գան ՚ի ֆրազանդունի աւետարանին : Եւ ոմանք մնան ՚ի խստութեան իւրեանց ո՞ղ անզեղը մեղաւորք : Երրորդ՝ օրինակ բերէ զորթն , Ես եմ որթն և գուք ուռ . եթէ ոք յիս հաստատեալ է , նա բերէ զպտուղյոյժ՝ և՛ : զի ո՞ղ ծառն ՚ի գարնան բազմափիթիթ ծաղկօք ծաղկետլ , զմննդարար հիւթն անաշառապէս տարածանէ յամենեսեան , սակայն այնոքիկ՝ որք սերտ տրամադրեալք են յոստն լիով ընդունին զհիւթն , և օր զաւուրք ևս քան զևս հաստատին . իսկ այնոքիկ՝ որք ՚ի բնէ են անհաստատ , ոչ ախորժանօք ծծեն զհիւթն , թէպէտ ծառն յորդութ մատակարարէ : վնկ օր քան զօր վտտին և թօթափին : Արդ՝ եթէ ծառն իցէր իմացական , գիտէր արդեօք թէ որ ծաղիկ է առաւել հաստատեալ յինքն , և որն նուազ : և այսու գիտութ ոչ գնէր ՚ի վը նց ըզհարկ չանկանելոյ կամ հաստատելոյ : Այսպէս էութիւնն այ է ո՞ղ ծառ ծաղկեալ տեսակօք և անհատիւք իմացականի և բանականի բնութեան , գիտէ թէ ՚ի ծաղկանց աստի որն է յինքն հաստատեալ , և որն ոչ : Եւ հանգոյն ծառոյ միօրինակ հաւասարապէս մատակարարէ զնորդն , ո՞ղ քաջ եցոյց օրինակաւ անձրւի և արեգակն : Ուսաի ասէ իմաստունն , միօրինակ ինամ ունի առ ամենեսեան : և թէ՝ գարմանէ զամենեսեան քաղցրութ : Իսկ եթէ յոստոց

անտի ոմննք ոչ ծծելով զհիւթն կարկառեալ  
փշրեսցին և առաքելոյն , և կամ ոպ զվտտեալ  
ծաղիկ թօթափիցին ի փառաց անտի և եսա-  
յեայ , ոչ եթէ ած գիտելով զթօթափումն  
նց հարկադիր լինի : Երկրորդ՝ ցուցանի բանիւ  
ամ ապառնիք են ներըունականք ող ասէ ա-  
րիստոտէլ ի պէրիարմէնի , իսկ արդարանալն  
և ոչ արդարանալն մարդոյ են ապառնիք , ու-  
րեմն են ներըունականք : Երրորդ՝ ցուցանի  
նմանութք . տեսուն մարդոյ ոչ դնէ զհարկ իրաց  
ոպ բժիշկն ենթադրէ զմարդն մեռանելոց . և  
գէտն կամ մոգն , որ տեսանէ զարեգակն իսա-  
ւարելոց , ուրեմն և ոչ նախատեսութիւնն այ-  
դնէ զհարկ իրաց :

### Եղբայրութեան Երրորդ :

Թիւն նախասահմանելեաց է հաւաստի և  
անսխալ , ցուցանի նախ՝ վկայութք . յայտնի ի  
յաւիտենից է ան գործք իւր . և ունի զինիքս  
զայս : Տանեաւ տր զայնոսիկ , որք իւրքն են :  
Այս ոք յափշտակեսցէ զնն ի ձեռաց հօր իմոյ :  
ոչ կորուսից ի նոցանէ և ոչ մի : Երկրորդ՝ ցու-  
ցանի բանիւ , այ գիտունն է կատարեալ որպէս  
ցուցաւ ի վերոյ , ուրեմն ոչ սխալի : Առարկի-  
ցեմ . յայտնութեան կամ զոր ունիս , զի մի՛ ոք  
այլ առցէ զայսակն քո : որով ցուցանի թէ՝ կա-  
րէ այլ զայլոյ փառս յափշտակել : Պատասխանէ  
սմին կուռնէլիոս , թէ Աստուծոյ թիւն ընտրե-

լոց յոյտնի է , բայց ոչ այս և ոչ այն , վասն  
 այն այլ զայլոյ տեղի կարէ յաջորդել : Յայս  
 միտ երեկի և ագուինացին , որ ՚ի վը այս վկա-  
 յութեան յումնմէ մեկնչէ առեալ ասէ , “մինչ  
 հաւաստի է թիւն ընտրելոց . եթէ ոք սահի  
 ՚ի նոցանի , այլ ոք ներածի ողորմութեան ուղարկածի է ապա-  
 վա հպարտութեան հրէից ներածեալ եղեն .  
 հեթանոսք ՞” մեկնութիւնս այս է յոյժ գեղե-  
 ցիկ , բայց ոչ է բաւական , քզի հիմն նախա-  
 սահմանութեան է ճանաչումն անհատից : զի  
 ոող եթէ ոք ոչ ճանաչիցէ զմիութիւնս թուոց ,  
 և ոչ զբիւրս կարէ ճանաչել . զի բիւրքն ՚ի միւ-  
 տթեանց բաղկանան : Այսպէս և ած ոչ կա-  
 րէր ճանաչել զբազմութես ընտրելոց , եթէ ոչ  
 զայս և զայն ընտրելի գոլ ճանաչիցէր : Ապա  
 այնու բանիւ կամի սթ գիրն երկեցուցանել , զի  
 երկիւղիւ և գողութեան զկոչումն և զընտրութիւն  
 խրեանց հաստատում պահիցեն : Ըստ տինմ՝  
 սիրելիք ահիւ և գողութեանց զիրկութիւն  
 գործեցէք : զի երկիւղն է պատճառ նախասահ-  
 մանութեան : Այսոքիւք սակաւ բանիւք շատա-  
 ցեալ , մի՛ յառաւելն նկրտեսցիս . զի անքննե-  
 լիք են խորք դատաստանացն այ շը առաքելոյն  
 և մարդարէին . իսկ զայլ առարկուիս ներհա-  
 կեալս սոցին տես ՚ի մեկնութեան մերում ՚ի  
 թուղթն առ Եփեսացիս , և յայլ գրեանս  
 աստուածաբանից :

## Վահանութիւն :

Թէպէտ ոչ ոք գիտէ գոլ զինքն նախասահ  
մտնեալ , որպէս ասէ գիրն թէ ոչ գիտէ մարդ  
թէ սիրոյ է արժանի , կամ ատելուն : զի այս  
լինի միայն յայտնութեն այ : Ուստի առաքեալն  
յայտնութեն յափշտակուն ծանեալ զընտրուն  
իւր ։ աղաղակեաց , այսուհետեւ կոյ և մնայ ինձ  
արդարուն պատկն , և : Եւ թէ հաստատեալ  
եմ , զի ոչ մահ , և ոչ կեանք կարեն մեկնել զիս  
որ սիրոյն քնի : սակայն են ոմանք նշանք , որք  
ելթէ իցեն յանձին ուրուք՝ ածաբանք նախա-  
սահմանելոց նման գոլ ենթադրեն : Առաջին  
է նեղութին , քըլի նախատեսահմանութիւնն ոչ այլ  
ինչ է , ելթէ ոչ յատկական սէր այ առ ընտ-  
րեալս իւր : Այլյատուկ նշան սիրոյն այ է նե-  
ղութիւնն զոր առաքէ ընտրելոց , և այսմ՝ զի  
զոր սիրէ տի , խրատէ ։ տանթէ զամ որդի , ընդու-  
նի : Եւ տին մեր խակ ի յոյտնուն ասէ , ես զոր  
սիրեմ , յանդիմանեմ և խրատեմ : Եւ այս սէր  
երեւցաւ ի Յովք . որ էր նախասահմանեալ  
վա այն և այնքան նեղութիւնս էանց ի փառս :  
Ուսափ ասէ դաւիթ , անցաք մեք և հոր և և  
ծուր , և հաներ գմեզ ի հանգիստ : զայս խմա-  
ցեալ առաքելոյն՝ աղաղակեաց . երանեալ է  
այր՝ որ համբերից փորձուն : Երրորդն է յօ-  
ժարութեւ լեզն զբանն այ . աստուստ նախակար-  
գեալքն ի հրեից առ կեանս յաւիտենականս ,

յշարութ լսելով բանիցն քնի և առաքելոց ,  
գնացին զհետ նց . վն այն առէ տնն , ոչխարք  
իմ ձայնի խմում լսեն . և զկնի իմ դան . և ես  
տամ նց զկեանս յաւխտենականս : Զայսպիափ  
բարի նշանս խնդրէր դաւիթ , արա առ խ նը-  
շան բարութ : Երանի այնոցիկ , յորս իցեն եր-  
կու նշանքս : Պարտ է աստին և զայս դխտել .  
զի եթէ ոք յայտնութ եամբ խկ դխտիցէ զինքն  
նախասահմանեալ , տակոյն տակաւին պարտի  
ահին առնել որ ինչ է յիւրն կողմանէ , զի  
հաստատոն զիւրն ընտրութ պահիցէ ըստա-  
քելոյն : Պօղոս առաքեալն ի նաւին հաւաստի  
եղեալ ի հրեշտակին փրկութ եան իւր և ամե-  
նեցուն , մինչ ետես թէ կտմին նաւորդքն փախ-  
չլ , յորդորեաց զհարիսրապէ տն և զզօրականսն  
հատանել զպարան կուրին , ասելով՝ եթէ դք  
փախիցին , դուք ապրիլ ոչ կարէք . այնզի՝ ըս-  
տորհեալ էր ոյ ինքեան զամնայն : Այսպէս  
առնել պարտ է ամենեցուն :

### Պէտք Երիբորդ :

Յաղագա նմանաւունն՝ որ արդարիոնի ի նախական մու-  
բէնէն Ասպածայ :

Նախախնամութ իւնն է ներդործական կա-  
ռավարումն վեհագունին ընդ իւրե եղելոց :  
Արդ եթէ ից! ներդործական կառավարումն  
ատեղծուածոց ի յած . ցուցանի նախ՝ վկայութ

սբ գրոց : Հայր իմ մինչև ցայծմ գործէ , և եռ  
գործեմ . Եւ թէ՝ ձգի ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս  
օգտակար առողջութ . և դարմանէ զամենեսնն  
քաղցրութ : Յուցանի ևս բանիւ , ամ պատճառ  
յաւէտահեղէ յիւր պատճառելիս և Պրոկղի .  
այլ ած է նախկին պատճառ . ուրեմն յաւէտա-  
հեղէ\* յիւր պատճառելիս , ֆ մշտախնամէ : Յայս  
միտ ասէ և Դաւիթ անյաղթ փիլիսոփայն մեր ,  
եթէ է ստեղծող , է և նախախնամօլ : Դարձել  
որ կամի զգուլ իրին , պարտի նախախնամել զի  
յարտմնասցէ ՚ի գոլն , այլ ած կամի զգուլ ստեղծ-  
ուածոց : Յուցանի փոքրագոյնս . զի եթէ ոչ  
կամէր , ոչ առնէր և ոչ իսկ կարէին գոլ . և այ-  
նըս՝ քզի զիարդ լինէր ինչ . եթէ ոչ կամէիր :  
ապառեմն պարտի նախախնամել : Զայսմանէ  
ասացեալ եմք ՚ի կշիռ արդարութեան գըր-  
քո՞ն , տես անդանօր :

## Կ Յ Ա Խ Ո Ւ Բ Ի Ռ Ա :

Յայսմ մասին յոյժ նմանին այ բարի թա-  
գաւորք , որք ունելով զօ և իշխանութ իւրենց  
կառավարեն քաղցրութեամբ դնելով զօրէնս ,

\* Զայս և Փիլն հաւաքարմաց սանէ յատէն լէ՝  
Քանի ուրաք է ուրաքին առ ՚ի նմանէ արարեցելոցն ինույ  
առնէլ , չանդի ոչ էնչէ ՚ի նմանէ անխեամէլ :

Siquidem oportet, ut Creator provide curam  
liabeat rerum ab ipso creatarum; nihil enim est;  
quod ab ipso non curetur. *Philo de Provid.* p. 13.

պաշտպելով զբաղաքս , կացուցանելով զարդարակորով պետս , վանելով զթշնամիս և պատժելով զչարս : Այսպիսիքն էին ածանման բարեպաշտ արքայքն զորս տօնէ Եկեղեցի ասելով , Որ զերկնաւոր թագաւորուենդ քո զօրինակ ցուցեր ՚ի յերկրի հաստատելով զաթոռ թագաւորուեն նոցա յարդարուեն և յիրաւունս : Կաև բարի եպիսկոպոսունք , որք զեկեղեցին քնի կառավարեն սրբութ և իմաստութ . վայ սթգիրն ոչ ամօթ համարի զնոսա ածս անուանել : զածս ժողովրդեան քո մի՛ բամբասեցես : Եւ ծանիր , զի այսպիսիքս են բարի նշանք մեծի նախախնամութեանն այ , որ որպս զո՞ւ արեգակամք , այսպէս և զեկեղեցի արփիազարդ եւ պիսկսպոսք լուսաւորէ :

### Անձոնութեան :

Բայց յայսմ մասին յոյժ աննման գտանին այ սառայէլակիր չար թագաւորք , որք որպէս զվայրենի խող զայգի ՚ոի զտնկեալն յերկնաւոր թագաւորէն ապականեն և յաւեր դարձուցանեն . որոց ահագինս սպառնայ իմաստունն յանելն , ահիւ և տագնապաւ հասցէ ՚ի վը ձեր . զի դատաստան անաչառ իշխանաց լինի , և :

Կաև չար եպսք , որք երթալով զհետ զօշաքաղութեան ախտից ծառայեն և ոչ ժողովը դեան , որով և այ : Որք տիրելն գիտեն վիճաւ-

կաց . և ոչ ըստ կամացն այ նախախնամելն գհօտն :  
Որք ոոպ շուն համրացեալ ոչ կարեն հաջել ը-  
դէմ դժոխային գայլոց . զի ունին ՚ի բերանս  
իւրեանց զոսկրն մոլութեանց և ագահուեց :  
Այսպիսիքս են նմանք սատանայի կերպարա-  
նեալ ՚ի հըեշտակ լուսոյ . արտաքուստ ոչխա-  
րազգեստ եպիսկոպոսք , և ՚ի ներքուստ գայլք  
արաբացիք . որք զանձինս արածեն և ոչ գհօտն :  
Որք են աղբիւրք անջրդիք , աղք անհամք , և  
ճրագունք խաւարեալք :

## ¶ ¶¶¶¶¶

Յաղագի նմանութեան՝ որ արաւկանէ ցողը մասնէն  
Ապա-ծոյ :

Ողորմութիւնն յերկուս բաժանի , ՚ի նիւ-  
թական և ՚ի տեսական : Նիւթական ողորմու-  
թիւնն է շարժումն զգայական բաղնանաց յո-  
ղորմելուէ ուրուք և բարձումն այնր ողորմելուէ ;  
Եւ այս ասի նիւթական , զի պատճառէ զկիրա  
՚ի բաղնանա . այս՝ ոչ է ՚ի յած . զի ոչ են ՚ի  
նմա զգայական բաղնանք : Իսկ տեսական ողոր-  
մութիւնն է նախագիտուն թշուառութեան և  
բարձումն : Այս ասի տեսական , զի շօշափէ  
միայն զմիտս , որ է տեսօղ . և ոչ զսիրտս , որ է  
զգացօղ . այս՝ է ՚ի յած : Ցուցանի , ողորմութ-  
քեառն լի եղե երկիր . և այլ անթիւք :  
Ցուցանի ևս բանիւ , պատճառն իմացական

պարտի ինսամ տանիլ պատճառելոյն , այլ ած է  
 պատճառ ստեղծուածոց , ուրեմն ինսամ տանի  
 պատճառելոց : Իսկ ինսամ տանելն է զանկեալս  
 յարուցանել . անդարձից երկայնամտել . զդար-  
 ձեալս անոխակալութեամբ ընդունել . տալ ըդ-  
 չնորհս ՚ի ներկայումս . և ՚ի հանդերձելումն  
 փառաւորել : Աստուծոյ ողորմութիւնն է կրկին  
 հասարակ և յատուկ : Հասարակն է վերայ ամ  
 ստեղծուածոց . ողորմութիւն նր ՚ի վերայ ամ  
 գործոց իւրոց : Իսկ յատուկն ՚ի վեր ընտրելոց .  
 յորս է գործունեայ և զօրաւոր : Եւ այս է  
 բնականաբար և ոչ աշառութեամբ . քղի ուղ  
 հուրն յընդունակ նիւթս կամ ՚ի չոր փայտս  
 աճէ և զօրանայ , իսկ յըստամբակսն տկարա-  
 նայ և զիջանի . այսպս և շնորհքն յառաքինիսն  
 աճէ , իսկ ՚ի մոլիս նուազի : Առ առաջինն ա-  
 սէ սաղմոս . գնասցէ նա ՚ի զօրուէ ՚ի զօրուէ :  
 Եւ տէրն , որ ունիցի , տացի նմա և յաւելցի .  
 իսկ առ երկրորդն , և որ ոչ ունիցի , և զսր կար-  
 ծեն թէ ունիցի՝ բարձցէ ՚ի նմանէ : Զայնպի-  
 սիսն խրատէ առաքեալն ասելով , զհոգին մի՛  
 շիջուցանէք : Արդ՝ ողորմութիւնն այ երեւցաւ  
 ՚ի ստեղծման . ասացեր թէ ոս ողորմութ շինե-  
 ցից : ՚ի նորոգման . ցոյց մեղ տէր զողորմուհս  
 քո , ց զքն : յարքայութեան , ուր փառաւորէ  
 անդրքան զարժանն . նմին իրի՝ ասէ , տէր յեր-  
 կինս է ողորմուի քոյ : Նաև ՚ի դժոխս ուր տան-  
 քէ այսր քան զարժանն . սակաւս քան զոր մե-

ղար՝ տանջեցար : Ասիցեմ՝ թէ՝ ապա զիա՞րդ ի-  
մանի բանն թէ՝ անողորմ դատաստան լինելոց  
է այնմ , որ ոչ առնիցէ զաղորմութիւնն : Պա-  
տասխանեմ , թէ այդ իմանի որքան առ վճիռն  
որ անողորմաբար հատանի ՚ի վը մեղաւորաց .  
և ոչ որքան առ պատիժն : Արդ՝ պատիժն լի-  
նի անաղորմ , զի է յաւիտենական , և ողորմա-  
խառն , զի կարասցեն կըել :

### Ն Յ Ա Խ Ո Ւ Բ Ե Ա Ն .

Յայսմ մասին տիրապէս նմանին այ՝ ողոր-  
մածքն , զի զայս նմանուի պահանջէ ՚ի մէնջ  
տրն յասելն , եղերուք գթածք , զի հայրն  
ձեր երկնաւոր գթած է : Արդ՝ եղերուք նման  
հօրն ձերոյ : Կաև երկայնամիտքն , ներօղքն ,  
և անոխակալքն . զի այսոքիկ են հետեակ ողոր-  
մածութեան : Զի յայն սակս ասի ած երկայ-  
նամիտ և անոխակալ , զի է ողորմած : Եւ զայ-  
մանէ տես ՚ի կշիռն արդարութեան . զի անոք  
ասացու . նաև յապաշխարսնն , մասն առաջին  
գլուխ քանսերորդ և չորրորդ :

**Պլաք Առբորդ :**

Յաղագս նմանութեան՝ որ որպահոնէ յարդարութենէն  
Ասպուծոյ,

Արդարութիւնն ստուգաբանի հարթ առութիւն, ֆ հարթ և հաւասար առնողութիւն։  
Արդ՝ այս հաւասար առնողութիւնս կրկին է։  
'ի ներքս, և յարտաքս։ Դ ներքս է՝ մինչ իմացանութիւնն իմանայ զիրն լիսպէս, ֆ մինչ իմացականութիւնն հաւասարի իրին իմացմամբ, և կամքն հաւասարի իմացմանն կամեցողութեամբ։  
Իսկ արտաքինն է, մինչ կամքն և իմացման և կամեցողութեամբ որ 'ի ներքս՝ հրամայէ առ արտաքս։ Այսու եղանակաւ արդարութիւն առեալ բաժանի 'ի բնական և 'ի բարոյական։ Բնականն բաժանի յանստեղծ և 'ի ստեղծեալ։ Զստեղծել բնականէն և զբարոյականէն ասացուք ստորե ՚ի նմանութեամբ։ զանստեղծէն այժմ։

**Եղանակութեան :**

ԱԾային կամքն է արդար, զի է չափ իմացականութեան նը։ վն այն 'ի միասին դնէ սուրբ գիրն, արդար և ճշմարիտ է տը։ Վկայութիք որ զարդարութիւն այ՝ են անթիւք, վասն այն ցուցցուք նախ՝ բնաբանորէն։ Ճշմարտի իմացման հետեւ արդար կամք, զի արդար կամքն ոչ այլ ինչ է, եթէ ոչ ճշմարիտ իմացման հաւանումն։

այլ այ իմացումն է ճշմարիտ : զի գործէ ՚ի վը  
էութեանն , որ է ամենաճշմարիտ գոլ , ուրեմն  
հետեւի նմա արդար կամք : Երկրորդ՝ ցուցանի  
տրամաբանօրէն , ճշմարիտ նախադասութիւնք  
հակեն բնականաբար զկամս ՚ի հաւանումն եղ-  
րակացուե . որգոն , մասն փոքր է քան զբոլորն .  
այլ արեգակն մասն ՚ի . ուրեմն փոքր է քան  
զո՞ : Ահա ՚ի սմին բանի եղբակացուեն արդա-  
րացի իրաւամք հետեւի նախադասուեցն . հան-  
գոյն սմին և իմացականութիւնն այ , որոյ յա-  
տուկ է միշտ իմանալ զճշմարտուե , հետեւի բնա-  
կանաբար իրաւացի հաւանումն , որ է արդար  
կամք : Վց ասէ , ուղիղ է տր ած մեր , և ոչ գոյ  
՚ի նմա անիրաւուի : վասն զի ուղղութիւն և  
թիւրութիւնն պատճառի ՚ի կամս ՚ի ճշմարտու-  
թենէ կամ ՚ի ստուե իմացականին . այլ յիմացա-  
կանութեանն այ բաց ՚ի ճշմարտուե ոչ գոյ  
ստութիւն . ապա և ոչ ՚ի կամս նր թիւրուի ,  
այլ ուղղութիւն : Աստուստ կամքն այ է քանոն ամ  
արդար օրինաց և աղքիւր ամարդար իրաւանց  
ոոպ և ասէ \* ինեւ թագաւորք թագաւորեն , և  
հզօրք գրեն զարդարութիւն : քան զի՝ զոր ինչ  
կամի , արդար է :

### Կմանութեան :

Յայսմ մասին կրկնակի նմանիմք այ , նախ  
բնականաբար հաւանելով լուսոյ բանին . վը

զի թամն մեր է լսյս յերեսացն այ ՚ի մեղ նշա-  
 նեալ ըստ մարդարէին , առ ՚ի առաջնորդել մեղ  
 ՚ի ճանապարհս իրաւանց . վնյ զոր ինչ կամիսք  
 ըստ լուսոյ բանին է համաձայն կամացն այ : Եւ  
 աստուստ է , զի աստուածադիր տասնաբանեայ  
 օրէնքն է ՚ի մեղ բնական . զի է համաձայն լու-  
 սոյ բանին : Աստուստ յայտ յանդիման երեկի  
 պատկեր գոլն մեր այ . վնյ զի՝ մինչ տասնաբա-  
 նեայ օրէնքն առ իսրայէլ գոլով ածադիր յամ  
 աղգս է բնական , (բաց ՚ի բանէն աւուր շաբա-  
 թու .) որով յամ աղինս արգելեալ լինի շնու-  
 թիւնն՝ գոլութիւնն՝ մարդասպանուինն՝ սուտ  
 վկայութիւնն , և այլք . պարզապէս երեկի թէ՝  
 հաւանին լուսոյ բանին ոչ այլ ինչ է , եթէ ոչ  
 ամենարդար կամքն այ : Զայս տեղիս շօշափէ  
 առաքեալն ասելով \* հեթանոսք՝ որք զօրէնս  
 ոչ ունին բնութ զօրինացն գործեն : որք ցու-  
 ցանեն զգործս օրինաց գրեալ ՚ի սիրտս իւրենց  
 վկայութ մտացն իւրեանց : Աստուստ ձեռնար-  
 կի թէ , ող կամքն այ ըստ ինքեան գոլով ուղիղ  
 և արդար՝ ոչ է ըստ օրինօք , զի ինքն է առաջին  
 օրէնք . այսպէս և որք վարին լուսով բանին ոչ  
 է պիտոյ նոցա օրէնք . քղի ճառագայթիւք  
 բանին վարին ինքնին իսկ օրէնք է և հաղոր-  
 դութիւն արդար կամացն այ : Յայս միտ ասէ  
 առաքեալն թէ՝ † զայս գիտասթիր , զի ՚ի վը  
 արդարոց օրէնք ոչ գոն : Ահա տիրապէս նմա-

\* Համալ, 2, 14. † 1. Տեմ, 1, 9.

նութիւն այ : Երկրորդ՝ նմանութիւնն լինի  
 հետևելովն նշանի կամացն այ . որ բացայայ-  
 տեալ է ՚ի սք գիրս : Քանզի խմացականն մեր  
 սկզբնական մեղօք պղտորեալ ապականեցաւ .  
 վասն այն վայել էր աստուածայնոյ խմաստուե-  
 և գիթութեանն օժանդակել սմա յայտնելով  
 զկամս իւր : Արդ՝ ոտք կամքն այ է բարին հա-  
 ճյն՝ և կատարեալն ըստ առաքելոյն , այսպէս և  
 կամքն արդարոց , և մերն պարտի : Բարոյական  
 արդարութիւնն է կամք հաստատուն հատու-  
 ցանելոյ իւրաքանչիւր ումեք զիւրն ըստ արժա-  
 նույն . և այս կոչի տրամաբաշխական արդար-  
 ութիւն : Այս՝ յատկապէս ոչ ՚ի յած , զի ած  
 ոչ ումեք պարտի զիւր ինչ . այլ ՚ի հաւատարմուե-  
 խոստման . զի նա ստեղծանէ , փրկէ և փառա-  
 ւորէ , որում ոչ ինչ արդիւնք ՚ի մենք է հա-  
 մարժան . այլ միայն ըստ իրաց ինչ : Ասիցեմ .  
 ապա ընդէլո պսակ արդարուե կոչէ առաքեալն  
 զփառքն : Պատասխանեմթէ՝ պսակ արդարու-  
 թեան վասն այն կոչէ , զի պարաւանդի տալ ՚ի  
 հաւատարմութենէ խոստման . և ոչ վասն հա-  
 ւասարութեան արդեանցն . և զայսցանէ տես  
 ՚ի կշիռն արդարութեան : Եւ ծանիր տատ . զի  
 արդարութիւնն Աստուծոյ , և սրբութիւնն և  
 ուղղութիւնն նոյն են . ուստի նմանիլ արդա-  
 րութեանն այ է նմանիլ և սրբութեանն և ուղ-  
 ղութեանն . վնկ զանց առնեմք աստէն :

## Պրաէ Հինգերորդ :

Յաշտակու նմանութեան՝ որ արքահանէ ՚է Սէրոյն  
(Ասպաւծոյ) :

Եւ քզի վերոյ ասացեալ զօրուկք կամացն  
այ յառաջագային ՚ի սիրոյ նր . վն այն ասելի  
է և զնմանէ : Արդ՝ սէրն է հաճուե բաղձալոյ  
կամ բարոյ ներկայականի : † յած կրկին բա-  
րիք գտանին ներկայք , ֆ անստեղծ և ստեղ-  
ծեալ , անստեղծ բարին կամ բաղձալին է էուի  
իւր , զոր սիրէ անստեղծ սիրով . և շայսմբո-  
լոր Երրորդուին է սէր . \* զի միով սիրալիր կա-  
մաւ բերին առ միմեանս : վնյ ասէ Յովհաննէս  
† ած սէր է : և Ընորհալին , ‡ Սէրն ՚ի Սիրոյ  
զԱկրդ առաքեաց : Ցուցանի ևս պատճառաւ ,  
կամք բարեպէս կարգաւորել սիրէ նախ զինքն:  
այլ այ կարգն է բարեկարգ , ուրեմն սիրէ նախ  
զինքն : Երկրորդ՝ սէրն բղևի ՚ի ներկայ բարոյ .  
այլ ոչ ինչ այնքան ներքսապէս է ներկայ այ  
քան զէուե իւր : Երրորդ՝ սէրն բղևի ՚ի ճանաչ-  
մանէ , ուստի ասի յածաբանից , ոչ ինչ է սիրե-  
ցել , եթէ ոչ նախ ծանուցել . իսկ ոչ ինչ է նախ  
ծանուցեալ այ , եթէ ոչ էուի իւր . ոչ ոք ճա-

\* “ Սէր է Հենրանի Երանութեամբ լցուալ .”

Յամախապատճ . Ճառ . 1. էջ . 5.

† 1. Յոհ . 4, 8. ‡ Ըարտէ . հոգէգալսպէտն 2 պատըլը :

նաշէ զորդի՝ եթէ ոչ զհայր . և ոչ զհայր ոք  
 ճանաչէ , եթէ ոչ զորդի . ապա ուրեմն ճանա-  
 չելով փոխաբերապէս նոյնով իմացականութ-  
 սիրեն զմիմեանս բարեհաճ կամօք . այսպէս և  
 հոգին սթ ճանաչէ և սիրէ , զի՞ ո՞ք գիտէ ինչ  
 զմարդոյն՝ եթէ ոչ հոգի նր . նոյնպէս և զայսն  
 ոչ ոք գիտէ , եթէ ոչ հոգին այ : Իսկ ստեղ-  
 ծեալ բարին և բաղձալին են արարածքն , որք  
 և են յէուեն այ բովանդակել և ներկայք , զորս  
 և սիրէ բարեհաճ կամօքն . \* սիրես զամ՝ որ  
 են : Ցուցանի ևս բանիւ , ոչ ոք ատէ զգործս  
 իւր . այլ ստեղծուածք են գործք այ . ուրեմն  
 ոչ ատէ : Ուտի ասէ իմաստունն , † զի՞ ոչ եթէ  
 առ ատել ինչ հաստատեցեր կամ արարեր :  
 Հարցանիցեմ՝ ապա ընդէ՞ր ասէ իմաստունն ,  
 առ հասարակ ատելիք են այ ամբարշտեն և ամ-  
 բարշտուի իւր : Պատասխանեմ , թէ ՚ի գործս  
 արհեստաւորին գտանին ուղղուի և թերուի .  
 ուղղութիւնն է համաձայն բանի . որ ՚ի միտս  
 արհեստաւորին . զայս՝ սիրէ : Իսկ թիւրունն  
 է խոտորումն ՚ի կանոնէ արհեստին . զայս ատէ :  
 Ուղղութիւնն պատճառի յարհեստաւորէն . իսկ  
 թիւրութիւնն ՚ի տկարուէ նիւթոյն : Այսպէս  
 ՚ի գործսն այ են երկու սիրելիք . էակու՞՝ որ  
 ըստ ինքեան է բարի , սիրես զամ որ են . ֆ ըս-  
 րում են էակք . և գործողուի համաձայն ընու-

թեան և բանի , զայսոսիկ սիրէ : Աֆ բարե-  
գործուիք են համաձայն բնութեան և բանի ,  
իսկ որ ինչ լսոտորին ՚ի բնութեան և ՚ի բանի ,  
առ հասարակ են անօրէնութիւնք՝ չարուիք՝ և  
անկարգութիւնք , որք պատճառին ՚ի տկարու-  
թեան զանգուածոյն , և ոչ ՚ի ճարտարապետէն  
զայսոսիկ ատէ , վասն որոյ ատէ , ատեցեր զայ-  
նոսիկ , ոյք գործեն զանիրաւութիւն :

### Ն մ ո ն ա ւ ը բ ե ւ ն :

Յայտմ մասին նմանիմք այ բարեհաճ կա-  
մօք սիրելով ղբաղձալի բարին մեզ ներկայ :  
Արդ՝ նախ է ներկայ մեզ ած . երկրորդ՝ անձն  
մեր . երրորդ՝ ընկերն : Զայս կարգ եցոյց տըն  
ասելով , սիրեցես զՏէր ԱՃ քո յամ սրտէ  
քումմէ . աստէն զանձն սիրողին և ընկերին մի-  
ջադրէ : Այս կարգ սիրոյ ցուցանի ևս բանիւ ,  
կամքն բարեկարգ պարտի սիրել նախ՝ զառա-  
ւել ներկայ և զառաւել մեծագոյն բարին և  
ապա զայլս . իսկ ած է մեզ առաւել ներկայ և  
ընդհանուր և մեծագոյն բարի քան զմեզ , ու-  
րեմն պարտիմք նախ զնա սիրել : Մեծագոյնս  
յոյտ է , ցուցանի փոքրագոյնս . նախկին գոլն է-  
ակին մեծագոյն է քան երկրորդ գոլն . որպէս  
գոյացուին մերձ է մարդոյ քան զարտահումն ,  
և հիմն մերձ է տան քան զորմունքն . և արմատն  
մերձ է ծառոյն քան ոստքն , այլ մերոյս գոլոյն  
այ գոլն է ուղ գոյացութիւն առ պատահումն ,

Հիմն առ որմունս , և արմատն առ ոստոն .  
ապա ուրեմն այ գոլն մերձ է մեղքան զմերն . և  
վտան այն՝ նախ նա է սիրելի ՚ի մէնջ : Երկ-  
րորդ՝ պարտիմք սիրել զմեզ ուղիղ սիրով , և  
յայնժամուղղապէս սիրեմք զմեզ , եթէ ՛ը կար-  
գի բնութեան և ՛ը ճառագայթի լուսոյ բա-  
նին շրջիցիմք յամենայն շաւիոս մեր անսայց-  
թաք : Յերրորդի կարգին պարտիմք սիրել  
զընկերն իբրև զանձն մեր . և յոյնժամ սիրեմք  
զընկերն ՛ը անձին , եթէ որ ինչ բնութեան է  
և լուսոյ բանին , ՚որ օր ինչ ՚ի նմա վերաբերի  
առ բարին՝ սիրեսցուք , իսկ օր ինչ վերահայի  
առ չարն՝ ատեսցուք . քզի պարտիմք սիրել  
զբարին ընկերին . իսկ զմոլութիւն նորին ա-  
տել . և այսու սիրով տիրապէս նմանիմք սիրոյն  
Աստուծոյ , զի և Աստուած սիրէ զբարին մեր ,  
բայց զմոլութիւնն մեր ատէ :

### Պրոէ Աւելիորդ :

Յաղոգո նմանութեան՝ որ արքահաննէ յուրախութենէն  
Աստուծոյ :

Որ ինչ մինչեւ ցայծմ ասացաւ զկամացն այ,  
ամենեքեան են ներգործութիւնք , շարժումն  
և բաղձանք բարեհաճութեան կամաց նորայ .  
յորոց ՚ի է և ուրախութիւնն . որ սահմանի  
այսպէս : Ուրախութիւնն է հանգիստ բաղձա-  
նաց ՚ի ներկայ բարին :

## (Եղբայրութեան):

Ե ՚ի յԱՇ ճշմարիտ ուրախութիւն և զմայ-  
լական բերկրութիւն : Ցուցանի նախ՝ վկայութ-  
ուք գրոց յորժամ զուարձացեալ էր զտիեզերս  
բովանդակել , և ուրախ լիներ յորդիս մարդ-  
կան : Ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ ,  
մուտ յուրախութիւն տեառն քոյ : Ցուցանի ևս  
բանիւ : ուրախութիւնն բղլսի ՚ի ներկայ բա-  
րոյ . իսկ Աստուծոյ նամ բարիք են ներկայ +  
ուրեմն է ՚ի նմա ուրախութիւն : Դարձեալ  
յայնմ է ուրախութիւն , յորում ոչ ինչ բարի է  
պակաս . այլ ՚ի յած ոչ ինչ բարի է պակաս ,  
ուրեմն է ՚ի նմա լիակատար ուրախութիւն :  
Ուրախութիւնն այ է գոյացական և ոչ պատա-  
հական . ցուցանի , այն ուրախութիւնն է պա-  
տահական , որ գայ յարտաքուստ . և այնպիսի  
է ուրախութիւնն ստեղծուածոց , զի բղլսի ՚ի  
ներկայութենէ արտաքին բարեաց . իսկ այն  
ուրախութիւնն է գոյացական , որ բղլսի ՚ի ներ-  
քուստ . իսկ այ ուրախութիւնն բղլսի ՚ի ներ-  
քուստ , ֆր լէութենէ իւրմէ՝ որ է ներքին իւր .  
ուրեմն է գոյացական : Առարկիցեամ զբանն սթ-  
գրոց , թէ որդեակ եթէ իմաստուն լիցիս ,  
ուրախ եղիցի սիրտ քո . և ուրախ արասցես զիմ  
սիրտ : և թէ՝ ուրախութիւն լիցի յերկինս վն-  
միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ : յորոց երեւի

թէ պատահական ուրախութիւն անկանի ՚ի  
յԱստուած : Պատասխանեմթէ այսոքիկ ՛ը ի-  
մացման մերոյ միայն երեխն գոլ ՚ի յած պատա-  
հական այլ ՚ի յած են գոյացականք . վն զի՞ ՚ի  
յաւիտենից յէութեան իրում տեսանէ զամ .  
և որ նախագէտ է ապառնեաց՝ նորոգապէս ՚ի  
պատահին ոչ ուրախանայ և ոչ տրտմի : Ուրա-  
խութիւնն այ է անճառելի . ցուցանի , որ է  
անհուն՝ է անճառելի . այլ այ ուրախութիւնն  
է անհուն . զի բշխի յանենաբարի էութենէն ,  
որ է անհուն : Եւ ասո գիտելի է . զի են ո-  
մանք բաղձանք , որք են յատուկ ստեղծական  
կամաց և ոչ այ , յորոց ոմանք հային առ բա-  
ցակայ բարին որպէս յոյս . զի ոչ ինչ բարի է  
բացակայ այ . ոմանք ՚ի բացակայ չարն , որպէս  
երկիւղ և փախուստ . ոմանք ՚ի ներկայ չարն ,  
որպէս ցաւ և տրտմութիւն . յորոց և ոչ մին է  
՚ի յած . թէպէտ մեզ այնպէս ձեռանայ : Ոմանք  
՚ի չարն վրէժինողելի , որպէս բարկութիւն .  
և այս ՚ի յած է ՛ը արդարութեան և ոչ ՛ը ախ-  
տակրութեան : Ոմանք ՚ի դժուարստանալի  
բարին , որպէս համարձակութիւն . որ ոչ է ՚ի  
յած : Եւ ոմանք ՚ի ներկայ բարին , որպէս  
սէր և բերկրութիւն , որք են ՚ի յԱստուած :

## [Ամառաբիւն :]

Յայսմ մասին կատարեալ առաքինիք նմա-  
նին այ մշտատե ուրախութ . նաղի ոչ հոգան

զանցաւորս , այլ զնամ հոգս իւրեանց ընկենունք  
յած . իսկ անհոգ միտքն է իբր հանապազորդ  
՚ի խրախճանութեան : Երկրորդ՝ զի զլողձմտա-  
նըս իւրեանց ունին մաքուր , որ ոչ սակաւ ու-  
րախութիւն պատճառէ , և այնմ՝ անկողինք  
մեր ծաղկեալ են + զի ողջ ծաղկալից պարտէզն  
զուարձացուցանէ զաշս , այսպս և մաքուր խղճ-  
մտանքն զսիրտս : Առ այսպիսիս գոչէ , ուրախ  
լերուք ՚ի տէր յամ ժամ , գարձեալ ապեմ ու-  
րախ լերուք . մի՛ ինչ հոգայք զի տէր մերձ է :  
Երկրորդ՝ նմանին այ իմաստասէրք , որք խո-  
կալով զաստուածայինսն և զննելով զպատճառս  
էակաց , անքառ ուրախութ նմանին . վասն այն  
ասաց . Որդեակ եթէ իմաստուն լիցիս , ուրախ  
եղիցի սիրտ քո : Ուստի և Ընորհալին ,  
Ուսմանք գրոց՝ զուարձանալ ,

Իմաստութեամբն՝ ուրախանալ :

Եւ սաշմոս , նշաննեցաւ առ մեզ լոյս երեսաց  
քոց , և ետուր ուրախութիւն սրտից մերոց , ֆ  
է լոյս բանին : Վասն այն երանէ զայնպիսին  
Սիրաք ասելով , երանեալ է այր՝ որ բնակիցի  
յիմաստութեան , և խոկասցի յարդարութեան :  
Այսպէս բերկրեալ էր սուրբ Առյուն , վասն  
որոյ ասէր հրեշտակն , ուրախ լեր բերկրեալդ :

Աննանութեան :

Իսկ ամբարիշտք են յոյժ աննսմանք , զի  
խղճմտանք նոցա միշտ սպառնան զմահ . ՚ի

տուէ և ՚ի գիշերի եղիցի կասկած չարեացն ։  
Այսպիսիք են նախ ագահք , որ հաշեն և հա-  
ռաշեն վասն ստանալոյ զի մի՛ կորիցէ . երկրորդ-  
վասն ստանալեացն , և այսպէս նմ աւուրք նո-  
ցա ՚ի խաւարի են և ՚ի սուգ և լի՛ տրտմութ-  
քաղմաւ : Երրորդ՝ հպարտքն , զի միշտ են ՚ի  
տրտմութեան , թէ ընդէ՞ր ոչ յամենեցունց  
փառաւորին : Կաևնախանձոտք . որք զօրհանա-  
պազ տրտում գնան , զի խանձոտին ճառագայ-  
թիւք յաջողութ ընկերին : Զայսր պրակէ տես  
և յապաշխարանն մեր մասն առաջին գլուխ , և :

(Պլաէ Եօնէրրորդ) 222

(Յաղագո նման աւըւան՝ որ արքահանի ՚ի Աւանըլշագոր-  
քութենէն Ասպուծոյ):

Կամքն այ գոլով ամենազօր , առնէ սքանչե-  
լիս . և այս միայն է յատուկ այ : Ուստի յաքան-  
չելագործութենէն այ զարմացեալ գաւիթ ,  
խոստովանի զնա միայն գոլ ած՝ յասեն , մեծ  
ես գու տէր և առնես սքանչելիս . և դու միւ-  
այն ես ած : Քանզի սքանչելագործութիւնն  
է գործ ընդդէմ բնութեան , ասի գործ՝ որով  
հաւասարի ըլ այլոց . իսկ ըդէմ բնութեան  
կամ՚ի վեր քան զբնութիւն դնի ՚ի տեղի տար-  
բերութ : Արդ՝ առնել ըդէմ բնութեան այնի  
միայն վայելէ , որոյ է հաստել զբնութիւն . զի  
որովհետեւ հուրն զհուր գոլն ընկալաւ յայ ,

կարէ զօրութ նորին թողուլ զհրային բնուեն  
 իւր և փոխարկիլ ՚ի բնութիւն ջրոյ ։ այսպէս և  
 զայլն իմա ։ զի ամ արարածք ֆրազանդին կա-  
 մաց արարչին : Եւ ծանիր ։ զի կրկին կարողու-  
 թիւն գոյ ՚ի ստեղծուածս , բնական և ֆր-  
 զանդական : Ուստի և կրկին է սքանչելագոր-  
 ծութիւնն . և կարգի բնուեն , և ըդէմ կարգի  
 բնուեն : Ըստ կարգի բնուեն է յորժամ լինի և  
 բնական ճանապարհի . ոպէ եթէ ակն բիւրա-  
 պատիկ քան զոր կարն է՝ տեսանիցէ : Որպէս  
 աչքն մովսիսի որ ետես զամ երկիրն աւետեաց  
 ՚ի հեռուստ : Այս սքանչելիք ասի և բնուեն  
 ճանապարհի . և առ այսպիսիս ունին ստեղծ-  
 ուածք բնական կարողութիւն . զի կարողուեն  
 նոցա բնական կարէ զօրանալ որչափ կամի ած:  
 Իսկ ըդէմ կարգի բնուեն է , յորժամ անցանէ  
 զբնական օրինօք , ոպէ կուսին ծնանիլ . նշխա-  
 րին ՚ի մարմին քնի փոխարկիլ . և պատահմանց  
 կայանալ թարց ենթակայի ։ ջրոյն զջնորհս  
 յառաջածել ՚ի մլրտութեան . յարութիւն մե-  
 ռելոց , և ամ հաւատալիք : Առ այսպիսիսն  
 ստեղծուածք են ՚ի ֆրազանդական կարողուեն .  
 զի յորժամ հաստիչն բնութեան կամի , բնու-  
 թիւն նոցա յեղյեղու ըստ կամաց իւրոց :

### Նմանութիւն :

Յայսմ մասին նմանին այ կատարեալ հա-  
 ստ ունօղքն . եթէ ունիցիք հաւատս քան ըդ-

Համն մանանխոյ , ասասթիք լերանց բարձիք և  
 անկերուք ՚ի ծով . եղիցի : Որ հաւատայ յիս  
 զգործս զոր ես գործեմ , և նա գործեսցէ , և  
 մեծամեծս ևս քան զսոյնս : Հարցանիցեա՞ + այ-  
 ժըմ Շէր՝ ոչ լինին նշանք , մի՞թէ հաւատա-  
 ցեալքն անկատարք իցեն : Պատասխանեմթէ  
 առ նշանն չորս իր պահանջի , նախ՝ կատարեալ  
 հաւատ առնողին . ու այնմ մեք լնդէր՝ ոչ կա-  
 րացաք բժշկել . վա՞թերահաւատութեան ձե-  
 րոյ : Երկրորդ՝ կատարեալ հաւատ՝ խնդրողին  
 աստուստ խնդրէր Յիսուս զկատարեալ հաւատ  
պտուղն ձեր կայցէ : Երկրորդ՝ յորժամ տեսա-  
կանաւն ներհմտացեալ ՚ի ծայր նրին հացուք .  
զի վնկ ոմն զԲանէն այ ( թէպէտ վատ խորհր-  
դով ) ասաց . թէ վն գերազանց իմացականու-  
թեանն կոչեցաւ բան : Այսպէս սըն Եւագր  
կոչեցաւ միտք անապատի . և Ակովտ նրբամիտ .  
նոյնպէս և Թովմաս հրեշտակական : Ընթերց  
և յապաշխարանն մեր մասն ա , գլուխ , եւ :

## Պրահ Երրորդ :

Յաղագո նմոնութեան՝ արքահոնեալ՝ ի Յափէո-լնէ”  
Պատիւթ :

Պատկերն զանազանապէս նկատի , նախ  
Հոմանունաբար , շլ որում գրեալ մարդն ասի  
պատկեր նախատպին ող ասէ Արիստոտէլ ՚ի  
սկզբան ստորոգուեցն ՚ի ծառն Հոմանուան :  
Երկրորդ՝ Համեմատանունաբար այսպս մարդն  
ասի պատկեր այ շլ այնմ , արացուք մարդ ըստ  
պատկերի մերում , նոյնպս և հրեշտակն , ըստ  
այնմ Եղէ , 18, 12. այսպէս ասէ տի դու կնիք  
նմանութեան իմոյ : Երրորդ՝ փաղանունաբար ,  
և շայսմ որդին ասի պատկեր հօր . զի բնակա-  
նաբար ներտպի ՚ի նմնմանուե հօրն : Զի թէ-  
պէտ է ՚ի նն առնչական հակադրուե , սակայն  
թան գոյացութեաննէ նոյն : Արդ ող Պորֆիր  
զեռակի որոշմունս գնէ տարբերութեանն , և  
յատկին քառակի վն գոլոյն ՚ի Հոմանուն ձայ-  
նից . նոյնպէս և մեք քառակի որոշմունս դիցուք  
պատկերին առ ՚ի լաւապէս ճանաչել զիսդրե-  
լին : Արդ՝ քառակաբար ասի պատկեր այ . նախ  
անյատկաբար և հասարակաբար , ող ստեղծ-  
ուածք . շլ այնմ , այժմ տեսանեմք լը հայելի  
օրինակաւ : Ուր ասէ մեկնիչն , ող աստ ստեղծ-  
ուածք են հայելի այ , որով գամք ՚ի ծանօթ-  
ութիւն այ , ՚ի հանդերձելումն հակադարձա-

բար ած լինի հայելի ի յոր փայլին տեսակք  
 ամից ստեղծուածոց : Երկրորդ՝ յատկանց ու  
 մարդն , զորմէ ի նմանուն ասասցուք : Երորդ՝  
 յատկադունապէս + որպէս հրեշտակք որք եր-  
 կոքումբք առաւելուն քան զհոգի մարդւոյն :  
 « Նախ՝ զի են անընդունակ բաղադրութեան ը-  
 նիւթոյ երկրորդ՝ զի են իմացական և ոչ բա-  
 նական . որովք առաւել մեծագոյնք են այ  
 քան զհոգի մարդւոյն . վնյ առէ , փոքր ինչ  
 խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո :  
 Չորրորդ՝ յատկաբար . և ը այսմ տիրանց պատ-  
 կեր հօր է որդին . որ այսպէս ստհմանի ,  
 պատկերն է նմանուն ծնողին ընտիանաբար  
 ներապեալ ի ծնունդն : Կմանութիւնն դնի ի ի  
 տեղի սեռի , զի ամ պատկեր է նման հօր , բայց  
 ոչ ամ նմանուն է պատկեր . զի ձուն է նման  
 ձուոյ բայց ոչ է պատկեր ; Երկրորդ՝ դնի ծնո-  
 ղին ի ծնեան . առ ի տարբերուն նկարեալ կամ  
 քանդակեալ պատկերաց : Ասի երդ բնակա-  
 նաբար ներտպել , առ ի տարբերուն ստեղծեն  
 պատկերաց ողիք են հրեշտակք և մարդիկք :

### Եղբակացութեան :

Անուն պատկերին է յատուկ երկրորդի ան-  
 ձին , բայց ոչ կացուցիչ : Ցուցանի առաջին  
 մասն վկայութեամբ սբք գրոց : Խօսեցաւ ը-  
 մեզ որդւովք որ է ճառագայթ փառաց և նկա-  
 րագիր է ութեան նր : Չի զոր օրինակ արեգա-

կըն երեխի ՚ի ջուր և ՚ի հայելսոջ , այսպէս և  
 պատկերն հօր երեխի ՚ի յորդւոջ . վայ ասէ սբն  
 Դիմոնէսիոս , է աշբիւրական նշոյլ , յայտնելով  
 յինքեան զփառս հայրական : Եւ առաքեալն  
 ասէ , է պատկեր աներեսութին այ : Նմին իրի  
 ասէ տրն , որ ետեսն զիս , ետես զհայր : Ցու-  
 ցանի ևս բանիւ ՚ի սահմանէ պատկերին , զի  
 պատկերն է նմանութիւն ծնողին ներտպեալ  
 ՚ի ծնեալն բնականաբար , այլ զայս ունի որ-  
 դին , ուրեմն է պատկեր հօր : Ցուցանի դար-  
 ձեալ ՚ի սահմանէ բանին . բանն է պատկեր ա-  
 ռարկայի յառաջածեալ ՚ի պտղաբեր իմացա-  
 կանուէ , այլ որդին այ է այսպիսի բան . ու-  
 րեմն է պատկեր հօր : Ցուցանի երկրորդ մասն ,  
 ծնունդ կամ իմացումն կամ որդիունին և բանն ,  
 են սկզբունք՝ յորոց ծագի նմանունին և պատ-  
 կերն , ապա ուրեմն նք բաւականք են կացու-  
 ցանել զերկրորդ անձն : Եւ աստ գիտելի է , զի  
 թէպէտ անուն պատկերին է յատուկ որդւոյն ,  
 այնու զի յառաջածի բնական կարողութ . ՚ի  
 նմանութիւն բնութեան , զի իմացականունին է  
 բնական կարողութիւն և կամքն ազատական .  
 սակայն ոչ է պարտ զրկել զհոգին ՚ի նմանուէ  
 և պատկերակցուէ հօր և որդւոյ . ող Ալպերտ  
 և Ակովտ ՚ի գիրս իւրեանց սխալաբար զրկեն :  
 Զի (Ակովտ) բղիսի ՚ի յաղատական կարողութե-  
 նէ կամացն հօր , յորմէ ծագի և ՚ի նման բան  
 պատկերի և նմանութեան : Եւ աստուատ է ,

զի սէ գիրն որպէս զբանն , նոյնպէս և զհոգին  
 նշոյլ , հայելի և պատկեր կոչէ այ . ՛ ը այնմ  
 իմաստ . , քզի նշոյլ է մշտնթենաւոր լուսոյն  
 և հայելի աննարատ այ սողուցութեանն , և  
 պատկեր առատուեն նորա : Ուստի բազումք զայս  
 բան որ ասէ , արասցուք մարդ և պատկերի մե-  
 րում և շն նմանուեն . մեկնեն ՚ի վերայ անձանցն .  
 պատկերաւն իմանալով զորդին , և նմանութեն  
 զհոգին , յորմէ և սըն ՚Ներսէս ասէ զհոգւոյն  
 նոյն և նման հօր և որդւոյ : Առարկիցես թէ՝  
 նմանութիւնն պայրտ է լինիլ կամ'ի մէջ էուեն ,  
 կամ'ի մէջ անձանցն : Այլ ՚ի մէջ անձանց ոչ  
 կարէ լինիլ . զի անձինքն հակադրին միմեանց .  
 իսկ ՚ի մէջ էութեան անդէպէ է ներբերել զնմա-  
 նութիւն պատկերի և պատկերացելոյ : Պատաս-  
 խանեմ ընդունելով զառաջարկութդ և բացա-  
 սելով զհաստատութիւնն . զի թէ պէտ ՚ի մէջ  
 անձանցն է հակադրութ վամն գոլոյն իրականա-  
 պէս զանազաննեալ ՚ի միմեանց , սակայն այն հա-  
 կադրութիւնն ոչ է ներհական կամ պակասա-  
 կան կամ հակասական . այլ առնչական : Իսկ  
 առնչական հակադրութիւնն ներբերէ մանա-  
 ւանդ զնմանութիւն՝ քան թէ ՚ի բաց բառնայ .  
 զնը օրինակ ՚ի մէջ որդւոյ և հօր , օրք են առն-  
 չական հակադրուենք , ներբերի նմանուի . նոյն-  
 պէս և ՚ի մէջ նախատպին և պատկերացելոյն :  
 ՚Նաև ՚ի մէջ նոյն էուեն կարէ ծագիլ նմանութ ,  
 զնը օրինակ եթէ հանդէպ արեգական դիցին

Երկու հայելիք՝ ծագին երկու արեգակունք .  
որք ըստ նախատպին լինին երեք , որոց թէպէտ  
նոյն է էութիւն , սակայն կարեն ասիլ թէ են  
երեք արեգակունք նմանք միմեանց և նոյնք .  
գեղեցիկ ուրեմն գրեաց շնորհալին , նոյն և  
նման հօր և որդւոյ : Թէ արեգակն ծագեալ  
ի հայելին ճառագայթն թռթռայ յորմն,  
երկու արեգակունք լինին նմանագոյնք , իսկ  
նշոյն նման . թէպէտ էութիւնն մի : Այսպէս  
իմա և զԵրբորդութեանն նմանութիւն :

## Կմանութեան :

Յայսմ մասին քաջայայտ է զի մեք նմանիմք  
որդւոյն այ . Քզի հայրն երկնաւոր զմեզ ըստ  
պատկերի որդւոյ իւրոյ արար . ըստ այնմ , ըստ  
պատկերի իւրում արար զմարդն : Վայ առաքեց  
զարդին իւր ի խնդիր եղծեալ պատկերաց . զի  
վերստին ածցէ զմեզ յառաջին աստիճան պատ-  
կերակցութեան որդւոյ , ող ասէ առաքեալն .  
ըստրեաց զմեզ կերպարանակից լինիլ պատկերի  
որդւոյ իւրոյ : Արդ՝ մեք կրկնակի նմանիմք  
պատկերին այ , նախ՝ ըստ հոգւոյ գոյացական և  
սեպհական յատկութեանն որ է իմացականութիւն  
և կամքն . զի ող որդին այ է իմացական և ա-  
զատ , որովէ և պատկեր հօր . թէպէտ նովին  
իմացականութ և կամօք . այսպս և հոգին մեր  
ունի իմացումն և կամն , որով է պատկեր որ-  
դւոյ : Եւ այսպս համանման գոլով որդւոյ ,

արժանացաք որդէգրուե . և զի էք դուք որ  
դիք . և : Երկրորդ՝ բարոյականապս , յորժամ  
այնպէս գնացուք , ող և նայն գնաց : Եւ կամ  
զվարա նը ող հայելի հանդէպ աչաց մերոց կա-  
ռուցուք . և մեք ՚ի նոյն պատկեր համակեր-  
պեսցուք : Արդ՝ այսպիսի հայելի հանդէպ մեր  
կանգնեալէ սթ աւետարանն , յոր նկատեմք  
պարզապէս զքն . զորմէ ասէ առաքեալն , արդ  
մեք զփառան տն իբր լը հայելի տեսեալ՝ օր լը  
օրէ ՚ի նոյն պատկեր նորոգիմք փառաց ՚ի փառա  
ող և տն հոգւոյ : Հապա գուն գործեսցուք և  
մեք սթ աւազոնաւն նորոգեալքս զսկզբնատպին  
գեղեցկուն նկարել ՚ի հոգիս առաքինութ :

### Գլուխ Չորրորդ :

Յաղագս նմանութեան « լրտահանի յէրիբորդ աք-  
սուէ յագիութեան Որդոյն Աստուծոյ . բաժտեալ  
յէրիւոս Պրակս :

### Պրակս Առաջին :

Յաղագս նմանութեան որ արտահանի ՚ի յագիութե-  
նէ» Զօրութիւն :

Յատկութիւնք բանին երկրորդի տեսակի  
են երկու , ֆ զօրութիւն և իմաստութիւն : Եւ  
ծանիր զի այսոքիկ երեքեան առադրունքս և  
յատկութիւնք , կարողութիւն , իմաստութիւն  
և բարուն , թէպէտ են հասարակ երից ան-

ձանցն . սակայն ըլ վերանկատման իմիք առա-  
ւելյատկանայ միոյ ՚ի սոցանէ առ մինն քան առ  
միւմն : Այսպէս կարողութիւնն յատկանայ  
հօր , զի իմացական կարողութն ծնանի զորդին ,  
իսկ աղտտական կարողութն բղևէ զհոգին .  
բայց թէ առաքեան զզօրութիւնն որ է կարո-  
ղութիւն յատկացուցանէ որդւոյն ասելով , քն  
այզօրուն , տեսանելի է թէ ոգ պատկանի նմ :

### Եղբայրոցութիւն :

Զօրութիւնն վերադրի հօր , զի է սկիզբն . վե-  
րադրի հոգւոյն , զի ելանէ ՚ի հօրէ հաճութ կա-  
մացն . իսկ զօրուն աթոռ է կամքն այ . վնյ ա-  
սի յածաբանից թէ կտմքն այ է ամենակարող .  
և առաքեան թէ՝ կամացն այ ոչ ոք կայ հա-  
կառակ : Ասուստ և հոգին սբ մատն այ կոչի  
ֆ զօրուն . բայց առաւելյատկանայ որդւոյն ըլ  
քանի առաքելոյն , քն այ զօրութիւն : Ցուցանի  
վկայութ , ասէ Յակոբ ցմուքէն անդրանիկ  
իմդու , սկիզբն զօրուն իմոյ . որոյ պատճառն է ,  
զի որդին է զօրուն հօր . վնզի ելանէ ՚ի գոյա-  
ցուն հօր : Այսպէս յօրէնսն ասի , կոյս ոք ե-  
թէ գիտացեալիցէ զզօրուն արուի . ահա աս-  
տէն սերմն , որ է ՚ի գոյացուն արուին զօրուն  
անուանի : Արդ՝ որով փաստիւ որդին այ ան-  
ուանի որդի , նովին փաստիւ անուանի և զօրուն  
զի ծնանի ՚ի բնուն և ՚ի գոյացուն հօր բացա-  
տրութեամբ իմացականուն : Ուստի զերկուա

զայսոսիկ՝ ի միասին նշանակեաց առաքեալն յա-  
սելն , կրէ զամ բանիւ զօրուե իւրոյ : Բանիւ  
ասէ , զի ցուցցէ թէ՝ է ծնունդ իմացականուե ,  
ցորում յատուկ է բանն . իսկ զօրութեան ասէ ,  
յայտ առնելով թէ է ՚ի բնութենէ հօր :

### Կ Յ Ա Ն Ռ Ո Ւ Բ Ի Ա :

Յայսմ մասին կոչիմք և մեք շնորհօք զօրու-  
թիւն այ հանգոյն որդւոյն , զի ոնպ նա բանիւ  
ծնեալ ՚ի հօրէ և հաղորդել հայրական բնու-  
թեանն կոչեցաւ զօրուի , այսպէս և մեք բանիւ  
ծնեալ ՚ի սբ աւաշանէն բարձրացաք ՚ի հաղոր-  
դութիւն ածեղէն բնութեանն : Ահա առա-  
ջինն ասէ Յակոբոս , ծնեալ վերստին ոչ յապա-  
կանութեան սերմանէն , այլ կենդանի և մշտն-  
ջենաւոր բանիւն այ : Իսկ առ երկրորդն ասէ  
Պետրոս , որով մեծամեծ աւետիքն տուեալք են  
մեզ . զի նոքօք ածեղէն բնութեանն լինիցիմք  
հաղորդակիցք : իսկ Յովհաննէս առաւել պար-  
զաբանելով ասէ , ոյք ոչ յարենէ , և ոչ ՚ի կա-  
մաց առն , այլ յայ ծնան : Աստուած յայտ է .  
թէ զօրուեն այ ՚ի մեզ բնակի . վայ իրաւամբք  
քաջալերէ Յովհաննէս յասելն . գրեմ ձեզ  
երիտասարդք , զի էք դուք հզօրացեալք . և  
բանն այ ՚ի ձեզ բնակի . և յաղթեցէք դուք  
չարին : Մեծ ամօթէ ուրեմն քրիստոնէին , որ  
ընկճի ՚ի դիւէն . զի մեծ է որ ՚ի մեզ է , քան  
զայն որ յեին է : Որ յԱստուծոյ է , ոչ կարէ  
մեղանչել , զի սերմն նորա ՚ի սմա մնայ :

## ՊՐՈՒՆԵՐԻԴ :

Յաղագու ն հանութեան որ արդահոնի ՚ի յափէռութենէս  
Իմաստութեան :

Իմաստութն ՚ի յած կրկնաբար նկատի , ե-  
ռութենապէս և ծանօթապէս . առաջինն հա-  
սարակ է երից անձանցն , վն այն հայրն ոչ է  
իմաստութն ծնեալզորդին , այլ եռ-  
թենապաղի իմացականութն է յերիս անձինսն :  
Աստուստ և զհոգւոյն ասի , հոգի իմաստու-  
թեան : Իսկ երկրորդն այսինքն ծանօթա-  
կանն պատկանի երկրորդի անձին :

## ԵՎՐԱՔԱՐԵՒԹԵԱՆ :

Իմաստութն է յատկացել որդւոյն այ , ցու-  
ցանի վկայութ , քն այ իմաստութ : Աղբիւր ի-  
մաստութ բանն այ ՚ի բարձունս : Ցուցսնի ևս  
բանիւ . զի որդին այ է ծնունդ իմացականութն  
հօր , ուրեմն է բան առ որ յատկանայ իմաս-  
տութիւնն : Առարկիցեն կամինդրիցեն . թէ  
որովզանաշանի բանն յիմաստութ : Պատախա-  
նեմթէ ՚ի մեզ այսու զանազանի , զի բանն ամէ  
զորամընթացումն ՚ի նախադասութ յեզրակա-  
ցութիւն . և ՚ի ծանօթից յանձանօթս . իսկ  
իմաստութն է որովզ պարզապէս ըմբռնին սկզ-  
բունքն : Այլ ՚ի յած՝ բանն է պարզ ասումն  
կամիսումն մտաւորական . վնյ սմանք թարգ-

մանեցին խօս եղականապս . այլ ՚ի մեզ խօսքն  
է յոգնական . վն այն ոչ ՚ի գործ ածի : Իսկ  
իմաստուինէ յատուկ ածայնոյ բանին ֆիսին :

և ասի խօս՝ զի խօսի իմաստնապս դբարուէ հօր .  
՛շ այնմ՝ հայր յայտնեցի զանուն քո ՚ի : Յի-  
րաւի ասաց ուրեմն Յովհաննէս , զած ոչ ոք ե-  
տես , բայց միածին որդին որ ՚ի ծոց հօր , նա-  
պատմեաց մեզ :

## (Ամառալեէւն :

Յայսմ մասին պարտիմք նմանիլ իմաստուեն  
հօր խոկալով զվերին իմաստուին , և ոչ կալ մը-  
նալ ՚ի գեղերանս տարերց ՚իս . որ յիմարուէ  
հտմարելէ առ ած , ՛շայնմ իմաստուի ՚իս այ-  
սորիկ յիմարուէ է առ ած : զոր և կռապաշտք ,  
մեղսամէրք և դեք ունին . զորմէ ասէ Յակոբոս  
ոչէ իմաստուի ՚իս այս իջեալ ՚ի վերուստ , այլ  
երկրաւոր , շնչաւոր , և դիւական : Իսկ զյատ-  
կութենէ վերին իմաստուեն ասէ , նախ՝ զի սբ  
է , ապա խաղաղարար , հեղ , դիւրահաւան , ֆ  
պատուիրանացն այ : Եւ ՚ի գիրս իմաստուեն ասի ,  
լուսաւոր և անթառամէ իմաստուին . լուսոյ  
համեմատել առաւել գտանի . զի զնա գիշեր  
փոխանակէ , բայց իմաստուեն ոչ յաղթէ չարու-  
թին : Այս հոգեւոր իմաստուեն գլուխ և ոկիղ-  
բըն է երկիւղ տեառն , զօր թէ ոք ունի՝ նմա-  
նի իմաստութեանն հօր բարոյականապէս :

Գլուխ Հինգերրորդ :

Յաղագս Երիբորդ աւասի յապէռութեան Որդւոյն Աստուծոյ , Էտժոնեալ շերեւ Պրախ :

(Պրահ Աստղին) :

Յաղագս Նմանութեան որ արարեանի ՚ի Մարդեղութեանքին Ասորուծոյ :

Զի ուզ վերոյգրեալքն էին յատուկք Երկրորդի անձին , այսպս և մարդեղութին . զի միայն Երկրորդ անձն մարմացաւ առնլով զմարդկային բնութան և կալով մնալով յոր ինչ էրն : Որքան առ առաջինն՝ ասաց աւետարանիչն , բանն մարմին Եղեւ . իսկ որքան առ Եկդն յաւել թէ և բնակեցաւ ՚ի մեզ : Զսմանի թէպէտ ՚ի քարոզ գիրքն խօսեցաք , սակայն աստյարմար տեսի բացատրել զոմանս պատճառս առ ՚ի որսալ զնմանութ ինչ : Արդ՝ առաջին պատճառն Եղեւ սէրն բնակելոյ ՛ը որդիս մարդկան , ըատ այնմ , հեշտութ իմ է բնակիլ ՛ը որդիս մարդկան . Կ մեզ գրի , ուրախ լինէր ՛ը որդիս մարդկան : Զի թէպէտ ինքն էութ ներկայ է յամենեսին , սակայն կանեցաւ յատկապէս հոգեխառնիլ և ներքոյականապէս միանալ ՛ը մեզ անբաժանաբար . քն յն երեկ և այսօր , նոյն և յափտեան : Երկրորդ պատճառն է փրկութ մարդկան , զի թէպէտ այլապս ևս Փար էր , սակայն այս Եղանակը յարմարագոյն էր : Զի կոկորդիլուն զձայն

իւր նմանեցուցանէ ձայնից նաւորդաց և այնու  
որսայ զմարդիկ ։ այսպս տըն մարդ կերպարանե-  
լով զմարդիկ որսաց ՚ի կեանս : Ե՞ղդ պատճառն  
էր սէրն կրից , քզի տեսանէր զմեծուն վարձուն  
զի փախչեին ՚ի կրից և ինքն ցանկայր . և զի ած-  
ային բնութ անհաւար էր կրել , վս այն հարեց  
զմարդեղունն առ ՚ի լցուցանել զփափագն . շ-  
այնմ , ցանկանալով ցանկացայ ուտել ընդ ձեզ  
զայս պասեք : Զե՞ղդ պատճառ , զի կամեցաւ ան-  
ձամբ ուսուցանել զմարդիկ բերան ՚ի բերան շ-  
ցանկուն եկեղեցւոյ . համբուրեսցէ զիս ՚ի համ-  
բուրից բերանոյ իւրոյ : Զի և երկրաչափքն առ  
՚ի ներհմտացուցանել զաշակերտս իւրեանց  
իջանեն յաթոռոյ ՚ի վը հողոյ : Խոկ զայլ պատ-  
ճառուն տես ՚ի քարոզ գիրքն մեր :

### Նմանութեան :

Յայսմ մասին պարտին նմանիլ այ թագաւորք  
և վեհագոյնք շը չորից եղանակացս . նախ՝ սաս-  
տիկ սիրով յարելով ՚ի ստորագրեալսն և հոգե-  
խառնելով ը նոսա : Այսպի էր առաքեալն որ  
ասէր , վկայէ ինձ ած զոր պաշտեմն . զի անձ-  
կացել եմ տեսանել զձեզ . զի փոխեցից ՚ի ձեզ  
շնորհս ինչ հոգեսորս : Ե՞կդ՝ ՚ի փրկուն հոգւոց  
նց համակերպել զինքեանս ամցուն և լինիլ իր-  
քե զմի ՚ի նոցանէ , ոոկ խրատէ գիրն . կառավար  
զքեզ կացուցին , մի բարձրավզվիր . այլ լե՞ր ՚ի  
միջի նց իբրև զմի ՚ի նցնէ , ոոկ եղեւ տըն : Այս-

պիսի էր Պօղոս որ ասէր , եղէ ընդ հեթանոսս  
 իբրև զհեթանոս , ու հրէայս իբրև զհրէայ , ու  
 ամսեան ամ , զի զամսեան շահեցից : Այսպէս  
 թէւրք ծափտին կերպարանոք վն կառավարուեն :  
**Երդ՝** հանգոյն Յնի ցանկալ կրից կամ վն հօ-  
 տին , հովիւ քաջ զանձն դնէ ՚ի վը ոչխարաց  
 կմվն յուսոյ արքայուեն , և կմզի կրակից լիցին  
 Յնի , եթէ ՚ի բարձր աստիճանացն անըմբոն ի-  
 ցէ զիջանիւ ՚ի նուաստ աստիճան հանգոյն Յնի :  
 Այսպի սիրով կրից Յովսէփ թագաւորն ձեւալ  
 զթագն եղև կրօնաւոր . այսպս և մեր մէծ քեր-  
 թողն Մովսէս խորենացի եղև պարտիզպան :  
**Զրդ՝** բաւական չհամարել գրով ուսուցանելն ,  
 այլիջեալ շրջեալ ՚ի թեմա , և ու ընդունակուեն  
 ռամկաց ջամբել զկաթն վարդապետութեան ,  
 այսպս մարք զիջանին ընդ երեխայից յուսումն  
 նց թոթովախօս լինելով : Այսպի էր Պօղոս որ  
 ասէր , իբրև տղայոց ՚ի քն կաթն ջամբեցի ձեզ ,  
 ու ըստ ձերոյ ըունակուեն յօրինելով զբանն :  
**Եւ թէ՝** ակնունիմ ՚ի մօտոյ գալ առ ձեզ . և  
 բերան ՚ի բերան խօսիւ :

### Որո՞ք Երիրրէ :

Յաղագս նմոնութեան որ արտահանի ՚ի յագիր-թենէ»

### Մէջնորդ :

Հինգերորդ գլսաւոր պատճառ մարդեղուեն  
 բանին էր , զի լինիցէր միջնորդ ՚ի մէջ հօր և  
 մեր առ ՚ի հաշտեցուցանել և խաղաղուեն առ-

նել և միեւանս . քզի ՚ի մէջ տն բարկացելոյ և  
 ծառայի տարագրելոյ հարկաւոր է միջնորդ . զե  
 բաժանեալըն միջնորդաւ կացին : Եւ թէպէտ  
 ածածինն անսուանի միջնորդ , բայց ոչ ՇՀանրա-  
 կանի հաշտուե , այլ միաւորուե երկուց բնուեց .  
 ՛ որում միջնորդուե մաքուր արեաննը եղև մի-  
 աւորուին : Այսպէս կարգաւորն ևս ասի միջ-  
 նորդ , տակսյն ՚ի մէջ մասնաւոր անձանց . և այն  
 ևս շնորհօքն Յնի : Այլ ՇՀանրական միջնորդ  
 հաշտուե և խաղաղարար է միայն քն . ուստի  
 իրաւամբ տսաց առաքեալն . մի է միջնորդ ՚ի  
 մէջ այ և մարդկան մարդն յն քն : Յայն սակա  
 կոչի վէմ անկեան , որ զխուվարար հակառակն  
 ֆ զչարն և զմեղս եբարձ ՚ի միջոյ , և արար զեր-  
 կոսեանն մի : Աստուստ կոչի խաղաղուի , ՛ այ-  
 նըմ , զի՞նա է խաղաղուի մեր : Յայնսակս և հը-  
 րեշտակք ՚ի ծննդեան նը աւետարանեցին զխա-  
 զալուի երկրի փառք ՚ի բարձօւնս այ և յերկիր  
 խաղաղուի : Աստուստ և եսայի ասէ , խաղա-  
 ղութեան նը չի՞ք սահման . հաշտուին և խա-  
 ղաղուին ՚ի մէջ մարդկան և այ արար , որ է ան-  
 հուն և անսահման . տես և ՚ի բարող գրքոջն :

### Կ Խոնութիւն :

Յայսմ մասին տիրապս նմանիմք որուոյն այ  
 եթէ ՚ի մէջ խոռովելոց և բաժանելոց շաղկապ  
 նցման՝ միջնորդ հաշտուե և խաղաղարար լիցուք:  
 Ու իրաւամբ երանէ տին յասելն , երանի խա-

ղաղարաց , զի՞նք որդիք այ կոչեսցին : Այս  
պիսի էր Մովսէս , որ տեսեալ զերկուս եղբարս  
ի կոռւելն , վարեաց զնն ի խաղաղուն , և ասէ  
արք եղբարք էք Շէք զրկէք զմիմեանս : Մեծ  
է յիրաւի պատիւ միջնորդուեն , որ զերկուս  
խոռվութ բաժանելս միաւորէ ի խաղաղուն , ոգ  
միջնորդ եզրն ի հաւաքաբանուե զփոքրագոյնն  
ու մեծագումին կցէ ի միասին յեզրակացուե :

### ՊՐԵԿ ԵՐԵՐԵ :

Յաղագ « Նմանութեան որ արտահանէ ՚է յարչութենէ »  
Խռնորդուեան :

Ա եցերորդ պատճառ մարդեղուե բանին  
էր , զի հասուցանիցէր զմարդն իւրում բաղձա-  
նաց : Բաղձանք մարդոյն էր լինիւ իբրև զած ,  
վնզի յորժամլուաւ յօձէն թէ լինիք իբրև զած  
իսկոյն յղացաւ զբաղձանս , և փութացաւ կա-  
տարել զլորատ օձին , թերևս այնու գերագոյն  
աստիճանի պատահիցի : Բայց զի հրապոյր էր ,  
պղտոր գոլով թոյն վեշապին զըկեաց և ՚ի փոցն  
զոր ունէր . յոր գթացել տրն եկն ցուցանել ըզ-  
ճշմարիտ ճանապարհ , որով հար լիցի ժամա-  
նել ՚ի նմանուն այ , և լինիւ իբրև զած : Եւ այս  
է խոնարհուե ճանապարհ , որոյ հեղինակ եղե  
ինքն . վնյ ասէր , ուստարուք յինին , զի հեղեմ  
և խոնարհ սրտիւ . և գտթիք հանգիստ անձանց  
ձերոց , ու լցոյն բաղձանք ձեր . զի ՚ի սիրտ խոն-

արհին գայ ած , որում բաղձայ նմանիլ : Ես յո  
հանգեայց . եթէ ոչ ի հեզս և ի խոնարհօ :  
Իսկ սիրտ՝ որ ունիցի զած , հանգչի ի բաղձա-  
նաց ; ած սրտի իմոյք ուրեմն որ խոնարհէ զանձն,  
բարձրացցի ի նմանութիւն Աստուծոյ : Զե  
ինքն խոնարհեցոյց զանձն :

### Գլուխ Աւելիորդ :

Յաղագ յապէռութէտն Հոգւոյն Սրբոյ բաժանեալ  
յերէս Պրատ :

### Պրատ Առաջն :

Յաղագ նմանութէտն Հոգւոյն Սրբոյ . ըստորոշ  
Հոգի :

Յառադրուեց Հոգւոյն սրբ ոմանք կոչին  
յատկեղ , ո՞պ Հոգի , Սէր , և պարգև : Ոմանք  
յատկագոյնք , ո՞պ Սրբ և Բարի . Եւ ոմանք յա-  
տուկ . ո՞պ Աղաւնի , Հուր , և : Զորոց կար-  
գաւ ասասցուք . և նախ զառաջնոյն :

### Եպակայութէտ :

Հոգի անունս է յատկեղ երորդի անձին .  
ցուցանի նախ վկայութ . երեք են որք վկա-  
յեն յերկինս , Հայր , Բանն , և Հոգին : մկր-  
տեցէք զնն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
սրբ : Արդ՝ ո՞պ միւսքն յատուկ յատուկ ան-  
ուամբք բացատրին , նոյնպէս և երորդ անձն :

Յուցանի եղդ՝ բանիւ . զի ող Որդին կացուցա-  
 նի ՚ի բանի որդիուն այնու՝ զի յառաջածի ՚ի  
 գոյացուն հօր . այսպս և հոգին պարտի կացու-  
 ցանիլ ՚ի բանի հոգւոյ , այնու՝ զի ելանէ ՚ի կեն-  
 դանուն հօր . վայ կոչի շունչ ամենակալի :  
 Աստուստ կոչի շնչումն կամ փչումն : Աստէն  
 շունչ և հոգի նոյն են . ող յայտ է . փչեաց ՚ի  
 նա շունչ կենդանի , և եղև մարդն հոգի կեն-  
 դանի . այս է՝ այն շնչովն որ փչեցաւ լինքն ,  
 հոգեորեցաւ : Բայց կըկին է շունչն ՚ի յած .  
 Նախ էութենական , և այսպէս միով շնչով են  
 կենդանի երեք անձինքն : Եղդ՝ ծանօթաբար  
 և այս է անձնաւոր շունչն կմ Հոգին այ : Այս  
 շունչ ամենակալին զերիս առաւելուիս ունի քան  
 զշունչն մեր , զի մերն է ցնդական պատահական  
 և մասնաւոր . իսկ ածայինն է գոյացական , ան-  
 հոն , և անսպառ . զի համահետեւի էութենն  
 որ է գոյացական , անհոն , և անփոփոխ . վա-  
 յն և ԱՃ : Նմին իրի՝ ասէ իմաստումն . հոգի  
 ան ելից զտիեղերս . որ է յատուկ այ : Շեր ե-  
 լից զձեղ սատանայ ստելձեղ հոգւոյն . ոչ ստե-  
 ցիք մարդկան , այլ այ . Առարկիցես . թէ ոչ  
 միայն երդի անձին յատկանայ հոգի գոլն , այլ  
 և բոլորի ածուեն . ըստ այնմ , հոգի է ած . եւ :  
 Պատասխանեմթէ անդէն սբ գիրն ուսուցա-  
 նել կամի թէ ած ոչ է մարմնեղէն գոյացուն , այլ  
 հոգեղէն . զի կըկին կերպիւ իմանի հոգի բառս ,  
 էութենաբար , և ծանօթաբար . էութենաբար

պատկանի բոլորի Երրորդութեանն . իսկ ծառովաբար միայն ենդի անձին : Խնդրիցեն . թէ արդեօք ածաշունշն շնչեցաւ միայն ՚ի հոգւոյն . թի ՚ի բոլոր ածուեն : Պատասխանեմ թէ շնչեցաւ ՚ի բոլոր Երրորդուեն , քզի գործ Երրորդուեն առ արտաքս է անբաժանելի . զի միով էական կամաւ արտագրի : Բայց և որում պարզեն յատկանայ Հոգւոյն սրբոյ , ասի ներշնչեալ ՚ի Հոգւոյն սրբոյ :

### Նմանութիւն :

Յայսմ մասին նմանիմք Հոգւոյն սբյ բոլորովիմք մեռանելով մարմնոյ , և կենդանանալով հոգւովն այ , եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցեք , կեցջիք . եթէ հոգի այնորիկ որ յարոյցն ՚ի մեռելոց զՅն բնակեալ իցէ ՚ի ձեզ . ապա մարմին մեռեալ է վն մեղաց : Եւ դարձել եթէ կեամք հոգւով , և Հոգւոյն և միաբանիցնեք , ֆ նմանիցուք : Հոգի է ած և յերկրպագուաց նր պարտի հոգւով և ճշմարտութ երկիրպագանիլ . քանզի և հայր զայսպիաի երկիրպագանել խնդրէ :

### Պրաւ Երիբորդ :

Յաղագ և նմանութիւն Հոգւոյն Արքոյ ըստորում Աւք :

Աւքն էականապէս առեալ պատկանի բոլոր Երրորդուեն . վասնզի սիրոյն աղբիւր է կամքն իսկ կամքն էութենապս է միյերիս անձինս , վն

այն բոլոր Երրորդութիւնն ասի սէր , և այնմ .  
 սիրելիք ած սէր է . և շնորհալին , սէրն ի սի-  
 րոյ զսէրդ առաքեաց : Իսկ ծանօթապէս և  
 յառաջածելուար առեալ՝ պատկանի Հոգւոյն  
 սըյ . որոյ պատճառն է զի ող որդին գոլովյի-  
 մացականուէ հօրն ծնեալ՝ յատկանայնմ բանն .  
 այսպս և հոգին ի համահաճուէ կամաց հօրն  
 առ էուին գոլովարտաբղևեալ , յատկանայնմ  
 սէրն : Առարկիցես . եթէ հոգին սը իցէ բըդ-  
 խումն ի կամաց հօր , ուրեմն հայրն է ազատ  
 ի յառաջածել , և ոչ յառաջածել զի կամքն է  
 ազատ կարողուէ . ուրեմն կարէ ոչ յառաջածել  
 ուրեմն և հոգւոյն սըյ բղևումն ոչէ բնական և  
 հարկաւոր : Պատասխանեմ բաժանելով զհաս-  
 տուտուէ առաջարկուեղ . կամքն է ազատ կա-  
 րողութիւն , որ ազատաբար և անտարբերաբար  
 բերի առ առարկայն յառաջեղեալ , եթէ իցէ  
 առարկայն մասնաւոր բարի՝ ստորասեմ . եթէ  
 իցէ լեհանուր բարի՝ բացասեմ . զի ընդհանուր  
 բարին ոչ թողու զկամքն յանտարբերուե , այլ  
 հարկիւ շարժէ առ ինքն . ող լինքեան ծա-  
 նօթ սկզբունքն ի հաւաքաբանուե հարկիւ  
 շարժեն զմիտս ի հաւանուի եղբակացութեանն  
 այլէուին հօր է լեհանուր և անհում բարի , և  
 ծայրագունադպս հարկաւոր : Արդ՝ լորում ծայ-  
 րագունադպս հարկաւոր , շարժէ զիմացականուէ  
 հօր յիմանալ , որով ծնանի բանն . իսկ լորում  
 ծայրագոյն և անհում բարի՝ շարժէ զկամքն ի

սիրել, յորմէ բղևի ծանօթական սէրն որէ հոգին սը : Յայսմանէ պայծառապս երեխ, [թէ կամքն այ բերի յէութենական առարկայն չուրեքին կերպիւ, աղատապէս՝ շորտմ կամք, համահաճութ՝ շորտմառ ծայրագոյն բարի, և բնականապէս և հարկաւորանպս, յորմէ ևս հետեւի [թէ՝ սէրն ծանօթական որէ հոգին սը, բղևի ՚ի հօրէ աղատապս, բնականնպս, և հարկաւորանպս : Եւ աստ ծանիր, զի այս սէր է այնքան հարկաւոր, մինչ զի անֆար է հօր չսիրել դէուծիւր, զի եթէ մեք մասնաւոր էակքս ըստ առաքելոյն ոչ երբէք ատեմք զանձինս մեր, այլ սիրեմք, որչափ ևս առաւել հայր անծ, որոյ էուն է շհանուր և ծայրագոյն բարի : Նաև գիտելի է զի ոտք ոչ ասելի [թէ հայրն է իմաստուն ծնեալ իմաստութն, նոյննպս ոչ է ասելի թէ հայրն է կենդանի բղևեալ հոգւովս, այլ է շնինքեան իմաստուն և կենդանի . և յառատութենէ իմացականուեն և կենդանուեն յառաջգան անձինքն : Ե՞ղդ՝ գիտելի է զի ոտք որդի ասի, զի ծնանի ՚ի կենդանական գոյացուէ հօրն, նոյնպէս և հոգի սախ այնու՝ զի բղևի ՚ի կենդանական շնչոյ հօրն : Ե՞ղդ՝ գիտելի է զի ոտք կացուցիչ ե՞ղդի անձին է որդի գոլն և բան, նոյննպս և կացուցիչ ե՞ղդ անձին է հոգի գոլն և սէր, զի բան հոգւոյ կացուցանի փչմամբ, իսկ բան սիրոյ ախորժական և աղատական կարողութ : Աստէն թողում զբաջաղանս Ալպերախ,

( որ միջապս և անմիջապս բղխումն դնէ , ) զի  
ոչ է դիտումն մեր առ վէճ , այլ առ սէր :

Վճառքաւթեան :

Յայսմ մասին գեղեցկապէս նմանիմք հո-  
գւոյն սըյ , եթէ կարասցուք կոչիլ սէր : Եւ  
այն կարէ կոչիլքոլորովին սէր , յորում մախիզ  
ինչ կամ արատ ՚ի վարս իւր և ՚ի բանս ամենսին  
չգտանիցի , որովլամ կողմանց լիցի շարժառիթ-  
սիրոյ . զի յայն սակա կոչեցաւ ած սէր , վասնզի  
ոչ ինչ գոյ ՚ի նմա ատելի կամ խոտելի . այլ է  
քոլորովին սիրոյ առարկայ : Աստուստ և տէրն  
մեր կոչեցաւ ՚ի \* Ռէթէոսէ՝ Սէր . շայնմ Դի-  
ոնէսիոս , իմ տուփումն խաչեցաւ . ֆ իմ սէրն :  
Զնոյն անուանէ և եկեղեցին բերանով մագ-  
դաղենացոյն , առ պարտիզպանն ձայնէր Մա-  
րիամ , մի՛ թէ գու բարձեր զանդրանիկն իմ սէր .  
զի ոչ գտաւ ՚ի նմա մախիզ : Այսպի էր խորհր-  
դական հարսն առ որ ասաց փեսայն , ամենսին  
գեղեցիկ ես մերձաւոր իմ . և արատ ինչ ոչ գոյ

\* Շառւէ ինչ վրեպահաւ եդեալ անուանս չոխանակ Իգ-  
նատիոնէ Ասպուտծաղցեաց աշխէերանն Փրեսփոսէ , որ  
՚ի ըստըն առ Հառով գրէ . օ էմօց քրաց էւտանրաւաւ .  
Ուսպի առեալ Դիոնէսիոսէ էրինէ ՚ի ճառա Ասպուտծա-  
ցին պուշմանց , լէ լուեցաւ ոմանց ասպուտծայնուգոյն  
լինէլ պուշմանդ անունն առն զսիրոյն . առնովէ գրէ առէ և  
Աքայինն Իգնատիոն . լէ էմ պուշմն խոչեցաւ :

՚ի քեզ : Այսպէս և մանուկն Դամիել , քղի էր  
հոգւովս անարատ կոչեցաւ ՚ի հրեշտակէն ցան-  
կալի , այր ցանկուել ես դու ինձ : Ջանասցուք  
ուրեմն մաքրել զմեղ իբրև զջինջ հայելի , զի ՚ի  
ծագել ճառագայթից սիրոյ հոգւոյն ՚ի սիրոս  
մեր , անդրափոխիցուք բոլորովին ՚ի սէր :

Իսկ ըդէմ սորին որ իցէ բոլորվին չարեօք  
լցեալ , և ատելի այ և մարդկան եղեալ , յար-  
մարապէս կոչի դե և սատանայ : մինդ ՚ի ձէնջ

Սատանայ է , և այն :

### Պրաէ Երրորդ :

Յաղագո Նմանութեան Հոգւոյն Արքոյ ըստ ուրուց  
Պարգև :

Հասարակապէս նկատել թէ որդին և թէ  
հոգին են պարզեք հօր , զի ՚ի նմանէ տուան մեզ:  
\* այնքան սիրեց ած զ՞ու . մինչև զորդին իւր միա-  
ծին ետ : իսկ զհոգւոյն ասէ .† ես աղաչեցից ըզ-  
հայր և այլմիիթարիչտացէ ձեզ զհոգին ճշմար-  
տուել : Սակայն յատկապէս անուն պարզեին  
հոգւոյն պատկանի , ցուցանի նախ վկայութեանի  
‡ մկրտեսցի իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ . և ընկալ-  
ցի զպարգես հոգւոյն սբյ : Եւ նրն ասէ ցկինն  
սամարացի . || Եթէ դու գիտէիր զպարգեսն այ .  
զհոգւոյն սբյ ասէ . զի նա խոստացաւ զջուրն

\* Յոհ. 3, 16. † 14, 16. ‡ Գործ. 2, 38. || յոհ. 4, 10.

կենդանի : Եւ մինչ կինն կայր ՚ի տարակուսի  
թէ սա և ոչ դոյլունի , ուստի՞ կարէ տալ ինձ  
ջուրն կենդանի , յայնժամ բացատրեաց զմիտո  
բանին : Աստուստ և Պօղոս ասէ , գոհանամ  
զանպատում պարգեաց տն մերոյ Յնի Քնի :  
Անպատում պարգեն է Հոգին սըք , զօր և Յա .  
կորոս կոչէ պարգե կատարեալ ՚ի հօրէ իշեալ :  
Յուցանի ևս պատճառաւ , պարգենէ ձեր կա-  
մաց , այլ Հոգին սըք յառաջագայի ՚ի կամաց ողպ  
ցուցաւ ՚ի վերոյ ։ Վա այն կոչի յածաբանից ե-  
լումն առատաթաշխուեն , ուրեմնէ պարգե : Յու-  
ցանի եկդ՝ ոչ այլինչ է պարգեն , եթէ ոչ սէր .  
զի ողպ սէր յառաջագայի ՚ի կամաց , նոյնպէս և  
պարգեն , այլ Հոգւյն սըք յառուկ է գողն սէր ,  
ուրեմն և գոյն պարգե , և այսոքիկ անուամբ  
միայն զանազանին և ոչ իրօք : Եւ ծանիր զի  
Հոգին սըք ըստ ինքեւան նկատեալ է սէր , իսկ զի  
բաշխի յեկեղեցին պարգե անունս յատկանայ  
նաւ , յորմէ յայտ է թէ՝ առ կացուցումն Հո-  
գւոյն բաւական է գոյն Հոգի և սէր :

### Կ մանաւթեան :

Յայսմ մասին գեղեցիկապէս նմանիմք Հո-  
գւոյն սըք եթէ առատաձեռն լիցուք առ աղ-  
քատս և առատաթաշխ՝ ՚ի պատկանաւոր տեղիս .  
և յայնժամ հանգոյն Հոգւոյն սըք կարեմք ան-  
ուանիլ առատաթաշխ , կամ մեծապարգե , և կի  
արձակապս պարգե : Զի ողպ վամն առաւել Հո-

գեար գոլոյն ոք անուանի հոգի, և վա առաւել  
մտացի գոլոյն՝ միտք, սյսպս և վա առաւել պար-  
գևաբաշխ գոլոյն կարէ անուանիլ պարգե: Աս-  
տուստ Արտաշէս թագաւորն մեր կոչեցաւ եր-  
կայնաձեռն, զի էր առատարաշխ: Մեծն Ա-  
ղեքանդը իմնդրողին զլումն մի, պարգեէր ըզ-  
քաշաք: Եւ ի մանկուեն Փիլիպպոս հայր իւր  
չկարաց յագեցուցանել զնա ընչեւք, զի զամե-  
նեսեան բաշխէր: ՚Ի վեր քան զամ է հոգին  
սը, զի ոչ միայն զիւրն, այլև զինքն գլխովին  
բաշխէ ընդունակաց զի անձամբ հեղաւ յա-  
ռաքեալն ՚ի սը վերնատան, վայ գեղեցկապս  
կոչեցաւ պարգե: Հոգւոյն սը նմանի նախան-  
ձեցաւ անողորմն Պետրոս, որ ոչ միայն զիւրն,  
այլև զինքն բաշխեաց աղքատաց: Աղէ և մեք  
հետեւեցնէք սմա, գէթ զինչս մեր տալով:

### Գլուխ Եօնէրրոր:

Յաղագս յափէտուենց Հոդոյն Արքոյ, Էածանեալ  
յերէս Պետրոս :

### Պետրոս :

Յաղագս նմուշէ Հոդուոյն արքոյ ըստորոշմ Աստիք:

Սրբութեղ անուն բացարձակապէս առեալ  
պատկանի բոլոր Նըրորդուեն, յոր միտ առեալ  
լինի քանն Եսայեայ, սը սը սը տը զօրուեց.  
լի են երկինք և: Եւ յօրէնսն ասէ, եղերուք  
սը, զի ես սը եմ: Բայց յատկապէս առեալ,

Վերաբերի առ հոգին սբ վա այն ուր ուրեք  
դրի հոգին՝ ի միասին դնի և սբն : Եւ Դա-  
փթասէ , հոգի քո սբ և բարի առաջնորդես-  
ցէ ինձ : Պատճառ առաջնոյն է , զի սրբունն ը-  
գինէսիոսի է ամենակատար և ամբիծ մաքրուն  
որ պատկանի բոլոր ածուխն : Իսկ պատճառ  
եկդինէ , զի աղքիւր սրբուն և մեղաց է կամքն .  
վազի կամքն գոլով աղատ կարողուն , անտար-  
բեր է հետեւիլ իմացականուն և ոչ : Աստուստ  
հրեշտակն կարաց մեղանչել : Սակայն ածային  
կամքն է անախտ , զի շարժի միայն յամենիմաստ  
իմացականուն իւրմէ , որ ոչ կարէ մօլորիլ և ոչ  
է ոչ իշխանութ այլոց . զի շղեմ իմացականուն  
կարիցէ ախտանալ , ող կարաց դեն : Եւ այսպս  
ածային կամքն է ամենելին ուղիլ : Ուստի և հո-  
գին սբ , որ բարի ինմանն պարտի լինիլ ամենսբ :

### Ն Ա Խ Ա Բ Ի Ւ Ն :

Յայսմ մասին նմանուն յայտ է , զի այնք՝ ո-  
րոց կամքն է ուղիլ և պարզ հանգոյն հոգւոյն  
սբյ կոչեն սբք բայց յայնժամ ստանամք տիրա-  
պէս զայս նմանուն , յորժամ հոգին սբ բնակի  
ի մեզ . և յորժամ զսիրտ սբ և զհոգի ուղիլ  
նորոգէ ի փորի մերում : Վայ աղերսէր մարգա-  
րէն , զհոգի քո սբ և բարի մի հաներ յինէն :  
Իսկ շղեմն սորին կոչի պիղծ , յորժամ այսն  
պիղծ և . զի ըստ ամենայնի թիւրեալէ կամքն :

Այսպէս և նմանիք նորին :

## Պրոէ Երիբու :

Յաղագն Նմանութեան Հոգոյն Արքոյ ըստորուծ Բառի :

Որպէս սրբուն, նոյնպէս և բարուն բացարձակապէս առեալ պատկանի բոլոր Երրորդութեանն : Յուցանի վկայութ, զի ասէ նորն, չի՞ք ոք բարի, բայց մի ած : Յուցանի ևս բանիւն . զի բարին համագառնայ Շէ էակին, ուստի ոնպ ած է անհուն էակ, այսպս ևս է անհուն բարի : Իսկ յատկանպս առեալ վերաբերի առ հոգին սթ, Ռայնի, հոգի քո սթ և բարի և : Որոյ պատճառն է զի ած հայր ունի կրկին կարողութ, ոնպ ասացեալ է, թի իմացական և աղատական . իսկ առարկայ և առաջեղեալ իմացականուն է ճշմարիտն, և կամացն է բարին : Արդ՝ էուին այ որ է լիուն գոլոյ, յառաջադրի և առարկի իմացականուն հօր, ոնպ ծայրագոյն ճշմարտուն, յորմէ և ծնանի բանն : Իսկ կամացն առարկի ոնպ անհուն բարի, յորմէ արտաբալսի հոգին սթ. վնայ նմին յատկանայ բարուն, ոյր աղագաւ ամէ շնորհալին . ի հօրէ բղխեալ հոգի աղբիւր բարուն : Աստուած յատկացուցանի հոգւոյն նախախնամեն որ է գործ բարուն . Ռայնմ ձգի ի ծագաց մինչև ի ծագս օգտակար առողջուն և գարմանէ զամսեան քաղցրութ : Ասիցն ապա Շէք հոգի ճշմարտուն կոչէ տըն : Պատմնեմ թէ վն գոլոյն բացարձակապէս հասարակ երից

անձանցն . աստուստ է , զի և զինքն կոչէ ճշմարտութիւն . ես եմ ճանապարհ և ճշմարտուն : Եւ դարձեալ զի մի' ի հոգի անուանէն պատրել կարծիցեն ոչ գոլգոյացական , այլ ուրուական , ըստ համարեին հոգի ինչ տեսանելց առաջօք :

### Կ Յ ա ն ո ւ թ ի ւ ն :

Յայսմ մասին նախ՝ հասարակաբար ունիմք զնամնուն հոգւսին սըյ , զի շորում եմք եակք , եմք բարիք : Եկդ՝ յատկանոս նմանին նմայնք՝ որք բարենպս կենցաղավարելով և բարենպս խօսելով բարի անուն ստանան ի մեջ ոի , զորոց ասէ արն , մարդ բարի ի բարի գանձուց սրտի խրոյ բղանէ զբարի : Որոյ ընդդեմն կոչի չար : Գայ չարն և այն : Այսն չար , մարդ չար :

### Պ ի ա չ Ե ր բ ր դ :

Յաղագն նմանութեան Հոգւոյն Սրբոյ ՚ի էռդմանէ և օլետնց Պարգևեացն և այլոյ յարանցնց :

Հոգին և զանազան պարգևաց խրոց զանազանապէս անուանի : Յեսայեաց կոչի , հոգի իմաստուն և հանճարոյ , հոգի գիտուն և խորհրդոյ . հոգի զօրուն՝ ածպաշտուն՝ և երկիւղի . իսկ ի քնէ կոչի հոգի ճշմարտուն , և միմիթարիչ հոգի սը : Արդ՝ այսոքիկ թէպէտ հասարակապէս պատկանին երից անձանցն , այնու զի հային առ արտաքս . բայց շորում են ձիք ,

շնորհք , և պարգեք , յատկանան հոգւոյն . վն  
զի ձիրքն և պարգեքն զեղանին ՚ի բարեհաճու-  
թենէ կամաց . և զի հոգին սբ է բղխումն ՚ի  
կամաց հօր , վնկ ամ պարգեք և ձիրք առ նա  
վերադրին : Դարձեալ իմաստունն զբգւմ յատ-  
կուիս ստորոգէ զհոգւոյն սբյ յասեն , զի գոյ  
՚ի նմա հոգի մտաւոր , սբ , միածին , բազմա-  
բաշև , նուրբ , դիւրաշարժ , պարզ , անարատ ,  
յայտնի , անվըէպ , բարեսէր , պագ , անար-  
գել , բարեբար , մարդասէր , հաստատուն , ըզ-  
գուշաւոր , անհոգ , ամենազօր , ամենահայեաց  
և ամ իրաց բաւական : Յորոց պայծառապէս  
ցուցանի թէ հոգին սբ է գոյացական և ած .  
զի զնամ առաւելուն այ նմա ստորոգէ : Արդ՝  
թէպէտ այսպէս յատկուիք բազում զնին հո-  
գւոյն , ստկայն առաջին երեքեանն , զորոց ՚ի  
վեր անդը ասացաք՝ են յատկեղք . նկատմամբ  
որոց՝ սբ յատկացեալ կամ յատկագոյն ասին .  
զի բոլորի Երրորդութեանն պատկանին . թէ-  
պէտ նկատմամբ իմիք առ հոգին բերին :

### Կ Յ ա ն ե ռ ս թ ի ւ ն :

Յայտն մասին և մեք պարտիմք նմանիլ հո-  
գւոյն սբյ բերելով ՚ի մեզ զլրուեն բարոյակա-  
նապէս և տեսականապէս վարժելով ՚ի տեսա-  
կան ուսմունս և կրթելով յածաբանական և ՚ի  
բարոյական առաքինութեանն պատկանին : Արդ՝ ըստ առաջնոյ  
կարգին պարտիմք լինիլ իմաստուն , ուսմանելով

զածաբանուել : Հանճարեղ , խոկալով զբարձրագոյնս և գտանելով զսկզբունս և զորոշմունս առաքինուեց : Գիտուն՝ միտ դնելով բնականի ռւսման . որով լուսաւորեալ առաջնորդիմք ՚ի գերբնականսն : Հզօր՝ ՚ի նուածել զախտս հոգւոյ և զչարն : Խորհրդական՝ զի սքանչելապս իմասցուք զդարանս չարին՝ և Պողոսի որ ասէք , չեմք ինչ անտեղեակ խորհրդոց նը . և զի՝ մի թարց խորհրդոց ինչ արասցուք : Երկիւղած՝ զի ահիւ անձանց զփրկուել գործեսցուք : Նաև ածապաշտ՝ զի ուրախութ և գողութ այ ծառայեսցուք ոնպ քրիստոնեից վայելէ : Դարձեալ ճշմարիտ , զի զստախօսունին անհետ արասցուք ՚ի մերոց հոգւոց : Եւ միիթարիչ՝ միիթարել ժղվարդն քնի , ոնպի տեսօղքն վկայիցեն թէ ստուգապս գոյ ՚ի սմհ հոգի իմանուել և հանձրոյ :

Իսկ և երկրորդի կարգին զոր դնէ իմաստունն , լինիմք նմանօղք հոգւոյն սբյ . եթէ լիցուք մտաւոր՝ լուսով բանի վարելով . և ոչ և կրից : Սբ , միածին , եթէ վս այ ծանիցուք զմեզ ծնեալ , և ոչ վասն չի . Եւ եթէ զսիրտս մեր սրբեսցուք ՚ի մեղաց : Բաշմաբաշլ՝ եթէ լիցուք առատաձեռն : Նուրբ՝ եթէ թափանձեսցուք մտօք ՚ի ներքին կողմն վարագուրին : Դիւրաշարժ՝ եթէ ներշնչման հոգւոյն տեղի տալոյ պատրաստ լիցուք : Պարզ՝ եթէ զդիտարունիս մեր առ ած ուղղեսցուք : Անարատ՝ եթէ իլեսցուք ՚ի բաց զբիծս գաղտնեաց սր-

տից խորհրդոց : Յայտնի՝ եթէ եկեսցուք առ  
լցոն խոստովանուե : Անվրէպ՝ եթէ անշարժ  
գիտեսցուք ՚ի վերջին վախճանն մեր : Բարե-  
սէր՝ եթէ զբարին ընկերին կամեսցուք : և մի՛  
նախանձեսցուք : Արագ՝ եթէ զհետ կոչմանն  
քնի ճեպեսցուք : Անարդել՝ եթէ յերկնային  
ուղւոյն և ոչ յերեսաց սրոյ և հրոյ կասեսցուք :  
Բարերար՝ եթէ զբարիա տտելեց մերոց արաս-  
ցուք : Մարդասէր՝ եթէ զընկերն ը անձին սի-  
րեսցուք : Հաստատուն՝ եթէ ՚ի բարի յառա-  
ջադրուե մերում անշարժ մնացուք : Զգուշա-  
տոր, եթէ ՚ի հրապարաման՝ չարին զգուշա-  
ցուք : Անհոգ՝ եթէ զամ հոգս մեր ՚ի տը ըն-  
կեսցուք : Եւ ամենազօր՝ եթէ ՚ի զօրութիւնս  
հոգւոյն ապաւինեսցուք : Ը առաքելոյն՝ որ  
ասէ, յամի կարօղեմ . այնու որ զօրացոյցն զիս :  
տեսե յապաշխարանն մեր առաջին մասն,  
գլուխ : ևս մասն երորդ : գլուխ և :

### Պրահ Աւելչեն :

Յաղագս նմանութեանց որ արագահոննեն ՚ի գլուխն յատիո-  
ւեանց Հոգեոյն Սրբոյ . որտ են աղաւնաչերպ և  
հրախերոյ գոյն :

Հայրն ած նկարի ՚ի կերպ ծերոյ, զի այնպս  
երեւեցաւ Դանիելի . որով ը գիտնէ սիսափ նշա-  
նակինորին յաւիտենականուեն և կատարելութին,  
Որդին ած նկարի ՚ի կերպ մարդոյ վասն մարդե-  
ղուե : Իսկ Հոգին ած մերթ նկարի ՚ի կերպ ա-

զաւնոյ, զի աղաւնակերպ երևեցաւ, այլ ոչ եթէ  
 զբնուի աղաւնոյ էառ : Եւ այս վա երկուց  
 պատճառաց, նախ՝ զի աղաւնին է անխոնջ ՚ի  
 ճախրեն, զի ունի թեւ զօրեղս, ըայնմ, թեք  
 աղաւնոյ արծաթապատ և թիկնամէջ նորա ՚ի  
 գոյն ոսկւոյ : Զի ՚ի մէջ հրահալելեաց ոսկին  
 և արծաթն են առաւել մածեաղք կու և  
 հաստատումք, սյապէս թեւ և թիկնամէջ ա-  
 ղաւնոյ : Նմին իրի մարգարէն ՚ի խնդրեն ըզ-  
 թես՝ զաղաւնոյն խնդրեաց : Ո տայր ինձ զթես  
 ոոպ զաղաւնոյ : Զի է անխոնջ ՚ի շարժման իւ-  
 րում, վնկ մովսէս ՚ի սկզբանէ զշարժումն սմին  
 յատկացոյ՝ յասեն, և հոգի այ շրջէր ՚ի վը-  
 ջուրց, որ նշանակէր զլսորհուրդ մկրտութեանն  
 վա այն ՚ի ջուրսն յորդանանու աղաւնակերպ  
 էջ ՚ի վերայ էակցին : Զի եթէ հոգին մեր ը-  
 Դաւթեան ձեռնարկուեն է մշտաշարժ, որչափ  
 ևս առաւել հոգին այ : Վա այն զնմանէ ասէ  
 իմաստունն, քան զամ շարժուն շարժագոյն է  
 իմաստուն, դարմանէ և ըմուանէ ըամ վա ստա-  
 կութեան : Ճարժումն իմա ըստ ներգործուե-  
 կամաց, այլ ոչ տեղականապս : Ե՞ղդ՝ զի աղաւ-  
 նին է առատածին և պտղաբեր, այսոպս և հո-  
 գին սը, զի է հայրական սրտի առատութիւնն,  
 որ եօթնեակ պարզեօքն ուռոգանէ զեկեղեցին  
 և պտղաբերէ, ոոպ ՚ի սկզբանն ՚ի վը անդնդոցն  
 զանբաւ ծնունդս կենդանեաց բղակացոյ՝ ըստ  
 սըյն Բարաղի և Նարեկացույն : Ե՞ղդ՝ նկարի ՚ի

ձեւ լեզուի հրակերպ, զի հրեղէն լեզուօք էջ ՚ի  
դասս առաքելոց : Այս է այն հուրն, զորմէ  
ասաց տէրն արկանել յերկիր : Եւ թէպէտ հա-  
սարակապէս հուրն այլաբանօրէն ասի զնյ, ՛՛-  
այնմ, ես ած հուր ծախիչ եմ . սակայն առա-  
ւելյատկանայ շոգւոյն սըյ : Զի հոգին սը-  
ելան՝ ՚ի հօրէ և կերպի սիրոյ, ոող ցուցաւ ՚ի  
վեր անդը . Իսկ սէրն համեմատի հրոյ . ուստի  
ասի յէրգո երգոյն ջուրք բվլմք ո՛չ կարեն շիջու-  
ցանել զաէր, թւ նր իբրև զթւ բոցոյ և հրոյ :

Կ Յանու-Նէսն :

Յայսմմասին նմանիմք շոգւոյն սըյ եթէ  
զյատկուն աղաւնոյ ՚ի մեզ բերցուք, նախ՝ մշտա-  
շարժ գոլով ՚ի բարեգործուիս, ՛՛այնմ՝ զբա-  
րիս գործել մի՛ ձանձրացուք : Նաև ՚ի ձեռն ա-  
ղօթից հոգւոյն թեօքն հանգոյն աղաւնոյ վե-  
րանալ յերկինս, անդադար աղօթս արարէք :  
Եկդ՝ պտղաբեր լինելով որքան ՚ի տեսականս  
զքանքար բանին շահեցուցանելով ՚ի քարոզուն  
և ՚ի ուսուցմունս՝ այնքան ՚ի գործնականս : Եւ  
երդ՝ բորբոքելով զախորժակս մեր սիրովն այ և  
փոխարկելով ՚ի հուր : Եւ սիրով ընկերին վա-  
ռեալ հրացել լեզուաւ ջերմացուցանել և լուսա-  
ւորել զհոգիս հաւատացելոց, զի և նք մաք-  
րեալ լուսաւորեալ և կատարելագործեալ, ՚ի  
նմանուն սը Երրորդուն վերանայցեն : Որում  
փառք յափատեանս, ամէն :

Ա Ե Ւ Զ Ա Ք ա ն ,

---

Ի վախճանի ծանիք սիրելի և բարեմիտ  
ընթերցողք, զի երախտիքն այ ի վր բանականի  
բնուեսէ ստեղծանեն զմեղ շպատկերի իւրում  
և շնմանուն, որով և զանբաւ սիրոյն իւրոյ առ  
մեղ զառհատատչայն եցոյց : Կաև անտանելի  
երկունք միաձնին ոչ այլ ինչ պատճառ էր, ե-  
թէ ոչ վն զաղաւաղեալ պատկերն իւր նորոգե-  
լոյ և վերստին ի նմանուն իւր ի վեր հանելոյ :  
Առ այս դիտէր և հոգւոյն սբյ անձամք դիմեն  
առ հողեղէնքս: Աստուստ և եկեղեցական քա-  
րոզուիքն կացուցեալ եղեն ի մաքրել, ի լու-  
սաւորել, և ի կատարելագործել զըստ պատկե-  
րի այ եղեալն . և ի նմանուն այ ամբառնալ,  
ո՞պ ասէ դիոնէսիոս : Ուստի և մեր դիտելով  
զծայրագոյն հարկաւորուն ածայնոյ նմանուն ,  
առ որ պարտաւորիմք, առ որ և հրամայէ տըն ,  
եղերուք նման հօրն ձերոյ . եղերուք կատարել  
ո՞պ և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է , նը-  
պաստաւորութ նծաբանական մատենից արտա-  
հանել զայս դուզնաքեայ նմանունս ո՞պ զփունջ  
երփն երփն ծաղկանց՝ մատուցաք ի զմայլումն ի-

մացական ուղիղաց տեսականացն սիրահարաց :  
 Կախ զածաբանական խնդիրն եղաք, և ապա  
 զբարոյականն ըստ նմին յարմարեցաք . զի խան-  
 դաղլատքն սիրով ուսման ՚ի հոգեւոր բուրաստա-  
 նիս գոյն զգոյն ծաղկանց, մերթ տեսականօքն  
 և մերթ գործնականօքն հրճուեսցին : Զնա-  
 նութիւնն չճգտեցուցաք, այլ նիւթ ինչ կամ  
 պատճառ իմն եղաք . վանոքօք և զայլն իմաս-  
 տասիրելոյ, ըստ այնմ, տնւոր իմաստնոյն պատճառս  
 զի իմաստնագոյն ևս լինիցի : Ուրեք ուրեք ե-  
 ղաք և զաննամանուեա, բայց ոչ յամենայնում,  
 զի ներհակաց նոյն է բան ըստ փիլիսոփայից . վա-  
 այն դիւրին է յարմարելն՝ եթէ կամիցիս : Յա-  
 մենայնում զաշմարտուեն մեզ նպատակ եղաք,  
 խուսեալ ՚ի վիճաբանուե որքան կարելին էր .  
 զի մի ՚ի հայհայուե ինչ սահիցուք . վեղի գեր-  
 բնական էր առարկայն գործոյս, և մտաց մարդ-  
 կան անհասանալի : վայ յանդգնուե մեծ է ՚ի  
 վրա անքննին նիւթոց ճշդիւ վիճելն : Բայց մի-  
 այն յայսմ զգուշացաք, զի զգգացմունս նախա-  
 պատիւ Ածաբանից, սպիրիտ սբն Գրիգոր ածա-  
 բանն, սբն Դիմինէսիոս, և սբն Ներսէս շնոր-  
 հալին, անապատաք պահեսցուք, Արդ՝ եթէ  
 բարի ինչ գտնիք ՚ի մատենի աստ, զտեառնէ  
 շնորհակալ լիթիք, զի ամառուրք բարիք ՚ի վե-  
 րուստ են իջեալք, և զի՝ զնախիթեանցի Աղա-  
 մալեան Պետարոս անարդիւն վարդապետս յա-  
 զօթս ձեր լիշեսջիք : Ապա եթէ անպէտ ինչ

գտցի ՚ի սմբն , զայն մերում տխեղծ մատին վար-  
կեալ ներեսջիք : Որ և ներողն սխալանաց  
ձեր ևս յանցանացն ներումն շնորհեսցէ .

**Ամէն ։**

Մաղթեմ զեղբարսդ գերապանծ ,  
Ոյց մեծագին՝ ձօնեմ զայս գանձ .  
Անախտ սիրով՝ գաղափարել ,  
Անթերի և անյառել ուած :

**Գրհութիւն Պատէռղէն .**

Պայծառ արփի՝ արդարութեան ,  
ծագող լցու՝ իմաստութեան .  
Երգեմք քեզ փառս՝ լիաբերան ,  
յաւարտ գործոյս՝ բնազանցական ;  
Տնւր ինձ լինիլ՝ վեհիու նման ,  
ըորում ազգէ՝ այս հանգաման :  
Բամեանաւ՝ զպատկերսդ համայն ,  
բերել լը այս՝ գքոյդ կերպարան :  
Որով եղեալ՝ Աստուածանման ,  
լիցին արժան՝ քոյդ տեսութեան :  
Մը Նախատպիու՝ բան գոհութեն ,  
տալով ընդ մեզ՝ ՚ի յաւիտեան :

՚Ի Առաջանելու Հայոց :

Զկենդանակերպս երկոտասան ,  
Ճիշտ պատկեան դիր և քսան .  
՚ի քսանէն զերկուսն հան ,  
գտցես զթիւ գրքոյս լրման :  
Ապա եթէ նաև կա միս ,  
առ ՚ի գիտել զամսոյս քանիս .  
կատարեալ թիւն կրկնեալ յերիս ,  
լրումն եղև ՚ի \* Խազմ ամիս :

\* Փոխանակ Գլելը ՚ի չարշոյ . 1218, Մարտէ 30:  
Այլ այս չեւ ացձմ ոչ է ՚ի հեր :

**Գործեսք Ասպուածութեանն .**

Ամենասքանչ խոր էութիւն , անքննին՝ և անմատոյց ,  
՚ի բաղազանութեան էից , գու միայն և եթ էակ .  
՚ի յաւիտենից մակաբերեալ ՚ի խորոց գաս առ ՚ի ցոյց ,  
բայց ոչ որքան առ գոլ անձանց այլ սոսկ առ է՝ և միակ :  
**Սիրտ իմմատեալ ՚ի խորս իւր, զքեզ եգիտ՝ բարձր և անձառ,**  
զի ոչ մատեան՝ զքեզ պարուրէ , և ոչ յայտնէ՝ զքեզ ճառ .  
առ որ թէ և հանդիսանսան քրովբէից հոյլք և կաճառ ,  
ոչ բաւեն ենթադրել զքէն , թէ որպէս մի՝ և երրեակ :  
**Տեղի զքեզ՝ ոչ ամփոփէ , զի ես անչափ՝ և անհուն .**  
քո մեծութեան՝ քո լայնուե , ոչ գոյ սահման՝ և ոչ հուն ,  
զի մեծուեք՝ համայն գոյից , առ քեզ իրը են՝ կէտ մի խուն .  
պարաձուեց՝ վերնոց երկնից , ներփակիչ և պարունակ :  
**Ունօղ զփառս՝ սեպհականս , փառաւորեալըդ փառօք ,**  
ոչ ունելով կարօտութիւն , յաւիտենից՝ քո առ ոք .  
**Ածութեանդ քո աթոռ , եռանձնեայ՝ սերտեալ բարուօք ,**  
փոխատարեալ իսկ զփառանս , գոլ միմեանց՝ գահաւորակ :  
**Իւսաօղ էից՝ ՚ի յանէից , զօրութիւն ամենա զօր ,**  
թարց զօրուե՝ քոյդ հզօրի , ոչ ունին կայ գոյք բոլոր ,  
քանզի բարձեալ կրես որք են , միայն բանի՛ ահաւոր ,  
որոյ չլիք հակադիր պատճառ , և ոչ որ կայ՝ ընդդիմակ :  
**Ամենեին՝ պարզ էութիւն , անխառն և անբազա գիր ,**  
բոլորովին՝ ներգործութիւն , ՚ի զօրութեանց՝ արտակիր .  
երրեակ և մի՝ բայց անշփոթ , ՚ի վեր իսկ քան՝ ճառագիր ,  
բնական՝ և գերբնական՝ բաղադրուեց , անընդունակ :

Ծով համայն կատարելութեց, գլխած բնութ՝ և բարի,  
բարուեղ գործէ մինչև ցայծմ, և ոչ երբէք՝ դադարի.  
տուր զի կամք քո սթ և բարի, որ յիս յարակ՝ կատարի,  
որով առ տեսուեղ անձառ, գտայց անդրէն յոյս ոմակ:  
Պատիճ և փառք քոյդ տէրուե, Եւ գոհութե վայելէ,  
Տակ այժմ և միշտ՝ յափտեան՝ Ռամից ՚ի քէն որ ել յէ.  
Ուստի և մեք՝ մատուցանեմք, Աթ անուան քո որ ել՝ է,  
Դ շնորհելդ զայս քոյ գիտուի, Եիդ առ գոլ նմանակ:

ԱԵՐՁ

## ՅՈՒԹԱԿ ՍՏՈՐԱԳՐՈՂԱՑ:

## Կալկաթա

Հոգեւ 40, Համբուրգ 45. Արդեւնք 420.

# Ψατρω

Հոգեւ 24, Հայոց 31, Արդեն 600.

Հայություն Գրոց :		Առ-Ղայոց :
Sէր Կարստպեա Սըհաղոն Արժենի զ Զ ո-Ղայոց ,		
՚ ՚ Յ եռ-ն Sէր Յոհանու Մ անուշէտն . . . 1	10	
Sէր Անդրոն Ա-ագետն Ա-գերէց Կալէտաց 1	10	
Sէր Յոհան Մ անուշէտն Ա-ագերէց Մ ադրբան 1	10	
Sէր Հօմա Գլըթապեա Ե . Ճ է յարանէն . . . 1	10	
Sէր Յովսէտ Սպէտանոսուն . . . . . 1	10	
Sէր Աքրոհամ Տէր Կ . Sէր Մ ադրբանէն . . . 1	10	
Sէր Յոհաննէս Տէր Մ էրացէտն . . . . . 1	10	
Sէր Յոհաննէս Գայապատն . . . . . 1	10	

U

Աբրահամ Յ.	Աղանուրեան	1	35
Ասպատաժապուր Պ	Յարութիւնեան	1	10
Աւել Աղաբեկչան		1	10
Աւետիչ Յ.	Շերիսուբեան	1	8
Աւետիչ Նազարեան		1	10
Աւել Ջ	Աւետին	1	8

**Գ**

Գեղրդ Աւեպըտն	1	8
Գեղրդ Փ. Բարբաղամ	1	10
Գրեգոր Աբովյան	1	8
Գրեգոր Ասպոլոծապրետն	1	10
Գրեգոր Ե. Զահարյան	1	10
Գրեգոր Զահարյան	1	10
Գրեգոր Մ Ասպոլոծապրետն	1	10

**Դ**

Դաւիթ Բարբաղան	1	8
----------------	---	---

**Ե**

Եղիշերդ և Յոհաննէս Ս. Մոռլարդետնց	3	200
Եղիշերդ և Հեմարտն	1	10
Եսայէ Զահարյանց	1	10
Եսայէ Թառմիջնան	1	8

**Ի**

Իմին Յովսէք Իմին	1	10
------------------	---	----

**Թ**

Թառմաս Պօղոսըն	1	10
----------------	---	----

**Խ**

Խաչապուր Սահակ Մալխասնէն	1	10
Խաչէի Ա Գեղրդետն	1	10
Խաչէի Յովհաննէս Մարգուտնց	1	8

**Կ**

Կարապէտ Յակոբ Յոհաննէտն	1	8
Կարապէտ Յոհաննէս Պետրոսնէտն	1	8
Կարապէտ Յարութիւն Վըրանիւտն	1	8

## Ա

Ղազար Աղաբեկեան	1	10
Ղազարո Յարութիւն Աւետի	1	10
Ղեղադ Յոհաննիսէան	1	10

## Մ

Մանուչ Մ Մանուչէան	1	8
Մանուչ Նէխովյառուշան	2	20
Մարմէռո Թարոսիսան	1	8
Մարգար Զօրէլէան	1	8
Մարգար Ս Ը Կէհրէմանէանց	1	8
Մէրժէլ Զոհրաբէան	3	24
Մնացածան Վ արդանէան	2	20

## Յ

Յարութիւն Գալուցէան	1	10
Յարութիւն Խաչէէան	1	10
Յարութիւն Ակրախունէան	1	40
Յարութիւն Սպէտանունէան	2	16
Յաշնանէս Ավտալէան	1	10
Յաշնանէս Հ Յարութիւն	1	10
Յաշնանէս Յ Ը առէցի	1	10
Յաշնանէս Ծամէլէան	1	10
Յաշնանէս Վամալէան	1	8

## Ն

Նէրդայա Բարբամէկացէան	1	8
-----------------------	---	---

## Ո

Ուժան Գալաքտոնէան	1	10
-------------------	---	----

## Պ

Պէտրո Պօղուէան	1	8
----------------	---	---

Պողոս Մինասյան	1	8
Պողոս Յորդանեանքան	1	10
Պողոս Պ. Ղազարեան	1	35
<b>Ջ</b>		
Ջնբըմ Աւելիչան	1	10
<b>Ւ</b>		
Սարգիս Յովհանն	1	10
Սարգիս Յովհաննէս Սարգսյանց	2	16
Սէր և Գրիգոր Սամեանց	3	100
Սէմոն Միքայելյան	1	8
Սահեկանոս Էջտաշ Ավետիսյան	1	8
Սահեկանոս Ներսիսյան	1	10
<b>Վ</b>		
Վարդակ Գևորգյան	2	20
Վընանէս Զահարեայ Ասպառածապրեան	1	8
<b>Տ</b>		
Տէրէ Մերժան Ասեղանոսյան	2	20
<b>Փ</b>		
Փէլպան Ասպառած արքան Գևորգյանց	1	8
<b>Ը</b>		
Ը Աշխառնդրեան	1	15

՚Ի գերջոյ որքան խօթելին էր պարուշացա ոչ անհամբ և  
եր , այլ նույն ՚ի յետն Սերեցելոց իմում Խառչէա Յովհաննէս  
նիստ Սարգսյանց Աշխառաչան Պետրանոյն , որ անհանդիր  
աշխառապահէցն էղեւ ըստ իս 'ե ' սբագրութիւն սորուն և այլ  
չարեց արքանութիւնն ըսդ գործ բովանդակէ : Բայց  
երէ գոյցն դէռ և զիտ եւ ինչ մարդունիք նէ-  
ըսոցիւ մէջ աղալիմ :



[5Pn.

with the number  
of the page

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0028152